**23. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.**

- 1) ազգանվեր–ազգուրաց, գարնանացան–աշնանացան
- 2) դանդաղ–անշտապ, կատարյալ–թերի
- 3) դիմավոր–անդեմ, բարձել–բեռնաթափել
- 4) գայթակղել–վանել, գլխավոր–անգլուխ

**24. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.**

- 1) ընդառաջել–խոչընդոտել, ընդունակ–ապիկար
- 2) իրիկնամուտ–կեսօր, լերկ–բուսառատ
- 3) մեղանչել–ապաշխարել, խն–խելագար
- 4) ընտանի–վայրի, ընդարմանալ–ընտելանալ

**25. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.**

- 1) գիտուն–թերուս, նոսր–խիտ, ծածկամիտ–բացբերան
- 2) բուժիչ–ախտածին, օրհնել–բանադրել, կարծրատիպ–ազատախոհ
- 3) նշանակալի–չնչին, հիասթափություն–ոգևորություն, խելամիտ–անկշռադատ
- 4) շնորհաշատ–տաղանդագուրկ, աղմկոտ–հանդարտ, պղծված–սրբագործված

**26. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից.**

- 1) ծածուկ–բացեփբաց, խռով–հաշտ, խոնարհություն–ամբարտավանություն
- 2) անխոհեմ–ողջախոհ, տնտեսել–շռայլել, արի–վեհերոտ
- 3) հաղորդիչ–մեկուսիչ, ողորկ–անհարթ, եկամտաբեր–կորստաբեր
- 4) նկուն–աներեք, թերի–ավարտուն, սուղ–սակավ

**27. Տրված բառերից քանի՞սն են հականիշ պերճ բառին.**

*շքեղ, անշուք, շլացուցիչ, հասարակ, ճոխ, հիասքանչ, սլարզ, զզվիչ, փառասեղ, պերճաշուք:*

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) չորսը
- 4) երկուսը

**28. Տրված բառերից քանի՞սն են հականիշ պարզ բառին.**

*պղտոր, բարդություն, խրթին, բարդ, զարդարուն, անպաճույճ, շքեղ, ճոխ, դժվար, բարդացնել:*

- 1) վեցը
- 2) յոթը
- 3) ութը
- 4) հինգը



**29. Հականիշների քանի՞ զույգ կարող է կազմվել տրված բառացանկից.**

*անվանարկել, հակիրճ, աղճատել, վարկաբեկել, երկարաշունչ, գծղմնել, աղավաղել, ժպտալ, պատրաստակամություն:*

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**30. Հականիշների քանի՞ զույգ կարող է կազմվել տրված բառացանկից.**

*երազային, հակոտնյա, աչառու, ապերջանիկ, լռակյաց, անկողմնակալ, իրարամերժ, դժբախտություն, շաղակրատ, բախտավոր:*

- 1) չորս
- 2) երկու
- 3) երեք
- 4) հինգ

**31. Հականիշների քանի՞ զույգ կարող է կազմվել տրված բառացանկից.**

*սեր, աստիճանաբար, անվարժ, լավ, միանգամից, միշտ, ատելի, փորձառու, բնավ, հոռի:*

- 1) հինգ
- 2) չորս
- 3) երեք
- 4) երկու

**32. Ո՞ր նախադասության մեջ է *լուռ* բառը գործածված ուղիղ իմաստով:**

- 1) Ընկերների միջև շարունակվում էր լուռ պայքարը:
- 2) Լուռ, քչախոս մարդ էր հարևանս:
- 3) Լուռ ցավերը տանջում էին նրան:
- 4) Այդ ամենը տարիների լուռ համաձայնության արդյունք էր:

**33. Ո՞ր նախադասության մեջ է *ծանր* բառը գործածված ուղիղ իմաստով:**

- 1) Ծանր մտքերը հանգիստ չէին տալիս նրան:
- 2) Մի ծանր բան վերևից ընկավ տղայի գլխին:
- 3) Ծանր հանցանքների համար դատապարտում էին տաժանակրության:
- 4) Երկարամյա ծանր հիվանդությունից վախճանվեց:

**34. Ո՞ր նախադասության մեջ է *սղոցել* բառը գործածված ուղիղ իմաստով:**

- 1) Միայն երբեմն–երբեմն լռությունը սղոցում էին ինչ–որ հնչյուններ՝ կանացի բարձր ծիծաղ, հարբածների վեճ:
- 2) Ծուռումուռ փայտը սղոցելով չի հարթվի:
- 3) Երեխան իր միալար լացով սղոցում էր բոլորի նյարդերը:
- 4) Հունվարյան խստաշունչ ցուրտը սղոցում էր մուրացիկների ոսկորները:

**35. Ո՞ր նախադասության մեջ է *թռչել* բառը գործածված փոխաբերական իմաստով:**

- 1) Արագիլն ամեն առավոտ թռչում էր դեպի մոտակա ճահիճը:
- 2) Օրերս թռչում են իրար հետևից...
- 3) Օդանավը թռչում էր ամպերի վրայով:
- 4) Վիրավոր հավքը թռավ ծառերի ճյուղերի արանքով:

**36. Ո՞ր նախադասության մեջ է *խոր* բառը գործածված փոխաբերական իմաստով:**

- 1) Խոր ձորի մեջ գալարվում էր գետը:
- 2) Տարիները նրա դեմքին խոր կնճիռներ էին գծել:
- 3) Խոր լռության մեջ հանկարծ մի ձայն լսեց:
- 4) Առաջ անցան՝ խոր ձյունը ճեղքելով:

**37. Ո՞ր նախադասության մեջ է *հետք* բառը գործածված փոխաբերական իմաստով:**

- 1) Որսորդները շարժվում էին արջի հետքերով:
- 2) Չյան վրա բեռնատար մեքենայի հետքեր կային:
- 3) Կավե ամանի վրա երևում էին բրուտի մատների հետքերը:
- 4) Աճառյանը մեծ հետք է թողել հայ լեզվաբանության մեջ:

**38. Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններում փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

- 1) գվարթահայաց ընդունելություն, երկնածին մտքեր, խոր տարակուսանք, մեծ ափսոսանք
- 2) թեթև ծանոթություն, կամքերի առճակատում, նորակառույց եկեղեցի, թունոտ հայացք
- 3) ճշգրիտ արտահայտություն, բառերի հեղեղ, բազմաչարչար հող, փոքր հույս
- 4) սուր կսկիծ, արթնացող մտքեր, հարուստ գիտելիք, խոր զգացմունք

**39. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ կա:**

- 1) Ես հիշեցի, որ ինձ տեսնելուն պես նրա աչքերը արցունքով լցվեցին:
- 2) Ես այն միակ ընթերցողն եմ, որ քո գործերին ծանոթանալիս իսկապես զգում է գոյության ողբերգականությունը:
- 3) Փողոցում տրված հարցը, որ ավելի շուտ մասնավոր փաստի իմացություն էր, անառարկելի էր ու մերկ, և ինձ գոնե մի քանի րոպե ժամանակ էր պետք, որ սթափվեի:
- 4) Մեկ մետր խորությամբ, հազիվ մինչև կրծքներս հասնող առաստաղով դամբարանի մթության մեջ երկու կողմից զմռսված մումիաներ էին:

**40. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ *չկա*:**

- 1) Քարանձավի աչքերից քարե արցունք է ծորում:
- 2) Չվող թռչուններն անցան գնացին:
- 3) Խելագար գետը հոսում է ձորն ի վար:
- 4) Ներս մտավ մի մարդ՝ ցամաքած, նիհար կազմվածքով:

**41. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ *չկա*:**

- 1) Գանդաղ քայլում է հռչակավոր բանաստեղծը:
- 2) Հեծյալը քարացավ իր ձիու վրա:
- 3) Բնության գեղեցկությունը կախարդել էր մեզ:
- 4) Այդ դառը խոսքերը խայթեցին նրան:

**42. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ *չկա*:**

- 1) Շիկացած լավան անմիջապես տարածվեց բլուրն ի վար:
- 2) Քանի որ հայրս ուրախ խառնվածք ուներ, միշտ իր խոսքով գերում էր սեղանակիցներին:
- 3) Աղ կերած պանրից ու թոնրի լավաշից ո՞վ կիրաժարվի:
- 4) Բոցի լեզուները մի ակնթարթում ոչնչացրին ամեն ինչ:

**43. Ո՞ր հատվածում փոխաբերաբար գործածված բառ չկա:**

- 1) Հովիվներն այնտեղ կրակ են արել  
Սարերի վրա, օ՛, անո՛ւշ հեռու,  
Չայնում են անվերջ մթնում իրարու,  
Հովիվներն այնտեղ կրակ են վառել:
- 2) Երկրպագի՛ր, երկրպագի՛ր հողին  
Ու խենթությամբ արթուն  
Պարզի՛ր անվախ քո հուր հոգին  
Աշխարհաշեն մարդուն:
- 3) Կարծես թե դարձել եմ ես տուն,  
Բոլորն առաջվանն է կրկին,  
Նորից դու հին տեղը նստում,  
Շարժում ես իլիկը մեր հին...
- 4) Չգիտեմ՝ որտեղից է գալիս  
Ջութակի հեկեկանքը տրտում  
Եվ լալիս է անվերջ ու լալիս  
Եվ անվերջ ծավալվում իմ սրտում:

**44. Ո՞ր բառը որ բացատրությանն է համապատասխանում.**

ա. հաձել	1. դեզերել
բ. հեծել	2. ձի նստել
գ. հեծկլտալ	3. տառապել
դ. հեծնել	4. հեկեկալ

- 1) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 2) ա-1, բ-3, գ-4, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-1, բ-4, գ-3, դ-2

**45. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.**

- 1) **բերանը ջուր առնել** – չխոսել, պապանձվել
- 2) **կյանքի ընկեր** – լավ, ազնիվ ընկեր
- 3) **դանակը ոսկորին հասնել** – համբերությունը հատնել
- 4) **հոգու հետ խաղալ** – մեկին ձեռ առնել

**46. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.**

- 1) **մտքի թելը կտրվել** – մտադրությունից հետ կանգնել
- 2) **մատը մատին չխփել** – ոչինչ չանել, ծուլանալ
- 3) **մինչև կոկորդը թաղված** – մի բանով ամբողջովին զբաղված
- 4) **աշխարհով մեկ լինել** – շատ ուրախանալ

**47. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.**

- 1) **սառույցին գրել** – պարտավորությունը չկատարել
- 2) **պղտոր ջրում ձուկ որսալ** – խառնաշփոթ վիճակից օգուտ քաղել
- 3) **ծայրը ծայրին հասցնել** – իրար միացնել
- 4) **ականջին օղ անել** – միշտ հիշել, մտապահել

48. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.

- 1) **բքու դնել** – ձմռանը նախապատրաստվել
- 2) **հեքիաբներ պատմել** – ճիշտ չխոսել
- 3) **ոսկի ձեռքեր ունենալ** – շնորհքով, հմուտ լինել
- 4) **գույնը գցել** – սփրթնել

49. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.

- 1) **թևի տակ առնել**– նեցուկ կանգնել
- 2) **սիրտը կախ** – անտրամադիր
- 3) **քարից հաց քամել** – անհնարին գործ կատարել
- 4) **ձեռնոց նետել** – մարտի հրավիրել

50. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված.

- 1) **աչքերը կապել** – պահմտոցի խաղալ
- 2) **իր գլխի տերը լինել**– սեփական բախտը տնօրինել
- 3) **տակից դուրս գալ** – մի բան հաջողությամբ կատարել
- 4) **կաշին պլոկել** – ծայր աստիճան շահագործել

51. *Գլխին սառը ջուր լցնել* դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) հույսերը չարդարանալ
- 2) ուշքի բերել
- 3) թափը կոտրել
- 4) հիասթափեցնել

52. *Չայնը գլուխը գցել* դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) սպառնալ մեկին
- 2) շատ բարձր գոռգոռալ
- 3) խիստ բարձր խոսել
- 4) բարձր ձայնով երգել

53. *Քարը փեշից թափել* դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) չհակառակվել, զիջել
- 2) այլևս չհամառել
- 3) անհաջողությունից խուսափել
- 4) համաձայնության գալ

54. *Քթից այն կողմ չտեսնել* դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) անհեռատես լինել
- 2) կարճամիտ լինել
- 3) սահմանափակ մտածել
- 4) իրենով հիացած լինել

55. *Օղով կերակրվել* դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) ապրուստի միջոցներից զուրկ լինել
- 2) ուտելու բան չունենալ
- 3) սին հույսերով ապրել
- 4) սակավախոս լինել

56. **Շունչ առնել** դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) հանգստանալ, դադար առնել
- 2) ոգևորվել, խանդավառվել
- 3) կենդանանալ
- 4) մաքուր օդ շնչել

57. **Ուտքերն ընկնել** դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) մեկի հովանավորությանը դիմել
- 2) ստորաբարշտություն անել
- 3) մեկի հանդեպ հիացմունքով լցվել
- 4) խնդրել, աղերսել

58. **Բաց աչքով** դարձվածքին ո՞ր իմաստը *չի* համապատասխանում.

- 1) անքուն
- 2) զգոն
- 3) աչալուրջ
- 4) անկեղծ

59. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.

- 1) **մազը գերան դարձնել** – չափազանցնել, **մի տան պես** – հարազատորեն
- 2) **կապը կտրած** – սանձարձակ, **ծովը տանել` ծարավ բերել** –խորամանկ լինել
- 3) **խոսքի կծիկը բացել** – խոսակցություն սկսել, **գառան մորթի հագնել** – միամիտ ձևանալ
- 4) **խոսքը տեղը բերել** – հարմար առիթով դիպուկ պատասխան տալ, **զենքի հետ խաղալ** – սեփական անձը վտանգել

60. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.

- 1) **աչք ածել** – շուրջը նայել, **հոգու աչքեր** – ներգգացողություն
- 2) **կոտր ընկնել** – ջարդվել, **սրտում կրակ վառել** – ոգեշնչել
- 3) **ուղտը պոչով կուլ տալ** – գոփող լինել, **օձի կծած** – չար և անգութ
- 4) **աջ ու ձախ նայել** – քայլերը կշռադատել, **սիրամարզի փետուրներով ագռավ** – արտաքին շքեղությամբ ներքին դատարկությունը ծածկող մարդ

61. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.

- 1) **սիրտը կախ** – անտրամադիր, **խելքը հացի հետ ուտել** – հիմարանալ
- 2) **սիրտը վկայել** – կանխագգալ, **խաղաթղթերը խառնել** – ծրագրերը խափանել
- 3) **թրև գալ** – աննպատակ թափառել, **գլխին ոսկե անձրև տեղալ** – ամուսնանալ
- 4) **զազան կտրել** – կատաղել, **երկաթե գավազան** – բռնապետություն

62. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն չկա.

- 1) **գայլի ստամոքս** – ազահ, ամենակեր, **բերանը յուղոտ պատառ զցել** – ճարպոտ սնունդ ընդունել
- 2) **գլուխը լցնել** – որևէ արարքի դրդել, **ձայն խնդրել** – ցանկանալ երգել
- 3) **գլուխը խառը լինել** – որևէ գործով խիստ զբաղված լինել, **ծովային գայլ** – ծովային գործին շատ հմուտ
- 4) **իրար օձիք բաց չթողնել** – իրար կպչել, **ձայն ձայնի տալ** – քվեն տալ ինչ-որ մեկին

63. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.

- 1) **ականջը զգել** – տեղեկացնել, **ականջը ծանր** – լսողությունը թույլ
- 2) **ականջը դռանը** – անհամբեր որևէ յուրի սպասել, **ականջը ոլորել** – ցավ պատճառել
- 3) **աչքերը կապել** – խորամանկությամբ խաբել, **աչք դնել** – հավանել
- 4) **աչքն ուտել** – մի բան հավանել, **աչքերը խավարել** – կուրանալ

64. Ո՞ր դարձվածքին որ իմաստն է համապատասխանում.

- |                  |                |
|------------------|----------------|
| ա. սիրտը կոտրել  | 1. սիրաշահել   |
| բ. սիրտը կոտրվել | 2. վշտացնել    |
| գ. սիրտը առնել   | 3. համարձակվել |
| դ. սիրտ առնել    | 4. ընկճվել     |

- 1) ա–4, բ–2, գ–1, դ–3
- 2) ա–2, բ–4, գ–1, դ–3
- 3) ա–2, բ–4, գ–3, դ–1
- 4) ա–2, բ–3, գ–4, դ–1

65. Ո՞ր կապակցությունը դարձվածային իմաստ *չունի*.

- 1) աստղը շողշողալ
- 2) աստղը խավարել
- 3) աստղով լինել
- 4) աստղ ընկնել

66. Բայերից քանի՞սը *ձեռք* բառով (նաև փոփոխված ձևերով) դարձվածք կկազմեն.

*առնել, բերել, զգել, կարկառել, տալ, լվանալ, մոտեցնել, զնալ, նայել, բռնել:*

- 1) վեցը
- 2) յոթը
- 3) ութը
- 4) ինը

67. Ո՞ր նախադասության մեջ բառի կազմության սխալ կա:

- 1) Մենք ցանկանում ենք, որ ձեռնարկության սննկացումը դաս լինի մյուսներին:
- 2) Աղջկան տեսնում էր թե չէ, միանգամից անակնկալի էր գալիս:
- 3) Նրա ձեռքին եղել է ինքնաձիգ, և նա սպառնացել է շրջապատի մարդկանց:
- 4) Երբեմն այնքան ուժգին էր ձգում սանձը, որ ձին գիրթ կանգ էր առնում:

68. Ո՞ր նախադասության մեջ բառի կազմության սխալ կա:

- 1) Նրա այդ վատ արարքը ծանր խարան է իր ընտանիքի համար:
- 2) Բազմիցս խոսվել է այդ մասին, սակայն ապարդյուն:
- 3) Ոչ թե հետաքրքրությունն էր նվազել, այլ տուժվածները հոգնել էին իրենց պայքարից:
- 4) Անբասիր վարկը ձեռք էր բերել տարիների անխոնջ աշխատանքով:

69. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Վկայի ցուցմունքը օգնեց արդարացնելու մեղադրյալին:
- 2) Ֆիլմ դիտելիս սիրում եմ որևէ բան ճաշակել:
- 3) Ծանր աշխատանքից նրա ուժերն արդեն հատում էին:
- 4) Չքնաղ այդ տեսարանը հաճելի զգացումներ պարզեց ինձ:

**70. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Ակնոցի վրայից աչքերը հառնեց դիմացը նստած մարդկանց:
- 2) Ուժեղ աղմուկից հանկարծակիի գալով՝ մոտեցավ լուսամուտին:
- 3) Առվի մեղմ կարկաչունը հանգստացնում էր հոգնած նյարդերս:
- 4) Ավանդության համաձայն՝ վառելիքի դեզը վերածվել է քարե ամրոցի:

**71. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Ես տեղի տվեցի մորս հորդորներին և այլևս չանհանգստացրի այդ աղջկան:
- 2) Ինչ վերաբերում է կրթաթոշակին, այդ հարցին դեռ կանդրադառնանք:
- 3) Ֆիզիկական լավ պատրաստականությունը անչափ կարևոր է գինվորի համար:
- 4) Իր վատ արարքի համար նա մեղանչեց ընկերոջ առաջ:

**72. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Հայը սիրում է պատշաճ սեղանն ու լավ գինին:
- 2) Աշխարհի չորս ծագերում տոնեցին այդ իրադարձությունը:
- 3) Հայաստանում փոխադարձ հյուրասիրությունները շատ հարգի են:
- 4) Նա իր անհարգի միջամտությամբ փչացրեց հյուրերի տրամադրությունը:

**73. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է մյուս երեքին համանուն:**

- 1) Մեղադրյալը, **դողը** սրտին, սպասում էր իր դատավճռին:
- 2) Վախից սիրտս **դող** ընկավ:
- 3) Մարմնումս հանկարծ անսովոր **դող** զգացի:
- 4) Մեքենայի **դողը** փոխել էր պետք:

**74. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է մյուս երեքին համանուն:**

- 1) Պատվական անգին ջավահիր, **լալ** – Բաղեշխան իս ինձ ամա:
- 2) Ուզում եմ **լալ** բախտիս համար:
- 3) Թե կարող ես **լալ**, մի՛ գալիր արցունքներդ. դրանք մաքրում են հոգին:
- 4) Շատրվաններն սկսեցին հեծկլտալ ու **լալ**:

**75. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է մյուս երեքին համանուն:**

- 1) **Սուր** վերցնողը սրից էլ կընկնի:
- 2) Իմ **սուր**, արթուն ականջում Մի խոր ձեն է միշտ հրնչում:
- 3) Ետևը **սուր**, առաջը ջո՛ւր, Սու՛գ, վայնասո՛ւն, իրարանցո՛ւմ,
- 4) Բառաչում են մե՛ծ ու պու՛ճուր: **Սուր** ճոճելով ոչ մի լավ բանի էլ չես հասնի:

**76. Բառերից քանի՞սը համանուն ունեն.**

*գայլուկ, ցանցկեն, բալ, լալ, խեթ, տուն, շուտափույթ, բարձիչ, թան, թույլ:*

- 1) բոլորը
- 2) ութը
- 3) վեցը
- 4) չորսը

**77. Բառերից քանի՞սը համանուն ունեն.**

*վար, զուտ, թարմ, տարեկան, տալ, տեզր, դող, եղանակ, բութ, զենք:*

- 1) վեցը
- 2) ութը
- 3) ինը
- 4) յոթը

**78. Բառերից քանի՞սը համանուն ունեն.**

*բարդ, անձուկ, շող, ակնարկ, հաչել, շքեղ, բութ, լողավազան, քուղ, հաց:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) յոթը

**79. Ո՞րը բառակազմության եղանակ կամ միջոց չէ.**

- 1) հնչյունափոխությունը
- 2) հապավումը
- 3) ածանցումը
- 4) բառաբարդումը

**80. Ո՞ր բառը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

- 1) կենսակերպ
- 2) կյանք
- 3) կենարար
- 4) կայք

**81. Ո՞ր բառը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

- 1) ձերբազատվել
- 2) ձեռնպահ
- 3) ձեղնահարկ
- 4) ձեռնածու

**82. Բառերից քանիստ՞ն ինքնուրույն գործածություն չունեցող արմատ կա.**

*սիրասուն, անողջախոհ, նետահարում, լուսաշող, քաջագն, բծախնդիր, չունևոր, գառամյալ, խցիկ, ջարդուխուրդ:*

- 1) յոթում
- 2) վեցում
- 3) հինգում
- 4) չորսում

**83. Ո՞ր շարքի բոլոր բառերն են պարզ.**

- 1) արագիլ, հրավեր, արձան, գոմեշ
- 2) գեղարդ, բարակ, ամրակ, բողոք
- 3) գարմիկ, դադար, գալար, հովար
- 4) հանդարտ, կաղամբ, հարուստ, կորուստ



**84. Ո՞ր շարքի բոլոր բառերն են պարզ.**

- 1) ճանապարհ, ուղեղ, ուժեղ, լծակ
- 2) մանուշակ, հստակ, ճուպան, բանակ
- 3) աստիճան, դրոշակ, շաքար, ոստիկան
- 4) հավատ, կիսատ, չամիչ, մատնիչ

**85. Բառերից քանի՞սն են կազմությամբ պարզ.**

*ովևէ, բազուկ, դանակ, հավաք, միտք, թփուտ, եզերք, միլիոն, արդի, հայրուկ:*

- 1) վեցը
- 2) հինգը
- 3) չորսը
- 4) յոթը

**86. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ.**

- 1) նամակագիր, շաքարախտ, ծաղկեպսակ, կարմրամորթ
- 2) տեսախցիկ, հաղթաքարտ, դրմապուր, շաքարեղեգ
- 3) հաճոյախոս, բառաձև, վարկառու, գորգագործ
- 4) փշատերև, հայրորդի, սրբավայր, սառցապատ

**87. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ.**

- 1) հանրահավաք, վեհաշուք, ոսկեգույն, լռակյաց
- 2) հանքանյութ, համացանց, ոսկրախտ, ունկնդիր
- 3) նրբանկատ, արևկող, ինքնուսույց, ճրագալույց
- 4) վերադարձ, որմնաղիբ, կողմնացույց, կոշկակար

**88. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ.**

- 1) առաջնեկ, քննադատ, հախճապակի, փոխըմբռնում
- 2) ախորժալուր, տանտիկին, ձեռնարկ, հոգեթով
- 3) ամենուր, քառասուն, ձեռնասուն, շքամուտք
- 4) ինչքան, մշտապես, որտեղ, այսօր

**89. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ.**

- 1) ոչինչ, ասուլիս, սնանկ, գետնուղի
- 2) այլազգի, ոսկեդար, օդաչու, հեծանիվ
- 3) սիգապանծ, ջրածին, հանածո, քեռայր
- 4) բյուրեղապակի, քաղցրահունչ, սարալանջ, ջերմագին

**90. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ.**

- 1) իշայծյամ, տնաբույս, կատվախաղ, այլակ
- 2) զինետուն, իրարամերժ, խնդրագիրք, ծաղկաբույծ
- 3) ճնաբուք, նարնջագույն, կապկանման, սպիտակամորթ
- 4) կոշկակար, բարեկամ, հրավիրատոմս, լավագույն

**91. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով.**

- 1) հեռավոր, տարագիր, շաքարավազ, արագավազ
- 2) ժպտաղեմ, բարեկամ, ապացույց, ազնվագույն
- 3) բարեկիրթ, մականուն, մակաբույծ, թերակղզի
- 4) անավարտ, հետևաբար, կիսանդրի, հանդիպակաց

**92. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածանցավոր.**

- 1) առողջ, դիմադիր, հավք, անորոշ
- 2) կախյալ, մինչև, առանց, գերած
- 3) լցոն, փառք, հակառակ, բաժին
- 4) հասուն, միջև, որովհետև, միջոց

**93. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ածանցավոր.**

- 1) անբասիր, անբավ, անբնակ, անբիծ
- 2) անդեմ, անդորր, անդադար, անդատ
- 3) անգարմ, անզգայունակ, անզորություն, անզուգական
- 4) անժամկետ, անժամանակ, անժպիտ, անժույժ

**94. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ածանցավոր.**

- 1) գոհացում, գոհունակ, գոհություն, անգոհ
- 2) ենթամաշկ, ենթամաս, ենթաշրջան, ենթաշերտ
- 3) երկվություն, երկամյա, երկուական, երկրորդ
- 4) լեռնագագաթ, լեռնային, լեռնանցում, լեռնոտ

**95. Ո՞ր շարքի բոլոր բառերն են նախածանցավոր.**

- 1) առերես, առևտուր, առհավետ, առաջ
- 2) տարանջատ, տարբեր, տարակույս, տարարմատ
- 3) նախնի, նախագահ, նախահաշիվ, նախանձ
- 4) վերադարձ, վերակարգ, վերընթաց, վերնատուն

**96. Ո՞ր շարքի բոլոր բառերն են նախածանցավոր.**

- 1) անստույգ, անպատիժ, անձավ, անծուխ
- 2) արտաքին, արտեզր, արտասահման, արտակարգ
- 3) գերազանց, գերծանր, գերարագ, գերեվաճառ
- 4) ենթագլուխ, ենթաշերտ, ենթակա, ենթամաշկ

**97. Ո՞ր բառի մեջ *հակ*-ը նախաձանց չէ.**

- 1) հակընդդեմ
- 2) հակոտնյա
- 3) հակամետ
- 4) հակառակ

**98. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված *ապ*- նախաձանցով.**

- 1) ապօրինի, ապարանք, ապերախտություն, ապերջանիկ
- 2) ապավինել, ապուխտ, ապօրինաբար, ապաթարց
- 3) ապերասան, ապշել, ապագգային, ապացուցել
- 4) ապահովություն, ապակողմնորոշում, ապաբախտ, ապաքաղաքական

**99. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված *մակ*- նախաձանցով.**

- 1) մակերես, մակաբուծաբան, մակարդ, մակաբույս
- 2) մակագրություն, մակբայական, մակերևույթ, մակընթացություն
- 3) մակնիշ, մակերիկամ, մակաղել, մականախաղ
- 4) մակուղեղ, մականուն, մակդիր, մակույկ

**100. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված *նեք*– նախածանցով.**

- 1) ներգործություն, ներկայացում, ներշնչանք, ներդաշնակ
- 2) ներողամիտ, ներդիր, ներթափանցել, ներկուսակցական
- 3) ներերակային, ներծծվել, ներկանյութ, ներմուծել
- 4) ներուժ, ներքին, ներպետական, ներսուզում

**101. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված *փոխ*– նախածանցով.**

- 1) փոխադրություն, փոխանակում, փոխարքա, փոխիրաձգություն
- 2) փոխհատուցել, փոխնիփոխ, փոխարեն, փոխշահավետ
- 3) փոխնորդ, փոխծովակալ, փոխանցում, փոխազդեցություն
- 4) փոխանօրեն, փոխակերպում, փոխայցելություն, փոխաբերական

**102. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր.**

- 1) վարձկան, ճամփորդ, ցավագին, թանկագին
- 2) արգելակ, կոճակ, այլակ, պատանեկան
- 3) լայնակի, հայրենի, հոսանք, մարդատար
- 4) մրցակից, գնդակ, սփռոց, կառույց

**103. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր.**

- 1) երկաթյա, ազդու, առու, ջրուտ
- 2) լավություն, փեսացու, դանակ, ձեռք
- 3) տարեկան, բացատ, գյուղացի, նորագույն
- 4) հոտավետ, գործոն, գառնարած, խորոված

**104. Ո՞ր բառում *-իք* վերջածանց *չկա*.**

- 1) կարծիք
- 2) ավետիք
- 3) խաղալիք
- 4) աղիք

**105. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն *-ակ* վերջածանց.**

- 1) գնդակահարել, դանակահարություն, գապանակ, պահակային
- 2) արգելակում, թռչնակ, հոգյակ, խոզանակ
- 3) հրապարակային, գանձանակ, էակ, դիմակ
- 4) բանակային, լեզվական, առվակ, շրջանակ

**106. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն *-ական* վերջածանց.**

- 1) հայկական, քսանական, ընտանեկան, արքայական
- 2) ժողովրդական, լրատվական, տարեկան, խռովկան
- 3) խորհրդական, հոգևորական, վարձկան, դպրոցական
- 4) հայցական, բանական, հոգեկան, սրտամկան

**107. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն *-անոց* վերջածանց.**

- 1) պարանոց, հիվանդանոց, հովանոց, դարբնոց
- 2) մատնոց, արհեստանոց, գլխանոց, բանջարանոց
- 3) մետրանոց, գերեզմանոց, զինանոց, հյուրանոց
- 4) ամառանոց, բազմահազարանոց, կուսանոց, հավանոց

**108. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *ան* վերջածանց.**

- 1) ավազան, շրջանային, հորան, զարմանալի
- 2) խարան, հեծան, զորակայան, սուտասան
- 3) փչան, բաժանորդ, անվարան, ձգան
- 4) դերձան, խարազան, շարան, անարժան

**109. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *ացի* վերջածանց.**

- 1) բերանացի, իրավացի, քաղաքացիական, բառացիորեն
- 2) դրացի, գավառացի, եվրոպացի, փարիսեցի
- 3) խելացիորեն, կանացիություն, վրացական, մարսեցի
- 4) համազյուղացի, երևանցի, նշանացի, տառացի

**110. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *եղ* վերջածանց.**

- 1) ահեղագոչ, մարմնեղ, ուժեղանալ, շքեղաշուք
- 2) բաղեղ, ձվածեղ, թիկնեղ, լուսեղ
- 3) հյութեղ, կանթեղ, հրաշագեղ, հոնեղ
- 4) մարմնեղ, հնչեղ, փառասեղ, հեղեղատ

**111. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *ենի* վերջածանց.**

- 1) մասրենի, մայրենի, բորենի, արծվենի
- 2) արժանանալ, դեղձենի, քաղբենիություն, քաղցրավենիք
- 3) հայրենական, վայրենանալ, նոնենի, թզենի
- 4) ընձենավոր, խնկենի, հավիտենական, բալենի

**112. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *իչ* վերջածանց.**

- 1) բաղադրիչ, չամիչ, վայելչաղեմ, կործանիչ
- 2) թռիչք, քննչական, գրավչություն, ուսուցչանոց
- 3) տեսչություն, ավերիչ, ամբարձիչ, արտահայտչամիջոց
- 4) լուսանկարչական, ավետարանիչ, փախչել, երգչախումբ

**113. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *ին* վերջածանց.**

- 1) մանրագնին, վերջին, դյուրին, նրբին
- 2) մտացածին, խորին, խրթին, հետնախորշ
- 3) դյուրին, վերին, ահագին, մասնագետ
- 4) արտաքին, վերնահարկ, միջնադար, կարգին

**114. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *յակ* վերջածանց.**

- 1) մանյակ, տասնյակ, պատանյակ, սպասյակ
- 2) ալյակ, հնգյակ, եռամսյակ, կիսամյակ
- 3) քառյակ, խոյակ, վեցօրյակ, որդյակ
- 4) տասնօրյակ, ոսպնյակ, հարսնյակ, երկվորյակ

**115. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն – *որդ* վերջածանց.**

- 1) երրորդ, ճամփորդական, բաժանորդագրվել, հայցորդ
- 2) կցորդ, որերորդ, հաճախորդ, զուգորդում
- 3) անձրևորդ, ուղղորդել, տասներորդ, վարորդական
- 4) անմնացորդ, քառորդ, միջնորդել, հանապազորդ

**116. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն *–ուտ* վերջածանց.**

- 1) տանձուտ, աղուտ, կապուտակ, ավագուտ
- 2) ծմակուտ, եղեգնուտ, տղմուտ, մացառուտ
- 3) մայրամուտ, բրուտանոց, ջրուտ, թփուտ
- 4) կարկուտ, ծանծաղուտ, մկանուտ, քարքարուտ

**117. Բառերից քանիստ՞ւմ *–ական* վերջածանց կա.**

*ռազմական, հավաքական, խոռովկան, ազնվական, պատանեկան, հովվական, լեզվական, լծկան, հոգևորական, թխական:*

- 1) հինգում
- 2) իննում
- 3) ութում
- 4) յոթում

**118. Բառերից քանիստ՞ւմ *–ական* վերջածանց կա.**

*հոգեկան, թվական, բայական, կական, հարսանեկան, գոյական, վարձկան, բանականություն, որսական, ընտանեկան:*

- 1) վեցում
- 2) յոթում
- 3) ութում
- 4) իննում

**119. Ո՞ր բառի արմատներից մեկին կարող է միանալ *–ական* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

- 1) չարագույժ
- 2) նախավկա
- 3) վերջնագիծ
- 4) նորամուտ

**120. Բառերից քանիստ՞ի արմատներից մեկին կարող է միանալ *–ույթ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

*վիրահատություն, անհասանելիություն, սահմանադրական, անասնաբուծություն, կծվահամություն, բացատրություն, հոգեհանգիստ, ելականման, պատվարժան, վարսահարդար:*

- 1) վեցի
- 2) հինգի
- 3) չորսի
- 4) երեքի

**121. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն մեկից ավելի ածանց.**

- 1) անմնացորդ, համաստեղություն, երկնային, փախստական
- 2) ընդունելի, պարունակ, թարգմանչություն, հայրենիք
- 3) հարգանք, խորհրդական, ենթաշրջան, ձեռնարկություն
- 4) թերագնահատում, հակոտնյա, նախանձելի, բանտարկյալ

**122. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն մեկից ավելի ածանց.**

- 1) ուղղակիորեն, լուսավորիչ, կուսակցական, չկամություն
- 2) հիվանդանոց, անէական, ներդաշնակություն, բարձիթողի
- 3) անմիջապես, խանութպան, քաղաքացիական, աշնանային
- 4) ազնվագույն, համարժեք, թռչնորս, տարատեսակ

**123. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն մեկից ավելի ածանց.**

- 1) անփութորեն, տմարդի, աստվածաշնչյան, հակակրանք
- 2) առաջին, բացահայտիչ, դիպվածաբար, գերադասելի
- 3) ամպամածություն, ծածկադմփոց, վարորդական, նախահիմք
- 4) մշակութային, համակարծիք, պահակային, գետնատարած

**124. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր.**

- 1) ձեռնտու, վարկառու, աշառու, գրպարտիչ
- 2) գործարանատեր, վիրակապարան, աչքաբաց, ավտոկայան
- 3) անհուսություն, տարրալուծում, լեզվաբանություն, հայազգի
- 4) թռչնաբուծարան, ուրվապատկեր, բնակատեղի, հեռուստացույց

**125. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր.**

- 1) տանտիրուհի, մարգագետին, կեսգիշերային, գորաբանակ
- 2) հետաքննություն, բազմախորհուրդ, բարեհնչյուն, դյուցազնական
- 3) հինգհարկանի, միաբանություն, շանթարգել, ուխտադրժորեն
- 4) երկփթանոց, հիվանդանոց, հետախուզական, ծովանկարիչ

**126. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր.**

- 1) հոգեբանություն, մարդասպան, դերասան, ողբերգակ
- 2) համաքաղաքացի, տնտեսական, մանրապատում, սևահոնք
- 3) ամանորյա, բարեբախտաբար, անգրագետ, անակնկալ
- 4) ծայրաստիճան, դասասենյակ, տամնօրյակ, արևմուտք

**127. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդածանցավոր.**

- 1) քառակուսի, վարքագիր, հացկերույթ, բազմատեսակ
- 2) գրչատուփ, ճենապակյա, խելքահան, բնութագիր
- 3) լիցքակար, շրջանաձև, բանակատեղ, վարչակազմ
- 4) սևահոնք, խցանահան, տկարամիտ, լիալուսին

**128. Քանի՞ շարքում բարդածանցավոր բառ կա.**

- մարգագետին, անգրագետ, թանաքաման
- ծայրաստիճան, մրցասպարեզ, ներկայացում
- շքամուտք, առաջնորդ, ներդաշնակ
- տարօրինակ, ողջամիտ, համազգային

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

129. Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.

- 1) խորհրդակցություն = խորհ+(ու)րդ+ ա+կ(ի)ց+ություն
- 2) դեղնակարմրավուն = դեղ(ի)ն+ ա+ կարմ(ի)ր+ավուն
- 3) վայելչագրություն = վայել+(ու)չ+ ա+ գ(ի)ր+ություն
- 4) կառամատույց = կառ+ ա+ մատ+ույց

130. Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.

- 1) ունկնդրում = ունկն+ դ(ի)ր+ում
- 2) ապօրինաբար = ապ+օրին (օրեն)+ա +բար
- 3) բաժանմունք = բաժան+մունք
- 4) երկարաքղանցք = երկար+ա+ք(ու)ղ+անց+ք

131. Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.

- 1) խմբագրել = խ(ու)մբ+ա+գ(ի)ր+ել
- 2) խճանկար = խ(ի)ճ+ա+նկար
- 3) տարորոշել = տար(ր)+ րորոշ+ ել
- 4) հակառակորդ = հակ+ առ+ ակ+ որդ

132. Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.

- 1) առաջնություն = առ+աջ+(ի)ն+ություն
- 2) հետախուզել = հետ+ա+ խուզել
- 3) հետաքննչական = հետ+ա+քն(ի)ն + (ի)չ+ական
- 4) հայելազարդ = հայ+ել+ա+զ +արդ

133. Ո՞ր բառի բաղադրիչների քանակն է սխալ նշված.

- 1) թղթակցություն = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
- 2) երկարաքղանցք = 3 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
- 3) բթամտություն = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
- 4) գերատեսչական = 2 արմատ, 2 ածանց, 1 հոդակապ

134. Տրված բառերից ո՞րն է կազմությամբ համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց + արմատ.

- 1) անկայուն
- 2) ապերասան
- 3) տարօրինակ
- 4) չվերթ

135. Տրված բառերից ո՞րն է կազմությամբ համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց + հոդակապ + արմատ.

- 1) անվավեր
- 2) նախագահ
- 3) գերարագ
- 4) փոխանուն

136. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+հոդակապ+վերջածանց.

- 1) ընտանեկան
- 2) ծերանոց
- 3) այգեպան
- 4) սննդարար

137. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+վերջածանց.

- 1) ընդունելի
- 2) արձակուրդ
- 3) կայունություն
- 4) առողջություն

138. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց+արմատ+վերջածանց.

- 1) ապստամբություն
- 2) անհեռատես
- 3) անարգանք
- 4) անջատում

139. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+ածանց+արմատ (առանց հոդակապի).

- 1) շրջանավարտ
- 2) բերքահավաք
- 3) հատկապես
- 4) հարսնատես

140. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+հոդակապ+արմատ.

- 1) բնութագիր
- 2) հանրակառք
- 3) աշխարհասփյուռ
- 4) ջրավազան

141. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+արմատ.

- 1) կատվագզի
- 2) ավարառու
- 3) եռաստիճան
- 4) դերասան

142. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց+արմատ+արմատ (առանց հոդակապի).

- 1) անգրագետ
- 2) առաջարկ
- 3) անկողմնակալ
- 4) համընդհանուր



143. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+արմատ+վերջածանց.

- 1) երկնականար
- 2) ակնառու
- 3) տարկետում
- 4) ալեհավաք

144. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+վերջածանց+վերջածանց.

- 1) պարապմունք
- 2) սառցարան
- 3) զինեգործություն
- 4) բանակային

145. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց+արմատ+հոդակապ+արմատ.

- 1) անբարբառ
- 2) անբարեկիրթ
- 3) անհավասար
- 4) անժամանակ

146. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+հոդակապ+արմատ+վերջածանց.

- 1) բայահիմք
- 2) պերճաշուք
- 3) դերանվանական
- 4) վերաբացում

147. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց+արմատ+արմատ+վերջածանց (առանց հոդակապի).

- 1) նախագորակոչային
- 2) անմեղսունակ
- 3) սպաղասակարգային
- 4) փոխհամաձայնություն

148. Տրված բառերից ո՞րն է կազմությանը համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ նախածանց+արմատ+հոդակապ+արմատ+վերջածանց.

- 1) փոխիրաձգություն
- 2) համագործակցություն
- 3) հակասահմանադրական
- 4) առանձնասենյակ

149. Նշվածներից ո՞րը հապավման տեսակ չէ.

- 1) տառային
- 2) վանկային
- 3) խառը
- 4) բառային

**150. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են հապավումներ.**

- 1) ԵԱՀԿ, ՍԻԷՆԷՆ, ՀՀ ԿԳՆ
- 2) արտգործնախարար, ժողգործիքներ, բնակվարձ
- 3) ԱյբիԷն, զինտեխնիկա, Սևանհէկ
- 4) ումասվար, փոխտնօրեն, ՉԺՀ

**151. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են հապավումներ.**

- 1) պետկրկես, կոմկոս, Երևանօէկ
- 2) ԵԱՀԿ, բուժմիավորում, բուժակ
- 3) սանհանգույց, դաստէկ, զինուժ
- 4) ՈՒԵՖԱ, քիմկոմբինատ, ԱՊՀ

**152. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ.**

- 1) ժողդատարան, զինժառայող, ուսխորհուրդ, շինջոկատ
- 2) նորընտիր, կուստոմս, քաղքանտարկյալ, պետպատվեր
- 3) ումասվար, մարզկենտրոն, գրապահոց, սոցհարցում
- 4) մուլտֆիլմ, շինհրապարակ, զինադադար, պետեկամուտ

## ԲԱԺԻՆ 3

## ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## 1. Գոյականի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Գոյականները լինում են անձնանիշ և իրանիշ:
- 2) Գոյականի անորոշ առումը արտահայտվում է առանց հոդի:
- 3) Բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով:
- 4) Գոյականի հոգնակի թիվը կազմվում է հիմնականում **-եր** և **-ներ** վերջավորություններով:

## 2. Նշվածներից ո՞րը գոյականի հատկանիշ չէ:

- 1) հոլովը
- 2) առումը
- 3) դեմքը
- 4) թիվը

## 3. Քանի՞ գոյական կա տրված հատվածում:

Արշավանք սկսվեց ուրիշ փողոցներից և միայն երրորդ օրը հասավ մեզ: Խանութները կողոպտում էին, մանկական անկողիների բուրդը քամու բերանում էր, կանանց հեծկլտոցը լցրել էր օդը:

- 1) ինը
- 2) տասը
- 3) տասնմեկ
- 4) տասներկու

## 4. Նախադասության մեջ ի՞նչ պաշտոն չի կարող կատարել գոյականը:

- 1) տեղի պարագայի
- 2) հանգման անուղղակի խնդրի
- 3) մասնական բացահայտչի
- 4) պարզ ստորոգյալի

## 5. Ո՞ր նախադասության մեջ գոյական չկա:

- 1) Նա նկատեց, որ մեծ գրողի ասածները հիշում են բոլորը:
- 2) Մտածում էր՝ ուր գնա, ում դիմի այդ խնդրով:
- 3) Յուրաքանչյուր ոք կարող է կասկածել, բայց երբեք չհերքել ուրիշներին:
- 4) Այսպիսով, փոքր առ փոքր ինձ հաջողվեց աղայի ուշադրությունը գրավել:

## 6. Նշված անձնանուններից ո՞րը կարող է գործածվել որպես հասարակ անուն:

- 1) Մասիս
- 2) Տարոն
- 3) Մարտիրոս
- 4) Սիփան

## 7. Նշված անձնանուններից ո՞րը չի կարող գործածվել որպես հասարակ անուն:

- 1) Գոհար
- 2) Գառնիկ
- 3) Անի
- 4) Համբարձում

8. Նշված անձնանուններից ո՞րը չի կարող գործածվել որպես հասարակ անուն:

- 1) Շիրակ
- 2) Հասմիկ
- 3) Գոռ
- 4) Հրաչյա

9. Գոյականներից քանի՞սն են հոգնակին կազմում –ներ վերջավորությամբ.

*կայսր, շտաբ, սկյութ, ստրուկ, սանր, սկյուռ, սպի, վագր, աստղ, գլուխ:*

- 1) բոլորը
- 2) վեցը
- 3) յոթը
- 4) հինգը

10. Գոյականներից քանի՞սն են հոգնակին կազմում –եր վերջավորությամբ.

*դրամահատ, ստուգայց, նիզակակիր, հակաթույն, ջրաշիթ, ազնվայր, պատշար, աստղագետ, ատամնաշար, հարցաշար:*

- 1) վեցը
- 2) յոթը
- 3) ութը
- 4) ինը

11. Ո՞ր շարքում անեզական գոյական կա:

- 1) Արշակունիներ, Երվանդունիներ, Մամիկոնյաններ, Կամսարականներ
- 2) վիպասքեր, աղանդերներ, ակրատներ, աղանդներ
- 3) մայրցամաքներ, Մասիսներ, Ֆիլիպիներ, երկրամասեր
- 4) գինիներ, շոգեր, անձրևներ, քամիներ

12. Բացառական հոլովով նախադասության ո՞ր անդամը չի կարող դրվել:

- 1) ստորոգյալ կազմող բառը (ստորոգելին)
- 2) պատճառի պարագան
- 3) որոշիչը
- 4) զիջման պարագան

13. Գործիական հոլովով նախադասության ո՞ր անդամը չի կարող դրվել:

- 1) ժամանակի պարագան
- 2) ձևի պարագան
- 3) վերաբերության անուղղակի խնդիրը
- 4) որոշիչը

14. Ուղղական հոլովով նախադասության ո՞ր անդամը չի կարող դրվել:

- 1) կոչականը
- 2) ստորոգյալ կազմող բառը (ստորոգելին)
- 3) պատճառի պարագան
- 4) որոշիչը

**15. Ո՞ր բառը ներքին հոլովման չի պատկանում:**

- 1) նախամայր
- 2) նախահայր
- 3) տառամայր
- 4) վանահայր

**16. Ո՞ր բառը ներքին հոլովման չի պատկանում:**

- 1) գինետուն
- 2) վերնատուն
- 3) փառատուն
- 4) կնքահայր

**17. Քանի՞ արտաքին հոլովում ունի գոյականը:**

- 1) ութ
- 2) յոթ
- 3) վեց
- 4) հինգ

**18. Գոյականներից քանի՞սը կարող են ենթարկվել նաև այլաձև հոլովման.**

*հայր, կայսր, Գալուստ, սուգ, հույս, մարդ, օր, լույս, դուստր:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**19. Գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.**

*քույր, մորեղբայր, մահ, դերանուն, ուսուցում, գերություն, հենասայուն, արարում, աղամաթուզ, ջրշուն:*

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) երեքը

**20. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

- 1) լեզվանի, հովանի, պիտանի
- 2) ապառիկ, տակառիկ, անառիկ
- 3) աշխարհիկ, բացառիկ, պատառիկ
- 4) հպանցիկ, միջանցիկ, տարանցիկ

**21. Բառերից քանի՞սն են ածական.**

*հասարակ, հասարակական, հասարակարգ, հասարակություն, հասարակած, հասարակագետ, հասարակաձային, հասարակայնացում:*

- 1) վեցը
- 2) հինգը
- 3) չորսը
- 4) երեքը

**22. Տրված հատվածում քանի՞ ածական կա:**

Մոռացա բոլոր հոգսերն առօրյա,  
Ցանկություններս ապարդյուն ու սին,  
Անմիտ ու ունայն տենչերիս ուղին,  
Սուտ վարդերն ու սուր փշերը նրա....

- 1) հինգ
- 2) վեց
- 3) յոթ
- 4) ութ

**23. Քանի՞ ածական կա տրված հատվածում:**

*Բայց շուտով հասակավոր հայրերն ու մայրերը սկսեցին հոգնել, իսկ մյուս մասնակիցները դեռ ուրախ–ուրախ ծիծաղում էին: Քաղցրեղենը բերելու ժամանակ ընթրողների տրամադրությունն այնքան բարձր էր, որ ոչ ոք չնկատեց չքնաղ Աղեղինայի և Պետրոսի՝ միմյանց հետ փոխանակվող քաղցր ժպիտները, գողտրիկ սիրախոսությունները:*

- 1) վեց
- 2) հինգ
- 3) յոթ
- 4) ութ

**24. Քանի՞սն են կոտորակային թվականներ.**

*մեկ երրորդ, հինգից վեց, առաջին, քսանհինգերորդ, քառորդ, յոթական, ութերորդ, յոթ հինգերորդ, վաթսուն, հինգ վեցերորդ:*

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) ոչ մի

**25. Փոխանվանաբար (գոյականաբար) գործածված քանի՞ թվական կա հետևյալ հատվածում:**

Մի ոտ չունեմ,  
Ուստի և ձեր երկուսի տեղ  
Երեքն ունեմ:  
Երկու ոտով,  
Ինչ դուք չունեք և հեշտ կոչում եք «հեռակներ»,  
Ես մայթերն եմ կետադրում,  
Որ մարդկային կյանքի վեպը դյուրին կարդա  
Մայթագրեր ընթերցելու ընդունակը,—  
Իսկ երրորդով,  
Որի համար ինձ կոչում են միտանի,  
Նրանով էլ տնտեսում են տան ծախսերը՝  
Ձեր գույզի տեղ միշտ կենտ կոշիկ պատվիրելով:

- 1) երկու
- 2) երեք
- 3) չորս
- 4) հինգ

26. Ո՞ր նախադասության մեջ թվականի կազմության կամ գրության սխալ *չկա*:

- 1) Փողոցում ուշադրություն էր գրավում իներորդ շենքը:
- 2) Արդեն եկրորդ անգամ եմ նույնը կրկնում:
- 3) Տասներեքը խորհրդավոր թիվ է:
- 4) X-րդ դարը հայ գրականության համար շրջադարձային էր:

27. Այն բառերը, որոնք մատնացույց են անում առարկա, հատկանիշ, քանակ՝ առանց դրանք անվանելու, կոչվում են՝

- 1) մակբայ
- 2) դերանուն
- 3) վերաբերական
- 4) գոյական

28. Ո՞ր բառը *չենք* կարող տեղադրել հետևյալ սահմանման մեջ:

*Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք մատնացույց են անում ..... առանց դրանք անվանելու:*

- 1) առարկա
- 2) վերաբերմունք
- 3) հատկանիշ
- 4) քանակ

29. Քանի՞ դերանուն կա տրված հատվածում:

*Խեղճ մարդիկ, չեն էլ ուզում հավատալ, որ կգտնվեն աշխարհում այնպիսի անձինք, որոնք երբևիցե կհետաքրքրվեն յուրաքանչյուրի կյանքով և կկամենան օգնել իրենց առանց որևէ շահի, – ասաց նա:*

- 1) ութ
- 2) հինգ
- 3) վեց
- 4) յոթ

30. Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն *չկա*:

- 1) Այն փողը, որ պիտի տանք փայտի, կծախսենք այլ կարիքներ հոգալու համար:
- 2) Պետք էր Կամսարյանի տեղը լինել՝ հասկանալու համար, թե ինչպիսի տանջանքի ու նահատակության ժամեր էին դրանք:
- 3) Նա արագ մոտեցավ այն սենյակին, ուր քնած էին տանտերն ու նրա երիտասարդ կինը:
- 4) Ոչ ոք չի ասում, ինչ մտածում է, բայց ամեն ոք խոսում է ազնվությունից:

31. Նշվածներից ո՞րը դերանվան տեսակ *չէ*:

- 1) ցուցական
- 2) ժխտական
- 3) որոշիչ
- 4) անորոշ

32. Տրված քերականական հատկանիշներից ո՞րը հատուկ *չէ* դերանուններին:

- 1) հոլովվելը
- 2) հոդ ստանալը
- 3) հոգնակի թիվ ունենալը
- 4) սեռը

**33. Ո՞ր նախադասության մեջ կա հարաբերական դերանուն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հետո մենք ինչքան սպասեցինք մի լավ առիթի:
- 2) Ինչպես ինքս պոկեմ ինձ քեզնից ու վեր կենամ գնամ:
- 3) Ինչքան խոսեցինք գրականությունից այնքան վեճը թեժացավ:
- 4) Ես ինչպես կարող եմ սխալներդ անընդհատ ներել հուսալ որ կփոխվես ճիշտ վարքով կապրես:

**34. Քանի՞ դերանուն կա բերված հատվածում:**

Գիշերն է փռել իր թևերը մութ,  
 Գիշերն է գերել իմ սիրտը ցաված.–  
 Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ  
 Եվ ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

**35. Ո՞ր նախադասության մեջ անձնական դերանուն կա:**

- 1) Նա, եթե ուրիշի խոսքը չլսեր, հիմա անմխիթար վիճակում չէր լինի:
- 2) Ճիշտ կլինեին այս պատասխանները, եթե խնդիրներն ուշադիր լուծվեին:
- 3) Հենց ճայթեց կայծակը, կաղնին բռնկվեց, ու շուտով ոչ մի կանաչ ճյուղ ծառից չմնաց:
- 4) Ջուրը կյանքի ակունքն է. նա է ամեն ինչին կենդանություն պարգևողը:

**36. Թվարկվածներից քանի՞սն են ցուցական դերանուն.**

*որոշ, որևէ, այնքան, մյուս, այլ, սույն, միայն, նույն, այսպիսի, բոլոր:*

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) յոթը
- 4) ութը

**37. Հնդվվելիս թվարկված դերանուններից քանիսի՞ արմատը չի փոխվում.**

*ես, ոչ մեկը, ով, բոլորը, մենք, ինքը, մյուս, ոչինչ, դուք:*

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) չորսի
- 4) հինգի

**38. Քանի՞ տեսակ դերանուն կա տրված բանաստեղծական հատվածում:**

Բուքն է գալարվում խրոխտ ու արի,  
 Դաշտով սուրում է կառքը օտարի,  
 Այդ կառքում օտար մի ջահելություն,  
 Ո՞ւր ես դու, բախտ իմ, ո՞ւր ես, խնդություն:  
 Ամեն ինչ կորավ բութի գալարում,  
 Հենց մի այսպիսի կատաղի կառքում:

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց



**39. Տրված դերանուններից ո՞րը հոգնակի թվում չի հոլովվում:**

- 1) սա
- 2) ոմն
- 3) ով
- 4) ուրիշ

**40. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ:**

- 1) սահմանազատել, կարկաչել, մատնել, մթագնել
- 2) կանաչել, հանգչել, շրջապատել, մրտտել
- 3) կանչել, տեսնել, կարոտել, սիրել
- 4) բառաչել, պոկոտել, փայլփլել, ուտել

**41. Թվարկված բայաճևերից քանի՞սն են ածանցավոր.**

*ենթադրել, ներգաղթել, հառաչել, իջել, կոթնել, վրդովել, հագցնել, ընկնել, ելել, վերացել:*

- 1) վեցը
- 2) յոթը
- 3) հինգը
- 4) չորսը

**42. Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ չկա:**

- 1) Շնորհալին նորոգեց ու թարմացրեց ինչպես գրականությունը, այնպես էլ երաժշտական արվեստը:
- 2) Միանգամից վերացան իր սերնդակիցների թյուր պատկերացումներն աշխարհի և նրա կառուցվածքի մասին:
- 3) Նա միաժամանակ ցանկացել է մանուկներին սովորել տալ հայոց այբուբենը՝ նրա ամեն մի հերթական տառով սկսելով իր ուտանավորի տները:
- 4) Հատկապես կիլիկյան գրչատների ձեռագրերը շլացնում էին իրենց ճոխությամբ՝ երբեք, սակայն, չխախտելով չափի սահմանագիծը:

**43. Բայերից քանի՞սն են բազմապատկական.**

*ծոմնել, ցատկոտել, ժանգոտել, ջարդոտել, փշոտել, պատռոտել, գզգզել, թրատել, խշխշալ:*

- 1) յոթը
- 2) ինը
- 3) ութը
- 4) վեցը

**44. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:**

- 1) Եվ խմբակն իսկույն բաժանվում է մասերի, որպեսզի ծառուղիներով անցնելու ժամանակ իրար չխանգարեն:
- 2) Գիշեր ժամանակ տուն մտնելով՝ նա որոշեց անհանգստություն չպատճառել տնեցիներին և կամացուկ անցավ դեպի իր սենյակը:
- 3) Պետրոսի գալուց հետո նրա մայրն իրեն լիակատար երջանիկ պիտի զգար:
- 4) Տիկիներն այդ պարահանդեսին երկար էին պատրաստվել, իսկ տղամարդիկ՝ նախապես կարգավորել ամեն ինչ:

**45. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:**

- 1) Երկու օր հետո, տարածքը քայլ առ քայլ խուզարկելով, հասնում են քարայրին և կանգ առնում արյունալի տեսարանի առջև:
- 2) Օրիորդը մտածեց, որ իրեն կարող էին օգնել, բայց ոչինչ չարեցին:
- 3) –Ճիշտ է, շատ եմ ցանկացել, որ իրագործեմ Ձեր երազանքը, բայց չեմ կարողացել:
- 4) Երիտասարդը ժպտաց և մտածեց, որ այլևս իրավունք չունի այդ նորոգվող բարեկամությունը թուլացնելու:

**46. Նախադասություններից քանիստ՞ում անդեմ բայ կա:**

- – Աստված օգնական, – ասաց Կամսարյանը և մոտեցավ վանահորը՝ նրա աջը համբուրելու համար:
- Գործելու տենչով վառված այդ մարդիկ իրավագուրկ զինվորագրյալներն էին, որ պատրաստ կանգնեցին մեր առջև:
- Բլրի լանջն ակոսող կանոնավոր կեռմաններից դեպի տափարակն իջանք, որ բլրի ստորոտից հեռու էր միայն մի քանի քայլով:
- Մի քանի վայրկյան լուռ մտածելուց հետո նա հասկացավ, որ մեղադրանքներն անհիմն էին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**47. Քանի՞սն են ձևաբայեր (կախյալ դերբայներ).**

*ուտել, հասել, բարձրացրել, մտել, եկել, գնալ, մնացել, փողփողալ, թռցնել, վերցրել:*

- 1) բոլորը
- 2) վեցը
- 3) յոթը
- 4) ութը

**48. Տրվածներից ո՞ր հատկանիշն է ընդհանուր դիմավոր և անդեմ բայերի համար:**

- 1) բայի դեմքը
- 2) բայի եղանակը
- 3) բայի սեռը
- 4) բայի ժամանակը

**49. Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայ չկա:**

- 1) «Եթե թշնամուն վերացնենք, անպայման կլինի խաղաղություն», – մտածում էր իշխանը:
- 2) Մի թագավոր կամեցավ գեղեցիկ դարպաս շինել և զարդարել այն զարմանահրաշ նկարներով:
- 3) Նա այլևս ոչ մի գիշեր դուրս չէր գա, որպեսզի չհանդիպեր այդ խորհրդավոր անձանոթին:
- 4) Մի մարդ խանութ ուներ և գիտեր՝ դրանով կվաստակի իր օրվա սպրուստը:

**50. Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայաձև չկա:**

- 1) Նա լինում էր ամենուր և ամենուր արժանանում պատվի ու հարգանքի:
- 2) Եվ մի՞թե այդ վշտիդ համար  
Չեմ սիրում քեզ այդպես քնքուշ,  
Եվ խոնարհվում քեզ պես համառ,  
Օ՛, հայրենիք դառն ու անուշ:
- 3) Լինե՞ր այնպես, որ քայլեր իր հայրենի դաշտերով ու ծաղիկների մեջ գլուխը թաղած՝ իր վերջին շունչը տար:
- 4) Ես ուզում եմ, որ պարապը լցվի լացով,  
բայց ոչ թե մոր, այլ մանուկի:

**51. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:**

- 1) Նա լռեց, հառաչեց՝ հայացքը ուղղելով դեպի անորոշ տարածություն:
- 2) Ա՛խ, սինյո՛ր, եթե միջոց ունենայի, կսովորեի թավջութակ նվագել ու կմտնեի երաժշտական խումբ:
- 3) Գործ շատ կար. ծրագրեր էի վաճառում, բեմում տարբեր աշխատանքներ անում:
- 4) Շուտով տղան մեծանում է և դառնում հայտնի արհեստավոր:

**52. Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

- 1) Նա գլխաբաց էր, երեսը՝ անվվա, աչքերի սպիտակուցները՝ դեղնած, մազերը՝ գզգզված, դեմքը՝ մագաղաթի պես գունատ:
- 2) Լևոնը փաթաթվեց մոր պարանոցին և սկսեց բարձր ձայնով հեծկլտալ:
- 3) Զգացի, որ տղան շատ վրդովվեց իմ այդ խոսքից, և փորձեցի մեղմել անհաճո իրավիճակը:
- 4) Նա վաղուց էր ինձ խոստովանել, թե սիրահարված է այդ աղջկան:

**53. Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ չկա:**

- 1) Զարմացած նայեցի նրա դեմքին. այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և՛ զայրույթ, և՛ պաղատանք:
- 2) Ուղեկցուհին շատ էր տխրել և այլևս ոչինչ չէր խոսում:
- 3) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:
- 4) Նա փախավ մի քսան քայլ հեռու, կուչ եկավ մի ծառի տակ և գիրքը թևի տակ առավ:

**54. Տարբերակներից քանիստ՞ն հարկադրական եղանակի բայաձև կա:**

- Աշխարհին, այո՛, մաքրություն է պետք:  
Վերելքը ծանր էր, ծանր էր՝ ի՛նչ արած...  
Պետք է իմ բոլոր ուժերը լարեմ...
- Եվ հայելուց... պիտի կոշիկ կարել,  
Որ ոտնատակն անգամ հողը արտացոլի...
- Մարդկանց մոտ պետք է աչալուրջ լինես, միշտ ոտքի վրա և սուրը՝ ձեռքիդ...
- Իսկ սեփական անձի արտացոլման համար  
Չեզ հայելի պե՞տք է:  
Ինձ հայելի պետք չէ:

- 1) չորսում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) հինգում

**55. Ո՞ր տարբերակում հարկադրական եղանակի բայածև չկա:**

- 1) Նա պիտի մեր առաջին  
Ու վերջին սերը լինի:
- 2) Տարիներ հետո նա պիտի դառնա  
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...
- 3) Պիտի կրկին դասը սերտեն իրենց սիրո՝  
Ըստ աստղային այբուբենի:
- 4) Եվ պե՞տք է արդյոք Քեզ միշտ ունենալ իմ կողքին:

**56. Տարբերակներից քանիստ՞ում հրամայական եղանակի բայածև կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Իմ գերեզմանին դուք չմոտենաք  
Հարկավոր չէ ինձ ոչ ծաղիկ ոչ սուգ...
- Հուսաբեկ մութ ու մեզ թող լինի  
Իմ վերև թող արև չըլինդա:
- Թող շուրջս փովի անանց լռություն  
Թող ինձ չհիշեն թող ինձ մոռանան
- Իսկ ներսում իմ, ներսում մի ասեղ  
Ասղտում է ննջել առհավետ...

- 1) մեկում
- 2) ոչ մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

**57. Ո՞ր տարբերակում հրամայական եղանակի բայածև չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Բաբելոնն է եղել մեր ախոյանը տես  
Անհետ կորել անցել է չար մշուշի պես:
- 2) Տխուր երեկոն զարկել է վրան  
Միրտըս կարոտով կանչում է քեզ եկ:
- 3) Նախ պիտի ձեզ խոստանամ  
Երբեք հոգով ձեռքի նման չկոշտանալ:
- 4) Ինձ այդպես քրոջ պես մի գթա:

**58. Տարբերակներից քանիստ՞ում լրձական եղանակի բայածև կա:**

- Անունդ թող փարոս լինի ինձ  
Մուտ կյանքի և դառը մահու դեմ...
- Եվ եթե դուք գաք մի օր այցի իմ շիրիմին,  
Կըժպտա ձեզ իմ սրտից բուսած վարդենին:
- Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած...
- Կյանքս թողած անհունում, ես երգել եմ սերը խոր  
Ու կարոտը թևերիս, որ երբե՛ք քեզ չհասան...

- 1) չորսում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) մեկում

**59. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղձական եղանակի:**

- 1) գնենմ, կարդայինք, չվազեր, գիտեին
- 2) ունենամ, կամենայիր, չսիրենք, դուրս գնար
- 3) չուզեց, չկարդար, նատեիք, սանրեր
- 4) մոտենար, հեռանար, ուներ, վազեր

**60. Ըղձական եղանակի քանի՞ քայան կա տրված հատվածում:**

Իմ գերեզմանին դուք չընտենաք,  
Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,  
Թողե՛ք, որ լինեմ հեռավոր, մենակ,  
Չըզգամ, որ կա սեր, և՛ ցնորք, և՛ լաց...

- 1) երկու
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

**61. Տարբերակներից քանիստ՞ն են քաղրական եղանակի քայան կա:**

- Իմ ճամփան անվախճան մի գիշեր,  
Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա:
- Ու չի ելնի մոխիրից տխուր հմայքը ձեր տան,  
Ու չի լինի էլ սիրո քաղցր ու կապույտ ձեր շղթան:
- Հեռուում են քեզ, երբ արյուն ունես,  
Իսկ երբ ցամաքես կմոռանան քեզ:
- Չի զիջել նա իր արմատը վերջին  
Արհավիրքների զարկին անխնա:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**62. Ո՞ր տարբերակում են քաղրական եղանակի քայան չկա:**

- 1) Ուր է՛լ լինեմ՝ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր...
- 2) Չի դավաճանում ոչ մի ժամանակ  
Հյուրընկալության հինավուրց ոճին:
- 3) Ա՛խ, նորից «Բարի՛ ճամփա»,  
Ա՛խ, նորից «Մնաս բարով»...  
Մի տեսակ տազնապ կա, որ  
Չես ասի ոչ մի բառով:
- 4) Մենավոր՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,  
Կարոտիդ կանչը չի հասնի նրան...

**63. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:**

- 1) Կիրակի երեկոները Մակար աղան սովորություն ուներ եկեղեցու ջահերից մեկը վառելու, եկեղեցու դռանը կանգնելու և աղքատների ձեռքին մի-մի սև փող դնելու:
- 2) Ինձ թվում էր, որ նա այդ ժամանակ թեթևություն էր զգում. կարծես ուսերից ընկնում էր մի ահագին ծանրություն:
- 3) Կարելի է ասել, որ խանութում կամ տանը նրան ուրախ տրամադրության մեջ կհանդիպելիր միայն այն ժամանակ, երբ առևտուրը հաջող էր անցել:
- 4) Երբ նա ճանապարհվում էր Ռուսաստան, իմ գործերը բազմապատկվում էին, և ես դառնում էի լիակատար կառավարիչ:

**64. Ընդգծված անկանոն բայերից ո՞րն է տվյալ ժամանակաձևում անկանոն:**

- 1) Եվ ո՞վ **կասի**՝ ինչո՞ւ ես դու,  
և ո՞վ կասի, թե ո՞րը հասար...  
2) Ուրիշ բլբուլ **կգա** կմտնի բաղը,  
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
- 3) Հայաստա՛ն, անունդ **տալիս**  
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում:
- 4) Քամին սարերից առաջին ձյունի  
Փոշին է բերում և շաղ **է տալիս**  
Բոբիկ ոտներիս ու փշաքաղված մազերիս վրա:

**65. Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ չկա:**

- 1) Նա իր մեջ կրում էր այն ամենը, ինչ թելադրում էր «ժամանակի ոգին»:
- 2) Այստեղ նրանք ունեին բավական մեծ քանակությամբ նավթահորեր, երկու հանք, մի ահագին նավթագործարան:
- 3) Արդեն մի քանի տարի է՝ նա մեզ մոտ է ծառայում:
- 4) Նա պետք է հուսա, որ իր երազանքները կիրականանան:

**66. Տրված բառերից քանի՞սն են մակբայ.**

լուրջ, կրկին, վաղուց, համարյա, միամիտ, անշուշտ, մեղմիվ, էջ առ էջ, դեսուդեն, այդպես:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**67. Ընդգծվածներից քանի՞սն են մակբայ:**

- Սակայն **երբ** խալխի քեֆերին ես անուշ տաղերս ասի,  
Ամառվա սրգերի նման անո՞ւշ է քո բառը, – ասին:
- Ու ձմռան **բուքերի միջին** ես բոբիկ ու մերկ մնացի:
- Բայց շուրջս թող **որքան** կուզե աշխարհը այս խնդա, ցնդի:
- Իմ **մահվան օրը** կիջնի լռություն,  
Ծանր կնստի քաղաքի վրա:
- Արձակ դաշտերի **ամայության մեջ** նա մեղմ շշնջաց,  
**Կարծես թե** սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին:

- 1) բոլորը
- 2) ոչ մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

**68. Քանի՞սն են մակրայ.**

այլուր, առավել, ցմահ, այդքան, փոքրիշատե, դուրս, դեպի, ցած, արդեն, երիցս, դարձյալ:

- 1) յոթը
- 2) վեցը
- 3) ութը
- 4) ինը

**69. Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:**

- 1) Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկո եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացքով կճանապարհեն:
- 2) Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
- 3) Նա իսկույն բաժանվեց ինձնից այնքան ուրախ ու հանգստացած, որ կարծես այլևս ոչ մի դժբախտություն չէր անհանգստացնում իրեն:
- 4) Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղ և հասցներ ազարակ:

**70. Ընդգծվածներից քանի՞սն են շաղկապ տրված կիրառություններում:**

- Այլ է կարոտս հիմա:
- Աղջիկը, սակայն, հիմա նորից ծաղկել, ցնծում է նորից...
- Ես էլ էի այդպես կարծում...
- Փոխանակ քաղցր օրորներու, հայրենիք, Օրբանիս քով մայրիկս ըզբեզ միշտ ողբաց:

- 1) երկուսը
- 2) մեկը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

**71. Ո՞ր նախադասության մեջ անգամ-ը վերաբերական չէ:**

- 1) Մարտում ընկածների անունն անգամ չհիշատակվեց:
- 2) Անգամ երազել չեմ կարող Փարիզ գնալու մասին:
- 3) Տասն անգամ չափի՛ր, նոր մեկը կտրի՛ր:
- 4) Քեզ հանդիպելու մտքից անգամ սարսափում եմ:

**72. Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ:**

- 1) Եվ **սպա** ընդոստ կանգնում է ոտի, չեծնում հըրաբաշ նշույքը ռազմի...
- 2) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն, Համբույր՝ լույսեն, **որ** չորս դիս կը ծաղկի:
- 3) **Ինչ** որ ես չեմ ասե, նա կասե վաղը, Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:
- 4) **Ո՛չ** տրտունջ, **ո՛չ** մրմունջ սզավոր, չեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ:

**73. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական կա:**

- 1) Թո՛ղ, անհիմաստ են հորդորներդ. ճիշտը մեկն է կյանքում:
- 2) Ի՛նչ քաղցր է հիշել անցյալը:
- 3) Ափսո՛ս, քեզ մման գիտնականը իր տեղը չի գտել:
- 4) Արի՛ գիրկս, մարմնա՛ր Չարոս...

**74. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:**

- 1) Բայց ես հիմա այն պատանի տղան հո չե՞մ:
- 2) Եթե ինչ–որ տեղդ է ցավում,  
Իսկույն բուժեմ՝ լոկ հայացքո՛վ...
- 3) Թե կռիվը անխուսափ է՝  
Թող չկռվեն երկու երկիր, այլ մարդ ու կին:
- 4) Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի, ոչ թե՛ իզուր՝ ծովի վրա:

**75. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երանի նրանց որ հավատում են հաշտ ու խաղաղ ապրող մարդկության գալուն:
- 2) Թող կատակներդ որքան հասկանում ես բոլորովին դրանց ժամանակը չէ:
- 3) Վերջին իրադարձությունները միջնորդ երկրների ջանքերը գուցե վերջ դնեն հակամարտությանը:
- 4) Հենց վերջին զարգացումները այն մասին են վկայում ինչից խուսափում էին բոլորը:

**76. Ո՞ր շարքում հաստատական վերաբերական չկա:**

- 1) արդյոք, կարծես, հարկավ
- 2) գոնե, գուցե, անշուշտ
- 3) մի՞թե, իբր թե, իրոք որ
- 4) թերևս, երևի, միայն

**77. Ո՞ր նախադասության մեջ ձայնարկություն կա:**

- 1) Այս ախտով մարդիկ չե՛ն վարակվում, չե՛, Այլ վարակված են ծնվում մայրերից....
- 2) Ի՛նչ լավ է, որ քեզ Հասկանալի չէ բարբառը քամու....
- 3) –Հե՛յ վախ... Կոտրան իմ թևերս, Ընկա գիրկդ, Ալագյա՛գ:
- 4) Երանի՛ լինեի իմ հայրենի սարերում:

**78. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Նախարարական գործիւմբերը, լսելով Մարգարետունու հաջողությունների մասին, եկան և միացան նրա գործին:*

- 1) **լսելով** – անորոշ դերբայ, գործիական հոլով
- 2) **հաջողությունների** – գոյական, ի հոլովում
- 3) **եկան** – անկանոն բայ, չեզոք սեռ
- 4) **մասին** – կապ, հետադրություն



**79. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Հովհաննեսը հասավ եկեղեցի, որտեղ, ըստ սովորության, հավաքվում էր ռազմական խորհուրդը՝ կարևոր հարցեր քննարկելու:*

- 1) **հասավ** – ածանցավոր բայ, ըղձական եղանակ
- 2) **որտեղ** – հարաբերական դերանուն
- 3) **սովորության** – գոյական, **ա** ներքին հոլովում
- 4) **քննարկելու** – անորոշ դերբայ, ներգործական սեռ

**80. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Խոսքերդ կարկաչող, որպես նուրբ մի զգեստ,  
Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն...*

- 1) **կարկաչող** – ենթակայական դերբայ, չեզոք սեռ
- 2) **նուրբ** – ածական, դրական աստիճան
- 3) **մի** – անորոշ դերանուն
- 4) **ստվերում են** – սահմանական եղանակ, կրավորական սեռ

**81. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Կշարժեմ նորից քայլերս տարտամ, որ լապտերների հեզ լույսը գրկեմ:*

- 1) **կշարժեմ** – ենթադրական ապառնի, ներգործական սեռ
- 2) **նորից** – չափի մակբայ
- 3) **հեզ** – ձևի մակբայ
- 4) **որ** – ստորադասական շաղկապ

**82. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Մեռած քաղաքի համր փողոցներին իջնելու էր ձյունը՝ մեղմելով ամայության ցավն ու տառապանքը:

- 1) **մեռած** – հարակատար դերբայ, չեզոք սեռ
- 2) **համր** – որակական ածական
- 3) **իջնելու էր** – ապակատար անցյալ, ներգործական սեռ
- 4) **մեղմելով** – անորոշ դերբայ, ու հոլովում, ներգործական սեռ

**83. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Եթե զինվորների շողշողուն զենքերը չլինեին, հեռվից դիտողին կթվար, թե քարե դարի մարդիկ են հավաքվել սեղանի շուրջ:*

- 1) **չլինեին** – անկանոն բայ
- 2) **շուրջ** – մակբայ
- 3) **կթվար** – չեզոք սեռի բայ
- 4) **քարե** – ածական

**84. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Իմ մա՛յր հայրենիք, թե մայր ես և դու՛՝  
Մի՛ թող պղտորեն սիրտը քո որդու...*

- 1) **հայրենիք** – հասարակ գոյական, ուղղական հոլով
- 2) **թե** – ստորադասական շաղկապ
- 3) **մի՛ թող** – դիմավոր բայ, արգելական հրամայական, ներկա ժամանակ
- 4) **պղտորեն** – դիմավոր բայ, ապառնի ժամանակ, 3–րդ դեմք

**85. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ չկա:**

*Մի վայրկյան թվում է, թե խորհրդավոր այս կերտվածքը իսկույն ևեթ լեզու է առնելու և ասելու, որ ինքը՝ տեսել է հզոր փարավոններին, որոնք կառուցեցին վիթխարի բուրգերը:*

- 1) **թվում է** – անկանոն բայ, ներկա ժամանակ, չեզոք սեռ
- 2) **ասելու է** – անկանոն բայ, սահմանական եղանակ, ապառնի ժամանակ
- 3) **տեսել է** – անկանոն բայ, ներկա ժամանակ, ներգործական սեռ
- 4) **կառուցեցին** – պատճառական բայ, անցյալ ժամանակ, ներգործական սեռ

**86. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Դամբարանի քողարկված մուտքը հայտնի դարձավ այն պահին, երբ ամեն ինչ մանրագնին ստուգելուց հետո պեղումներ կատարողը որոշեց դադարեցնել աշխատանքները:*

- 1) **քողարկված** – հարակատար դերբայ
- 2) **դադարեցնել** – վաղակատար ձևաբայ
- 3) **ամեն ինչ** – որոշյալ դերանուն
- 4) **հետո** – կապ հետադրություն

**87. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Բարեխիղճ կառուցողները բոլոր դամբարաններն էլ փորձել են պահպանել իրենց անբասիր անադարտությանը, բայց միայն այս դամբարանի մուտքն է նրանց հնարամտության շնորհիվ թաքցվել:*

- 1) **բոլոր** – որակական ածական, դրական աստիճան
- 2) **իրենց** – անձնական դերանուն, 3–րդ դեմք
- 3) **միայն** – սահմանափակման վերաբերական
- 4) **շնորհիվ** – կապ, երկդրություն

**88. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Դամբարաններից շատերն են կողոպտվել, և մեզ հասել են սոսկ կցկտուր տեղեկություններ, բայց Թուֆանհամոնի դամբարանը լիովին փրկվել է՝ մեզ տեղեկացնելով հնադարյան տարաբնույթ սովորույթների մասին:*

- 1) **սոսկ** – սահմանափակման վերաբերական
- 2) **մեզ** – անձնական դերանուն, սեռական հոլով
- 3) **հասել են** – սուկածանցավոր բայ, անցյալ ժամանակ. չեզոք սեռ
- 4) **տեղեկացնելով** – անորոշ դերբայ, գործիական հոլով, ներգործական սեռ

**89. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Այդ գանձերը պահվում են Կահիրեի թանգարաններում՝ այսօր էլ ապշեցնելով մարդկանց, սակայն անհայտ են դրանք պատրաստող հանճարեղ վարպետների անունները:*

- 1) էլ – համադասական շաղկապ
- 2) անունները – հասարակ գոյական, ան արտաքին հոլովում
- 3) դրանք – ցուցական դերանուն, հոգնակի թիվ
- 4) պատրաստող – ենթակայական դերբայ, ներգործական սեռ

**90. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Առասպելներին ի սրտե հավատացող մարդիկ աներկբայորեն պնդում են, որ սֆինքսի մոտ եթե մեն-մենակ մնաս և նրան հարցեր տաս, ապա կարելի է ունկնդրել պատասխանը և նույնիսկ նրա հարցերը:*

- 1) աներկբայորեն – ձևի մակբայ
- 2) մնաս – բայ, 2-րդ դեմք, հրամայական ապառնի
- 3) տաս – բայ, 2-րդ դեմք, ըղձական ապառնի
- 4) նրա – անձնական դերանուն, 3-րդ դեմք, սեռական հոլով

**91. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Հանկարծ տանջալիլու բանվորներից մեկը հանդիպեց մի կարծր որձաքարի, և պարզվեց, որ մարդիկ գտնվում են ստորերկրյա ինչ-որ դամբարանի մուտքի մոտ:*

- 1) հանկարծ – ձևի մակբայ
- 2) հանդիպեց – ներգործական սեռ
- 3) որ – ստորադասական շաղկապ
- 4) ինչ – որ – անորոշ դերանուն

**92. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Բրոնզաձուլ արձանի՝ բոլոր մարդկանց հետաքրքրող լուրը անմիջապես տարածվեց հեղինիստական աշխարհով մեկ՝ դեպի Հռոդոս ձգելով բյուրավոր ճամփորդների:*

- 1) բոլոր – որոշյալ դերանուն
- 2) տարածվեց – բայ, անցյալ կատարյալ
- 3) մեկ – քանակական թվական
- 4) բյուրավոր – ածական

**93. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Հին Հունաստանի Հռոդոս կղզում չորրորդ դարում բնակիչները կանգնեցրին արևի աստծու՝ Հելիոսի վիթխարի արձանը՝ ի նշան թշնամու դեմ տարած հաղթանակի:*

- 1) չորրորդ – դասական թվական
- 2) կանգնեցրին – պարզ բայ, ներգործական սեռ
- 3) ի նշան – կապ, նախադրություն
- 4) տարած – հարակատար դերբայ, ներգործական սեռ

**94. Տրված նախադասության առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Ես, չնայած իմ անուղղելի տգիտությանը, այստեղ զգում էի մի մեծ ու հորդաբուխ ուժի ազդեցությունը:*

- 1) **չնայած** – ստորադասական շաղկապ
- 2) **անուղղելի** – ածական
- 3) **զգում էի** – բայ, ներգործական սեռ
- 4) **այստեղ** – ցուցական դերանուն

**95. Տրված հատվածում առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Բացված է արդեն մի ուրիշ երկիր,  
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,–  
Ոսկի հայացքով կախարդել է նա,  
Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր....*

- 1) **բացված** – հարակատար դերբայ, չեզոք սեռ, **ուրիշ** – անորոշ դերանուն
- 2) **բայց** – համադասական շաղկապ, **հիմա** – ժամանակի մակբայ
- 3) **հայացքով** – հասարակ գոյական, գործիական հոլով, **կախարդել է** – բայ, անցյալ ժամանակ
- 4) **այլ** – անորոշ դերանուն, **լցրել** – անորոշ դերբայ, ներգործական սեռ

**96. Տրված հատվածում առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

*Եվ գուցե միայն սենյակում մի խուլ,  
Գլուխը թեքած պատկերիս վրա,  
Կնայի մի կին աչքերիս տխուր,  
Ու կարցունքոտվեն աչքերը նրա:*

- 1) **գուցե** – վերաբերական, **խուլ** – որակական ածական
- 2) **թեքած** – անդեմ բայ, հարակատար դերբայ, չեզոք սեռ, **վրա** – կապ
- 3) **կին** – ուղղական հոլով, ոչ արտաքին հոլովում, **մի** – անորոշ դերանուն
- 4) **կարցունքոտվեն** – ենթադրական ասպառնի, չեզոք սեռ, **ու** – համադասական շաղկապ

## ԲԱԺԻՆ 4 ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### 1. Քանի՞ բաղադրիչ նախադասություն կա տրված բարդ նախադասության մեջ:

*Ձարհուրանքից անուր փակելով պատուհանիս փեղկերը, մոտենալով իմ հավատարիմ ընկերոջը՝ հարցրի՝ ինչպես դուրս գամ այս իրավիճակից, ինչ անեմ:*

- 1) հինգ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

### 2. Ընդգծվածներից ո՞րն է նախադասություն:

- 1) Ձեռքին ուտելիքի մի կապոց կար՝ **լավաշով, պանրով, խաշած ձվերով:**
- 2) Օհանը զայրացել էր, և **թվում էր՝** այլևս չի հանգստանալու:
- 3) Ոչ ոք չէր ուզում անցած ճանապարհը վերագնահատել և **հետևություններ անել:**
- 4) Հնձվորները պառկեցին գետնին՝ **փախսաների կամ խամրած կարպետների վրա,** ու անմիջապես բուն մտան:

### 3. Ընդգծվածներից ո՞րն է նախադասություն:

- 1) **Երկաթե հսկա դուռը իր հետևից ծածկելով՝** մտավ ներս:
- 2) **Բաճկոնները քիկունքներին՝** տղերքը շարքով նստեցին պատի տակ:
- 3) Ամեն երեկո՝ **աշխատանքից տուն վերադառնալիս,** մտնում էր խանութ:
- 4) Բոլորը գիտեին, **որ շատ լավ է,** երբ նոր մարդ է ծնվում:

### 4. Ընդգծվածներից ո՞րն է նախադասություն:

- 1) Ինքը բժիշկ էր՝ մի փոքրիկ թագավորության տեր, **մենք՝ այդ թագավորության բնակիչները:**
- 2) Իսկ աղջիկները, **գույնգույն ծաղիկներ հավաքելով,** ծաղկեպսակներ էին սարքում:
- 3) **Այգիների մեջ կորած լայնարձակ դաշտը կարծես** դրախտ լիներ:
- 4) Նա որոշեց բարձրանալ տուն՝ **մի փոքր հանգստանալու:**

### 5. Ընդգծվածներից ո՞րն է նախադասություն:

- 1) Վերցրեց գիրքը և **առանց որևէ բառ ասելու՝** դուրս եկավ գրադարանից:
- 2) Իմ սենյակի դեմնուդեմ ապրում էր մի կոշկակար **իբր 10–12 տարեկան թռռան հետ:**
- 3) Երդվել էր **արհամարհել աշխարհային թովիչ կյանքը:**
- 4) Լայն ճակատը ակոսվում էր ու **զնալով մթնում:**

### 6. Ընդգծվածներից ո՞րն է նախադասություն:

- 1) Նրա առջև կանգնած էր թագավորը՝ **պարթևահասակ, քաջալանջ ու հաստաբազուկ:**
- 2) **Գրկե՛լ քեզ** և **թռչե՛լ, թռչե՛լ...**
- 3) **Չնայած հասուն տարիքին՝** սիրով կատարում էր իր գործը:
- 4) Մարդաշատ քաղաքի մի հեռավոր ու խուլ փողոցում՝ **վերնահարկի մի անշուք սենյակում,** պառկած էր բանաստեղծը:

**7. Ընդգծվածներից ո՞րը նախադասություն չէ:**

- 1) Եվս մի վայրկյան, և ականը հողս կցնդեցներ ողջ շինությունը:
- 2) Տոթ է, և օդ չկա շնչելու:
- 3) Քայլում ենք մենք փողոցներում.  
Ես՝ քո սիրով, դու՝ ուրիշի...
- 4) Նա չգիտես ինչ է փնտրում այս կյանքում:

**8. Ո՞ր նախադասությունն է բարդ:**

- 1) Երփներանգ գույներով զարդարված ձորակում ամեն գարուն՝ տաքերն ընկնելուն պես, մասբենիներն են ծաղկում՝ շուրջը սփռելով արբեցնող բուրմունք:
- 2) Շապուհ արքան, խաբեությանը Տիգրան հրավիրելով Արշակ Երկրորդին, շղթայակապ բանտարկեց նրան Անհուշ բերդում:
- 3) Ատում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տարատեսակ ծաղիկներով, թրթռուն թիթեռներով, կարկաչուն գետերով, սառնորակ աղբյուրներով:
- 4) Նայեց բանաստեղծը երկնքի կապույտ վրանին՝ արշալույսի մեջ թաթախուն, ոսկու մեջ ճախրող թռչուններով:

**9. Ո՞ր նախադասությունն է բարդ:**

- 1) Ծիծաղող Սոնան նստել է առվի եզրին՝ ոտքերը դրած ջրի մեջ:
- 2) Դուրսը՝ աշնան արևի մեջ, մի ծիտ գտել էր մի հատիկ սալոր և կտցահարում էր՝ հրճվանքից պայթելով:
- 3) Բաց սարերի, բացատավոր անտառների, արևոտ լանջերի, աշնան մաքուր արևի տակ ելևէջող մեր հին երկրի պատկերի առջև իմ սիրտը բացվեց:
- 4) Ուշ երեկոյան տուն վերադառնալուց հետո պառկեց անկողնու վրա:

**10. Ո՞ր նախադասությունն է բարդ:**

- 1) Աշուն է, այգում՝ տերևաթափ:
- 2) Ես, նստածներին շնորհակալություն հայտնելով, դուրս գնացի:
- 3) Ըստ ամենուրեք փակցված ազդագրերի՝ համերգը տեղի է ունենալու ամսի 25-ին:
- 4) Որպես հմուտ խոհարարի՝ եղբորս հրավիրում էին՝ մեծ խնջույքների, հարսանիքների պատրաստություն տեսնելու:

**11. Ո՞ր նախադասությունն է բարդ:**

- 1) Գևորգը որոշեց այլևս չխառնվել նրանց վիճաբանություններին:
- 2) Ոչինչ չէր երևում՝ ո՛չ հինավուրց վանքը, ո՛չ մերձակա ավերակները, ո՛չ ծառերը:
- 3) Երբեմն պատահում էր՝ իմ վաստակածը քիչ էր լինում:
- 4) Նրա մոտ գալիս էին մարդիկ՝ տեսնելու հրաշագեղ այգին, լսելու այգեգործի իմաստուն խորհուրդները:

**12. Ո՞ր նախադասությունն է բարդ:**

- 1) Դռան հետևում ինչ-որ կցկտուր ձայներ լսվեցին. ո՞վ կարող էր լինել:
- 2) Գետի ափին՝ լայնասաղարթ ընկուզենու տակ, նստել էր Սիմոնը՝ հայացքը հառած դիմացի լանջին:
- 3) Եվ օր ու գիշեր ճամփա կտրելով, հագուստը անապատի տատասկների մեջ քրքրելով՝ հոգնաբեկ հասավ նա մի օր քաղաքի պարիսպներին:
- 4) Մի վայրկյան տատանվելուց հետո նա մտավ քաղաք՝ մոլորված նայելով շուրջը:

**13. Ո՞ր նախադասությունն է անդեմ:**

- 1) Ունեցած հացը կիսի՛ր եղբորդ հետ:
- 2) Կյանքը շոշափելի երազ է:
- 3) Ապրե՛լ, վայելել կյանքը և սիրե՛լ, սիրե՛լ...
- 4) Եթե ամեն մարդ մարդ դառնա՛...

**14. Ո՞ր նախադասությունն է ձևավորված առանց ստորոգման, հնչերանգի միջոցով:**

- 1) Նա դեռ չէր ավարտել իր աղոթքը:
- 2) Ճանապարհին հանդիպեց մանկության ընկերոջը:
- 3) Նրա ուզածը կյանքից մի մեծ բան չէր:
- 4) Իրար գլխի նստած սարեր,  
Ձորեր՝ քնած իրար ծոցում:

**15. Ո՞ր նախադասությունն է ձևավորված առանց ստորոգման, հնչերանգի միջոցով:**

- 1) Ջնջել ավելորդ բառերը, նկատել էականը, անհրաժեշտը, հոգին:
- 2) Հայրենիքը լեզուն է:
- 3) Առանց լեզվի ազգ չկա:
- 4) Ջենք չունեցողը ոչխարի պես կմորթվի:

**16. Ո՞րն է թերի նախադասություն:**

- 1) Բոլորն սկսեցին անգուսպ ծիծաղել:
- 2) Մայրիկ, քեզ մի բան պիտի ասեմ:
- 3) Մերն աղավնու ամենաուժեղ բնագղն է:
- 4) Մեզանից ոչ ոք իրավունք չուներ այգուց մի բան քաղելու:

**17. Ո՞րն է թերի նախադասություն:**

- 1) Այդ օրերին կյանքն ընթանում էր միօրինակ, և ամեն ինչ ձանձրալի էր:
- 2) Երեկոները մտնում էր մեր ննջարանը և հանգցնում լույսը:
- 3) Իմ մանկությունն անցել է այդ ազարակում, որը ես միշտ հիշում եմ:
- 4) Կային նաև ուրիշ աղջիկներ, որոնք շատ գեղեցիկ էին:

**18. Ո՞ր բարդ նախադասության կազմում թերի նախադասություն կա:**

- 1) Բելը կանգնել էր գորքից բավական հեռու, իսկ Հայկը՝ առաջին շարքում:
- 2) Թողնել այդ հնձանը և թռչել դուրս՝ դեպի ազատ տարածություն:
- 3) Քննության ժամանակ մի աշակերտ գրում էր, իսկ կողքինը արտագրում էր:
- 4) Ոչ մի կերպ նա չի կարող գուշակել ասպազան:

**19. Ընդգծվածներից ո՞րն է միակազմ նախադասություն:**

- 1) Երնե՛կ էսպես անվերջ քեզ հետ՝ իմ կյանքի հետ լինեի.  
Հազա՛ր երնեկ՝ դաշտում մեմակ՝ **երկնքի հետ լինեի:**
- 2) – Էս է, **որ կա...** Ծիշտ ես ասում. թասդ բե՛ր.  
Էս էլ կերթա՛ հանց երագում. թասդ բե՛ր:
- 3) Աշուն է, անձրև... Ստվերներն անձև  
Դողում են դանդաղ... Պատ, միապաղաղ  
**Անձրև՛ ու անձրև՛ ...**
- 4) Իմ կնուռքին **երկինքը՝ ժամ,** արևը՝ ջահ սրբազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան:

**20. Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

- 1) Խոսելը նրա սիրած զբաղմունքն է, բայց շատ է այն չարաշահում:
- 2) Ոչ ոք չկար. լավում էր միայն մեղուների բզզոցը:
- 3) Սթնում էր, երբ մենք հասանք լեռան ձյունապատ գագաթին:
- 4) Եկել էր ինձ մոտ, որ գործի մանրամասները քննարկենք:

**21. Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

- 1) Լավ գիտեր, որ այդպես վարվելու իրավունք չունի:
- 2) Մենք մտածեցինք, թե արդեն լուսացել է:
- 3) Երբ առավոտյան դուրս էր գալիս և կանգնում բակում, բազմաթիվ աչքեր հիացած նայում էին նրան:
- 4) Կարծում ես՝ դեռ շա՞տ ժամանակ կա:

**22. Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

- 1) ... Չպետք է զգալ, չպետք է խորհել, այլ միայն քարանա՛լ, քարանա՛լ, քարանա՛լ...
- 2) Նկատեց, որ նրանց վրա քիչ էր ազդել ճանապարհը:
- 3) Չգիտեմ՝ որն է ելքը այս հանկարծահաս փորձանքից:
- 4) Եթե այդ եք ուզում, թող ձեր ասածը լինի:

**23. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Բայց սրանով վեճը չվերջացավ, քանի որ պապս չէր կարողանում կուլ տալ այդ խոսքերը:
- 2) Անունս փաստաթղթերում չկար, որովհետև տունը կառուցելու ժամանակ ես դեռ չէի ծնվել:
- 3) Իրենց գործն ավելի դժվար է. երեխաների հետ գործ ունեն:
- 4) Ես այլևս չկարողացա լսել՝ ինչ են խոսում ծնողներս:

**24. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Թե երագումս էլ ինչեր տեսա, չեմ հիշում:
- 2) Արդեն մի տարի կլինի, ինչ հեռացել է հայրենի քաղաքից:
- 3) Հրաձգարանի աշխատակիցը ցույց տվեց՝ ինչպես պիտի բռնենք հրացանը:
- 4) Ժամանակը քիչ էր, հետևաբար սկսեցինք արագ պատրաստվել:

**25. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Ես կամ Արսենը պիտի գնայինք նրան դիմավորելու և նրան հյուրանոցում տեղավորելու:
- 2) Նա, որ ամենից տարեցն էր երևում, դանդաղ ելավ տեղից:
- 3) Ուզում էր անպայման մասնակցել մրցույթին, մանավանդ որ նախնական փուլում լավ տպավորություն էր թողել:
- 4) Խիզախ ժայռագնացը, հասնելով հանդիպակաց բարձրաբերձ ժայռին, վերջապես կանգ առավ:

**26. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) «Եվա» էին արտասանում շուրթերը նրա, սակայն «Լիլիթ» էր արձագանքում նրա հոգին:
- 2) Ի վերջո վճռեց դատապարտել անմեղ մարդուն՝ առանց, սակայն, մտածելու խղճի ու բարոյականության մասին:
- 3) Կյանքը մի արյունոտ կռիվ է, ուր ամեն արարած պարտվում է:
- 4) Թեև հույսն աստիճանաբար մարում էր, բայց չէր կտրվում վերջնականապես:



**27. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Այնքան էր տարվել երաժշտությամբ, որ չնկատեց ներս մտնողներին:
- 2) Ամենքը կարծում էին՝ Սենը մասնագիտությամբ երաժիշտ է:
- 3) Հայրիկը դուրս եկավ դահլիճից. նա այնքան էլ չէր սիրում դասական երաժշտություն:
- 4) Իր հարազատներին հանդիպելու համար պատրաստ էր անցնելու այդ դժվարությունների միջով:

**28. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված համադասական շաղկապով:**

- 1) Արդեն կեսօր էր, հրացանների տրաքոցն ու թնդանոթների թնդյունը լսելի էր հեռվից:
- 2) Այդ հաղթանակը ոչ թե հանգամանքների արդյունք էր, այլ նրա ռազմագիտական փորձառության մասին էր վկայում:
- 3) Թշնամին, ինչպես երևում էր հեռվից, մոտեցել էր բերդին:
- 4) Ու երբ ճնշյունով բարձրացրին առաջին տախտակը, բոլորը հետ քաշվեցին:

**29. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված համադասական շաղկապով:**

- 1) Էդգարը գունատ հայացքը հառել է սեղանին. ինչ–որ կարևոր բան է փնտրում այնտեղ:
- 2) Դու վրաս ուղղում ես ներողամիտ, սակայն սաստող հայացքդ, որպեսզի ես ազդվեմ այդ հայացքից:
- 3) Ուզում եմ տեղիցս բարձրանալ, բայց չեմ կարողանում:
- 4) Քանի որ նրան ոչ ոք չտեսավ, արագ ու աննկատ խառնվեց ամբոխին:

**30. Ո՞ր նախադասության կազմում միջանկյալ նախադասություն կա:**

- 1) Տեր հայրը, երկար բրդե շալն ուսերին, հետ ու առաջ էր քայլում:
- 2) Որոշել ենք վարվել ճիշտ այնպես, ինչպես ասեն, ավելորդ դժգոհությունների տեղիք չտալ:
- 3) Նամակը, ինչպես ասացինք, սկսվում էր դառնագին հոխորտանքով:
- 4) Մենք, ճիշտն ասած, հումորով ենք վերաբերվում նրա քմահաճույքներին:

**31. Ո՞ր նախադասության կազմում ներդրյալ նախադասություն կա:**

- 1) Հեռվից նայողին ժայռը թվում էր մի հսկա շուն:
- 2) Ընդունողները (նկատի ունի ընդունելության հանձնաժողովը) շատ լավ են կազմակերպել քննությունը:
- 3) Լինում է, որ ես թերթ եմ կարդում կամ, ասենք, գնում եմ շուկա՝ փայտ գնելու:
- 4) Իսկ ես, փոխանակ դասերս սովորելու, ժամանակս վատնում եմ համակարգչային խաղերի վրա:

**32. Նախադասության անդամների վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ չկա:**

- 1) Որպես բաղադրյալ ստորոգյալի հանգույց կարող են հանդես գալ *լինել, թվալ, դառնալ* բայերը:
- 2) Ենթական չի կարող արտահայտվել բայով:
- 3) Բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնում են միայն դեմքով և թվով:
- 4) Բաղադրյալ ստորոգյալը կազմվում է բաղադրյալ ժամանակածևերով:

**33. Ո՞րը նախադասության ներդրված միավոր չէ:**

- 1) կոչականը
- 2) միջանկյալ բառը
- 3) միջանկյալ նախադասությունը
- 4) թերի նախադասությունը

**34. Ընդգծվածներից ո՞րը նախադասության անդամ չէ:**

- 1) Դուք, **կարծում եմ**, չարաչար սխալվում եք:
- 2) Նա չզգաց` **երբ** անցավ ժամանակը:
- 3) **Մեղանի վրա** դրված մոմը վերջին ցուքերն էր արձակում:
- 4) **Ինչ** էր պատահել` այդպես էլ չիմացանք:

**35. Աջ կողմում տրված լրացումները կարող են դրվել ձախ կողմում նշված որևէ հոլովով կամ կապական կառույցով: Լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

- |                    |  |
|--------------------|--|
| 1. հատկացուցիչ     | ա. տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով |
| 2. ներգործող խնդիր | բ. միայն կապական կառույցով                             |
| 3. պայմանի պարագա  | գ. սեռական հոլովով                                     |
| 4. ժամանակի պարագա | դ. բացառական, գործիական հոլովներով և կապական կառույցով |

- 1) 1–գ, 2–բ, 3–դ, 4–ա
- 2) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ա
- 3) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
- 4) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ

**36. Ո՞ր խոսքի մասով է արտահայտվել նախադասության ենթական:**

*Լավ գիրք կարդալ սիրում է ինքնակատարելության ձգտող ամեն ոք:*

- 1) գոյականով
- 2) դերբայով
- 3) դերանունով
- 4) ածականով

**37. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ենթակա:**

- 1) Բայց նրան **համոզելը** այդքան էլ հեշտ չէ:
- 2) – **Թագուհի՛**, մի՞թե ինձ չես ճանաչում:
- 3) Խաղի **կանոնները** պիտի հարգեն բոլորը:
- 4) Փշում էր սառը քամին, **դուռ ու պատուհան** ծեծում:

**38. Տրված նախադասություններից որո՞ւմ է ենթական արտահայտված գոյականով:**

- 1) Ծաղկի սերմի մեջ է բնության հրաշքների հրաշքը:
- 2) Իմ ստեղծագործություններում ես իմ հոգին եմ նկարում:
- 3) Ամենքը սպասում էին կաթողիկոսի խոսքին:
- 4) Կարևորը դպրոցը չէր և ոչ էլ գրատախտակը:

**39. Տրված նախադասություններից որո՞ւմ է ենթական արտահայտված դերանունով:**

- 1) Սակայն այժմ անտեղի է քո ուրախությունը:
- 2) Ո՞վ է տեսուչը, որտեղի՞ց է եկել:
- 3) Խեղճը անօգնական փովել էր գետնին:
- 4) Մեկը մատները բերանը տարավ ու զիլ սուլեց:

**40. Տրված նախադասություններից որո՞ւմ է ենթական արտահայտված փոխանուն թվականով:**

- 1) Հարյուր տարի տևեց նշանավոր այդ տաճարի շինարարությունը:
- 2) Երկուսին էլ շատ էր սիրում ու գնահատում:
- 3) Երրորդը եղբայրներից մեծն էր՝ տարեց մի մարդ:
- 4) Քանի՜ տարի է անցել այդ երջանիկ օրերից հետո:

**41. Տրված նախադասություններից որո՞ւմ է ենթական արտահայտված փոխանուն ածականով:**

- 1) Նվագողը մի պատանի էր, որ գերել էր բոլորին:
- 2) Ծերունի Հովնանը տնից հագվադեպ էր դուրս գալիս:
- 3) Առավոտյան Նուկին քաղաքի խելքները շարունակում են ճամփան:
- 4) Մյուսը քառասունհինգ–հիսուն տարեկան տղամարդ էր՝ ավելառն մորուքով:

**42. Տրված նախադասություններից որո՞ւմ է ենթական արտահայտված դերբայով:**

- 1) Մի քանի օրով հետաձգել էր գրելը:
- 2) Հավաքվածները աստիճանաբար ցրվում էին:
- 3) Փախչողներին հետապնդեց մինչև այգու ծայրը:
- 4) Գնահատում էին միայն իրենց աչքով տեսածը:

**43. Տրված նախադասություններում ո՞ր խոսքի մասով արտահայտված ենթակա չկա:**

- Աչք մտնողը աչքի ընկավ՝ աչք կհանի...
- Գեղեցիկը կփրկի աշխարհը:
- Տխուր լուրը նրան հայտնեցին շատ զգույշ կերպով:
- Խոսք բացեց ներս մտնողներից առաջինը:

- 1) դերբայով
- 2) ածականով
- 3) թվականով
- 4) գոյականով

**44. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված ենթակա չկա:**

- 1) Մենք հանդիպեցինք...  
Եվ ի՞նչ կատարվեց, հասկացար արդյոք...
- 2) Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
- 3) Ովքե՞ր անցան ձեզանով,  
Ո՞ր գրնացին, ճամփանե՛ր:
- 4) Ողջը երազ է հիմա:

**45. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված ենթակա կա:**

- 1) Վեպն սկսեց ընթերցել մի քանի օր առաջ, այն թողեց անհետաձգելի գործերի պատճառով և նորից գիրքը բացեց, երբ գնացքով վերադառնում էր տուն:
- 2) Կարծես մի տարօրինակ հաճույքով տող առ տող հեռանում էր այն ամենից, ինչ սիրել էր, և միաժամանակ զգում էր, որ մեծ լուսամուտից այն կողմ երեկոյան մեղմ քամին է խաղում կաղնիների տակ:
- 3) Ոչինչ չէին մոռացել, և այդ ժամանակից սկսած՝ ամեն մի պահ ուներ իր հստակ նշանակությունը:
- 4) Առանց միմյանց նայելու, բայց և ամուր կապված լինելով այն առաջադրանքին, որ իրենց է սպասում, բաժանվեցին հյուղակի դրան մոտ:

**46. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված ստորոգելի չկա:**

- 1) Մեզանից մեկը, անշուշտ, այդպիսին չէ:
- 2) Դու ուրիշ ես, սիրում եմ քեզ...
- 3) Ինչո՞ւ ես դու այսպես քաշվում և ամաչում:
- 4) Տեսնես ինչպե՞ս է նա, տեսնես այս ամենը ինչո՞վ կվերջանա:

**47. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ստորոգելի:**

- 1) Մեզ խենթացնողը գարնանային անուշ **առավոտն** էր:
- 2) Աշուն է, օրերը **ցրտում** են:
- 3) Մեզ ասել են, որ պարապմունքը **վաղն** է լինելու:
- 4) **Երեկո** է իջել և լռությամբ պարուրել շրջակայքը:

**48. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը պարզ ստորոգյալ:**

- 1) Հիշելով անցյալը՝ շարունակ **գլուխ էր գոլում:**
- 2) Գյուղի ազդեցիկ և ունևոր մարդկանցից **մեկն էր:**
- 3) Հեքիաթի նման **գեղեցիկ է** Լոռին:
- 4) Պիտի այսպես նստեմ տխուր  
Իմ **չգրած** երգերի դեմ...

**49. Տրված նախադասություններից որո՞ւմ պարզ ստորոգյալ կա:**

- 1) Էլ ասելու խոսքեր չկային:
- 2) Եվ մի՞թե կյանքը տանջանքների կուռ շղթա չէ:
- 3) Երիտասարդը հայ երգի բարձրարժեք կատարող է:
- 4) Իմաստուն պետք էր լինել գուշակելու համար նրա զբաղմունքը:

**50. Տրված նախադասություններից որո՞ւմ կա պարզ ստորոգյալ:**

- 1) Ես եմ համարձակը, և ամեն ինչի նախաձեռնողն եմ:
- 2) Սի՞թե մեր երկիրն էլ մի այդպիսի թռչնաբույն չէ:
- 3) Սի քանի օրով Հայաստան է եկել՝ համերգներ տալու:
- 4) Ամեն մի ծնողի մտահոգությունն է ընտրել որքան հնարավոր է նույնահունչ անուններ:

**51. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը բաղադրյալ ստորոգյալ:**

- 1) Նա հորս մտերիմ **ընկերն է եղել** և գործակիցը:
- 2) Օրերով տնից **դուրս չէր գալիս:**
- 3) Դանդաղ **քայլում է** ձիս հայրենի արահետներով:
- 4) Թաղի տղաները մի տեսակ **դժվարությամբ էին ընկերանում** միմյանց հետ:

**52. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Ո՞վ պիտի հոգ տանի սովալլուկ որբերի մասին:
- 2) Շատ մի խորացիր անորոշության լաբիրինթոսում:
- 3) Ինչքան անիվը վատ է, այնքան էլ աղմուկը շատանում է:
- 4) Նա վայր դրեց երեխային և հյուրերի հետ դուրս եկավ՝ վանքի բաժինները տեսնելու:

**53. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
- 2) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:
- 3) Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը բարձր պահեր ազգային արժանապատվությունը:
- 4) Բայց, անշուշտ, բանը բանից անցել էր:

**54. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Եթե տեսներ այն, ինչ ես էի տեսել, այդպես չէր վարվի:
- 2) Ազատ ժամանակ նրա հիմնական զբաղմունքը ընթերցելն է:
- 3) Մեքենան շուտ էր եկել, բայց, փա՛ռք Աստծո, վիրավորներ չկային:
- 4) Բայց մեղքը, ավելի ճիշտ, ոճիրը արդեն կատարվել էր:

**55. Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Եվ դու բնավ իմ այս խոսքից մի՛ վշտանա,  
Այլ մտածի՛ր,  
Թե ջրհորի մութ խորության չափման համար  
Իր սեփական մանկանն ո՞վ է ջրհոր նետում:
- 2) Եվ առավել լավ չէ՞ արդյոք,  
Որ մարդու ոտքը սայթաքի,  
Քան թե լեզուն:
- 3) Չե՞ս զգում արդյոք,  
Որ ապստամբած քո թևերի տակ  
Մենակությունն է ճիւղել ինքն իրեն...
- 4) Իսկ շուրթերիս, փակ շուրթերիս ձորի միջով  
Մի ժպիտ է անվերջ սահում:

**56. Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Որքան էլ գիշերն անավոր իջնի,  
Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դնելու,  
Հարազատ մի հող ես չեմ գտնելու  
Սև ճանապարհիս օրերում դժնի:
- 2) Դանդաղ է քայլում հոգնատանջ իմ ձին,  
Եվ տաղտկալի է այս ուղին մոլոր...
- 3) Ա՛հ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն  
Ընկնել և կորչել և ննջել հավետ...
- 4) Մարի՛ր լույսը մշուշոտ,  
Սև հյուսերդ արձակի՛ր,  
Դու, իմ դահի՛ճ, դու, իմ քո՛ւյր,  
Դու, իմ ընկե՛ր տարագիր:

**57. Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ չկա:**

- 1) Բլուրները նախկինում չոր ու ցամաք են եղել, իսկ հիմա այգեստան են դարձել:
- 2) Մոտավորապես Մայքի տարիքին էր՝ քսանութ–քսանինը տարեկան:
- 3) Այդ օրը անպայման պետք է վերադառնայի Նյու Յորք:
- 4) Ընթերցասրահում երկուսով էինք, հետո մեզ միացան ևս երեքը:

**58. Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ չկա:**

- 1) Երկու ժամ այդպես քարացել էի՝ ճոճաթռռի մեջ կծկված:
- 2) Հենց սա է այն տղան, որ այդքան աղմուկ է հանել:
- 3) Մոտ էր այն օրը, երբ գործերս ավարտին պիտի հասցնեի:
- 4) Բաճկոնս փոքր–ինչ մեծ էր, ու ես նեղվում էի:

**59. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը որոշիչ:**

- 1) **Ծերունու** այգու մոտով անցնելիս նկատեց աղջկան:
- 2) Սրտապատառ ներս ընկավ **մի ճերմակ** աղավնի:
- 3) Այն ժամանակ մտքումս տղային **անխելք** համարեցի:
- 4) Իշխանը **մտասույզ** կանգ առավ հուշարձանի առջև:

**60. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված գոյականով:**

- 1) Կանգնած է վարժապետ Սողոմն՝ իր երկրի հարազատ որդին:
- 2) Հայրենի եզերքը միշտ կարոտով է լցրել իմ հոգին:
- 3) Գևորգին այս միտքը չգարմացրեց:
- 4) Անհիկը լուրը լսել էր կատարյալ անտարբերությամբ:

**61. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված թվականով:**

- 1) Այնուհետև երևացին երկրորդը, երրորդը, չորրորդը...
- 2) Նրա գրքերից ամեն մեկը մի նորություն էր հայ գրականության մեջ:
- 3) Նա շրջում էր այնպիսի ցնցոտիներով, որ հազար տեղից կարկատված էին:
- 4) Դա քաղաքից եկող վատ լուրերից առաջինն էր:

**62. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված ածականով:**

- 1) Սովորություն է դարձել խմելու ջրի վատնումը:
- 2) Հայկական լեռնաշխարհում հնուց ի վեր ապրել են հայերը:
- 3) Ընկերոջ նվիրած հեռախոսը կորցրել էր:
- 4) Հիշողությանս մեջ մնացել է ուրիշ պատմություն՝ կապված այդ օրերի հետ:

**63. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված դերանունով:**

- 1) Նրա ծննդյան տարեդարձին մասնակցում էին բոլոր ընկերները:
- 2) Այդպես անցան շատ տարիներ:
- 3) Տեսավ, որ ձիավորների խումբն իրենց է մոտենում:
- 4) Քաղաքը, ուր անցավ իմ մանկությունը, քարտեզների վրայից չի անհետացել:

**64. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված դերբայով:**

- 1) Դաշելուց հետո հարկավոր է փոքր-ինչ հանգստանալ:
- 2) Քո զգացող էությունը արժե նրա ձգտումին...
- 3) Դասերից հաճախակի բացակայելը խրախուսելի արարք չէ:
- 4) Խումբը ճշաց գարհուրած և սանդուղքներից խուճապով լցվեց ներքև:

**65. Ո՞ր նախադասության մեջ որոշիչն արտահայտված չէ դերբայական դարձվածով:**

- 1) Այո՛, հրաշք է աշխարհը, հեքիաթային ու գեղեցիկ:
- 2) Ուսերն ի վար թափվող վարսերը ծածանվում էին քամուց:
- 3) Հիշում էր գյուղում անցկացրած օրերը՝ ճոճաթռռին թիկնած:
- 4) Խնձորենիները՝ խնձորներով ծանրացած, թեքվել էին տանիքի վրա:

**66. Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված բառակապակցությամբ:**

- 1) Գրողը ձգտում է հասնել աստվածային կատարելության:
- 2) Վար անող գյուղացին հանկարծ կոտրում է ձեռքը:
- 3) Ոսկեկեղև ծառերից կախված էին պտուղները՝ կախարդիչ գույներով ու ձևերով:
- 4) Երբ, արցունքից թեթևացած ու հանգստացած, գլուխը բարձրացրեց, աղջիկն արդեն գնացել էր:

**67. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) Եվ ի՞նչ հանցանք է գործել սնդիկը,  
Որ տառապում է մենախցի մեջ:
- 2) Այդ շարժումի մեջ չկա՞ խոր իմաստ  
Եվ խորհուրդ խորին. ո՞վ ի՞նչ է կարծում:
- 3) Դուք, նո՛ր աստվածներ նոր ժամանակի,  
Մուտ դուրս չգայիք գեթ դուք, գոնե դուք...
- 4) Համաձայն եմ, որ սագերը նկատելի  
Ինչ–որ բանով ազգակից են և բաղերին:

**68. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) **Քանիսը** դերանունը գործածվում է թե՛ եզակիի, թե՛ հոգնակիի իմաստով:
- 2) Ո՞ր միտքս դուր չեկավ ներկաներին:
- 3) Նույն միտքը շարունակ պտտվում էր գլխումս:
- 4) Երկուսս էլ պատասխան ենք տալիս նույնի համար:

**69. Ո՞ր խոսքի մասով արտահայտված որոշիչ չկա տրված հատվածներում:**

- Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ...
- Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա:
- ... Որ ծանրորեն օրվա մի օր  
Եվ իմացած երկրորդ լեզուն մոռանում է բոլորովին...
- Ասում են՝ իբր կապույտի վրա  
Չեն նստում ճանճեր:  
Լսո՞ւմ ես, Մարիամ,  
Ինձ ներս ու դրսից կապու՛յտ հագցրու...

- 1) դերանունով
- 2) ածականով
- 3) թվականով
- 4) բայով

**70. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը հատկացուցիչ:**

- 1) Շատ **դժվարությունների** էր հանդիպել կյանքում:
- 2) Անակնկալ լավեց **դռան** գանգի ձայնը:
- 3) **Քեզ** վերաբերող որևէ բառ չկար այնտեղ:
- 4) **Մայրամուտի** ժամանակ հողմերը թույլ են լինում...

**71. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մասնական բացահայտիչ:**

- 1) **Որպես աշխարհի չարին ու բարուն տեղյակ մարդ**՝ պապս երբեմն խրատում էր մեզ:
- 2) Գպրոցում **իբրև տնօրեն** աշխատելու տարիներին նա մտերիմ էր մեր ընտանիքին:
- 3) **Որպես լքված թավջութակի ձգված մի լար**  
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու...
- 4) Զգա՛ք եզ, **ինչպես քո տանը:**

**72. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը բուն բացահայտիչ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) **Որպես Լաերտի որդին որպես Ուլիս մի** թողած և հող և տուն Անցա ծովեր ու ցամաքներ ես...
- 2) Դա մի քարայր էր **փորված դեռևս վաղնջական ժամանակներում:**
- 3) Նրան ժողովրդի կողմից սիրված ու գնահատված անձնվեր **գորավարին** չգնահատեց նեմգ արքան:
- 4) Քարայրում **պատի տակ** երկու կմախք կար:

**73. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ուղիղ խնդիր:**

- 1) Աշակերտները ծանոթացան նոր **դասացուցակին:**
- 2) Եղնիկը արդեն ընտելացել էր **մեզ:**
- 3) Նա վերցրեց **ծաղկեփունջը** և պարզեց օրիորդ Մարգոյին:
- 4) Ամեն երեկո մի գեղեցիկ հեքիաթ էր պատմում իր սիրասուն **զավակներին:**

**74. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը հանգման խնդիր:**

- 1) Հետո իր **հարազատներին** այլևս չտեսավ:
- 2) Երեկոյան թերթում էր օրվա **մամուլը:**
- 3) Ռուբենն այդպես էլ չհասավ **ոչ մեկին...**
- 4) **Քոլորին** սիրում էր անխտիր:

**75. Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր կա:**

- 1) Ախոռի սուր, անախորժ օդը դիպավ Կամսարյանի քթին, բայց այժմ արդեն ժամանակ չկար մտածելու:
- 2) Փառաշեն տան պատուհանները ողողված են արևի պայծառ շողերով, բայց մետաքսյա կանաչ վարագույրների պատճառով դրանք չեն թափանցում ննջարանը:
- 3) Լիդիա Պավլովնան գորովանքով նայում է որդուն և միևնույն ժամանակ աշխատում, որ իր քնքուշ հոգատարությամբ մոռանալ տա նրան կրած նեղությունները:
- 4) Հետևյալ համարը պատկանում էր մի երիտասարդի, որ նվագեց և արժանացավ բուռն ծափահարությունների:

**76. Ո՞ր նախադասության մեջ ներգործող անուղղակի խնդիր կա:**

- 1) Նրա տնտեսության միակ ճեղքը հարևանի պատն էր, և այդ ճեղքով հազար ու մի անախորժություն էր ներս մտնում:
- 2) Այդ գիշեր, երբ ձմռան քամին սաստիկ ոռնում էր, նրա գլխով մի միտք անցավ՝ օրագիր պահել և բոլոր պարտքերը գրանցել:
- 3) Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով են պատված. ջրերը թռչում են վերև, հասնում նրանց:
- 4) Նա գիտեր, որ անցյալ տարվա օրացույցով հունիսի տասնմեկը կիրակի էր:

**77. Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

- 1) Այսպիսի բարեմասնություններով օժտված լինելով՝ նա մեծ հարգանք էր վայելում իր շրջապատում:
- 2) Մամուլյե մեծ օձիքով վերարկուն հագին՝ նա շրջում էր Սյունիքում՝ միջոցներ որոնելով աղետի դեմն առնելու համար:
- 3) Եվ ահա այդ նպատակով էլ նա հասավ Հարանց հռչակավոր անապատին, ժողովեց այդտեղ կորովի մարդկանց, կազմեց միաբանություն:
- 4) Շահ–Աբասը սիրով լսեց նրա խնդրանքը, բոլոր հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից, ապա մեծամեծ խոստումներ անելով կաթողիկոսին՝ հասավ Հայաստան:



**78. Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

- 1) Մակայն մերոնց վիշտն անթեղած կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմնին տվող տկար կայծ:
- 2) Այդ իրիկուն տատա ջոկեց պանրի յուղոտ կտորները, և մենք հասկացանք, որ նա քաղաք է տանելու նաև պոչը ծաղիկ երինջին, որը մեր բոլորի սիրելին էր:
- 3) Նրանք երկուսով անիծում էին մեզ, պատմում մեր չարածճի արարքների մասին:
- 4) Աշխատում էինք լուսաբացից մինչև իրիկուն, և մեզ թվում էր, թե մեր ընտանիքում ոչինչ չի պատահել:

**79. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ներգործող խնդիր:**

- 1) **Այգու կողմից** մեղմ քամի էր փչում:
- 2) Նրա խոսքերը չեն ընդունվում **ժողովրդի կողմից:**
- 3) Երեխայի ճիշտ **դաստիարակությունից** շատ բան է կախված:
- 4) Ավետը **ուրախությունից** թռչկոտում է տեղում:

**80. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը անջատման խնդիր չէ:**

- 1) Տղան լավագույն գծերը ժառանգել էր **հորից:**
- 2) **Քաղաքից** եկել էին գյուղ՝ հանգստանալու:
- 3) Պետք չէ ամեն մանրուքի համար նեղանալ **ընկերոջից:**
- 4) Գեկավարությունը նրան միաձայն ազատեց զբաղեցրած **պաշտոնից:**

**81. Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված խնդիր կա (ուղիղ կամ անուղղակի):**

- 1) Բաժանվել էր կերակուրը, և լավում էր գրալների չխկչխկոցը:
- 2) Նրա համար ընտրում են ամենաքաղցր պտուղները:
- 3) Ինձ պարտվելը նրա համար սովորական բան էր:
- 4) Փողոցի ծայրից ես մի անգամ էլ հետ նայեցի:

**82. Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված խնդիր կա (ուղիղ կամ անուղղակի):**

- 1) Տեսա երազ մի վառ,  
Ոսկի մի դուռ տեսա...
- 2) Մոտենում է ներկաներից յուրաքանչյուրին և բարևում:
- 3) Չէր խորշում ոչ ոքից և ոչնչից:
- 4) Ու նայում է Վարագա սարը անասան պահապանի պես:

**83. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված խնդիր կա (ուղիղ կամ անուղղակի):**

- 1) Ծառերն ամենուրեք ծաղկել են, դաշտերը՝ կանաչել:
- 2) Սրանից–նրանից բամբասելը ամենօրյա զբաղմունք էր դարձրել:
- 3) Ովքե՛ր անցան ձեզանով, ու՛ր գնացին, ճամփաներ...
- 4) Ես այլևս չլսեցի նրա անուշ ձայնը:

**84. Ո՞ր նախադասության մեջ կապական կառույցով արտահայտված խնդիր կա:**

- 1) Լառ–Մարգարն անընդհատ խոսում էր թռռան վրա՝ ձեռնափայտն օդում ճոճելով:
- 2) Հեռվից դիտում էր բլրի վրայի անցուղարձը:
- 3) Մարդկային անտարբերության պատճառով տուժում են բոլորը:
- 4) Շնչակտուր փախչում են դեպի անտառի բացատը:

85. Ո՞ր նախադասության մեջ կապական կառույցով արտահայտված խնդիր կա:

- 1) Գերասանը հուշեր պատմեց իր կյանքից:
- 2) Ընկերներիս հետ գնացել էի Աղավնաձոր:
- 3) Թագավորը հավաքում է երկրի բոլոր իմաստուններին:
- 4) Նա նման էր այն աղջկան, որին տեսել էի Էջմիածնում:

86. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ձևի պարագա:

- 1) Բացեց պատուհանը և սկսեց դիտել **հետաքրքիր** խաղը:
- 2) **Հանգիստ** մոտեցավ պատուհանին և բացեց այն:
- 3) Այդ հարցը քննարկվել է **շատ անգամ**:
- 4) **Երբեմն** հիշում էր անցած–գնացած օրերը:

87. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ժամանակի պարագա:

- 1) **Անցյալ տարի** մեծ դժբախտություն պատահեց:
- 2) **Դանդաղ** իջնում էր երեկոն:
- 3) **Մութ էր**, երբ ճանապարհ ընկանք:
- 4) `Հաջորդ տարի` **վաղ գարնանը**, ծիծեռնակը վերադարձավ:

88. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը պատճառի պարագա:

- 1) Ուրեմն հարկավոր էր ուրախանալ կրկնակի **ուրախությամբ**:
- 2) Դրա **պատճառը** տղայի անբարեհամբույր կեցվածքն է:
- 3) Խոսում են Լոռու հին–հին **քաջերից**:
- 4) Երբ տեսավ նկարը, **հիացմունքից** քարացավ:

89. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը զիջման պարագա:

- 1) Տղան քայլում էր փողոցի այս կողմով, աղջիկը՝ **հակառակ մայթով**:
- 2) Տիկինը, **ի նշան շնորհակալության**, պարտիզպանին նվիրեց մի մատանի:
- 3) **Հակառակ հորդորներիս`** ընկերս չմնաց մեր տանը:
- 4) **Ոչ ոքի չնայելով`** մտավ ննջարան:

90. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը չափի պարագա:

- 1) Աշնանամուտին գետակները **շատ** են բարակում:
- 2) **Ինչքա՛ն** ցավ եմ տեսել ես...
- 3) Հասուն ծառն ունի ձեռքի **ափի չափ** տերևներ:
- 4) Այդ օրից **շատ** տարիներ էին անցել:

91. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված մակբայով:

- 1) Վազում էր հևիհև, բայց չէր կարողանում բռնել նրան:
- 2) Եթե իր դարբնոցն ունենար, հաճախորդներ **ինչքա՛ն** կունենար:
- 3) Բքի տակ երգում էր մի հին երգ:
- 4) Ամեն ուրբաթ այգեստանցիք լինում էին այնտեղ:

92. Ո՞ր նախադասության մեջ մակբայով արտահայտված պարագա կա:

- 1) Այստեղ էին անցել նրա մանկության երազ օրերը:
- 2) Այդ դեպքից հետո նա ժամացույց այլևս չգնեց:
- 3) Այդ ամառ նա գնացել էր առողջարան՝ **ոսկրացավից** բուժվելու:
- 4) Իսկ ես նստել եմ պատուհանի առջև ու նայում եմ անտառին:

**93. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:**

- 1) Պատանհի հասակում հեռացել էր տնից:
- 2) Պատարագն ավարտելուց հետո հայրենասիրական ճառ ասաց:
- 3) Մինչև պատվիրակների ժամանելը ամեն ինչ պատրաստ էր:
- 4) Մենք ուզում ենք շուտ ծանոթանալ մեկմեկու նախասիրություններին, բնավորությանը:

**94. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:**

- 1) Անսահման սիրում է իր ծնողներին:
- 2) Ու դժժում է աղմուկը խուլ գիշերային կայարանում...
- 3) Եթե ուզեն՝ արեգակներ կշարտեն երկինքն ի վեր...
- 4) Հետո նրանք իմացան միմյանց անուններն ու մտերմացան:

**95. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված դերանունով:**

- 1) Որքան նման է եղել պահն այդ մարդը կանթեղի...
- 2) Հետզհետե մթնում էին, անգունանում ու աղոտվում ստվերները:
- 3) Դաշտը՝ անծայր ու անսահման, լայնատարած, հրակարմիր, տարածվել էր նրանց առաջ:
- 4) Յոթ սարերից այն կողմ նրանք թողել էին ողջ ունեցվածքը:

**96. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված դերանունով:**

- 1) Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ...
- 2) Մոտ էր թվում քաղաքն այնքան երկաթուղու կայարանին...
- 3) Ինչ-որ մեկի սրտում բացված վերք է կարծես այս կյանքը մի...
- 4) Ընկերների համար նա եկավ Հայաստան:

**97. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված կապական կառույցով:**

- 1) Ուտելուց առաջ անպայման պիտի լվացվեր:
- 2) Վաղ առավոտյան՝ արևածագից առաջ, արդեն ոտքի վրա էր:
- 3) Իր ժամանակը անտեղի վատնում էր՝ պարապ թափառելով:
- 4) Ես չմոռացա այս կարևոր իրողության մասին տեղեկացնել ընկերներին:

**98. Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված կապական կառույցով:**

- 1) Գյուղ տանող ճանապարհի վրա սևին տալով մի բան է շարժվում:
- 2) Հանդիպակաց բարձունքի վրայի ապարանքը իշխանինն էր:
- 3) Անկյունում՝ սեղանի վրա, գրքեր էին շարված:
- 4) Մոտավորապես նման մի կնունք տեղի ունեցավ հետո:

**99. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) **Ջուրը չտեսած** մի բոբիկացի:
- 2) **Ընկնելով ու վեր կենալով** շարունակում էին երթը:
- 3) **Չգիտեր ինչ անել:**
- 4) **Իր ասածներին** ինքն էլ չէր հավատում:

**100. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ծառաները **գլխարկները հանած** խոնարհվեցին մինչև գետին:
- 2) Ես կախարդ եմ **ապագան գուշակող:**
- 3) Եվ **կտրուկ շուռ գալով** տեսավ դեպի իրեն եկող մարդկանց:
- 4) Նրան կանչում էր անտառը **խորհրդավոր ձայներով:**

**101. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) **Կամրջի վրայով անցնելիս** աջ ու ձախ չէր նայում:
- 2) Անհրաժեշտ էր **մի քանի օրով գյուղ գնալ:**
- 3) Բայց այգեպանը չդադարեց **այգին մշակել:**
- 4) Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և **առանց շրջվելու** հեռացավ քաղաքից:

**102. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Գնացքի շոգեկառքը զարդարել էին **փողփողացող ալ դրոշներով:**
- 2) **Անհայտ հեռուներից մինչև** նահիրյան այդ քաղաքը ձգված երկաթե գծերի վրայով գնացքը մոտեցել է կայարանին:
- 3) **Իր այդ մարդասիրական քայլն անելով** նա գրավեց շատ մարդկանց հոգիները:
- 4) Դա մի մեծ հյուրասրահ էր **կահավորված թանկարժեք իրերով:**

**103. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Աշակերտները **մեծ դասամիջոցից օգտվելով** նախաճաշում են:
- 2) Նվարդը գնում է ուսուցչանոց **տեսուչին կանչելու:**
- 3) Գիշերվա կեսին **սարսափած քաղաքացիները** դուրս են թռչում տներից:
- 4) Նահանգապետը գեներալի **բնակարանը մտնելիս** գովել է այն:

**104. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) **Նավթի հետ գործ ունենալը** պատճառ էր դարձել նրա մականվանը Մագուրի Համո:
- 2) Աչքը **խանութի պատերից կախած** գույնզգույն հագուստներին հառած սպասում է գնորդի:
- 3) **Խոնարհվելով բարևելը** սովորություն էր դարձրել:
- 4) Նայում է նրան և կարծես ուզում է **գետինը մտնել:**

**105. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այդ պատերից **քավականին հեռու գտնվող** վայրերում ևս խոսում էին այդ դեպքերի մասին:
- 2) Իսկ մանրավաճառները **շունչ քաշելու** անգամ ժամանակ չունեն:
- 3) Հարևանները **նրան տեսնելով** հարգալից բարևում են:
- 4) Սիրում է **հասարակական գործունեությանը զբաղվել:**

**106. Պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ համապատասխանեցված տրված նախադասությունների դերբայական դարձվածները իրենց շարահյուսական պաշտոններին (աջ շարքի տարբերակներից մեկն ավելորդ է):**

- |   |                    |
|---|--------------------|
| ա. Նախորդ օրը սկսած գործը դեռ չավարտած՝ նոր գործ էր ձեռնարկել:      | 1. պատճառի պարագա  |
| բ. Գործընկերների՝ լիովին միմյանց վստահելը գործի հաջողության կեսն է: | 2. ենթակա          |
| գ. Չնայած չափահաս չլինելուն՝ փորձում էր կիսել մոր հոգսերը:          | 3. գիջման պարագա   |
| դ. Նա հանկարծակի ներս մտավ՝ բոլորիս անակնկալի բերելով:              | 4. ձևի պարագա      |
|   | 5. ժամանակի պարագա |

- 1) ա-1, բ-2, գ-4, դ-2
- 2) ա-5, բ-2, գ-4, դ-1
- 3) ա-1, բ-5, գ-3, դ-2
- 4) ա-5, բ-2, գ-3, դ-4

**107. Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դու որ այդպես քնքուշ ես և գեղեցիկ միթե գութ չունես:
- 2) Ինչ ես ձանձրացնում ինձ անպատկառ քամի դու ով ես որ քեզ սիրեմ:
- 3) Վայելիր հարբիր այս երկիրը քոնն է մինչև երկնահույ լեռների պատնեշը:
- 4) Ողջույն բանաստեղծիդ գեղեցիկ է այս ամենը գոհ ես:

**108. Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դուք որոշեք ձեր անելիքը:
- 2) Բարի լույս լսում է պարոն Գևորգը հարևան քո այգուց ինչ կա ինչ չկա:
- 3) Եղկելի մարդկանց վատ գործերը փոշի կդառնան...
- 4) Այո ես պատրաստ եմ կրելու իմ ճակատագիրը:

**109. Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ով է ձեռքով անում ով չեռվից անթիվ ձեռքերով...
- 2) Խայամն ասավ իր սիրուհուն ոտդ զգույշ դիր հողին...
- 3) Ախ թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտեղ դեպի տուն...
- 4) Չարմանում եմ թե ով Շռայլ ինչքան շատ ես տվել ինձ...

**110. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Հասավ այն պահը, երբ բրիչը դեմ առավ մետաղի, որը զանգի նման դողանջներ արձակեց՝ մեծ աղմուկ առաջացնելով:

- 1) երբ – ժամանակի պարագա
- 2) դեմ առավ – բաղադրյալ ստորոգյալ
- 3) մետաղի – հանգման անուղղակի խնդիր
- 4) որը – ենթակա

**111. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Հավատացնում էին, թե նա այնտեղ՝ մի պահարանի մեջ, փայփայելով պահում է այն տրեխները, որոնցով գաղթել էր իր ծննդավայրից տասնհինգ տարեկանում:

- 1) նա – ենթակա
- 2) պահարանի մեջ – տեղի պարագա
- 3) տրեխները – ուղիղ խնդիր
- 4) որոնցով – միջոցի անուղղակի խնդիր

**112. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Աննկատելի ներս մտնելով՝ Սմբատը զգաց, որ թղթախաղը, որն սկսվել էր արևածագից առաջ, Միքայելին բոլորովին այլափոխել է:

- 1) թղթախաղը – ենթակա
- 2) որն – ենթակա
- 3) Միքայելին – հանգման անուղղակի խնդիր
- 4) այլափոխել է – պարզ ստորոգյալ

**113. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Մարդը շան հետ ընկերացավ թե չէ, մարդակերության սովորությանը վերջ տվեց, որովհետև հոտ ու նախիր պահեց՝ հոգալով իր կարիքները:

- 1) սովորությանը – ուղիղ խնդիր
- 2) վերջ տվեց – պարզ ստորոգյալ
- 3) հոտ ու նախիր – ուղիղ խնդիր
- 4) իր – հատկացուցիչ

**114. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:**

Վերջապես վերադարձան նաժիշտները՝ արծաթե սկուտեղի վրա բերելով Արարատյան այգիների ընտիր պտուղներ և ոսկե գավաթով զովացուցիչ օշարակ, որ պատրաստված էր մրգերի հյութից ու մեղրաջրից:

- 1) վերադարձան – պարզ ստորոգյալ
- 2) արծաթե – որոշիչ
- 3) սկուտեղի – հատկացուցիչ
- 4) պտուղներ – ուղիղ խնդիր

**115. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:**

Այս մտքերը այնպես ոգևորեցին իշխանին, որ նա չզգաց, թե ինչպես անցավ կաժաններով՝ հասնելով ամրոցի պարիսպներին:

- 1) իշխանին – ուղիղ խնդիր
- 2) ինչպես – ձևի պարագա
- 3) հասնելով – նպատակի պարագա
- 4) պարիսպներին – հանգման անուղղակի խնդիր

**116. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:**

Իմ միակ հոգսը այն է, որ հավատարիմ մարդկանցից պահակներ նշանակեմ, որպեսզի այսուհետև ոչ ոք չկարողանա փախչել:

- 1) իմ – հատկացուցիչ
- 2) այն է – բաղադրյալ ստորոգյալ
- 3) պահակներ – ենթակա
- 4) այսուհետև– ժամանակի պարագա

**117. Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:**

Գերեզմանատունը արևմուտք նայող թեք բացատ էր հոնուտ լանջի վրա:

- 1) նայող– ենթակա
- 2) բացատ էր – բաղադրյալ ստորոգյալ
- 3) հոնուտ – որոշիչ
- 4) լանջի վրա – տեղի պարագա

**118. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Կովկասի հայ բնակչության բոլոր խավերում ծայր առավ մի ծավալուն խանդավառություն:

- 1. բնակչության (ա. ենթակա, բ. հատկացուցիչ, գ. որոշիչ)
- 2. բոլոր (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. չափի պարագա)
- 3. ծայր առավ (ա. բաղադրյալ ստորոգյալ, բ. պարզ ստորոգյալ, գ. ստորոգելի)
- 4. խանդավառություն (ա. ուղիղ խնդիր, բ. հանգման խնդիր, գ. ենթակա)

- 1) 1-գ, 2-գ, 3-բ, 4-գ
- 2) 1-բ, 2-ա, 3-բ, 4-գ
- 3) 1-բ, 2-բ, 3-ա, 4-ա
- 4) 1-ա, 2-ա, 3-ա, 4-բ

**119. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Մեծ եղբայրս՝ Հակոբը, բարկացած լռեցրեց Լևոնին:

- 1. Հակոբը (ա. բուն բացահայտիչ, բ. ենթակա, գ. հատկացուցիչ)
- 2. բարկացած (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. միջոցի խնդիր)
- 3. լռեցրեց (ա. ստորոգելի, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. պարզ ստորոգյալ)
- 4. Լևոնին (ա. հանգման խնդիր, բ. ուղիղ խնդիր, գ. վերաբերության խնդիր)

- 1) 1-բ , 2-գ , 3- բ, 4- ա
- 2) 1-գ , 2- բ, 3-ա, 4-բ
- 3) 1-բ , 2-ա , 3-գ , 4- ա
- 4) 1-ա, 2-բ , 3- գ, 4-բ

**120. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Հանկարծ թրմփացի սենյակի հատակին՝ գորգերի վրա:

1. հանկարծ (ա. ձևի պարագա, բ. ժամանակի պարագա, գ. որոշիչ)
2. սենյակի (ա. որոշիչ, բ. տեղի պարագա, գ. հատկացուցիչ)
3. հատակին (ա. հանգման խնդիր, բ. ուղիղ խնդիր, գ. տեղի պարագա)
4. գորգերի վրա (ա. տեղի պարագա, բ. պարագայական բացահայտիչ, գ.
5. անջատման խնդիր)

- 1) 1-ա , 2-գ , 3-գ , 4-բ
- 2) 1- բ , 2-բ , 3-ա , 4-ա
- 3) 1-գ , 2-գ , 3-բ , 4- բ
- 4) 1- ա , 2-բ , 3-գ , 4-ա

**121. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Նրա ամբողջ հարստությունը հաստ ծոցատետրն էր և սրածայր մատիտը:

1. ամբողջ (ա. չափի պարագա, բ. որոշիչ, գ. ձևի պարագա)
2. հարստությունը (ա. ենթակա, բ. ուղիղ խնդիր, գ. հանգման խնդիր)
3. ծոցատետրն էր (ա. բաղադրյալ ստորոգյալ, բ. պարզ ստորոգյալ, գ. ստորոգելի)
4. մատիտը (ա. ենթակա, բ. ստորոգելի, գ. ուղիղ խնդիր)

- 1) 1-բ , 2- բ , 3-գ , 4-գ
- 2) 1- ա , 2- ա , 3-բ , 4-ա
- 3) 1- բ , 2- ա , 3- ա , 4- բ
- 4) 1- գ , 2- բ , 3- ա , 4-ա

**122. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Օդը, սակայն, այստեղ ցուրտ էր, գետինը՝ խոնավ, բուսականությունից զուրկ:

1. օդը (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. տեղի պարագա)
2. սակայն (ա. անջատման խնդիր, բ. միջանկյալ բառ, գ. շաղկապ)
3. ցուրտ (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. ստորոգելի)
4. բուսականությունից (ա. վերաբերության խնդիր, բ. անջատման խնդիր, գ. պատճառի պարագա)

- 1) 1- բ , 2- բ , 3-գ , 4-բ
- 2) 1- ա , 2- գ , 3- ա , 4-գ
- 3) 1- գ , 2- բ , 3- գ , 4- բ
- 4) 1- բ , 2-բ , 3- բ , 4-ա

**123. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Իբրև բժիշկ՝ Բագրատյանը մտածում էր հիվանդների արագ առողջանալու մասին:

1. իբրև բժիշկ (ա. որոշիչ, բ. բուն բացահայտիչ, գ. մասնական բացահայտիչ)
2. մտածում էր (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. ստորոգելի)
3. արագ (ա. ձևի պարագա, բ. որոշիչ, գ. չափի պարագա)
4. առողջանալու մասին (ա. նպատակի պարագա, բ. վերաբերության խնդիր, գ. ուղիղ խնդիր)

- 1) 1- բ , 2-գ , 3-գ , 4-ա
- 2) 1- գ , 2- ա , 3- ա , 4- բ
- 3) 1- ա , 2- ա , 3- բ , 4- գ
- 4) 1- գ , 2- բ , 3-ա , 4-ա



**124. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Փիլիսոփա լինելու հաճույքը հենց այն է, որ քեզ համար ճանաչելի են երևույթի բոլոր կողմերը:

1. հաճույքը (ա. ուղիղ խնդիր, բ. ստորոգելի, գ. ենթակա)
  2. այն (ա. որոշիչ, բ. ստորոգելի, գ. հանգման խնդիր)
  3. ճանաչելի են (ա. բաղադրյալ ստորոգյալ, բ. պարզ ստորոգյալ, գ. որոշիչ)
  4. կողմերը (ա. ենթակա, բ. հանգման խնդիր, գ. ուղիղ խնդիր)
- 1) 1-ա , 2-գ , 3-գ , 4-բ
  - 2) 1- գ, 2- բ, 3- ա, 4- ա
  - 3) 1- բ, 2- ա, 3- ա, 4- ա
  - 4) 1- գ, 2- ա, 3- ա, 4-գ

**125. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Նա բռունցքով ջարդեց այն, ինչ մնացել էր խաղալիքից:

1. բռունցքով (ա. միջոցի խնդիր, բ. տեղի պարագա, գ. ձևի պարագա)
  2. այն (ա. ստորոգելի, բ. որոշիչ, գ. ուղիղ խնդիր)
  3. ինչ (ա. բացահայտիչ, բ. ենթակա, գ. ուղիղ խնդիր)
  4. խաղալիքից (ա. անջատման խնդիր, բ. ներգործող խնդիր, գ. ուղիղ խնդիր)
- 1) 1-բ , 2-բ , 3- ա, 4- ա
  - 2) 1- ա, 2- գ, 3- բ, 4- բ
  - 3) 1- ա, 2-գ, 3- բ, 4- ա
  - 4) 1- գ, 2- ա, 3- գ, 4-բ

**126. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Ուղտի կռնակին զետեղված է մի պատգարակ՝ մետաքսե վարագույրներով:

1. ուղտի (ա. հանգման խնդիր, բ. որոշիչ, գ. հատկացուցիչ)
  2. կռնակին (ա.տեղի պարագա, բ. հանգման խնդիր, գ. հատկացուցիչ)
  3. պատգարակ (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. տեղի պարագա)
  4. վարագույրներով (ա. որոշիչ, բ. միջոցի խնդիր, գ. բուն բացահայտիչ)
- 1) 1-գ, 2- ա, 3- բ, 4- ա
  - 2) 1-ա, 2- բ, 3- բ, 4- գ
  - 3) 1-բ, 2- գ, 3- գ, 4- բ
  - 4) 1-գ, 2- ա, 3- ա, 4-ա

**127. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Մթնածոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է. ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:

1. տանող (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. տեղի պարագա)
  2. արահետն (ա. ենթակա, բ. ստորոգելի, գ. տեղի պարագա)
  3. ոչ մի (ա. ենթակա, բ. որոշիչ, գ. չափի պարագա)
  4. ոտք չի դնում (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. զիջման պարագա)
- 1) 1-գ, 2- ա, 3- գ, 4- բ
  - 2) 1-գ, 2- գ, 3- ա, 4- ա
  - 3) 1-ա, 2- ա, 3- բ, 4- ա
  - 4) 1-բ, 2- ա, 3- բ, 4-գ

**128. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Նրանք պիտի բացատրվեին, միմյանց հայտնեին այն, ինչ որ նրանց երկյուղալի գաղտնիքն էր:

1. միմյանց (ա. հատկացուցիչ, բ. հանգման խնդիր, գ. ուղիղ խնդիր)
  2. նրանց (ա. հանգման խնդիր, բ. հատկացուցիչ, գ. ուղիղ խնդիր)
  3. երկյուղալի (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. միջոցի խնդիր)
  4. գաղտնիքն էր (ա. պարզ ստորոգյալ, բ. ստորոգելի, գ. բաղադրյալ ստորոգյալ)
- 1) 1– ա, 2– ա, 3– բ, 4– ա
  - 2) 1– գ, 2– գ, 3– ա, 4– գ
  - 3) 1– բ, 2– ա, 3– գ, 4– բ
  - 4) 1– բ, 2– բ, 3– ա, 4– գ

**129. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Առավոտյան երբեմն արծաթագոծ սանրը հանում էր, դիտում իրեն ոտքից գլուխ:

1. երբեմն (ա. որոշիչ, բ. ժամանակի պարագա, գ. պարագայական բացահայտիչ)
  2. հանում էր (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. ստորոգելի)
  3. իրեն (ա. հատկացուցիչ, բ. հանգման խնդիր, գ. ուղիղ խնդիր)
  4. սանրը (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. ստորոգելի)
- 1) 1– բ, 2– ա, 3– գ, 4– ա
  - 2) 1– ա, 2– գ, 3– ա, 4– բ
  - 3) 1– գ, 2– բ, 3– բ, 4– գ
  - 4) 1– բ, 2– ա, 3– ա, 4– բ

**130. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Ընչաբաղդությունից իրեն՝ տասնիննամյա չնաշխարհիկ օրիորդին, ամուսնացրին տարեց մարդու հետ:

1. ընչաբաղդությունից (ա. պատճառի պարագա, բ. անջատման խնդիր )
  2. օրիորդին (ա. ուղիղ խնդիր, բ. բուն բացահայտիչ)
  3. ամուսնացրին (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ)
  4. տասնիննամյա (ա. որոշիչ, բ. չափի պարագա)
- 1) 1– ա, 2– բ, 3– ա, 4– ա
  - 2) 1– բ, 2– ա, 3– բ, 4– ա
  - 3) 1– ա, 2– ա, 3– բ, 4– բ
  - 4) 1– բ, 2– բ, 3– ա, 4– ա

**131. Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Վեց գիրք ընտրեցի, որոնք միասին նույնքան էին կշռում, ինչքան գերմաներեն գիրքը:

1. վեց (ա. որոշիչ, բ. չափի պարագա, գ. ձևի պարագա)
  2. որոնք (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. ստորոգելի)
  3. նույնքան (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. չափի պարագա)
  4. կշռում էին (ա. բաղադրյալ ստորոգյալ, բ. պարզ ստորոգյալ, գ. ստորոգելի)
- 1) 1– բ, 2– բ, 3– գ, 4– գ
  - 2) 1– գ, 2– ա, 3– բ, 4– բ
  - 3) 1– բ, 2– գ, 3– ա, 4– ա
  - 4) 1– ա, 2– բ, 3– գ, 4– բ

**132. Ո՞ր նախադասության ընդգծված անդամներն են կապված խնդրառությանը:**

- 1) Որքա՛ն քաղցր է քունը, երբ անձրև է գալիս:
- 2) Առանձնացավ ընկերներից ու շարժվեց դեպի դիմացի մայթը:
- 3) Վեհանիստ լեռան գագաթը կարծես աննյութական էր:
- 4) Այնուհետև մենք էլ չէինք լսում նրա ձայնը:

**133. Ո՞ր նախադասության ընդգծված անդամներն են կապված խնդրառությանը:**

- 1) Թափառականը վեր բարձրացրեց մտազբաղ աչքերը:
- 2) Աղամը Լիլիթի մասին անվերջ մտածում էր:
- 3) Այդ իրարանցումի մեջ ամբոխը հանկարծ նկատեց նրան:
- 4) Լուսինը դուրս է եկել սլացիկ բարդիների հետևից:

**134. Ո՞ր տարբերակում խնդրառությանը կապակցված անդամներ չկան:**

- 1) Աշուն է, անձրև... Ստվերներն անձև  
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ...
- 2) Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ,  
Քնքուչ ձեռներդ ես կհամբուրեմ...
- 3) Չարմանքով գուցե դու նայես իմ այս  
Գրքի էջերին՝ թե՛ անշուք, թե՛ պարզ...
- 4) Դու ինձ չես խաբում, քնքուչ երեկո,  
Անուշ երեկո, մեղմ ու մտերիմ...

**135. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Երեկոյի ավարտին երգչուհին շնորհակալություն հայտնեց բոլորին, ովքեր աջակցել էին իրեն մեծ փառքի հասնելու համար:
- 2) Այդ մարդաշատ քաղաքում ես ոչ միայն ծանոթացա իմ կյանքի ընկերոջ հետ, այլև հաղորդակից եղա նրա դարավոր մշակույթին:
- 3) Հրավիրվածների մեծ մասը տեղյակ էր նրա նենգ քայլերին:
- 4) Նախընտրում եմ, սակայն, նրա հոգսը թողնելու կյանքին ու Աստծուն:

**136. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Արագ հիասթափվում էր ամենքից ու ամեն ինչից:
- 2) Նրանք սկսել են կարևորել այդ գործին:
- 3) Կարծես մի աչքով աջ էր նայում, մյուսով՝ ձախ:
- 4) Դանդաղ մոտեցավ խմբին և սկսեց խոսել Աստծուց ու աստվածայինից:

**137. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Պարզվեց, որ ռուսական գիմնազիան իրոք ոչինչ չի տալիս ավարտողներին, բացի «հասունության վկայականից»:
- 2) Այդ նշանավոր պարոնը իր հողվածներից մեկը նվիրել էր Կովկասի դեպքերին և կարծիք հայտնել Բաքվի կոտորածների տնտեսական հիմքի վերաբերյալ:
- 3) Նրա համոզմամբ՝ թուրքերը, ինչպես ամենուրեք, Կովկասում ևս տնտեսապես հարստահարվում են ավելի ճարպիկ ազգությունների, մասնավորապես հայերի կողմից:
- 4) Մեքենան արագ ընթանում էր դեպի իջևանատանը, իսկ հոգնած ուղևորները երագում էին հանգստի մասին:

**138. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Ազգի զարգացումը խթանելու համար մեծ ու անձնագոհ առաջնորդներ են պետք:
- 2) Մեր առաջընթացին միշտ էլ խոչընդոտել են անձնապաշտ ու դավաճան մարդիկ:
- 3) Մարդ կոչվելու իրավունք ունի նա, ով միշտ երախտապարտ է իր ծնողներին, իր ուսուցիչներին:
- 4) Աղջիկը ստիպված էր համաձայնել սիրած տղայի կարծիքին:

**139. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) –Առաջարկներիդ հետ լիովին համաձայն եմք,– ասաց տնօրենը:
- 2) Նրա բոլոր ձեռնարկումներին մերձավորները միշտ սատարում էին:
- 3) Արածդ սխալի համար պիտի ներողություն խնդրես հորդ:
- 4) Ձու գողացողը ձի էլ կգողանա:

**140. Ո՞ր նախադասության ընդգծված անդամներն են կապված համաձայնությամբ:**

- 1) Մեծ բանաստեղծ Թումանյանը միշտ **իր ժողովրդի հետ** է եղել:
- 2) Այն ժամանակ Հիսուսը **հավաքեց իր աշակերտներին**, լեռը բարձրացավ:
- 3) Մեն–մենակ պարում է **մի աղջիկ՝ նոճիահասակ ու գիսարձակ:**
- 4) **Սմբատ Բագրատունուն՝ որպես կայսեր դեմ մեղանշածի**, զցում են զազանների դեմ:

**141. Ո՞ր նախադասության ընդգծված անդամներն են կապված համաձայնությամբ:**

- 1) Խորասանի մեծ բանաստեղծը՝ Օմար Խայամը, կավե գավաթից **գինի էր խմում:**
- 2) Քաղաքը **աստիճանաբար արթնանում էր** անդորր քնից:
- 3) Նրա **հայացքը բևեռված էր** ինձ վրա:
- 4) Իսկ աղոթելիս մենք դադարեցինք մեր **հայացքը դեպի առաստաղ ուղղելուց:**

**142. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Նա այն տղաներից է, որ հաղթել է օլիմպիադայում:
- 2) Ե՛վ տղան, և՛ աղջիկը կարծես սպասում էին հրաշքի:
- 3) Անտարբեր հայացքը դեպի գոմի դուռն էին ուղղել պառավ կովը, սպիտակ ձին:
- 4) Տերյանի «Մթնշաղի անուրջները» նոր էջ բացեց հայ բանաստեղծության մեջ:

**143. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Այսպես է անցկացնում իր ժամանակը բուն փարիզեցիների մեծ մասը:
- 2) Եվրոպայում թե՛ միջնակարգ, թե՛ բարձրագույն դպրոցները ուսանողներից պահանջում են աշխատասիրություն:
- 3) Հարևանների կյանքը, նրանց առօրյա անցուդարձը ինձ շատ է հետաքրքրում:
- 4) Այստեղ ուսում են տալիս, գիտություն են սովորեցնում, իսկ այնտեղ միայն քաղաքացիներ են պատրաստում:

**144. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Որպես կարգազանցների՝ աշակերտներից մի քանիսին պատժեցին:
- 2) Աշակերտը և նրա ուսուցիչը պարզևատրվեցին պատվոգրերով:
- 3) Ուրբերը ցավում էր, և չշարունակեց վերելքը:
- 4) Մի քանիսը ցատկեցին և սկսեցին մագլցել դեպի վեր:

**145. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Զնելուց առաջ տան դուռը փակում էր կան պապս, կան մեծ հորեղբայրս:
- 2) Թմբուկ, գուռնա, աղաղակ, հռչոց խառնվեց իրար, սկսվեց իրարանցում:
- 3) Նիդեռլանդները Եվրոպայի լավագույն երկրներից է:
- 4) Նրա ուշք ու միտքը դրսում էր:

**146. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Լիլիթի երեսպաշտությունը, կեղծավորությունը պատմվածքում անձնավորված են:
- 2) Ես ու Լևոնը մտածում էինք զալիք օրերի մասին:
- 3) Թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում տիրում էր խաղաղություն:
- 4) Նրան չէր անհանգստացնում ո՛չ ցուրտը, ո՛չ մենակությունը:

**147. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Թե ինչ սոսկալի դեպքեր էին կատարվել նրանց տանը, ամեն մարդ գիտեր:
- 2) Քեզ՝ իբրև հաղթողի, հանձնելու են պատվոգիր:
- 3) Ե՛վ Ջանգու գետի ափին հանգստացողների ուրախ աղմուկը, և՛ ծաղկած ծառերի բույրը հոգիդ լցնում է քաղցր զգացողությամբ:
- 4) Ոչ մի առարկություն չկա այդ հարցում:

**148. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Հրավիրյալների մեծամասնությունը այդպես էլ չկարողացավ որևէ նախաձեռնությամբ հանդես գալ:
- 2) Դու հեռացար, ու քեզանից հուշեր, անմոռաց հույզեր մնաց:
- 3) Մայրը երեխայի հետ գնաց զբոսանքի:
- 4) Ուսանողներից յուրաքանչյուրը սպասում էր իր արդյունքների ամփոփմանը:

**149. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Իջնում էր ձյունը հանդարտ՝ ճերմակ անուրջներով պարուրելով աշխարհը:
- 2) Մագաղաթյա մատյանները դարերի գանձերն են ամփոփում իրենց մեջ:
- 3) Վերջին օրերի դեպքերը, նախարարների՝ երկրի տարբեր կողմերից ժամանելը խառնաշփոթ էր ստեղծել մայրաքաղաքում:
- 4) Մենք ամենքս հյուր ենք կյանքում  
Մեր ծննդյան փուչ օրից...

**150. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Այն բոլոր կանխատեսումները, որ ներկայացվել է, սխալ դուրս եկան:
- 2) Դրանից հետո քո դիրքերը կթուլանա:
- 3) Նավաստին ուղևորներից մեկի հետ մնացին մավի բազրիքին կռթնած:
- 4) Այդ դեպքից հետո ես պատկերացնում եմ, թե ինչեր կկատարվեն:

**151. Ո՞ր նախադասության մեջ շարահյուսության սխալ կա:**

- 1) Բազմահաղթ ու հզոր իշխանը մերժել էր կռվել կայսրության թշնամիների դեմ՝ նախընտրելով մնալ հայրենիքում:
- 2) Ջևախ՝ հզորագույն Աստծո շանթերը խորտակեցին Պրոմեթևսին՝ մատնելով նրան ամենամեծ պատժի՝ մոռացման:
- 3) Հանրահայտ գերմանական ընկերությունը վաճառքի է հանել իր նոր ապրանքատեսակը:
- 4) Ծովի հայելանման մակերևույթին ցուցում էին արևի ոսկեդեղձան շողերը:

**152. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Չայները ոչ թե լուռ է, այլ ուժեղանում:
- 2) Նա ոչ միայն չէր պատրաստվել քննությանը, այլև ներկայացել էր՝ զինված ծածկագրերով:
- 3) Մենք պատրաստվում ենք ոչ թե մրցումների, այլ մեկնում ենք ընկերական խաղերի:
- 4) Ֆուտբոլային դաշտը ոչ միայն թաց է, այլև գուրկ կանաչ ծածկույթից:

**153. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:**

- 1) Հանրաճանաչ անգլիական «Ավե» ընկերությունը վաղուց արդեն հայկական շուկայում է:
- 2) Իսլամական համաշխարհային համաժողովը այդպես էլ չկայացավ:
- 3) Շատ եվրոպական երկրներում այսօր հորդառատ անձրևներ են տեղում:
- 4) Մայիսի 30-ին կայանալիք Երևանի քաղաքապետի ընտրությունները հանրության ուշադրության կենտրոնում են:

**154. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Այսօր եթերում բավականին երիտասարդներին տեղ են տալիս:
- 2) Ավերված հինավուրց բերդի երկաթյա դարպասները վաղուց ժանգոտել էին անձրևաջրերից:
- 3) Մեծ համաճարակներ են բռնկվում գերազանցապես աղքատ երկրներում:
- 4) Աղջիկն այդ գեղաշյա հրդեհել էր պատանու սիրտը:

**155. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:**

- 1) Ամռան հովերի մեջ մեղմ արմավենիներն էին օրորվում:
- 2) Երևի տղամարդը այնքան էլ կարճահասակ չէ, կարծես բայց թզուկ լինի:
- 3) Արարված բարիքներից կարող է օգտվել յուրաքանչյուր մարդ:
- 4) Երևանի՝ լույսերով պայծառ ողողված փողոցները մարդաշատ են այսօր:

**156. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:**

- 1) Հաղթողներին ընտրելիս կազմկոմիտեն նախապատվությունը տվել է երիտասարդ թատերական գործիչներին:
- 2) Նախագահի յուրաքանչյուր թեկնածու ներկայացնում է քաղաքական ու տնտեսական որոշակի ծրագրեր:
- 3) Օրերս լույս տեսավ հանրաճանաչ գրողի վերջին բանաստեղծական ժողովածուն:
- 4) Մեր երկրները կապված են բազմաթիվ պատմական և մշակութային կապերով:

**157. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

..... Մարգարիտայի ոտքերը հպվեցին խոնավ խոտին, երաժշտությունն ուռենիների տակ ուժգնացավ, և կայծերի խուրճն առավել հախուռն սլացավ խարույկն ի վեր:

- 1) Քանի որ
- 2) Թեև
- 3) Չնայած
- 4) Հենց որ

**158. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Աշակերտները հնարավորություն ունեցան առնչվելու ձեռագիր ..... :*

- 1) մատյանների հետ
- 2) մատյաններին
- 3) մատյանների մասին
- 4) մատյաններից

**159. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ամենուրեք ապստամբություններ բռնկվեցին ..... իշխողների բռնությունների պատճառով:*

- 1) գյուղացիների վերաբերյալ
- 2) գյուղացիների հանդեպ
- 3) գյուղացիներին
- 4) գյուղացիների մասին

**160. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Պարզապես անհավատալի էր, ..... թաղամասի մարդիկ, լսելով Սելինայի մահվան լուրը, անմիջապես մի կողմ էին թողել իրենց ամենօրյա գործերը և շտապել դեպքի վայր:*

- 1) երբ
- 2) որ
- 3) թե
- 4) մինչ

**161. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Հինգերորդ օրվա վերջում` ....., նա հաշվեց, որ նավը դեռ յոթ մղոն հեռու էր իրենից, և ինքն անկարող էր հասնել նրան:*

- 1) ծովի ալիքների մեջ օրորվելով
- 2) օվկիանոսի ալիքների մեջ
- 3) ինքն իրեն հավաքելով
- 4) ուշ երեկոյան

**162. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Երբ գեներալը ..... զրույցը վերջին խնդրատուի հետ և քայլերն ..... դեպի խորքի սենյակները, ծառայողը ..... նրա հետևից, ինչ–որ տարօրինակ խոսքեր ..... և լռեց:*

- 1) վերջացրեց, ուղղեց, քայլելով, մրմնջաց
- 2) վերջացրեց, ուղղեց, քայլում էր, մրմնջում
- 3) վերջացնելով, ուղղելով, քայլեց, մրմնջաց
- 4) վերջացրեց, ուղղեց, քայլեց, մրմնջաց

**163. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մեծ .....կրակը .....` մարդիկ տեսել են, որ ծառի մեջ ..... ածխացած մի հսկա վերք,  
..... մոմերի բացած վերքը:*

(ճիգ, հանգցնել, մնալ, այրվել)

- 1) ճիգով, հանգցնում են, մնում է, այրվող
- 2) ճիգից, հանգցնող, կմնա, այրվելիս
- 3) ճիգերից, հանգցրած, մնալու է, այրվող
- 4) ճիգով, հանգցնելով, մնացել է, այրված

**164. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Հգոր ..... հարյուրավոր տարիներ ..... ուսերին ..... ծառի .....*

( արմատ, ինքը, պահել, սաղարթ)

- 1) արմատներով, իր, պահել են, սաղարթներից
- 2) արմատներով, իր, պահվել են, սաղարթներ
- 3) արմատները, իր, պահելու են, սաղարթներով
- 4) արմատները, իրենց, են պահել, սաղարթները

**165. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Արաքսը ....., հոսում դանդաղ, խոհուն, իսկ հեռվում` երկնաքերծ բարդիների .....,  
..... բներ .....*

( վշտալ, կատար, արագիլ, նշմարել )

- 1) վշտալով, կատարները, արագիլի, նշմարեցին
- 2) վշտում էր, կատարը, արագիլներով, է նշմարվում
- 3) վշտալիս, կատարներում, արագիլի, են նշմարված
- 4) վշտում է, կատարներին, արագիլների, են նշմարվում

**166. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*.....ծայներ .....` նա շրջվեց ու ..... Սմբատ Բագրատունուն` թագադիր ասպետին, որ  
..... առույգ, խրոխտ ու սլատկառագրու կեցվածքով:*

(թիկունք, լսել, տեսնել, առաջանալ)

- 1) Թիկունքում, լսելիս, կտեսներ, առաջ էր գալիս
- 2) Թիկունքով, լսողը, տեսել էր, առաջանալու էր
- 3) Լսելով, թիկունքից, տեսնում էր, առաջ էր գալիս
- 4) Թիկունքից, լսելով, տեսավ, առաջանում էր

**167. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մի անգամ ..... մեկում ..... մի վիթխարի կաղնի, որը, ....., ..... մեծ գորավարի`  
Վարդանի ձեռքով:*

(գյուղ, տեսնել, ասել, տնկել)

- 1) գյուղերից, տեսել էին, ասում են, տնկել էին
- 2) գյուղից, տեսան, ասում էին, տնկվել է
- 3) գյուղերից, տեսել էր, ասվել էր, տնկում էր
- 4) գյուղերից, տեսա, ասում են, տնկվել է



**168. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*«Միրակուզի» ..... նավն ուներ հսկայական չափեր, որը, ..... առևտրական նավ, ..... կարող էր վերածվել մարտականի, մանավանդ որ նրա տախտակամածին դրված էր Արքիմեդի ..... կառուցված հսկա բաբանը:*

(անվանել, լինել, հեշտություն, նախագիծ)

- 1) անվանումով, լինելով, հեշտությամբ, նախագծով
- 2) անվանվող, եղել էր, հեշտությամբ, նախագծից
- 3) անվանված, լինելով, հեշտությամբ, նախագծով
- 4) անվամբ, եղել էր, հեշտորեն, նախագծով

**169. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Հելիոսի նշանավոր արձանը ..... ' արձանամասերից յուրաքանչյուրը մյուսի վրա տեղադրելով, և նրա մասին Փիլոն Բյուզանդացին ..... , թե քանդակագործը անավարտ արձանի շուրջը քիչ-քիչ լցնում էր հողի բլուրներ ' ..... ավարտված հարկերը և հնարավորությունը ընձեռելով հետագա հարկերը ..... :*

(կառուցել, գրել, ծածկել, տեղադրել)

- 1) կառուցած, գրեց, ծածկելով, տեղադրվելը
- 2) կառուցելով, գրելով, ծածկելով, տեղադրել
- 3) կառուցվել է, գրում է, ծածկելով, տեղադրելու
- 4) կառուցվում է, կգրի, ծածկում է, տեղադրվելը

**170. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Արտեմիսի տաճարը, որը երեսասյատված էր ձյունաթույր ..... , շողարձակում էր հարավային արևի շլացուցիչ ..... , և երբ ..... տաճարի նախամուտքի լայն աստիճաններով ..... , նրան զարմացնում էին հատակի խճանկարների զարդարանքները:*

(սվաղ, ճառագայթ, այցելու, բարձրանալ)

- 1) սվաղով, ճառագայթներով, այցելողը, բարձրանում էր
- 2) սվաղներով, ճառագայթներով, այցելուն, բարձրացել էր
- 3) սվաղից, ճառագայթներից, այցելում ես, բարձրանալով
- 4) սվաղով, ճառագայթներից, այցելուն, բարձրանում էր

**171. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Պերիկլես արքայի հետ Ֆիդիասի սերտ կապ ..... վատ անդրադարձավ հենց ..... ' քանդակագործի ճակատագրի վրա, և արքայի քաղաքական ..... քանդակագործը ..... անաստվածության և հափշտակություններ կատարելու մեջ:*

( ունենալ, ինքը, հակառակորդ, ամբաստանել)

- 1) ունենալով, իր, հակառակորդներին, ամբաստանեց
- 2) ունենալուն, իրեն, հակառակորդներից, ամբաստանում էր
- 3) ունենալուն, նրա, հակառակորդներին, ամբաստանվեց
- 4) ունենալը, իր, հակառակորդներից, ամբաստանվեց

**172. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Երեք շաբաթ անց այդ նույն մարդը կետորսանալի խցիկներից մեկում պատկել էր և հյուծված այտերից արցունքի հեղեղներ թափելով՝ պատմում էր, թե ով էր ինքը և ..... :*

- 1) ինչպիսի տանջանքների էին իրեն ենթարկել:
- 2) ինչպիսի տանջանքների էր ենթարկվել:
- 3) ինչպիսի հաճելի օրեր էր անցկացրել:
- 4) ինչ էր իր ուզածը:

**173. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*..... Կուտուզովը դեռ երկար ժամանակ նստած էր՝ սեղանին կռթնած, և շարունակ մտածում էր նույն սարսափելի հարցի մասին:*

- 1) Երբ ճանապարհեց գեներալներին
- 2) Գեներալներին ճանապարհելուց հետո
- 3) Գեներալների հետ խորհրդակցության ժամանակ
- 4) Մինչև կճանապարհեր գեներալներին

**174. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Անգլիական մի վիճակագրություն ցույց է տալիս, .....:*

- 1) որ Լոնդոնում հինգ գողությունից չորսի անմիջական պատճառը քաղցն է
- 2) լոնդոնյան գողությունների իրական պատճառը
- 3) թե Լոնդոնում գողությունների պատճառը քաղցն է
- 4) Ժան Վալժանը գողություն էր կատարել քաղցի պատճառով

**175. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*..... , որը դրսևորվել էր դեռևս պատանեկության հասակից:*

- 1) Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը այդ տարիներին բուռն վերելք ապրեց
- 2) Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը այդ տարիներին էր բուռն վերելք ապրում
- 3) Այդ տարիներին բուռն վերելք ապրեց Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը
- 4) Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը բուռն վերելք ապրեց այդ տարիներին

**176. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*..... , որովհետև ես ոչինչ չեմ գոհաբերել նրանց համար, ում սիրել եմ. ես սիրել եմ միայն ինձ համար, իմ բավականության համար՝ ազահությանը կլանելով նրանց զգացմունքները, քնքշանքը, ուրախությունն ու տանջանքները:*

- 1) Իմ սերը երջանկություն է բերել մարդկանց
- 2) Ես երբեք ոչ ոքի այդպես չեմ սիրել
- 3) Իմ սերը ոչ ոքի երջանկություն չի բերել
- 4) Ես միշտ բերկրանք եմ պատճառել մարդկանց

**177. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Երբ հյուրանոց էր մտնում, ..... , որտեղ արդեն չկար հարևան սենյակի բանալին:*

- 1) բանալիների վահանակին չկարողացավ չձգել իր որոնող հայացքը
- 2) չկարողացավ իր որոնող հայացքը չձգել բանալիների վահանակին
- 3) անտարբեր նայեց բաց լուսամուտից դուրս
- 4) մի քանի բառ փոխանակեց հյուրանոցի ծառայողի հետ

**178. Տրվածներից ո՞րն է բարդ ստորադասական նախադասություն:**

- 1) Աշուն է. օրերը ցրտում են:
- 2) Նա նախ վեր կացավ, ապա խոնարհ գլուխ տվեց:
- 3) Ինչ էր ուզում շարժումներով հասկացնել՝ այդպես էլ չիմացա:
- 4) Չէի ուզում ոչինչ բացատրել. այդ պահին ինձ չէին հասկանա:

**179. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված ստորադասական շաղկապով:**

- 1) Այսօր ողջ շրջանը գիտի՝ ինչպես նա քարուքանդ արեց սեփական այգու պարիսպները:
- 2) Թեպետ քաղաքացիների կողմից մեծ հարգանք էր վայելում, սակայն տեղի–անտեղի ցույց չէր տալիս իր գերազանցությունը:
- 3) Բարկացողը, ճեղքելով ամբոխը, հասավ աստիճաններին, որտեղից ելույթ էին ունենում հռետորները:
- 4) Նրանք ուր որ է դուրս կգան թեյարանից, կամ էլ մենք կմտնենք ներս:

**180. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված ստորադասական շաղկապով.**

- 1) Ընկերս մատնացույց արեց մի մարդու, որ խրոխտ կանգնած էր բարձունքին:
- 2) Ընդունարանում մարդիկ սպասում էին, որ իրենց բողոքը հասցնեն պետին:
- 3) Ներկաներից ոչ ոք տեղյակ չէր՝ երբ է ժամանելու պետը:
- 4) Ինչ էր ներկայացնում իրենից այդ «հոգևոր սփոփանքը»՝ չեմ հիշում:

**181. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված հարաբերական դերանունով:**

- 1) Տղաները վազվզում են ուղղահայաց պատերի վրայով, այնտեղից իջնում են ակնթարթային սլացքով:
- 2) Այն ժամանակ ես չգիտեի այդ բառի նշանակությունը, ուստի նախընտրեցի լռել:
- 3) Նա շատ լավ գիտեր՝ որտեղ են «գիշերում խեցգետինները»:
- 4) Առանձնատունը, որ քիչ հյուրեր չէր տեսել, գունաթափվեց, ամայացավ:

**182. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված հարաբերական դերանունով:**

- 1) Այդ գիշեր նա լուսացրեց հիվանդասենյակում, որտեղ նրանից ոչ մի պահ չհեռացավ:
- 2) Ե՞րբ է այս ամենի վերջը գալու, և ե՞րբ իր նյարդերը կհանգստանան:
- 3) Բժիշկները կարծում էին, որ ոչնչով այլևս չեն կարող օգնել:
- 4) Լուրեր են հասնում, որ նրան տեսնողներ են եղել Ռուսաստանում:

**183. Բարդ նախադասություններից որի՞ քաղաղրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված հարաբերական դերանունով:**

- 1) Ո՛վ իմանա՝ ո՞ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...
- 2) Ով եկել էր՝ թողած հեռուն անձայրածիր մութը գյուղի, Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
- 3) Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ուր հասար...
- 4) Ով իմանա՝ ո՞ր ընկանք, Զանի՛ օրվա հյուր ընկանք:

**184. Բարդ նախադասություններից որո՞ւմ է ստորադաս (երկրորդական) նախադասությունը միջադաս:**

- 1) Մոռան էր՝ բարակիրան այն աղջիկը, որ տարիներ առաջ, սրունքները կախած առվի ջրում, լիաթոք քրքջում էր:
- 2) Մի պահ թվաց, թե իր սիրտն է երգում, բայց երգը սուզվեց անհունի մեջ:
- 3) Չմռան լուսնկա գիշերներին, երբ ոչ ոք չէր մոտենում Սթնածորին, Պանինը որսի էր գնում:
- 4) Երկար նայեց հարազատ եզերքին, որ թաղված էր ցերեկային անդորրության մեջ, ապա դանդաղ հեռացավ:

**185. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը հետադաս:**

- 1) Նախքան կկողմնորոշվեր, մի ուժեղ հարված հասավ թիկունքին:
- 2) Նստում էինք ու սպասում, մինչև պապը գար:
- 3) Չնայած բոլորը հավաքվել էին արդեն, պարահանդեսը չէր սկսվում:
- 4) Այն օրը, երբ առաջին անգամ հրացանը վերցնելով՝ սարերը ելավ, հաճախ է վերհիշում:

**186. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը նախադաս:**

- 1) Ի լրումն այն ամենի, ինչ գրել էի նախորդ նամակում, ուզում եմ մի խոստովանություն անել:
- 2) Որքան անհրաժեշտ եք համարում, այնքան էլ կմնամ:
- 3) Ջգաց, որ փախչելու տեղ չկա, և սեղմվեց մի անկյունում:
- 4) Կինը, որ ամբողջ ժամանակ մտասույզ իր կարն էր անում, բարձրացրեց գլուխը:

**187. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ենթակա:**

- 1) Խմբին մոտեցավ մի աղջիկ, որ հագել էր երկար շրջազգեստ:
- 2) Ոչ մի կերպ չէի պատկերացնում, թե ինչ էր սպասվում ընտանիքիս:
- 3) Պարզ չէ, թե ինչ ճանապարհով է երեխան հասել այստեղ:
- 4) Չեմ գղջում, որ ընկերոջս արտահայտվելու հնարավորություն չտվեցի:

**188. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ենթակա:**

- 1) Տիկին Սաթենիկը, որ Մխիթար սպարապետի կինն էր, կանգնած էր ամրոցի՝ անդունդի վրա կախված միակ քարե պատշգամբում:
- 2) Ջգում էր, որ յուրայինների վիճակը ժամ առ ժամ վատանում էր:
- 3) Պարզվեց, որ պարսկական գորքերը ծուղակն են ընկել նեղ կիրճը մտնելուց հետո:
- 4) Նրան նայեցի ու ապշեցի, որ իմ խոսքերից բնավ չէր այլալվել:

**189. Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Եվ ուղտերը, որոնք, ծանր հակերի տակ տնքալով, չոքում էին Հյուսիսային ծովի հրապարակում, իրենց գլուխները սպիտակ գորանացի կողմը դարձրին:
- 2) Գետի կամրջով գյուղից արագորեն հեռացողները նրանք էին, ովքեր ոսկի ունեին և կարող էին քիչ թե շատ ապահով ապրել օտարության մեջ:
- 3) Հյուսիսային ծովից պարզ երևում էր, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից և շալակով տարան:
- 4) Սանդղուղի գլխից մի պահ նայեցի, թե ինչպես ծերունին կորավ մութի մեջ՝ քարերը մահակով շոշափելով:

**190. Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Ջերմ կարոտով սպասում եմ անհամբեր, Որ մեկը իմ փակ դռները կբացնա...
- 2) Ես չեմ հիշում՝ երբ և ուր Հանդիպեցի քեզ:
- 3) Ու ճշաց սիրտըս վայելքից անկարծ՝ Թվաց, որ մեկը կանչում է տրտում...
- 4) Դու կրգաս ու կրկին հեքիաթով կըղյութես, Լուսերես կըցրես մառախուղոն իմ հոգու, Ոսկեշող հայացքով և քնքուշ խոսքերով, որ գիտես Միայն դու:

**191. Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Մենք չէինք ուզում հավատալ, որ նա խաբել էր բոլորին:
- 2) Նավապետը պարզապես ցանկացել էր իմանալ, թե աղետի ժամանակ ճամփորդները կարո՞ղ են գտնել իրենց նավակները:
- 3) Մի՞թե կարելի է, որ քաղաքական նկատառումներով դիտարկենք այդ պարզ հարցը:
- 4) Որտեղից էր գալիս այդ տխուր հեծեծանքը՝ չէի կարողանում հասկանալ:

**192. Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած:
- 2) Լավ է՝ ելնեմ-գնամ, տամ փողոցին տուրքս:
- 3) Վհաստ սոսկումի տանջանքով կզգաս, Որ որոնածդ բնավ չես գտնի:
- 4) Դուք, որ ապրում եք սրբերի նման այդ դրախտի մեջ, Չե՞ք տեսնում արդյոք վշտերս տանջող...

**193. Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն չկա:**

- 1) Ինձ դուր էր գալիս, թե ինչպես էր նա գլխարկը ձիգ դնում գլխին և եզրերը մի քիչ վեր բարձրացնում:
- 2) Բայց հենց այդ պահին լավեց աղջկա բարձր ու սուր, ականջ ծակողը ճվճվոցը, որը երևի թե հասավ մինչև կայարան:
- 3) Միգուցե և լավ էր, որ նա ինձ չթողեց մեքենան գործի գցել, քանի որ երեխան ամեն ինչի մեջ կխառնվեր:
- 4) Հետճաշյա հանգստի ժամանակ մեզ կարգադրվեց, որ հանգիստ մնանք, այս ու այն կողմ չվազենք, չթռչկոտենք, այլապես մեզ կնկատեն:

**194. Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասությունն չկա:**

- 1) Ինձ համար հաճելի էր, որ խաղալիս ինձ ընկերակցի Լիան, որովհետև սովորաբար քույր ու եղբայր իրար չեն ընկերակցում:
- 2) Կարելի է կարծել, որ Իրենեն ծնվել էր ոչ մեկին չանհանգստացնելու համար:
- 3) Աղջկա ուշադրությունը գրավեց այն, որ ես կտրուկ կանգ առա և առանց որևէ բան ասելու՝ դուրս եկա:
- 4) Զանի որ նայում էի ձեռքիս ժամացույցին, անմիջապես երևաց, որ արդեն կեսգիշեր է:

**195. Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Ո՞ւմ է հայտնի՝ ինչ կբերի իր հետ վաղվա օրը:
- 2) Մի՞թե սա էր այն, ինչ ես այդքան երկար տարիներ փնտրում էի:
- 3) Արդյոք հանցա՞նք է, որ քեզ սիրում են:
- 4) Նրա ուզածն այն է, որ մենք բաժանվենք:

**196. Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Իմաստուն պետք չէր լինել գուշակելու համար, որ նա խորհրդի անդամ է:
- 2) Գնում էինք դեպի այն հատվածը, որտեղից սկսած՝ գետը ճյուղավորվում էր երկու մասի:
- 3) Ուզում էր բժիշկ դառնալ, որ բուժի հարազատներին:
- 4) Մեր պատմությունն այն է, ինչից մենք սկիզբ ենք առել:

**197. Ո՞ր տարբերակում ստորադաս (երկրորդական) նախադասությունը գոյականական անդամի լրացումն չէ:**

- 1) Ես միշտ իմ սրտում պահում եմ նրա անունը, ով գուցե ինձ բնավ էլ չի հիշում:
- 2) Այն օրից, երբ մենք բաժանվեցինք, ես այլևս չտեսա նրան:
- 3) Սմբատը, որ կյանքում շատ բան է տեսել, բոլորովին էլ չի զարմանում ընկերոջ արարքից:
- 4) Ես միշտ էլ բարձր եմ դասում նրանց, ովքեր իրենց անձը հարգել գիտեն:

**198. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը որոշիչ:**

- 1) Նախկինում, երբ երիտասարդ էր և այլ կերպ էր նայում կյանքին, այդպես չէր մտածում:
- 2) Պատանին ուզում էր, որ ամենքը հիացմունքով խոսեն իր մասին:
- 3) Հիշում էր այն տարիները, երբ համալսարանի ուսանող էր:
- 4) Հեռուստացույցը նրանց զբաղմունքն է, ովքեր այլ հետաքրքրություն չեն կարողանում գտնել:

**199. Ո՞ր տարբերակում որոշիչ ստորադաս (երկրորդական) նախադասությունն չկա:**

- 1) Այս կահույքը շարժելով՝ խախտվում է այն հարաբերությունների ներդաշնակությունը, որ ստեղծվել է ամբողջ տանը:
- 2) Դուք երևի կցանկանայիք իմանալ՝ ինչպիսի հոգսերով են ես շրջապատված եղել մշտապես:
- 3) Մեր սեղանը պարահրապարակի մյուս ծայրին էր, որ բավական վատ էր լուսավորված:
- 4) Երգչին, որը երկու ձեռքով բռնել էր խոսափողը, այլևս ոչինչ չէր հետաքրքրում:

**200. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը բացահայտիչ:**

- 1) Արաքսը, որ հայոց սրբազան գետն է, հոսում է Հայաստանի սահմանով:
- 2) Չայնը, որ հետևից լսվում էր, ծանոթ թվաց նրան:
- 3) Անհրաժեշտ է ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կբարելավեն ժողովրդի կենսամակարդակը:
- 4) Պատից կախված մնացել էր այն տղայի բաճկոնը, որ քաղաքից էր եկել:

**201. Ո՞ր տարրերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը բացահայտիչ:**

- 1) Վտիտ երաժիշտը կրծքին էր սեղմել ջութակը, որն աշխարհում ամեն ինչից ավելի էր սիրում:
- 2) Մենք, որ ոտքից գլուխ թրջվել էինք անասելի թափով տեղացած անձրևից, դողում էինք տերևի նման:
- 3) Արևելքում ցուրտ լուսնի շեղբը, որ կարծես գաղտագողի ելնում էր կիրճի խորքից:
- 4) Նա քայլում է այնպես, կարծես ոտքերն ասեղների վրա է դնում:

**202. Ո՞ր տարրերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը բացահայտիչ:**

- 1) Այսօր, երբ հոգնած տուն էի վերադառնում, ճանապարհին հանդիպեցի իմ հին բարեկամին:
- 2) Ժողովրդի հազարամյա սերն է ծնել քարեղեն այդ տեսիլքը, որ Վայոց ձորում է գտնվում՝ Արփա գետի ափին:
- 3) Մարի գլխին մի փոքրիկ սառույց կար, որից վերև խանձարուրի կապերն էր քանդում մի փոքրիկ ամպ:
- 4) Հոգնաբեկ զինվորների մեջ կային վիրավորներ, որ այլևս չէին դիմանում թափառումների ու գրկանքների անվերջանալի տառապանքին:

**203. Ո՞ր տարրերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ուղիղ խնդիր:**

- 1) Թվաց, որ ինչ–որ մեկն անշշուկ անցավ մեր կողքով:
- 2) Սիւնը կտրուկ մոտեցավ նրանց, ովքեր կամուրջն էին իբր նորոգում:
- 3) Սիրում եմ ես նրանց, ովքեր խելացի են և հայրենասեր:
- 4) Ըստ երևույթին սպասում էր, որ տիկինը անախորժ հարցեր կտա:

**204. Ո՞ր տարրերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ուղիղ խնդիր:**

- 1) Լուսամուտի բաց փեղկերի ապակիները բոցավառվել էին մայր մտնող արևի ճաճանչներից, որ արդեն հանգչելու վրա էին:
- 2) Չիմացվեց, թե ինչն էր վերջին օրերի նրա մտահոգության պատճառը:
- 3) Ինչ էր ուզում ինձ հասկացնել աչքերով՝ այդպես էլ գլխի չընկա:
- 4) Նկատել էին պարզագույն մի բան, որ վրիպել էր մյուս հետազոտողների ուշադրությունից:

**205. Ո՞ր տարրերակում ուղիղ խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Իրենեին գրավեց այն, որ ես կտրուկ կանգնեցի, և նա անմիջապես եկավ ինձ մոտ:
- 2) Կանգնած լսում էինք ինչ–որ ձայներ, որոնք կաղնե դռան այն կողմից էին գալիս:
- 3) Աղջիկը գոհ էր, որ հյուսելու համար ավելի շատ ժամանակ էր մնում:
- 4) Նրանք նախընտրում էին, որ մնան այդ փոքրիկ վայրում և լիովին հանգստանան:

**206. Ո՞ր տարրերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը հանգման անուղղակի խնդիր:**

- 1) Խմբում ներգրավեց նրանց, որոնցից մյուս մարզիչները հրաժարվել էին:
- 2) Մայան այն կանանց մեջ էր, որ գլուխները կախ աշխատում էին:
- 3) Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն բանին, որ դասերից ուշացումները շատացել են:
- 4) Այլևս չէր խոսում նրանցից, որ վերատին չհիշի մղձավանջը:

**207. Ո՞ր տարրերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ներգործող անուղղակի խնդիր:**

- 1) Դերասանը ջերմ ընդունվեց նրանց կողմից, ովքեր մինչ այդ քիչ ուշադրություն էին դարձրել իր խաղին:
- 2) Տունը մուտք ուներ նաև հետևի կողմից, որտեղ ընդարձակ բակն էր:
- 3) Դիմորդը պետք է մեկուսանա այն ամենից, ինչ խանգարում է պարապմունքների:
- 4) Դեռևս նորություն չկա այն հարցերից, որ երեկ են քննարկվել:

**208. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ժամանակի պարագա:**

- 1) Մեր կողմերում գարունն սկսվում է թե չէ, գետը վարարելով դուրս է գալիս իր ափերից:
- 2) Կինն ուզում էր լսել նրա կարծիքը, ով նախորդ օրը կատարել էր գործի մեծ մասը:
- 3) Հենց Արամն էր այն գործի պատասխանատուն, որից կախված էր բոլորի ապագան:
- 4) Մեծագույն երջանկություն է, երբ թռռնիկներս այցելում են ինձ:

**209. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ժամանակի պարագա:**

- 1) Ամեն առավոտ, երբ բոլորս դեռ քնած էինք լինում, պապս ոտքի վրա էր:
- 2) Տղաները գյուղ վերադարձան այն գիշերը, երբ իրենց ուտելիքի պաշարը վերջացել էր:
- 3) Հուզիչ մի բան կատարվեց, երբ բեռները կապում էին:
- 4) Այն ժամանակներն էին, երբ հայ ժողովուրդը պայքարում էր հանուն մի պատառիկ հողի:

**210. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը պատճառի պարագա:**

- 1) Բչերը գիտեին, որ նրա պատճառով եղավ այդ աղետը:
- 2) Եվ քանի որ լուրջ ասելիք չունեի, լռեց:
- 3) Դու պարտավոր ես կատարել կանոնադրության պահանջները, որոնց անձամբ ես ծանոթացել:
- 4) Քարավանի տերը բերում էր իր հետ նաև ընտանիքը, որ ցույց տար հյուսիսի տարօրինակ երկրները:

**211. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը պայմանի պարագա:**

- 1) Դեռ չէր մոտեցել գորբին, երբ ամեն կողմից լսվեցին ուրախ բացականչություններ:
- 2) Թե ինչ էր նա պահանջում, ոչ ոք չէր հասկանում:
- 3) Եթե մենք զավակ ունենայինք, այսպես ահա նստած էինք լինելու հացի:
- 4) Մինչև մեծ եղբայրը չամուսնանար, քույրն իրավունք չունեի ամուսնանալու:

**212. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը ձևի պարագա:**

- 1) Թե ինչպես նա կապվեց Ամերիկայից եկած այդ մարդուն, մենք չիմացանք:
- 2) Վազում է Քրիստինեն պարտեզի կածաններով, ինչպես եղնիկն է վազում անտառում:
- 3) Չիմացա՝ ինչպես անցավ օրս:
- 4) Թեև Ալեքսանդրը մեղմ էր, բայց անտանելի էին նրա այրական սովորությունները:

**213. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը չափի պարագա:**

- 1) Ապրում էին մեծ և ամայի տանը, որ ժառանգել էին ծնողներից:
- 2) Կտուրին նստած՝ այնքան խոսեցին, մինչև քունը դարձավ անդիմադրելի:
- 3) Ես նրան սպասեցի ևս տասնհինգ րոպե, որ կասկածի տեղիք չտամ:
- 4) Ամբողջ թաղում չկար թեկուզ մեկ մարդ, որին կարողանար հաղթել:

**214. Ո՞ր տարբերակում է ստորադաս (երկրորդական) նախադասությունը չափի պարագա:**

- 1) Այնքան գեղեցիկ ծաղիկներ էր ցանել իր այգում, որ փոքր էր, բայց չափազանց խնամված:
- 2) Թե ինչքան էի դեռ տնօրենին սպասելու, քարտուղարը չգիտեր:
- 3) Դու այնքան միամիտ ես կենցաղային հարցերում, որ ինձ վախեցնում ես:
- 4) Ինչքան կտևեին խորհրդարանական քննարկումները՝ պարզ չէր:



**215. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս (երկրորդական) նախադասությունը բայական անդամի լրացում չէ:**

- 1) Տեսավ՝ ուտում եմ ամենքն ամենքին:
- 2) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ երագում է հոգու հետ...
- 3) Երբ բաց եղան գարնան կանաչ դռները, Զնար դառնան աղբյուրները Բինգյոլի:
- 4) Եթե ուզեն, արեգակներ կշարտեն երկինքն ի վեր:

**216. Ո՞րն է տրված բարդ նախադասության ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնը:**

Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ...

- 1) ենթակա
- 2) ստորոգելի
- 3) ուղիղ խնդիր
- 4) բացահայտիչ

**217. Ո՞րն է տրված բարդ նախադասության ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնը:**

*Հիշում եմ, թե որքան եմ նզովել կյանքը:*

- 1) ուղիղ խնդիր
- 2) չափ ու քանակի պարագա
- 3) ենթակա
- 4) հատկացուցիչ

**218. Ո՞րն է տրված բարդ նախադասության ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնը:**

*Մաթեմիկը գլուխը շուռ տվեց, որ որդին չնկատի ստորացումից ժայթքած իր դառն արցունքները:*

- 1) նպատակի պարագա
- 2) պատճառի պարագա
- 3) ուղիղ խնդիր
- 4) միջոցի անուղղակի խնդիր

**219. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնն է ճիշտ նշված:**

- 1) Ես բացատրեցի, թե ինչու եմ եկել: *(պատճառի պարագա)*
- 2) Խոսք բացեցի իմ ընտանիքի մասին՝ կարծելով, որ դա հետաքրքիր կլինի ներկաներին: *(վերաբերության խնդիր)*
- 3) Ես գիտեմ, որ չարություն անելու դեպքում չես կարող բարություն հնձել: *(պայմանի պարագա)*
- 4) Մի՞թե ես արժանի չեմ, որ գաս ինձ տեսության: *(հանգման անուղղակի խնդիր)*

**220. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնն է սխալ նշված:**

- 1) Բոլորը խոսում էին այն մասին, որ այդ կինը ճնշված է: *(վերաբերության խնդիր)*
- 2) Անհրաժեշտ է, որ վերջ տանք հետամնացությանը: *(ուղիղ խնդիր)*
- 3) Ես սկզբում ուշադրություն չէի դարձնում, երբ նա ստում էր: *(հանգման անուղղակի խնդիր)*
- 4) Հետո հիշեց, որ ակումբը այրվելու ժամանակ նա ոչինչ չէր ձեռնարկում: *(ուղիղ խնդիր)*

**221. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնն է սխալ նշված:**

- 1) Չգիտեմ՝ որտեղից է գալիս ջութակի հեկեկանքը տխուր... *(ուղիղ խնդիր)*
- 2) Ինձ քվացել է միշտ, որ կարոտիս կառչած՝  
Ինձ սպասում է իմ Նավգիկեն: *(ենթակա)*
- 3) Միրոս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու  
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի... *(պատճառի պարագա)*
- 4) Դու, որ սխալվել ես, երբեք չես ստել... *(բացահայտիչ)*

**222. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Դու այնպես ես խոսում, կարծես քեզ ոչինչ չի հետաքրքրում:
2. Ես լուռ հետևում էի, թե ինչպես էր նա հեռանում ինձանից:
3. Պարզ երևում էր, որ բոլորը նրանից դժգոհ էին:
4. Ինչու էր նա այդքան զայրացած՝ ես այդպես էլ չհասկացա:

- ա. ձևի պարագա  
բ. ուղիղ խնդիր  
գ. հանգման խնդիր  
դ. ենթակա  
ե. պատճառի պարագա

- 1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
- 2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե
- 3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
- 4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

**223. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:**

1. Շնորհակալ եմ քեզնից, ի՛նչ սիրտ,  
Որ դիմացել ես այսքան ցավերին:
2. Ապրե՛լ, ապրե՛լ, այնպես ապրել,  
Որ սուրբ հողըդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
3. Ես նախանձում եմ նրանց բոլորին,  
Ովքեր ապրում են հավատով խորին:
4. Բարի նախանձով նրան եմ հիշում,  
Ով չի սուղորվում անթափանց մուժում:
5. Պարզվում է, որ չեմ նախանձում կյանքում ոչ ոքի...

- ա. ձևի պարագա
- բ. հանգման խնդիր
- գ. պատճառի պարագա
- դ. ուղիղ խնդիր
- ե. ենթակա

- 1) 1-ա, 2-ա, 3-բ, 4-դ, 5-ե
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե
- 3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ
- 4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-ե

**224. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:**

1. Երբ ձյուն է գալիս, ես դառնում եմ երագող:
2. Հանկարծ ինձ թվաց, որ իմ շուրջը գտնվող աշխարհը խելագար պարում կործանում է իրեն:
3. Սպասում եմ, որ լուսաբացին լսեմ անտառային թռչունների անսովոր համերգը:
4. Անցած հուշերից հյուսում եմ մանյակ, որ պճնեմ սիրով պատկերդ տրտում:

- ա. ենթակա
- բ. նպատակի պարագա
- գ. ժամանակի պարագա
- դ. հանգման խնդիր

- 1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

**225. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Նա, հարցի մեջ չխորանալով, առիթ էր տվել, որ թագուհին բացեր իր հոգու գաղտնիքը:
2. Մտքերով տարված՝ նա կառք նստեց և մի վայրկյան անգամ չմտածեց այն մասին, որ գրպանում գրոշ չունի:
3. Ցավալին այն էր, որ մեղիքները ոչ մի ընդհանուր կապ չունեին միմյանց հետ:
4. Ինքնըստինքյան հասկանալի է, որ նման պայմաններում ոչ ոք չէր ցանկանում զիջել, ունկնդիր լինել բանականության ձայնին:

- ա. ենթակա
- բ. նպատակի պարագա
- գ. հանգման խնդիր
- դ. վերաբերության խնդիր
- ե. ստորոգելի

- 1) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե
- 3) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
- 4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա

**226. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Ծիծաղախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ մի վայրկյան կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը:
2. Նրան թվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված:
3. Ամենից բարձր հոխորտում էիր դու, որ ստեղծված իրավիճակի բուն մեղավորն էիր:
4. Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն:

- ա. ձևի պարագա
- բ. չափի պարագա
- գ. բացահայտիչ
- դ. ներգործող խնդիր
- ե. ենթակա

- 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
- 2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե
- 3) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ
- 4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ

**227. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Մենք, որ չէինք մասնակցել նիստին, ստեղծված վիճակից տեղյակ չէինք:
2. Այսպես արևածագից սկսվում էր գյուղի առօրյան, որ ձգվում էր գարնանից մինչև աշուն:
3. Նա վիրավորված էր, քանի որ հայրն ապտակել էր իրեն:
4. Նա սպասում էր, որ որդին ներում կխնդրի իր գործած արարքի համար:

- ա. ուղիղ խնդիր
- բ. հանգման խնդիր
- գ. բացահայտիչ
- դ. որոշիչ
- ե. պատճառի պարագա

- 1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա
- 3) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ
- 4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

**228. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Չորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն:
2. Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում:
3. Փոքր-ինչ հետո նա դեմ առավ իրերի կույտի, որ բաղկացած էր հին փամփուշտներից, քայքայված դաշույններից, թրերից:
4. Դու, որ այդպես էլ չհասկացար աշխարհի չարն ու բարին, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մեծության:

- ա. որոշիչ
- բ. վերաբերության խնդիր
- գ. հանգման խնդիր
- դ. ենթակա
- ե. բացահայտիչ

- 1) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե
- 4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ

**229. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Այն լուրերը, թե ծովանկարիչը ստեղծել է արտասովոր մի նկար, արագորեն հասան Պետերբուրգ:
2. Վախենում էր արքային տեղեկացնել, որ ազդեցիկ մի քանի նախարարներ, ծեծելով հարկահաններիին, հրաժարվել էին արքունի տուրքերը վճարելուց:
3. Նրանք դեռ կիրճը չէին անցել, երբ թիկունքից աղաղակներ լսվեցին:
4. Թվաց, թե այդ ամենը չի եղել, ու ես մղձավանջային երազի մեջ եմ:

- ա. ենթակա
- բ. ուղիղ խնդիր
- գ. վերաբերության խնդիր
- դ. ժամանակի պարագա
- ե. որոշիչ

- 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
- 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա

**230. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**


1. Մենյակի կահավորանքը ցույց էր տալիս, որ տանտերերն ունևոր մարդիկ չէին:
2. Համառ ժայռագնացը անընդհատ բարձրանում էր լեռնիվեր, թեև բարձունքը հետզհետե անհաղթահարելի էր թվում:
3. Չորում հորդացած որոտընդոստ գետն է, որի մեջ երևում են գարնանային հեղեղումների հետևանքները:
4. Չիավորն այնքան էր շտապում ամրոց հասնել, որ ձիուն գրեթե ուժասպառ էր արել:
5. Այն, որ տարիներ շարունակ միայն երկուսիս նվիրական գաղտնիքն էր եղել, այժմ հանրության չարախոսության առարկան է դարձել:

- ա. ենթակա
- բ. ուղիղ խնդիր
- գ. որոշիչ
- դ. չափի պարագա
- ե. զիջման պարագա
- զ. բացահայտիչ

- 1) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ, 5-ա
- 2) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ, 5-բ
- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-դ, 5-բ
- 4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ, 5-ա


**231. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Թեև փետրվարի վերջն էր, այնուամենայնիվ ցրտերն օրեցօր սաստկանում էին, քաղաքում զգացվում էր մթերքի, առաջին հերթին հացի կարիք, քանի որ կապը խզված էր շրջանների հետ, և գյուղացին այլևս ոչինչ չէր բերում քաղաք՝ ո՛չ մթերք, ո՛չ վառելիք:*




**232. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Բայց երբ անցավ մի տասը օր, և կոփվր բավական հեռացավ քաղաքից, նրա մեջ հանկարծ զարթնեց այրված տունը տեսնելու մի փափագ, իսկ դրա համար նրան օգնեց կինը, որը շարունակ տրտնջում էր, թե նոր բնակարանը հարմարություններ չունի:*




**233. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Երբ անտառ էր գնում, անպայման ինձ հետն էր տանում ու ծանր փայտեր էր դնում ուսիս, որ ավելի ուժեղանամ և այդպես կոփվելով՝ դառնամ իսկական տղամարդ:*




**234. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Երբ ծննանը որևէ մեկը հիվանդանում էր, և սիրտը մեղր էր ուզում, ժլատ Հովհաննեսին չէին դիմում, այլ գնում էին հարևան գյուղերը:*




**235. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Երեխաները, որ հավաքվել էին մի մեծ քարայրի առջև, ցանկանում էին ներս մտնել, որ գիշերեին այնտեղ, քանի որ չէին կարող անտառից այդ ժամին դուրս գալ:*




**236. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Թե տիրես, մեծ Շահ, դու նրրա սրրտին,  
Թաթուլն էլ անգոր կրնկնի ոտիդ տակ,  
Հանգիստ կրտիրես և Թըմուկ բերդին,  
Որ չես կարենում էսքան ժամանակ:*




**237. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Նա թեև պատասխանեց, բայց և անմիջապես զգաց, որ դա իսկական պատասխան չէր, և ծերունու հարցումը նկատելի հուզեց նրան և անչափ մտահոգեց:*



**238. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**


*Երբեմն լինում են պահեր, երբ սարսափելին գրավում է մարդուն հետաքրքիր տեսարանի պես, և մարդ անդիմադրելի ցանկությամբ ուզում է տեսնել այն, թեկուզև վտանգի իրեն:*






**239. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Թեպետ տասը օր էր, ինչ զինվորները հեռացել էին քաղաքից, սակայն տենդային վիճակը շարունակվում էր, և մարդիկ, որոնք խիստ անհանգիստ էին, քնում էին ուշ, զարթնում շուտ և, առանց մի բան ուտելու, իրենց նետում փողոց:*




**240. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Մեր պարտեզի բարձր բարդու վրա, ուր ծառը երեք մեծ ճյուղի էր բաժանվում, երկու արագիլ՝ այր ու կին, իրենց մեծ բույնն էին հյուսել այնպես, որ արագիլները իրենց ձագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ:*




**241. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Նա տեսել էր ավազակների, որոնք տաճարների դռներն էին համբուրում և բարեպաշտ հռչակվում, հարստահարողների, որոնք Աստծու սեղանի կանթեղի մեջ յուղ էին լցնում, մոլլաների, որոնք այդ բոլոր մարդկանց օրհնում էին՝ նրանց բարեպաշտությունը հռչակելով և Աստծու պաշտամունքը նրանց ծառայեցնելով:*




**242. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Այն միջոցին, երբ մեր հարևան հրեաների խանութները թալանում էին, երբ տներից դուրս ձգվող մանկական անկողիների բուրդն ու փետուրը քամու բերանում էին, կանանց ու երեխաների աղաղակն ու հեծկլտանքը լցրել էին օդը, մենք փակված էինք խանութում:*




**243. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Սիրիուսի բնակիչը, որի երկրում նման տարրերի թիվը հասնում էր երեք հարյուրի, և որն իր ճանապարհորդությունների ընթացքում հայտնաբերել էր ևս երեք հազար ուրիշ տեսակներ, անսովոր զարմանք պատճառեց Սատուրնի փիլիսոփային:*




**244. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Նա իսկույն հանել է տալիս Կանդիդի ձեռնաշղթաները՝ ասելով, որ դա սխալմունք է, հետ է ուղարկում իր մարդկանց, իսկ հետո երկուսին էլ ուղարկում Վենետիկ, ուր նրանց թողնում է իր եղբոր մոտ:*




**245. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

*Երբ կհինը հանկարծ տխրում էր և խոնարհում աչքերը, երիտասարդը նրան սրտապնդելու համար ջանում էր վստահ ու վճռական տեսք ընդունել, սակայն դա նրան միշտ չէր հաջողվում, և երբեմն ինքն էլ էր հուզվում՝ չդիմանալով լարումին:*




**246. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Ի դժբախտություն իրեն՝ ինքը դարձել էր մուրացիկ, որ, մարդկանց մեջ միայն ցինիզմ ու անասնական զգացմունքներ տեսնելով, միանգամայն բնական էր համարում իշխանից իր անձի հանդեպ զոհն մի փոքր հարզանք պահանջելը:
- 2) Վիկտոր Հյուգոյին, որն այդ ժամանակ գլխավորում էր Ֆրանսիական ակադեմիան, հանձնարարեցին ցավակցություն հայտնել թագավորին, և նա փառաբանեց վաղաժամ զոհված դուքսին:
- 3) Այդպիսի երկար զբոսանքների ժամանակ նա հագնում էր կապույտ տաբատ՝ զվարթությամբ ասելով, որ իր երկար հագուստը հարմար չէ թփուտների համար, և պետք է այն փոխարինել մեկ ուրիշով:
- 4) Կարելի է ասել, որ մեր վեճը թախժոտ չի եղել, այլ հաշտությունը նրա կողմից ուղեկցվել է անասելի խորհրդավորությամբ:

**247. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




- 1) Մինչ նա խոսում էր, ես նայում էի տիկին Պիրսոնին և սպասում, թե ինչ է պատասխանելու, որ ես փարատեմ իմ կասկածները.
- 2) Հենց որ նստեց նստարանին, սկսեց խոսել Փարիզի մասին, բայց չէր նկատում իմ գայրույթը, որ առաջացավ այն պահին, երբ նա սկսեց խոսել:
- 3) Լինելով մարմնեղ և զուռա՝ նա ինձ երբեք դուր չէր եկել և չէր գրավել, քանի որ նրա մեջ աստիճանաբար հայտնաբերում էի այնպիսի գծեր, որոնք ինձ տհաճ էին:
- 4) Քանի որ նրա շուրջը ամեն ինչ զեղեցիկ էր, ամեն ոք ձգտում էր հաճոյանալ նրան և դուր գալ, որպեսզի ինքն էլ ուրախ և երջանիկ զգար, ինչպես հրեշտակներն են անհոգ ու երջանիկ:

248. Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Մի՞թե կրոնական որևէ հույզ, հոգածության որևէ նշույլ չկա այդ վերաբերմունքի մեջ, որ շռայլվում է սիրած էակի նկատմամբ, որը դեռ չի կարող այն գնահատել:
- 2) Այդ նշանավոր տարվա հոկտեմբեր ամսվա վերջին Պալե-Ռոյալ մտավ մի երիտասարդ ճիշտ այն թուպեին, երբ խաղատները բացվում էին՝ համաձայն այն օրենքի, որ պաշտպանում է անխուսափելի դարձած կիրքը:
- 3) Այդ միջոցին, երբ դուք մտնում եք խաղատուն, օրենքը նախ և առաջ ձեզնից խլում է ձեր գլխարկը, որպեսզի դուք հարգալից կեցվածք ընդունեք նրանց առջև, ովքեր խաղի մեջ խլելու են ձեր գումարը:
- 4) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծխի մի սյուն տեսնելու, բայց թվում էր, որ մառախուղը թույլ է առ թույլ նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:

249. Նշի՞ր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Երբ Սիմեոնի բանակը, դուրս գալով քաղաքի դարպասներից, շարժվեց հարավ-արևելք, Կողոնիայի բարձր աշտարակները դեռևս մշուշի մեջ էին:
- 2) Երբ զինվորները հեռացան, որպեսզի երեսնիվայր ընկնեն կանաչների վրա, մենք գլխահակ կանգնեցինք՝ ասես ինչ-որ բանից սարսափած:
- 3) Եթե հաշվեր իր վերքերը, չէր կարողանա անհամար սպիների մեջ գտնել թուրքից ստացած առաջին վերքը, որը մի ժամանակ սոսկալի ցավում էր:
- 4) Արծրունյաց Սենեքերիմ արքան, որ փակվել էր Վանի անառիկ ամրոցում, երեց որդուն՝ Դավթին, ուղարկել էր Կոստանդնուպոլիս՝ բանակցություններ վարելու:

250. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումներից ո՞րն է սխալ:

- 1) Ես, որ աշխարհն եմ սրտիս մեջ կրում, սրտերի համար սրտով եմ գրում:  
Ես՝ աշխարհը սրտիս մեջ կրողս, սրտերի համար սրտով եմ գրում:
- 2) Մրրիկը հանդարտվեց այն ժամանակ, երբ նավաստիները փոխել էին չորրորդ առագաստը:  
Մրրիկը հանդարտվեց նավաստիների՝ չորրորդ առագաստի փոխվելու ժամանակ:
- 3) Թատրոնն այն է, որ կոչվում է հոգեկան կյանքի գործարան:  
Թատրոնը հոգեկան կյանքի գործարան կոչվողն է:
- 4) Ես շատ լավ գիտեի, թե ինչպես ինձ պետք է պահեի բարձրաստիճան հյուրերի ներկայությամբ:  
Ես շատ լավ գիտեի բարձրաստիճան հյուրերի ներկայությամբ ինձ ինչպես պահելս:

**251. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Մեր թշնամին նա է, ով մեզ հետ համաձայն չէ:*

- 1) Մեզ հետ համաձայն չլինողը մեր թշնամին է:
- 2) Նա՝ մեզ հետ համաձայն չլինողը, մեր թշնամին է:
- 3) Մեր թշնամին մեզ հետ համաձայն չլինողն է:
- 4) Նա մեզ հետ համաձայն չլինելու պատճառով մեր թշնամին է:

**252. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Ոչ ոք չնկատեց, որ սպարապետը իր զինվորների հետ մոտենում է ամրոցին:*

- 1) Ոչ ոք չնկատեց իր զինվորների հետ ամրոցին մոտեցող սպարապետին:
- 2) Ոչ ոք չնկատեց սպարապետի՝ իր զինվորների հետ ամրոցին մոտենալը:
- 3) Ոչ ոք չնկատեց սպարապետին իր զինվորների հետ ամրոցին մոտենալիս:
- 4) Ոչ ոք չնկատեց իր զինվորների հետ ամրոցին մոտեցած սպարապետին:

**253. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Նույն գյուղում ապրում էր նողկալի, հղիացած մի մարդ, որ ամբարները լցրել էր անբավ ունեցվածքով:*

- 1) Նույն գյուղում ապրում էր ամբարները անբավ ունեցվածքով լցրած նողկալի, հղիացած մի մարդ:
- 2) Նույն գյուղում ապրում էր ամբարները անբավ ունեցվածքով լցրած այդ մարդը:
- 3) Ամբարները անբավ ունեցվածքով լցրած նողկալի, հղիացած մարդն ապրում էր նույն գյուղում:
- 4) Նույն գյուղում ապրում էր նողկալի, հղիացած, ամբարները անբավ ունեցվածքով լցնող մի մարդ:

**254. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Հենց այն օրը, երբ Գևորգը վերադարձավ ճամփորդությունից, որոշեցին նրան ամուսնացնել:*

- 1) Հենց Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալու օրը որոշեցին նրան ամուսնացնել:
- 2) Հենց այն օրը՝ Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալու ժամանակ, որոշեցին նրան ամուսնացնել:
- 3) Ճամփորդությունից Գևորգի վերադառնալուց հետո որոշեցին նրան ամուսնացնել:
- 4) Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալուն պես որոշեցին նրան ամուսնացնել:

**255. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Եթե մի երկու օր էլ համբերի, Ավետը կստանա իր ուզածը:*

- 1) Ավետը կստանա իր ուզածը մի երկու օր էլ համբերելուց հետո:
- 2) Մի երկու օր էլ համբերելու դեպքում Ավետը կստանա իր ուզածը:
- 3) Մի երկու օր համբերելու պայմանով Ավետը կստանա իր ուզածը:
- 4) Մի երկու օր էլ համբերելով՝ Ավետը կստանա իր ուզածը:

**256. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Գույնզգույն լապտերները, որոնք կախված էին պատշգամբի սյունաշարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող կանաչահյուս ժապավեններից, մոզական խորհրդավորություն էին տալիս անտառապատ բարձրավանդակներով ամփոփված այդ կետին:*

- 1) Պատշգամբի սյունաշարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող կանաչահյուս ժապավեններից կախվող գույնզգույն լապտերները մոզական խորհրդավորություն էին տալիս անտառապատ բարձրավանդակներով ամփոփված այդ կետին:
- 2) Գույնզգույն լապտերները՝ կախված պատշգամբի սյունաշարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող կանաչահյուս ժապավեններից, մոզական խորհրդավորություն էին տալիս անտառապատ բարձրավանդակներով ամփոփված այդ կետին:
- 3) Պատշգամբի սյունաշարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող կանաչահյուս ժապավեններից կախված գույնզգույն լապտերները մոզական խորհրդավորություն էին տալիս այդ կետին, որ ամփոփված էր անտառապատ բարձրավանդակներով:
- 4) Պատշգամբի կանաչահյուս սյունաշարերն ու մոտակա ծառերը միմյանց հետ կապող ժապավեններից կախված գույնզգույն լապտերները մոզական խորհրդավորություն էին տալիս անտառապատ բարձրավանդակներով ամփոփված այդ կետին:

**257. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Սեյրանյանը հասկանում էր, թե որքան մեծ, դժվար և անտանելի է այդ կորուստը:*

- 1) Սեյրանյանը հասկանում էր այդ կորուստի մեծ, դժվար և անտանելի լինելը:
- 2) Սեյրանյանը հասկանում էր մեծ, դժվար և անտանելի այդ կորուստը:
- 3) Սեյրանյանը հասկանում էր այդ կորուստի մեծությունը, դժվար և անտանելի լինելը:
- 4) Սեյրանյանը հասկանում էր այդ կորուստի որքան մեծ, դժվար և անտանելի լինելը:

**258. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Տղամարդը, որ մտնելուն պես գլուխ էր տվել հյուրերին, համբուրեց տանտիրուհու ձեռքը՝ պատասխանելով նրա հարցերին:*

- 1) Մտնելուն պես հյուրերին գլուխ տվող տղամարդը համբուրեց տանտիրուհու ձեռքը՝ պատասխանելով նրա հարցերին:
- 2) Մտնելուն պես հյուրերին գլուխ տված տղամարդը համբուրեց տանտիրուհու ձեռքը՝ պատասխանելով նրա հարցերին:
- 3) Մտնելուն պես հյուրերին գլուխ տված տղամարդը համբուրեց տանտիրուհու ձեռքը, երբ պատասխանեց նրա հարցերին:
- 4) Հենց որ մտել էր, տղամարդը գլուխ էր տվել հյուրերին, համբուրել տանտիրուհու ձեռքը՝ պատասխանելով նրա հարցերին:

**259. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Այդ անակնկալ դժբախտությունից հետո, հասկանալի է, այն բոլոր գաղափարները, որոնք Հովսեփ արքեպիսկոպոսը քարոզել էր իր մտերիմներին, միանգամից անհիմաստ դարձան:*

- 1) Այդ անակնկալ դժբախտությունից հետո հասկանալի է Հովսեփ արքեպիսկոպոսի՝ իր մտերիմներին քարոզած բոլոր գաղափարների միանգամից անհիմաստ դառնալը:
- 2) Այդ անակնկալ դժբախտությունից հետո, հասկանալի է, Հովսեփ արքեպիսկոպոսի՝ իր մտերիմներին քարոզած բոլոր գաղափարները միանգամից անհիմաստ դարձան:
- 3) Այդ անակնկալ դժբախտությունից հետո, հասկանալի է, իր մտերիմներին քարոզած Հովսեփ արքեպիսկոպոսի բոլոր գաղափարները միանգամից անհիմաստ դարձան:
- 4) Այդ անակնկալ դժբախտությունից հետո, հասկանալի է, Հովսեփ արքեպիսկոպոսի՝ բոլոր մտերիմներին քարոզած գաղափարները միանգամից անհիմաստ դարձան:

**260. Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Պատանհի բանաստեղծն իր թոթով լեզվով շնորհակալ է լինում ուսուցչին, որ աշակերտին ներշնչել է սեր դեպի գիրքը:*

- 1) Պատանհի բանաստեղծն իր թոթով լեզվով շնորհակալ է լինում ուսուցչին աշակերտին դեպի գիրքը սեր ներշնչելուց:
- 2) Պատանհի բանաստեղծն իր թոթով լեզվով շնորհակալ է լինում ուսուցչին աշակերտին սեր ներշնչելու պատճառով դեպի գիրքը:
- 3) Պատանհի բանաստեղծն իր թոթով լեզվով շնորհակալ է լինում դեպի գիրքը աշակերտին սեր ներշնչող ուսուցչին:
- 4) Պատանհի բանաստեղծն իր թոթով լեզվով շնորհակալ է լինում ուսուցչին՝ աշակերտին սեր ներշնչելու համար դեպի գիրքը:

**261. Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Այնտեղ էր նաև Օհանը՝ աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած մի ծերունի:*

- 1) Այնտեղ էր նաև Օհանը, որը աշխարհի չարն ու բարին տեսել, սեփական փորձով հարստացել էր:
- 2) Այնտեղ էր նաև Օհանը՝ մի ծերունի, որը աշխարհի չարն ու բարին տեսել էր, սեփական փորձով հարստացել:
- 3) Այնտեղ էր նաև Օհանը, որը աշխարհի չարն ու բարին տեսել էր և սեփական փորձով հարստացած մի ծերունի էր:
- 4) Այնտեղ էր նաև Օհանը, որ աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած մի ծերունի էր:

**262. Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Դա արդեն մի քանի ամիս շարունակ հայ երիտասարդության սրտերը բոցավառող «Կայծեր» վեպի նշանավոր հեղինակն էր:*

- 1) Դա «Կայծեր» վեպի այն նշանավոր հեղինակն էր, որ արդեն մի քանի ամիս շարունակ բոցավառում էր հայ երիտասարդության սրտերը:
- 2) Դա նշանավոր հեղինակն էր «Կայծեր» վեպի, որ արդեն մի քանի ամիս շարունակ բոցավառում էր հայ երիտասարդության սրտերը:
- 3) Դա նշանավոր հեղինակն էր «Կայծեր» վեպի, որ արդեն մի քանի ամիս շարունակ բոցավառել էր հայ երիտասարդության սրտերը:
- 4) Դա արդեն մի քանի ամիս շարունակ հայ երիտասարդության սրտերը բոցավառողն էր, որ «Կայծեր» վեպի նշանավոր հեղինակն էր:

**263. Ո՞ր տարբերակում է պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունը սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Ռուսաց գորքերի հանկարծակի հեռանալը բոլորովին այլ կերպ էին բացատրում Անդրկովկասի մահմեդականները:  
Այն, որ ռուսաց գորքերը հանկարծակի հեռացան, բոլորովին այլ կերպ էին բացատրում Անդրկովկասի մահմեդականները:
- 2) Արդեն Պարսկաստանից լուրեր էին հասնում Մահմուդ խանի՝ դեպի Անդրկովկաս նոր արշավանքի պատրաստվելու մասին:  
Արդեն Պարսկաստանից լուրեր էին հասնում Մահմուդ խանի մասին, որ պատրաստվում է նոր արշավանքի դեպի Անդրկովկաս:
- 3) Այդ պատճառով էլ Ղարաբաղի մելիքներն ամեն զոհողություն հանձն առան՝ հեշտացնելու ռուսների տիրապետությունը:  
Այդ պատճառով էլ Ղարաբաղի մելիքներն ամեն զոհողություն հանձն առան, որպեսզի հեշտացնեն ռուսների տիրապետությունը:
- 4) Իշխան Գեորգին խիստ նպաստավոր համարեց հայոց մելիքների և նրանց հպատակների՝ ահազին բազմությամբ վրաց հողի վրա բնակություն հաստատելը:  
Իշխան Գեորգին խիստ նպաստավոր համարեց այն, որ հայոց մելիքները և նրանց հապատակները ահազին բազմությամբ բնակություն հաստատեն վրաց հողի վրա:

**264. Ո՞ր տարբերակում է պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:*

- 1) Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում էր, որ պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:
- 2) Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայանում է մի ժողով, որտեղ պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:
- 3) Մի ժողովում, որը կայանում է Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ, պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:
- 4) Մի ժողովում, որը կայացել էր Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ, պատգամավոր է ընտրվում նաև Շիրվանզադեն:

**265. Ո՞ր տարբերակում է պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունը սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Բուսականությամբ հարուստ արևելքում ծնված բանաստեղծն իր անշուք բնակարանը շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով:  
Բանաստեղծը, որ ծնվել էր բուսականությամբ հարուստ արևելքում, իր անշուք բնակարանը շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով:
- 2) Թուրքական հեղափոխությունն ավարտվելուց հետո Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա:  
Երբ թուրքական հեղափոխությունն ավարտվեց, Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա:
- 3) Յուրաքանչյուր ճամփորդ մի տեսակ սրբազան պարտականություն է համարել Շվեյցարիային հիացմունքի տուրք վճարելը:  
Յուրաքանչյուր ճամփորդ մի տեսակ սրբազան պարտականություն է համարել այն, որ հիացմունքի տուրք վճարի Շվեյցարիային:
- 4) Ամենահետաքրքիրը ոչ մեկի՝ մյուսի արածով գոհ չլինելն էր:  
Ամենահետաքրքիրն էր, որ ոչ մեկը մյուսի արածով գոհ չէր:



**266. Ո՞ր տարբերակում է պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Չնայած տարիքով բավական մեծ լինելուն՝ խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:*

- 1) Քանի որ տարիքով բավական մեծ էր, խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:
- 2) Չնայած բավական մեծ տարիքի էր, բայց խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:
- 3) Չնայած տարիքով բավական մեծ էր լինում, խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:
- 4) Թեև տարիքով բավական մեծ էր, խաղում էր իրենից մի քանի տարով փոքրերի հետ:

**267. Ո՞ր տարբերակում է պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Օրերից մի օր՝ հոյակերտ մի դոյակի մոտով անցնելիս, տեսավ գեղանի արքայադստերը:*

- 1) Օրերից մի օր, երբ անցնում էր հոյակերտ մի դոյակի մոտով, տեսավ գեղանի արքայադստերը:
- 2) Երբ օրերից մի օր անցնում էր հոյակերտ մի դոյակի մոտով, տեսավ գեղանի արքայադստերը:
- 3) Օրերից մի օր, հենց որ անցնում էր հոյակերտ մի դոյակի մոտով, տեսավ գեղանի արքայադստերը:
- 4) Օրերից մի օր, երբ անցնում է հոյակերտ մի դոյակի մոտով, տեսնում է գեղանի արքայադստերը:

**268. Ո՞ր տարբերակում է պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Գ-ցել–բռնելուց հետո հայրը համաձայնեց որդու՝ արտասահման մեկնելուն:*

- 1) Երբ գցեց–բռնեց, հայրը համաձայնեց որդու՝ արտասահման մեկնելուն:
- 2) Գ-ցել–բռնելուց հետո հայրը համաձայնեց, որ որդին մեկնի արտասահման:
- 3) Քանի որ գցել–բռնել էր, հայրը համաձայնեց, որ որդին արտասահման մեկնի:
- 4) Հենց որ գցեց–բռնեց, հայրը համաձայնեց, որ որդին մեկնի արտասահման:

**269. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Ինչպե՞ս կարող էր եղբայրդ նման քայլի գնալ, –տարակուսած ասաց հայրս, – ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին իր կամքով չի գնացել:*

- 1) Հայրս տարակուսած ասաց, թե ինչպես կարող էր եղբայրս նման քայլի գնալ, ոչ մի կերպ նա չի կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին իմ կամքով չի գնացել:
- 2) Տարակուսած ասաց հայրս, որ ինչպես կարող էր եղբայրս նման քայլի գնալ, ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին նրա կամքով չի գնացել:
- 3) Հայրս տարակուսած ասաց, թե նա ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե եղբայրդ ինչպես կարող էր նման քայլի գնալ, բայց համոզված է, որ այդ քայլին իր կամքով չի գնացել:
- 4) Հայրս տարակուսած ասաց, թե ինքը ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ՝ ինչպես կարող էր եղբայրս նման քայլի գնալ, բայց ակնհայտ է, որ այդ քայլին իր կամքով չի գնացել:

**270. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Դու քո ոչ մի քայլի համար պատասխան չես տալիս, – վրդովված ասաց ինձ եղբայրս, ապա վճռականորեն ավելացրեց. – այսուհետ չփորձես հույսդ ինձ վրա դնել:*

- 1) Նրա եղբայրը վրդովված ասաց, որ նա իր ոչ մի քայլի համար պատասխան չի տալիս, ապա վճռականորեն ավելացրեց, որ այսուհետ չփորձի նա հույսը իր վրա դնել:
- 2) Եղբայրս վրդովված ասաց, որ դու քո ոչ մի քայլի համար պատասխան չես տալիս, ապա վճռականորեն ավելացրեց, թե այսուհետ դու չփորձես հույսդ իր վրա դնել:
- 3) Եղբայրս վրդովված ասաց, ապա վճռականորեն ավելացրեց, որ ես իմ ոչ մի քայլի համար պատասխան չեմ տալիս. այսուհետ չփորձեմ հույսս իր վրա դնել:
- 4) Եղբայրս վրդովված ասաց ինձ, որ ես իմ ոչ մի քայլի համար պատասխան չեմ տալիս, ապա վճռականորեն ավելացրեց, որ այսուհետ չփորձեմ հույսս իր վրա դնել:

**271. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Վերցրո՛ւ փողերդ և չփորձես այդ ձևով բերանս փակել, – վիրավորված ասաց Արամը տնօրենին. – եթե լռեմ, միևնույն է, պատճառը փողերդ չեն լինի:*

- 1) Արամը տնօրենին վիրավորված ասաց, որ նա վերցնի իր փողերը և չփորձի այդ ձևով իր բերանը փակել. եթե ինքը լռի, միևնույն է, պատճառը նրա փողերը չեն լինի:
- 2) Վիրավորված Արամն ասաց տնօրենին, որ նա վերցնի փողերը և չփորձի այդ ձևով իր բերանը փակել. եթե լռի, միևնույն է, պատճառը իր փողերը չեն լինի:
- 3) Արամն ասաց վիրավորված տնօրենին, որ նա վերցնի նրա փողերը և չփորձի այդ ձևով իր բերանը փակել. եթե լռի, միևնույն է, պատճառը նրա փողերը չեն լինի:
- 4) Արամը տնօրենին վիրավորված ասաց, որ նա վերցնի իր փողերը և չփորձի այդ ձևով իր բերանը փակել, որ եթե նա լռի, միևնույն է, պատճառը նրա փողերը չեն լինի:

**272. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին, ծանր շնչելով, ինքնիրեն խոսում էր. – Ես սրա նմանի դուռն եմ եկել, տե՛ր աստված, ի՛նչ օրի եմ հասել:*

- 1) Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին, ծանր շնչելով, ինքնիրեն խոսում էր, որ ինքը սրա նմանի դուռն է եկել, ի՛նչ օրի էր հասել:
- 2) Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին, տե՛ր աստծուն դիմելով, խոսում էր՝ ծանր շնչելով, որ ինքը սրա նմանի դուռն է եկել, ի՛նչ օրի է հասել:
- 3) Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին ինքնիրեն խոսում էր, որ ինքը դրա նմանի դուռն է եկել, ի՛նչ օրի է հասել, և ծանր շնչում էր:
- 4) Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին, ծանր շնչելով, ինքնիրեն խոսում էր, որ ինքը սրա նմանի դուռն է եկել, ի՛նչ օրի է հասել ինքը:

**273. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*«Հորս սխալների համար ե՞ս եմ պատասխան տալու, – հուսահատ հարցնում էր Վահանը ինքն իրեն, – և ինչո՞ւ եմ բոլորն ինձնից քայլեր սպասում»:*

- 1) Վահանը ինքն իրեն հուսահատ հարցնում էր, թե նրա հոր սխալների համար ինքն է պատասխան տալու, և ինչու ենք բոլորս իրենից քայլեր սպասում:
- 2) Հուսահատ հարցնում էր Վահանը ինքն իրեն, թե նրա հոր սխալների համար արդյոք ինքն է պատասխան տալու, և ինչու են բոլորը իրենից քայլեր սպասում:
- 3) Վահանը ինքն իրեն հուսահատ հարցնում էր, թե քո հոր սխալների համար արդյոք ի՞նքն է պատասխան տալու, և ինչու եք բոլորդ նրանից քայլեր սպասում:
- 4) Վահանը ինքն իրեն հուսահատ հարցնում էր, թե իր հոր սխալների համար արդյոք ինքն է պատասխան տալու, և ինչու են բոլորն իրենից քայլեր սպասում:

**274. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

– Վերցրո՛ւ որբին, – ասաց ինձ քուրդը՝ լսելով Միսակի երգը, հետո կմկմաց, – քո կես ոսկին էլ հարկավոր չէ. նրա երգը ոսկուց էլ գորավոր էր:

- 1) Լսելով Միսակի երգը՝ քուրդն ինձ ասաց, որ վերցնեն որբին, հետո կմկմաց, որ կես ոսկին էլ հարկավոր չէ. նրա երգը ոսկուց գորավոր էր:
- 2) Քուրդն ինձ ասաց՝ լսելով Միսակի երգը, որ վերցնեմ որբին, հետո կմկմաց, թե իրեն կես ոսկին էլ հարկավոր չէ. մեր երգը ոսկուց էլ գորավոր էր:
- 3) Քուրդը, լսելով Միսակի երգը, կմկմալով ասաց, որ վերցնես որբին, քո կես ոսկին էլ հարկավոր չէ. ձեր երգը ոսկուց գորավոր էր:
- 4) Քուրդը, լսելով Միսակի երգը, ասաց ինձ, որ վերցնեմ որբին, հետո կմկմաց, թե իմ կես ոսկին էլ հարկավոր չէ. նրա երգը ոսկուց էլ գորավոր էր:

**275. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

– Լիլիթ, նագելի՛ս, գնանք իմ տաղավարը. ամենահամեղ պտուղներից սեղան եմ պատրաստել քեզ համար, – խնդրեց Ադամը:

- 1) Ադամը խնդրեց իր նագելի Լիլիթին, որ գնան նրա տաղավար. նա ամենահամեղ պտուղներից սեղան է պատրաստել նրա համար:
- 2) Ադամը խնդրեց Լիլիթին, որ նա գնա իր տաղավարը. ինքը ամենահամեղ պտուղներից սեղան է պատրաստել նրա համար:
- 3) Ադամը խնդրեց Լիլիթին, որ նրանք գնան իր տաղավարը. նա ամենահամեղ պտուղներից սեղան է պատրաստել նրա համար:
- 4) Ադամը խնդրեց Լիլիթին, որ իրենք գնան իր տաղավարը. ինքն ամենահամեղ պտուղներից սեղան է պատրաստել նրա համար:

**276. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

– Իմ հրաշագեղ թագուհի, – մեղմորեն ասաց նա արմավենուն, – ես՝ աշխարհի ըմբոստ ոգիս, սիրում եմ՝ քեզ:

- 1) Նա մեղմորեն ասաց թագուհուն՝ արմավենուն, որ նա՝ աշխարհի ըմբոստ ոգին, սիրում է իրեն:
- 2) Նա մեղմորեն ասաց իմ հրաշագեղ թագուհուն, որ ինքը՝ աշխարհի ըմբոստ ոգին, սիրում է նրան:
- 3) Նա մեղմորեն ասաց արմավենուն, որ ինքը՝ աշխարհի ըմբոստ ոգին, սիրում է նրան:
- 4) Նա մեղմորեն ասաց, որ նա՝ աշխարհի ըմբոստ ոգին, սիրում է թագուհուն:

**277. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Կինը բարկացայտ պատասխանեց Արամին.  
– Քեզ ինչո՞ւ է հետաքրքրում՝ ուր եմ գնում, ինչո՞ւ ես հետևում ինձ:

- 1) Կինը բարկացայտ պատասխանեց Արամին, թե նրան ինչու է հետաքրքրում՝ ինքն ուր է գնում, ինչու է նա հետևում իրեն:
- 2) Կինը բարկացայտ պատասխանեց Արամին, թե իրեն ինչ՝ նա ուր է գնում, ինչու է հետևում իրեն:
- 3) Կինը բարկացայտ պատասխանեց Արամին, թե նրան ինչու է հետաքրքրում՝ նա ուր է գնում, ինչու է հետևում իրեն:
- 4) Կինը բարկացայտ պատասխանեց, թե Արամին ինչու էր հետաքրքրում՝ ինքն ուր է գնում, ինչու է հետևում իրեն:

**278. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Դուք Ձեր գրքերը թողել եք դասարանում, – ասաց ինձ աշակերտներից մեկը, – և ես դրանք պահել եմ ինձ մոտ:*

- 1) Աշակերտներից մեկն ինձ ասաց, որ ես գրքերս թողել եմ դասարանում, և ինքը դրանք պահել է իր մոտ:
- 2) Աշակերտներից մեկն ասաց ինձ, որ մենք մեր գրքերը թողել ենք դասարանում, և ինքը դրանք պահել է իր մոտ:
- 3) Աշակերտներից մեկն ինձ ասաց, որ ես գրքերս թողել եմ դասարանում, և նա դրանք պահել է իր մոտ:
- 4) Աշակերտներից մեկն ասաց, որ իմ գրքերը թողել էի դասարանում, և ինքը դրանք պահել է իր մոտ:

**279. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Ա՛խ, Գրիգոր՛ր, – ասաց Նունեն այդ ժամանակ, – դու քո այդ խոսքերով ինձ սիրել ես տալիս գյուղական կյանքը, և մտածում եմ՝ ինչու ես էլ գեղջկուհի չեմ ծնվել:*

- 1) Նունեն այդ ժամանակ Գրիգորին ասաց, որ նա իր այդ խոսքերով իրեն սիրել է տալիս գյուղական կյանքը, և մտածում է՝ ինչու ինքն էլ գեղջկուհի չի ծնվել:
- 2) Նունեն այդ ժամանակ Գրիգորին ասաց, որ ինքը այդ խոսքերով իրեն սիրել է տալիս գյուղական կյանքը, և մտածում է՝ ինչու ինքն էլ գեղջկուհի չի ծնվել:
- 3) Նունեն այդ ժամանակ Գրիգորին ասաց, որ իր այդ խոսքերով նա իրեն սիրել տվեց գյուղական կյանքը, և մտածում է՝ ինչու ինքն էլ գեղջկուհի չի ծնվել:
- 4) Նունեն այդ ժամանակ Գրիգորին ասաց, որ իր այդ խոսքերով նրան սիրել է տալիս գյուղական կյանքը, և մտածում է՝ ինչու նա էլ գեղջկուհի չի ծնվել:

**280. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Դա քո մարդիկ էլ կարող են անել, տե՛ր սպարապետ, – ասաց դահճապետը թույեական լռությունից հետո, – իսկ ես, ինչ էլ լինի, իմ ձեռքերը չեմ թաթախի իմ ազգակիցների արյան մեջ:*

- 1) Դահճապետը թույեական լռությունից հետո ասաց տե՛ր սպարապետին, որ դա իր մարդիկ էլ կարող են անել, իսկ նա, ինչ էլ լինի, իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:
- 2) Դահճապետը թույեական լռությունից հետո ասաց սպարապետին, որ դա նրա մարդիկ էլ կարող են անել, իսկ ինքը, ինչ էլ լինի, իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:
- 3) Բույեական լռությունից հետո դահճապետը ասաց սպարապետին, որ դա նրա մարդիկ էլ կարող էին անել, իսկ նա իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:
- 4) Դահճապետը թույեական լռությունից հետո ասաց սպարապետին, որ դա նրա մարդիկ էլ կարող են անել, իսկ ինքը իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:

**281. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*–Այն, ինչ որ Դուք ասացիք, շատ ճիշտ է, – պատասխանեց խանը՝ ուշադրությամբ լսելով մեկիք Ֆրանգյուլին, – բայց ես այդ պատանուն ո՛չ կարող եմ պահել ինձ մոտ, ո՛չ սպանել, որովհետև Թորոս իշխանին խոսք եմ տվել բոլոր գերիներին վերադարձնել:*

- 1) Խանը, մեկիք Ֆրանգյուլին ուշադրությամբ լսելով, պատասխանեց, որ այն, ինչ որ նրանք ասացին, շատ ճիշտ է, բայց ինքը այդ պատանուն ո՛չ կարող է պահել իր մոտ, ո՛չ սպանել, որովհետև Թորոս իշխանին խոսք է տվել բոլոր գերիներին վերադարձնել:
- 2) Խանը, մեկիք Ֆրանգյուլին ուշադրությամբ լսելով, պատասխանեց, որ այն, ինչ որ նա ասաց, շատ ճիշտ է, բայց ինքը այդ պատանուն ո՛չ կարող է պահել իր մոտ, ո՛չ սպանել, որովհետև Թորոս իշխանին խոսք է տվել բոլոր գերիներին վերադարձնել:
- 3) Մեկիք Ֆրանգյուլին ուշադրությամբ լսելով՝ Խանը պատասխանեց, որ այն, ինչ որ ինքը ասաց, շատ ճիշտ է, բայց նա այդ պատանուն ո՛չ կարող է պահել իր մոտ, ո՛չ սպանել, որովհետև Թորոս իշխանին խոսք է տվել բոլոր գերիներին վերադարձնել:
- 4) Խանը, մեկիք Ֆրանգյուլին ուշադրությամբ լսելով, պատասխանեց, որ այն, ինչ որ նա ասաց, շատ ճիշտ է, բայց ինքը այդ պատանուն ո՛չ կարող է պահել իր մոտ, ո՛չ սպանել, որովհետև Թորոս իշխանին խոստացել էր բոլոր գերիներին վերադարձնել:

**282. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*«Հաստատուն կամքի հետ միասին պետք է ունենալ նաև մեծ համբերություն, – մտածեց Կամսարյանը. – ծառից ծառատակը միշտ մոտ է երևում, բայց երբ թռչում ես, այն ժամանակ է միայն տարածությունն իմացվում»:*

- 1) Կամսարյանը մտածեց, որ հաստատուն կամքի հետ միասին պետք է ունենալ նաև մեծ համբերություն. ծառից ծառատակը միշտ մոտ է երևում, բայց երբ թռչում ես, այն ժամանակ է միայն տարածությունն իմացվում:
- 2) Կամսարյանը մտածեց, որ հաստատուն կամքի հետ միասին պետք է ունենա նաև մեծ համբերություն. ծառից ծառատակը միշտ մոտ է երևում, բայց երբ թռչում ես, այն ժամանակ է միայն տարածությունն իմացվում:
- 3) Կամսարյանը մտածեց, որ հաստատուն կամքի հետ միասին պետք է ունենալ նաև մեծ համբերություն. ծառից ծառատակը միշտ մոտ է երևում, բայց երբ թռչում է, այն ժամանակ է միայն տարածությունն իմացվում:
- 4) Կամսարյանը մտածեց, որ հաստատուն կամքի հետ միասին պետք է ունենալ նաև մեծ համբերություն. ծառից ծառատակը միշտ մոտ է երևում, բայց երբ ինքը թռչում է, այն ժամանակ է միայն տարածությունը իմացվում:

**283. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Եթե հնար ունենայի, – մի օր ինձ ասաց Միամանթոն, – ուրախությամբ այստեղ կմնայի. փափագում եմ ամեն մի կապ խզել այդ կուսակցության հետ, նվիրվել ազատ ստեղծագործությանը:*

- 1) Միամանթոն մի օր ինձ ասաց, որ եթե ինքը հնար ունենար, ուրախությամբ կմնար այստեղ. փափագում էր ամեն կապ խզել այդ կուսակցության հետ, նվիրվել ազատ ստեղծագործությանը:
- 2) Միամանթոն մի օր ինձ ասաց, որ եթե հնար ունենա, ուրախությամբ կմնա այստեղ. փափագում է ամեն մի կապ խզել այդ կուսակցության հետ, նվիրվել ազատ ստեղծագործությանը:
- 3) Միամանթոն ինձ մի օր ասաց, որ եթե ինքը հնար ունենար, ուրախությամբ կմնար այստեղ. փափագում է ամեն մի կապ խզել այդ կուսակցության հետ, նվիրվել ազատ ստեղծագործությանը:
- 4) Միամանթոն մի օր ինձ ասաց, որ հնար ունենալու դեպքում ուրախությամբ կմնար այստեղ. փափագում է ամեն մի կապ խզել այդ կուսակցության հետ, նվիրվել ազատ ստեղծագործությանը:

**284. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Միքայել անունով մի ինժեներ հանկարծ բարձրացավ տեղից և ասաց մեզ.*

*–Միրելիներ՝ րս, ի սե՛ր Աստծու, կռվի նոր ճակատ մի՛ բացեք. մենք դրա համար չենք եկել. մենք խնդրում ենք՝ ինչ գնով էլ լինի, կանգնեցնեք կոտորածը:*

- 1) Միքայել անունով մի ինժեներ հանկարծ բարձրացավ տեղից և ասաց մեզ՝ իր սիրելիներին, որ, ի սեր Աստծու, կռվի նոր ճակատ չբացենք. իրենք դրա համար չեն եկել. իրենք խնդրում են՝ ինչ գնով էլ լինի, կանգնեցնենք կոտորածը:
- 2) Միքայել անունով մի ինժեներ հանկարծ բարձրացավ տեղից և ասաց մեզ, որ կռվի նոր ճակատ չբացենք. իրենք դրա համար չեն եկել. իրենք խնդրում են՝ ինչ գնով էլ լինի, կանգնեցնել կոտորածը:
- 3) Միքայել անունով մի ինժեներ հանկարծ բարձրացավ տեղից և ասաց մեզ, որ կռվի նոր ճակատ չբացենք. իրենք դրա համար չեն եկել, այլ խնդրում են՝ ինչ գնով էլ լինի, կանգնեցնենք կոտորածը:
- 4) Միքայել անունով մի ինժեներ հանկարծ բարձրացավ տեղից և ասաց մեզ, որ կռվի նոր ճակատ չբացենք. իրենք դրա համար չեն եկել. իրենք խնդրում են՝ ինչ գնով էլ լինի, կանգնեցնենք կոտորածը:

**285. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*«Վերջերս նրան չեմ հասկանում, – նայելով քրոջը՝ մտածում էր Ահարոնը. – այնպիսի դատողություններ է անում, որոնք ինձ վախեցնում են»:*

- 1) Ահարոնը մտածում էր՝ նայելով քրոջը, որ վերջերս նա նրան չի հասկանում. այնպիսի դատողություններ է անում, որոնք իրեն վախեցնում են:
- 2) Նայելով քրոջը՝ Ահարոնը մտածում էր, որ վերջերս ինքն ինձ չի հասկանում. այնպիսի դատողություններ է անում, որոնք իրեն վախեցնում են:
- 3) Նայելով քրոջը՝ Ահարոնը մտածում էր, որ վերջերս նա իրեն չի հասկանում. այնպիսի դատողություններ է անում, որոնք իրեն վախեցնում են:
- 4) Ահարոնը, նայելով քրոջը, մտածում էր, որ վերջերս ինքը նրան չի հասկանում. նա այնպիսի դատողություններ է անում, որոնք իրեն վախեցնում են:

**286. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Այդ ո՞ր «ընկերոջ» է հետո կողքիդ լինելու, – տաքացած ու հեզմանքով գոռաց հայրս, ապա, տեսնելով իմ անկեղծ զարմանքը, կիսաձայն ասաց. – չե՞ս տեսնում, որ նրանք միայն շահագործում են քեզ:*

- 1) Հայրս, տեսնելով իմ անկեղծ զարմանքը, տաքացած ու հեզմանքով գոռաց, թե այդ որ «ընկերս» է արդյոք հետո կողքիս լինելու. չե՞մ տեսնում արդյոք, որ նրանք միայն շահագործում են ինձ, ասաց կիսաձայն:
- 2) Հայրս գոռաց տաքացած ու հեզմանքով, թե այդ որ «ընկերս» է հետո իմ կողքին լինելու, ապա, տեսնելով իմ անկեղծ զարմանքը, կիսաձայն ասաց, որ ես չեմ տեսնում, որ նրանք ինձ միայն շահագործում են:
- 3) Հայրս տաքացած ու հեզմանքով գոռաց, թե այդ ո՞ր «ընկերս» է հետո կողքիս լինելու, ապա, տեսնելով իմ անկեղծ զարմանքը, կիսաձայն ասաց, որ չեմ տեսնում արդյոք, որ նա ինձ միայն շահագործում է:
- 4) Հայրս տաքացած ու հեզմանքով գոռաց, թե այդ որ «ընկերս» է հետո կողքիս լինելու, ապա, տեսնելով իմ անկեղծ զարմանքը, կիսաձայն ասաց, թե չեմ տեսնում արդյոք, որ նրանք ինձ միայն շահագործում են:

**287. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*– Դու իմ խորհուրդն ինչպե՞ս չլսեցիր, – տխուր ասում էր պապը՝ նայելով թռռանը, ասպա ավելացնում. – ամեն ինչ այլ կլիներ, եթե մի քիչ մեծի խոսքը հարգող լիներ:*

- 1) Թռռանը նայելով՝ պապը տխուր ասում էր, թե ինքն ինչպես նրա խորհուրդը չլսեց, և ավելացնում, որ ամեն ինչ այլ կլիներ, եթե մեծի խոսքը մի քիչ հարգող լիներ:
- 2) Թռռանը նայելով՝ պապը տխուր ասում էր և ավելացնում, թե ինչու իր խորհուրդը նա չլսեց. ամեն ինչ այլ կլիներ, եթե նա մեծի խոսքը մի քիչ հարգող լիներ:
- 3) Պապը, թռռանը նայելով, տխուր ասում էր, թե ինչպես նա չլսեց իր խորհուրդը, ասպա ավելացնում, որ ամեն ինչ այլ կլիներ, եթե նա մի քիչ մեծի խոսքը հարգող լիներ:
- 4) Պապը, թռռանը նայելով, տխուր ասում էր, թե ինչու չլսեց նրա խորհուրդը, ասպա ավելացնում. ամեն ինչ այլ կլիներ, եթե ինքը մեծի խոսքը մի քիչ հարգող լիներ:

**288. Ո՞ր տարբերակում է ուղղակի խոսքը սխալ փոխակերպված:**

- 1) *– Այն սիրտը, որը ողջ կյանքում տրոփել է Հայաստանի համար, չպետք է թաղվի օտար հողում, – Դրոյի թաղումից մեկ օր առաջ ասել էին զինակիցները նրա կնոջը:*  
*Զինակիցները Դրոյի թաղումից մեկ օր առաջ նրա կնոջը ասել էին, որ այն սիրտը, որը ողջ կյանքում տրոփել է Հայաստանի համար, չպետք է թաղվի օտար հողում:*
- 2) *– Որտե՞ղ է երջանկության թագավորությունը, – հարցրեց արքան, – դուք ցո՛ւյց տվեք ինձ, և այն իմը կլինի:*  
 Արքան հարցրեց, թե որտեղ է երջանկության թագավորությունը, թող ցույց տա իրեն, և իրենը կլինի այն:
- 3) *Լուռ ընթացող ձիավորներից մեկը՝ թիկնապահ Արման, հարցրեց.*  
*– Տե՛ր հազարապետ, դու շատ փորձությունների միջով ես անցել, կռիվն ինչո՞վ կվերջանա:*  
 Լուռ ընթացող ձիավորներից մեկը՝ թիկնապահ Արման, հարցրեց հազարապետին, թե նա շատ փորձությունների միջով է անցել, կռիվն ինչով կվերջանա:
- 4) *– Մի՛ չարացիր, – նայելով երկրորդ որդուն, որ մի կատաղի հայացք էր գցել իր վրա, ասաց այրին. – ես հորդ խոսքերն եմ կրկնում:*  
 Այրին, նայելով երկրորդ որդուն, որ մի կատաղի հայացք էր գցել իր վրա, ասաց, որ նա չարանա. ինքը նրա հոր խոսքերն է կրկնում:

**289. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Կարենը քեզ ասաց, թե դու չէիր կարող արդյոք քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել, հետո ավելացրեց, թե քո ամեն մի քայլի մասին արդյոք պետք է ամենքն իմանային:*

- 1) *– Դու չէի՞ր կարող արդյոք քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել, – ասաց Կարենը, հետո ավելացրեց, թե քո ամեն մի քայլի մասին պետք է բոլորը իմանա՞ն:*
- 2) *– Դու չէի՞ր կարող արդյոք քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել, – ասաց Կարենը քեզ, հետո ավելացրեց, – ամեն քայլիս մասին բոլորը պետք է իմանային:*
- 3) *– Դու չէի՞ր կարող քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել, – ասաց Կարենը քեզ, հետո ավելացրեց, – ամեն քայլիդ մասին բոլորը պետք է իմանային:*
- 4) *– Դու չէի՞ր կարող քո խնդիրները ընտանիքիդ անդամների հետ լուծել, – ասաց Կարենը քեզ, հետո ավելացրեց, – ամեն քայլիդ մասին ամենքը պետք է իմանայի՞ն:*

**290. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նայելով հարևանիս՝ ընկերս հետաքրքրվեց, թե վիրահատությունից հետո ինչպես է նա իրեն զգում, ասյա հուսադրող ձայնով ավելացրեց, որ քիչ էլ նա դիմանա, և ամեն ինչ լավ կլինի:*

- 1) – Վիրահատությունից հետո ինչպե՞ս է զգում իրեն,– նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ասյա հուսադրող ձայնով ավելացրեց.– քիչ էլ դիմանա, ամեն ինչ լավ կլինի:
- 2) – Վիրահատությունից հետո ինչպե՞ս ես զգում,–նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ասյա ավելացրեց հուսադրող ձայնով.– քիչ էլ դիմանաք, և ամեն ինչ լավ կլինի:
- 3) – Վիրահատությունից հետո ինչպե՞ս է նա զգում,– նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ասյա ավելացրեց հուսադրող ձայնով.– քիչ էլ դիմանա, և ամեն ինչ լավ կլինի:
- 4) – Ինչպե՞ս ես զգում քեզ վիրահատությունից հետո,– նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ասյա հուսադրող ձայնով ավելացրեց.– քիչ էլ դիմացի՛ր, և ամեն ինչ լավ կլինի:

**291. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Իսրոն բարկացած պատմում էր Անդրանիկին, որ ինքը որբուկներ է հավաքում Հայաստանի համար, բայց հիմա մի քուրդ իր փրկած երեխային չի տալիս իրեն. ինքն էլ ոսկի չունի, որ վճարի նրան:*

- 1) –Դու որբուկներ ես հավաքում Հայաստանի համար, բայց հիմա մի քուրդ իր փրկած երեխային չի տալիս քեզ,– բարկացած պատմում էր Իսրոն Անդրանիկ գորավարին.– դու էլ ոսկի չունես, որ վճարես նրան:
- 2) Իսրոն Անդրանիկ գորավարին բարկացած պատմում էր. «Նա որբուկներ է հավաքում Հայաստանի համար, բայց հիմա մի քուրդ իր փրկած երեխային չի տալիս իրեն. նա էլ ոսկի չունի, որ վճարի սրան»:
- 3) –Ես որբուկներ եմ հավաքում Հայաստանի համար,–բարկացած պատմում էր Իսրոն գորավար Անդրանիկին,– բայց հիմա մի քուրդ քո փրկած երեխային չի տալիս ինձ. դու էլ ոսկի չունես, որ վճարես նրան:
- 4) –Ես,– բարկացած պատմում էր Իսրոն գորավար Անդրանիկին,– որբուկներ եմ հավաքում Հայաստանի համար, բայց հիմա մի քուրդ իր փրկած երեխային չի տալիս ինձ. ես էլ ոսկի չունեմ, որ վճարեմ նրան:

**292. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Հոգաբարձուն Դիմաքսյանին ասաց, որ իրենց համար շատ ուրախալի է նրա պես կրթված ուսուցիչ ունենալ իրենց դպրոցում, ասյա խնդրեց նստել բազմոցին և հայտնեց, որ նրա համբավը վաղուց՝ դեռ նրա գալուց առաջ էր հասել իրենց:*

- 1) Հոգաբարձուն Դիմաքսյանին խնդրեց նստել բազմոցին և հայտնեց. – Ինձ համար շատ ուրախալի է Ձեզ պես կրթված ուսուցիչ ունենալ մեր դպրոցում. Ձեր համբավը դեռ վաղուց՝ Ձեր գալուց առաջ էր հասել ինձ:
- 2) – Ինձ համար շատ ուրախալի է Ձեզ պես կրթված ուսուցիչ ունենալ մեր դպրոցում,– ասաց հոգաբարձուն Դիմաքսյանին, ասյա խնդրեց նստել բազմոցին և հայտնեց,– Ձեր համբավը վաղուց՝ դեռ Ձեր գալուց առաջ էր հասել ինձ:
- 3) – Մեզ համար շատ ուրախալի է Ձեզ պես կրթված ուսուցիչ ունենալ մեր դպրոցում,– ասաց հոգաբարձուն Դիմաքսյանին, ասյա խնդրեց նստել բազմոցին և հայտնեց,– Ձեր համբավը վաղուց՝ դեռ Ձեր գալուց առաջ էր հասել մեզ:
- 4) – Մեզ համար շատ ուրախալի էր Ձեզ պես կրթված ուսուցիչ ունենալ մեր դպրոցում,– ասաց հոգաբարձուն Դիմաքսյանին, ասյա խնդրեց նստել բազմոցին և հայտնեց,– Ձեր համբավը դեռ վաղուց՝ Ձեր գալուց առաջ էր հասել մեզ:



**293. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մարիամը քեռուն խնդրեց, որ հրամայի՝ ծառաները հեռանան. ինչ որ ինքը հիմա պիտի ասի, գաղտնի պիտի մնա:*

- 1) Մարիամը քեռուն խնդրեց.  
– Հրամայի՛ր՝ ծառաները հեռանան. ինչ որ ես հիմա պիտի ասեմ, գաղտնի պիտի մնա:
- 2) Մարիամը քեռուն խնդրեց, որ ծառաներին հրամայի.  
– Հեռացե՛ք. ինչ որ ես հիմա պիտի ասեմ, գաղտնի պիտի մնա:
- 3) Մարիամը քեռուն խնդրեց.  
– Հրամայի՛ր՝ ծառաները հեռանան. ինչ որ դու հիմա պիտի ասես, գաղտնի պիտի մնա:
- 4) Մարիամը քեռուն խնդրեց.  
– Հրամայի՛ր՝ ծառաները հեռանան. ինչ որ ինքը հիմա պիտի ասի, գաղտնի պիտի մնա:

**294. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մերուժան Արծրունին Որմիզդուխտին ասաց, որ ամեն ինչ կատարվեց նրա ազատության, նրա սիրո համար, ապա ավելացրեց, որ ինքը հույս ունի, որ նա այսուհետև կհարգի իրեն անձնվիրաբար ծառայած սուրը:*

- 1) Մերուժան Արծրունին Որմիզդուխտին ասաց.  
– Ամեն ինչ կատարվեց քո ազատության, քո սիրո համար. հուսով եմ՝ դու այսուհետև կհարգես քեզ անձնվիրաբար ծառայած սուրը:
- 2) – Ամեն ինչ կատարվեց քո ազատության, քո սիրո համար, – ասաց Մերուժան Արծրունին Որմիզդուխտին, ապա ավելացրեց, – հույս ունեմ՝ դու այսուհետև կհարգես քեզ անձնվիրաբար ծառայած սուրը:
- 3) – Ամեն ինչ կատարվեց քո ազատության, քո սիրո համար, – ասաց Մերուժան Արծրունին Որմիզդուխտին, ապա հույս հայտնեց, – դու այսուհետև կհարգես քեզ անձնվիրաբար ծառայած սուրը:
- 4) – Ամեն ինչ կատարվեց քո ազատության, քո սիրո համար, – ասաց Մերուժան Արծրունին Որմիզդուխտին, – հույս ունեմ՝ դու այսուհետև կհարգես քեզ անձնվիրաբար ծառայած սուրը:

**295. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մի օր նա Շիրվանզադեին ասաց, որ այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ինքը չի կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:*

- 1) Մի օր նա Շիրվանզադեին ասաց.  
– Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ինքը չի կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:
- 2) Մի օր նա Շիրվանզադեին ասաց.  
– Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց դու չես կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:
- 3) Մի օր նա Շիրվանզադեին ասաց.  
– Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ես չեմ կարծում, թե նրանք կարող են որևէ լուրջ գործ սկսել:
- 4) Մի օր նա Շիրվանզադեին ասաց.  
– Այդ տղերքը շատ են դեսուդեն վագում, բայց ես չեմ կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:

**296. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Ես նրան ասացի, որ որոշել էի ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա, մտադիր էի այնտեղ կազմակերպել զուտ գրական ամսագրի հրատարակություն:*

- 1) Ես նրան ասացի.  
– Որոշել եմ ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա, մտադիր եմ այնտեղ կազմակերպել զուտ գրական ամսագրի հրատարակություն:
- 2) Ես նրան ասացի.  
– Որոշել էի ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա, քանի որ մտադիր էի այնտեղ կազմակերպել զուտ գրական ամսագրի հրատարակություն:
- 3) Ես նրան ասացի.  
– Որոշել էի ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա այնտեղ զուտ գրական ամսագրի հրատարակություն կազմակերպելու մտադրությամբ:
- 4) Ես նրան ասացի.  
– Որոշել էի ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա, մտադիր էի այնտեղ կազմակերպել զուտ գրական ամսագրի հրատարակություն:

**297. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Սեդրակը մեզ պատասխանեց, որ ինքը դեմ չէ, բայց նախապես պիտի տեղեկացնենք իրենց մեր գալու մասին:*

- 1) Սեդրակը մեզ պատասխանեց.  
– Ես դեմ չեմ, բայց նախապես պիտի տեղեկացնենք մեզ ձեր գալու մասին:
- 2) Սեդրակը մեզ պատասխանեց.  
– Ես դեմ չեմ, բայց նախապես պիտի տեղեկացնենք մեզ իրենց գալու մասին:
- 3) Սեդրակը մեզ պատասխանեց.  
– Ինքը դեմ չէ, բայց նախապես պիտի տեղեկացնենք նրանց մեր գալու մասին:
- 4) – Ես դեմ չեմ, բայց նախապես տեղեկացրեք մեզ ձեր գալու մասին,– պատասխանեց մեզ Սեդրակը:

**298. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Աղջիկն ասաց տնօրենին, որ իրենք կհամաձայնեն նրա հետ միայն այն դեպքում, եթե նա իրենց համար տանելի պայմաններ ստեղծի:*

- 1) – Սենք կհամաձայնենք ձեզ հետ միայն այն դեպքում, եթե դուք մեզ համար տանելի պայմաններ ստեղծեք,– ասաց աղջիկը տնօրենին:
- 2) Աղջիկը տնօրենին ասաց.  
– Սենք կհամաձայնենք ձեզ հետ միայն այն դեպքում, եթե Դուք մեզ համար տանելի պայմաններ ստեղծեք:
- 3) Աղջիկն ասաց տնօրենին.  
– Սենք կհամաձայնենք նրա հետ միայն այն դեպքում, եթե Դուք մեզ համար տանելի պայմաններ ստեղծեք:
- 4) Աղջիկն ասաց տնօրենին.  
– Իրենք կհամաձայնեն ձեզ հետ միայն այն դեպքում, եթե Դուք իրենց համար տանելի պայմաններ ստեղծեք:

**299. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մեծ բանաստեղծը խորհում էր, որ անցան իր հարյուր տարիները մի գիշերվա երազի պես, որովհետև դրանք միշտ ուղեկցում էին իրեն, և ինքը չզգաց, թե ինչպես անցան դրանք:*

- 1) Մեծ բանաստեղծը խորհում էր. «Անցան հարյուր տարիներս մի գիշերվա երազի պես, որովհետև դրանք միշտ ուղեկցում էին ինձ, և ես չզգացի, թե ինչպես անցան դրանք»:
- 2) Մեծ բանաստեղծը խորհում էր.  
–Անցան հարյուր տարիներս մի գիշերվա երազի պես, որովհետև նրանք միշտ ուղեկցել էին իրեն, և ինքը չզգաց, թե ինչպես անցան դրանք:
- 3) Մեծ բանաստեղծը խորհում էր. «Անցավ հարյուր տարի մի գիշերվա երազի պես, որովհետև նրանք միշտ ուղեկցում էին նրան, և նա չզգաց, թե ինչպես անցան դրանք»:
- 4) «Անցան հարյուր տարիներս գիշերվա երազի պես, որովհետև միշտ ուղեկցում էին ինձ, և ես չզգացի, թե ինչպես անցան դրանք »,– խորհում էր մեծ բանաստեղծը:

**300. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նա ասաց, որ այսօր էլի լավ օր է անելու, և հետո ավելացրեց, որ ամբողջ գիշեր ինքը չի հերթապահել այստեղ. հազիվ մի ժամ է, ինչ եկել է իր տղային փոխարինելու:*

- 1) Նա ասաց, որ այսօր էլի լավ օր է անելու, և հետո ավելացրեց.  
–Ես ամբողջ գիշեր չեմ հերթապահել այստեղ. հազիվ մի ժամ է, ինչ եկել եմ տղայիս փոխարինելու:
- 2) Նա ասաց.  
–Այսօր էլի լավ օր է անելու,– և հետո ավելացրեց,– ամբողջ գիշեր ես չեմ հերթապահել այստեղ. հազիվ մի ժամ է, ինչ եկել եմ տղայիս փոխարինելու:
- 3) –Այսօր էլի լավ օր է անելու,– ասաց նա և հետո ավելացրեց,– ամբողջ գիշեր ես չեմ հերթապահել այստեղ. հազիվ մի ժամ է, ինչ եկել եմ տղայիս փոխարինելու:
- 4) Նա ասաց և հետո ավելացրեց.  
–Այսօր էլի լավ օր է անելու. ես ամբողջ գիշեր չեմ հերթապահել այստեղ. հազիվ մի ժամ է, ինչ եկել եմ տղայիս փոխարինելու:

**301. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Հայացքը հեռուներին՝ զորավարը խորհում էր, որ օգնական ուժերը չեն հասցնի իրենց միանալ, ամբողջ կրնկնի թշնամու ձեռքը, և ծանր հոգոց էր արձակում:*

- 1) Հայացքը հեռուներին՝ զորավարը ծանր հոգոց էր արձակում և խորհում. «Օգնական ուժերը չեն հասցնի իրենց միանալ. ամբողջ կրնկնի թշնամու ձեռքը»:
- 2) «Օգնական ուժերը,– խորհում էր զորավարը՝ հայացքը հեռուներին,– չեն հասցնի նրանց միանալ, ամբողջ կրնկնի թշնամու ձեռքը,– և ծանր հոգոց էր արձակում»:
- 3) Չորավարը, հայացքը հեռուներին, խորհում էր՝ ծանր հոգոց արձակելով. «Օգնական ուժերը չեն հասցնի ձեզ միանալ. ամբողջ կրնկնի թշնամու ձեռքը»:
- 4) «Օգնական ուժերը չեն հասցնի մեզ միանալ, ամբողջ կրնկնի թշնամու ձեռքը»,–հայացքը հեռուներին՝ խորհում էր զորավարը և ծանր հոգոց էր արձակում:

**302. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նա մտածեց, որ Կյանքը տարօրինակ անակնկալներ է մատուցում իրեն՝ գաղափարական նախկին հակառակորդին դարձնելով համախոհ, ու ականա ժպտաց:*

- 1) – Կյանքը տարօրինակ անակնկալներ է մատուցում իրեն՝ գաղափարական նախկին հակառակորդին համախոհ դարձնելով,– մտածեց նա ու ականա ժպտաց:
- 2) Նա մտածեց.  
– Կյանքը տարօրինակ անակնկալներ է մատուցում ինձ՝ գաղափարական նախկին հակառակորդին համախոհ դարձնելով,– ու ականա ժպտաց:
- 3) «Կյանքը տարօրինակ անակնկալներ է մատուցում ինձ՝ գաղափարական նախկին հակառակորդին համախոհ դարձնելով»,– մտածեց նա ու ականա ժպտաց:
- 4) – Կյանքը,– մտածեց նա ու ականա ժպտաց,– տարօրինակ անակնկալներ է մատուցում ինձ՝ գաղափարական նախկին հակառակորդին համախոհ դարձնելով:

**303. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նախագահողը վրդովված սաստեց, որ պարոնները պահպանեն լռություն, ապա հավելեց, որ օրակարգում ևս երկու հարց է քննարկվելու:*

- 1) Նախագահողը վրդովված սաստեց.  
– Պարոններ, պահպանե՛ք լռություն,–ապա հավելեց.–օրակարգում ևս երկու հարց է քննարկվելու:
- 2) Նախագահողը վրդովված սաստեց պարոններին. «Պահպանե՛ք լռություն. օրակարգում ևս երկու հարց է քննարկվելու»:
- 3) –Պարոններ, պահպանե՛ք լռություն,– սաստեց վրդովված նախագահողը, ապա հավելեց.– օրակարգում ևս երկու հարց պետք է քննարկվի:
- 4) –Պարոններ, պահպանե՛ք լռություն,–վրդովված սաստեց նախագահողը, ապա հավելեց.– օրակարգում ևս երկու հարց է քննարկվելու:

**304. Ո՞ր տարբերակում է անուղղակի խոսքը ճիշտ փոխակերպված:**

- 1) *Իշխանը ծիծաղելով ընդհատեց, որ իրենց փոքր գնդեր ամենևին պետք չեն. մարտիկների բազմությունը կծանրաբեռնի իրեն:*  
– Մեզ փոքր գնդեր ամենևին պետք չեն. մարտիկների բազմությունը կծանրաբեռնի մեզ,– ծիծաղելով ընդհատեց իշխանը:
- 2) *Նա փոքր–ինչ խռովված ձայնով ասաց Ստեփանին, որ ինքն այդ աստիճան անհեռատես չէր համարում նրան:*  
Նա փոքր–ինչ խռովված ձայնով ասաց.  
– Ստեփան, ես այդ աստիճան անհեռատես չէի համարում քեզ:
- 3) *Մափրիչը, սուրհանդակի ձեռքը բռնելով, ասաց նրան, որ այդ ճանապարհով չգնա. ամեն թույլ կարող է ընկնել Բեկի մարտիկների ձեռքը:*  
Մափրիչը, սուրհանդակի ձեռքը բռնելով, ասաց նրան.  
– Այդ ճանապարհով մի՛ գնա, քանի որ ամեն թույլ կարող ես ընկնել Բեկի մարտիկների ձեռքը:
- 4) *Նա, նամակները խիստ սառնասրտությամբ մի կողմ դնելով, հարցրեց, թե էլ ինչու էին մտել այնտեղ, ինչ ունեին նայելու:*  
Նա, նամակները խիստ սառնասրտությամբ մի կողմ դնելով, հարցրեց.  
– Էլ ինչո՞ւ եք մտել այնտեղ, ի՞նչ ունեք նայելու:

**305. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Աղջիկը փրկել է նկարը և բավական երկար ժամանակով հեղինակի ընտանիքը նյութական նեղ կացությունից հանել:
- 2) Նա միլիոնատիրոջ որդի էր ուժեղ երկրի ներկայացուցիչ:
- 3) Երկիր մոլորակի բնակչությունը արդեն յոթ միլիարդ է աշխարհում այդքան կամք ու թուլություն կա:
- 4) Հերթապահ կնոջ մի կարճ հայացքից ես հասկացա ինչ է մտածում նա մեր մասին:

**306. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մենք ակամա շրջեցինք քաղաքում Տպագրիչների փողոցից մինչև գետափ մտնելով ասիական թաղի լաբիրինթոսները:
- 2) Մի տարօրինակ կառույց էր դա մեկուսի կանգնած բարձունքին և գրավում էր բոլոր հովեկների ուշադրությունը:
- 3) Իր մեծ ձեռնափայտը հատակին անընդհատ թխկթխկացնելով առաջ էր շարժվում քաղաքի փողոցներով:
- 4) Համոյի իրենց անմիջական ղեկավարի հրահանգները ով կարող էր չկատարել:

**307. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ամեն օր եկեղեցի էին գնում թե ամուսինը և թե կինը իրենց հետ տանելով նաև մանկահասակ դասերը:
- 2) Ընթերցող կարող էս հավատ չընծայել իմ գրածին և լուրջ չվերաբերվել իմ ոչ մի խոսքին:
- 3) Ոչ ոքի համար գաղտնիք չէր որտեղ էր թաքնվել այդ մարդը կամ ինչ նպատակներ էր հետապնդում:
- 4) Նա և ընկերը ամբողջ օրը թափառելուց հետո ի վերջո վերադարձան իրենց տները:

**308. Ո՞ր նախադասության մեջ ստորակետի գործածության 1 դեպք կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ասում են հայոց լեռները եղբայրներ են եղել հսկա եղբայրներ միմյանց նկատմամբ սիրով լի:
- 2) Հաղթահարելով բազում խոչընդոտներ վտանգելով կյանքը տղան գտավ եղբորը և միասին սուրացին իրենց մանկության տնակը այնտեղ իրենց էր սպասում ալեգարդ հայրը:
- 3) Մինչ Անթեյը ազատվելու փորձեր էր անում ուժերն աստիճանաբար նվազում էին և նա վայրկյան առ վայրկյան թուլանում էր:
- 4) Հանդիպումը կայանում է որից հետո սակայն Արտաշեսը մրսելով հիվանդանում է:

**309. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ չպետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երկու օրից հետո արդարև փոստային արկղերից հանած նամակների միջից երևան եկավ ինքնատիպ հասցեով մի ծրար մյուսներից էապես տարբերվող:
- 2) Այդ լուրը կարծես թե նրան այլայլեց և մի թեթև կարմիր գույն պարուրեց նրա դեմքը:
- 3) Այսքան ժամանակ է մենք ամուսնացած ենք և դեռևս որևէ վեճ չի եղել մեր միջև:
- 4) Թուղթը վերցնելու համար նա խոնարհվեց և միևնույն ժամանակ մի գողունի հայացք ձգեց վրաս տեսնելու դեռ նայում եմ արդյոք իր վրա:

**310. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Համարյա ամեն օր ամեն ժամ էր շոգեմավր Կ. Պոլիս բերում Փոքր Ասիայի զանազան գավառներից մի խումբ հայազգի պանդուխտների մեծ քաղաքում մշակությամբ փող վաստակելու:
- 2) Հույս ունենք Ատրպատականի այժմյան թեմակալ Անդրեաս եպիսկոպոսը ուշադրության առնելով այս խնդիրը իր կողմից չի խնայի ոչ մի ջանք հոգևոր կառավարությունը մաքրելու հին կեղտերից և վերջ տալու անկարգություններին:
- 3) Ստեփան Զորյանի մեզ հայտնի ամենավաղ պատմվածքը «Հրեշտակը» գրված է 1912 թվականին գրողի երիտասարդության տարիներին:
- 4) «Երկիր Նաիրի» շարքի բանաստեղծությունները տպագրվել են 1915–1917 թվականներին հայ ժողովրդի բնաջնջման տարիներին այդ աննախադեպ աղետը խորը դրոշմ էր դրել բանաստեղծի հոգում:

**311. Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մանրութների հավաքականությունը որը ցանկացած կնոջ դարձնում է գեղանի կամ տգեղ գրավիչ կամ վանող ամբողջանում է երբ հոգին այդ բոլոր մանրամասներն օժտում է սքանչելի միասնությամբ:
- 2) Միայն որոշ նրբագեղ կանայք են որոնք կանացի բազում հնարքներ օգտագործելով կարողանում են իրենց պահվածքը խոսեցնել և այդ անելու յուրօրինակ միջոցները միայն իրենց են հայտնի:
- 3) Ում է հայտնի վիշտն է կնոջը շնորհում պերճախոս կեցվածքի այդ գաղտնիքը թե երջանկությունը դա դժվարըմբռնելի մի առեղծված է:
- 4) Բոլոր մեկնաբանությունները սակայն կլինեն մտացածին և անէական իսկ հիասքանչ առեղծվածը գոյատևելով կշարունակի ավելի դյուրեւ տղամարդկանց իր անբացատրելիությամբ:

**312. Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Կատակողները մի քիչ կկատակեն հասկացողները կհասկանան:
- 2) Միմոնը հետ նայեց Արշակ քեռին ջրի մյուս կողմն էր կռացած փնտրում էր անցնելու տեղ առվի վրա:
- 3) Տղան կանգ է առնում և ընկերները նրա շուրջը շարվում են հոգնած զայրացած:
- 4) Պառավը կարծում էր Աղունը կախարդել է իր որդուն և հիմա այնտեղ նա նրան է պարզում իր բարի ժպիտը:

**313. Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հրդեհի լուրը ստանալուց հետո հրամայել էր անմիջապես բոցերի ճիրաններից ազատել փաստաթղթերը:
- 2) Նա որոշել էր պարապ չնստել և զբաղվել ինքնակրթությամբ կարդում էր ձեռքն ընկած գիրքը:
- 3) Այդ փողոցից կարելի է մտնել մեկ ուրիշ փողոց այնտեղից մի փոքրիկ նրբանցք որ նման է մրջնանոցի:
- 4) Իմ երազներում հաճախ նա ինձ պատկերանում է որպես վաղեմի մի բարեկամ:

**314. Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նա խորհրդավոր ժպիտը դեմքին դիմավորեց ամուսնուն սակայն բոլորն էլ լավ հասկանում են թե ինչ էր նա մտածում իրականում:
- 2) Իմ առջև փռված են հայրենի դաշտերը լուռ խաղաղ ու հարազատ դաշտերը:
- 3) Գրգռված ու գույնը զցած դուրս եկավ կենտրոնակայանից մի քանի օր լուր չկար հետախույզներից:
- 4) Կարելի է տեսնել ներկարարների որոնց բարձրավիզ կոշիկների վրա երևում էին բոլոր ներկերի հետքերը սևից մինչև սպիտակ:

**315. Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այո տխուր տեսարան էր ավելի տխուր քան թե մահը:
- 2) Չգիտես որ մեղքի համար ապաշխարող բնակիչները կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում:
- 3) Միանգամայն սքափ վիճակում էի բայց այդ վայրերում ծնված ու մեծացած որսորդս չգիտես ինչու առանց պատճառի սկսեցի երեխայի պես հեկեկալ թարտացող սրտիս համակած տարօրինակ ճնշումից:
- 4) Այդպիսի փոքրոգիներն ընդհանրապես քիթները դեպի երկինք են ցցում և կարծում այդպես կկարողանան երկինք մտնել:

**316. Ո՞ր նախադասության մեջ բութ չափառի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Քաղաքի շքեղ քանդակներով տարատեսակ նախշերով ու որմնանկարներով զարդարուն եկեղեցիներում խոստովանում են խորշում էի փոքրիշատե անշուք հագնված մարդկանց մոտ կանգնելուց:
- 2) Բայց այստեղ կիսախարխուլ խրճիթ հիշեցնող գեղջկական այս խղճուկ եկեղեցում օհ ինչափսի սիրով ողջունեցի ես մի աղքատ կորամեջք և կարկատած հագուստներով ալեզարդ գյուղացու երբ սարկավագի սրտաբուխ խոսքերը լսեցի:
- 3) Իմ ալեհույզ հոգում ինչ հանկարծակի հեղափոխություն էր չգիտեի:
- 4) Թե ուր էին կորել թերահավատ նախապաշարուններս ու խոհերս որոնք անընդհատ ճնշում էին ուղեղս քաղաքի փոշոտ փողոցներում ես չեմ կարող ասել:

**317. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը չափառի տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մենք նորից գտանք իրար մեր երջանկությունը **սակայն** կարճատև էր:
- 2) Ժամանակը **ցավոք** քիչ է և ստիպված եմ վերադառնալ:
- 3) Այդ օրերին տեղի ունեցած դեպքերին **հույս ունեմ** առաջիկայում անդրադառնալ:
- 4) Հիշում ես **նազելիս** ես ժպտացի քեզ նվիրելով անթառամ ձյունավարդերի մի փունջ:

**318. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Վերջին դարերում նախարարական հին տների փոխարեն երևան եկան մելիքներ վերջիններիս իշխանությունը ավելի կանոնավոր ձև ստացավ Շահ–Աբաս Մեծի օրերից:
- 2) Պարսից այդ աշխարհաշեն թագավորը նրա քաղաքական հայացքները օտարագրիների վերաբերմամբ լիովին տարբերվում էին իր նախորդներից ավելի ճիշտ էր համարում իր հպատակ ժողովուրդներին կառավարել հենց իրենց ներկայացուցիչների ձեռքով:
- 3) Գյուլիստանի մելիքի ամբողջ գտնվում էր մի անմատչելի սարի գագաթին մեկ այլ ամբողջ նույն գավառում գտնվում էր Թալիշ ավանի մոտ:
- 4) Խամասյի մելիքությունները բաղկացած էին հինգ փոքրիկ գավառներից որոնք միմյանց սահմանակից լինելով կազմում էին մի ամբողջ նահանգ այն այժմ կոչվում է Ղարաբաղ:

**319. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Վեպը իբրև արձակ մեծածավալ ստեղծագործություն եղել է դեռևս անտիկ գրականության մեջ:
- 2) Քառասուն տարուց ի վեր Նոր Նախիջևանը կորցնելով երբեմնի հռչակավոր առևտուրը մանավանդ իր ձեռագործ վարպետներին բազմապատկել է իր չքավորների թիվը:
- 3) Մի քիչ էլ մտածեց նայեց գրասենյակի սևացած առաստաղին այնտեղից կախված էին սարդոստայններ և պատերի քարերի վրա կարծես սկսեց փնտրել իր գրելիքը:
- 4) Սպիտակ տան առաջ կառքից իջանք սանդուղքի վրա նստոտել էին գյուղացիները հայ թուրք զրուցում էին իրար հետ:

**320. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Վարդանի հիշողությունը չխաբեց նրան գյուղը պետք է այնտեղ լինեիր որտեղից նշմարվում էին լույսի նշույլներ:
- 2) Մանկահասակ կինը իսկույն բերեց մի փոքրիկ արկղիկ նա այն պահում էր դեռ անցյալ տարվանից որը բացեց հյուրերի առջև:
- 3) Վարդանը մեկիկ–մեկիկ հիշում էր այդ ամենը կանանց հյուրասիրությունը գեղջուկների պարզ զրույցը գիշերային աստղալի երկինքը:
- 4) Ախ որքան մեծ բավականություն է հրեղեն ալիքների մեջ լողալ զգալ նրանց զարհուրելի ջերմությունը այրվել բայց երբեք մոխիր չդառնալ:

**321. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Խճուղային վարչության Սողոմոն էր հաղթանդամ ծանրախոս դանդաղաքայլ երկու օր առաջ կոմիտեի նիստում նրա զեկուցումն էին լսում:
- 2) Սենյակի մեջտեղում կանգնել էր ուրիշ մարդ նրա աչքը ծաղկամանի վրա չէր ոչ էլ միտքը ծաղկած ծիրանենիների փողոցում:
- 3) Այդ գովելի պատմությունը տպագրվեց ցանկալի է որ այդպիսիք և դրա նմանները շատանային և ընդօրինակվեին հայ ազգի մեջ:
- 4) Մինչ նրանք օտարությունից վերադառնալով ցանկանում էին շենացնել իրենց տները այդ ժամանակ երկրում տեղի էին ունենում արյունալի իրադարձություններ:

**322. Ո՞ր նախադասության մեջ հարցական նշան պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Չգիտեր ում դիմի այդ հարցով և ով կարող է օգնել իրեն:
- 2) Այսօր էլի ուշանալու ես թե ժամանակին տուն կգաս հետաքրքրվեց կինը:
- 3) Ինչքան նվիրական հուշեր ունեմ կապված այդ օրերի հետ:
- 4) Իսկ վաղվա մասին դու երբեք չես մտածում պնդում էր հայրը:

**323. Ուղղակի խոսքի կետադրման ո՞ր տարբերակն է սխալ:**

- 1) Հեռախոսով հաղորդագրություն ստացա. «Այսօր չեմ գալու դպրոց. հիվանդ եմ»:
- 2) «Մենք շարունակում ենք մնալ նույն կարծիքին, – ասվում էր պաշտոնական հաղորդագրության մեջ.– երկրում ոչինչ չի փոխվել»:
- 3) – Ես կուշանամ ևս երկու օր,– գրում էր նա.– անհետաձգելի գործեր ունեմ:
- 4) – Քեզ այլևս ասելիք չունեմ: Մնացածը կիմանաս գրասենյակում,– ասաց ու անմիջապես դուրս եկավ:

**324. Ուղղակի խոսքի կետադրման ո՞ր տարբերակն է սխալ:**

- 1) – Հե՛չ, դատարկ բան է,– ասաց Միհրանը: – Գնանք իմ սենյակը, կասեմ:
- 2) – Դե՛, զարթնե՛ք, վե՛ր կացե՛ք՝ ասաց պապը:
- 3) Դուռը բացեց ու անտարբեր ասաց՝ նե՛րս արի:
- 4) – Բարո՞վ եք եկել,– ուրախ դիմավորեց մեզ Սոնան և մի կողմ քաշվելով՝ ավելացրեց,– անհամբեր սպասում էի ձեզ:

**325. Ո՞ր տարբերակում է նախադասությունը ճիշտ կետադրված:**

- 1) Մարիամը լսում էր նրան՝ սիրով ու հաճությամբ, նրա յուրաքանչյուր խոսքի մեջ որոնելով մի–մի սփոփանք իր վշտացած սրտի համար:
- 2) Մարիամը լսում էր նրան սիրով ու հաճությամբ, նրա յուրաքանչյուր խոսքի մեջ որոնելով մի–մի սփոփանք իր վշտացած սրտի համար:
- 3) Մարիամը լսում էր նրան սիրով ու հաճությամբ՝ նրա յուրաքանչյուր խոսքի մեջ որոնելով մի–մի սփոփանք իր վշտացած սրտի համար:
- 4) Մարիամը լսում էր նրան սիրով ու հաճությամբ՝ նրա յուրաքանչյուր խոսքի մեջ որոնելով մի–մի սփոփանք՝ իր վշտացած սրտի համար:



**326. Ո՞ր տարբերակում է նախադասությունը ճիշտ կետադրված:**

- 1) Կամսարյանը, թթված դեմքով, նորից լվաց բաժակը, նորից լցրեց և այս անգամ արդեն զգուշության համար պնակը դրեց բաժակի բերանին, որպեսզի մինչև սառչելը փոշի չընկնի մեջը:
- 2) Կամսարյանը թթված դեմքով նորից լվաց բաժակը, նորից լցրեց և այս անգամ արդեն զգուշության համար պնակը դրեց բաժակի բերանին, որպեսզի մինչև սառչելը փոշի չընկնի մեջը:
- 3) Կամսարյանը թթված դեմքով նորից լվաց բաժակը, նորից լցրեց և, այս անգամ արդեն զգուշության համար, պնակը դրեց բաժակի բերանին, որպեսզի մինչև սառչելը փոշի չընկնի մեջը:
- 4) Կամսարյանը թթված դեմքով նորից լվաց բաժակը, նորից լցրեց և այս անգամ (արդեն զգուշության համար) պնակը դրեց բաժակի բերանին, որպեսզի մինչև սառչելը՝ փոշի չընկնի մեջը:

**327. Ո՞ր տարբերակում է նախադասությունը ճիշտ կետադրված:**

- 1) Եվ դու՝ սիրելի՛ ընթերցող, պետք է հասկանաս, որ ես, միջոց չունենալով մեր գիտնականների ասածները այդ մտքի հետ համադրելու, բերում եմ միանգամայն ինքնուրույն փաստեր:
- 2) Եվ դո՛ւ, սիրելի՛ ընթերցող, պետք է հասկանաս, որ ես, միջոց չունենալով մեր գիտնականների ասածները այդ մտքի հետ համադրելու, բերում եմ միանգամայն ինքնուրույն փաստեր:
- 3) Եվ դու, սիրելի՛ ընթերցող, պետք է հասկանաս, որ ես միջոց չունենալով մեր գիտնականների ասածները այդ մտքի հետ համադրելու՝ բերում եմ միանգամայն ինքնուրույն փաստեր:
- 4) Եվ դու, սիրելի՛ ընթերցող, պետք է հասկանաս, որ ես, միջոց չունենալով մեր գիտնականների ասածները այդ մտքի հետ համադրելու, բերում եմ միանգամայն ինքնուրույն փաստեր:

**328. Ո՞ր տարբերակում է նախադասությունը ճիշտ կետադրված:**

- 1) Այդ իրադարձությունը շատ աղոտ կերպով է նկարագրված և դա այս դեպքում շատ ու շատ հասկանալի պատճառով ներելի է հեղինակին:
- 2) Այս իրադարձությունը շատ աղոտ կերպով է նկարագրված, և դա այս դեպքում՝ շատ ու շատ հասկանալի պատճառով, ներելի է հեղինակին:
- 3) Այս իրադարձությունը շատ աղոտ կերպով է նկարագրված, և դա այս դեպքում, շատ ու շատ հասկանալի պատճառով, ներելի է հեղինակին:
- 4) Այս իրադարձությունը շատ աղոտ կերպով է նկարագրված, և դա այս դեպքում շատ ու շատ հասկանալի պատճառով ներելի է հեղինակին:

**329. Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չսլիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մի քանի խոսք փոխանակելուց հետո արագ պառկեց անկյունում դրված բազմոցին և շուռ գալով աչքերը փակեց:
- 2) Հեռավոր ճամփորդությունից ուր որ է վերադառնալու են նրա երկար տարիներ բացակայած եղբայրները:
- 3) Նա ցանկանում էր տեսնել ինչ կա այդ մարդկանց հագին:
- 4) Նրա հայրը բարձրահասակ թիկնեղ մի տղամարդ էր խիստ դիմագծերով:

**330. Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չսլիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Տնտեսուհին որևէ լուրջ գործ ձեռնարկելիս ջանում էր ամենքին ցույց տալ գործին տիրապետելու իր առանձնահատուկ շնորհը:
- 2) Ոչ ուրախ ու գվարթ տեսք ես չունեի այդ չարաբաստիկ օրը:
- 3) Պատանեկան անմոռանալի այդ հուշը սակայն երբեք չի խամրի:
- 4) Բնելուց առաջ պապս ինձ պատվիրեց առավոտյան ավելի կանուխ վեր կենամ:

**331. Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մեր այդ խումբը տեսնելով միանգամից վեր թռավ նա:
- 2) Մի քանի կեղծավոր տմարդիների պատճառով տապալվում էր այնքան ջանքեր խլած մեր ներկայացումը և ամենքս տխուր էինք:
- 3) Դպրոցն ավարտելու առթիվ նվերներ էր պատրաստել և դրանց հանձնումը առավել հանդիսավոր դարձնելու համար սպասում էր թոռան ծննդյան օրվան:
- 4) Մերին ի դեպ դահլիճում չէր ու երևի ուշացումով գար:

**332. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Աստված մարդուն տվել է ուշիմություն, այսինքն՝ բարեփոխվելու հնարավորություն, և մարդը, գիտակցելով այդ, պետք է ձգտի կատարելության:
- 2) Ով կարողանում էր մագապործ փախչել, հանդիպում էր զինվորներին, որոնք, մտածելով, թե պավլիկյաններն են հանկարծակի հարձակվել քաղաքի վրա, անխնա կոտորում էին բակերում ու այգիներում թաքնվել փորձող քաղաքացիներին:
- 3) Խառնիճաղանջ մտքերից ավելի շփոթվեց, սփրթնեց, սիրտը թայրտաց և պարզորոշ լսեց արյան զարկերը քունքերում:
- 4) Պատահական չէ, որ բնիկների՝ այս ջրվեժին տված անունը պահլավական ծագում ունի:

**333. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Եվ զգում էր նա, որ չի կարողանում դիմանալ իր սրտի ձգտմանը, որ հակառակ իր կամքի, հիվանդոտ հետաքրքրությունը մղում է նրան դեպի այնտեղ, ուր պետք է լիներ բժիշկը:
- 2) Հանկարծ մի միտք լուսավորեց նրա ուղեղը (Մարիամն արդեն վաղուց քնած էր), և ռուպեն բաց չթողնելով՝ մտավ Ռուբենի սենյակ:
- 3) Դահլիճը, հակառակ սպասածին, միայն կիսով չափ էր լիքը. շատերը տոմսակները գնել էին, բայց չէին եկել:
- 4) Նրա ձայնը մերթ բարձրանում էր, մերթ մեղմանում. երբեմն նա կանգ էր առնում և մի քանի կաթիլ ջրով կոկորդը թրջում:

**334. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Անկողնու մեջ նստած, վերմակը ուսերին քաշած, հայացքը դռանը՝ հիվանդը սպասում էր իր միակ արու զավակի՝ Արամի ժամանելուն:
- 2) Տղան սպասում էր հիվանդի հրամաններին և նրան թվում էր, որ պատրաստ է ծերունու մի խոսքով կրակի մեջ նետվելու:
- 3) Մի անկյունում՝ սենյակի հատակին, դրված էր մի երկաթյա ժանգոտված սնդուկ. նրա պարունակությունը ոչ ոք չգիտեր:
- 4) – Իմ տունը քանդվեց այն օրը, – շարունակեց ծերունին՝ գույնզգույն թաշկինակով սրբելով թանձր ընչացքը, – երբ մայրդ մեռավ. տասնհինգ տարի է՝ մենակ եմ այս չորս պատի մեջ:

**335. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Այս ամառ, ըստ կանխատեսումների, շոգ է լինելու, և կարծում եմ՝ ավելի ճիշտ կլինի՝ գործերդ հետաձգես մինչև աշուն:
- 2) Տղան երկար մտածում էր, թե ինչ գյուտ կարելի է անել և ի վերջո որոշեց փոքրիկ շոգեքարշ սարքել:
- 3) Մայքը, հեռանալով պատուհանից, տխուր նայեց հեռախոսին. գուցե Էմման դեռ չի քնել կամ գուցե սպասում է իր զանգին:
- 4) Եղել է մի քաղաք, և մարդիկ, եզները սայլերին լծած կամ ուղտերին նստած, եկել են այդ քաղաքը՝ առևտուր անելու:

**336. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նա ցավով ու տառապանքով գրեց «Երկիր Նաիրին»՝ հայրենիքի ճակատագրին նվիրված մի գիրք՝ լի խորը թախիծով:
- 2) Օրանջիայի՝ երփներանգ գույներով զարդարված ձորակում ամեն գարուն՝ տաքերն ընկնելուն պես, մասրենիներն են ծաղկում՝ շուրջը սփռելով արբեցնող բուրմունք:
- 3) Մեծ մարդը իր երկու սարկավազների՝ Տիրեի և Ռոստոմի հետ հրաշքով փրկվելով՝ հասավ Պատմոս կղզու ափերը:
- 4) Բոլորն էլ գնացին իրենց տները՝ որևէ համեղ բան բերեն. Գրիգորը նրանց խոստացել էր մի լավ բան նվագել:

**337. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Բոլոր արարածները, որ կան աշխարհում՝ թռչուններ, կենդանիներ՝ վայրի և ընտանի, իրենց ծնողներից են ստանում կյանքի առաջին հմտությունները:
- 2) Շատ հաճախ իմ ընկերների՝ Տիգրանի և Հայկի մեջ, ես տեսնում, ճանաչում եմ ինձ:
- 3) Իր տղաներից մեկին՝ Հայկին, ուղարկել էր այնտեղ՝ տեսնելու՝ ինչ է տեղի ունեցել, ինչով կարող են օգնել իրենք, և որտեղ է հիմա օրիորդը:
- 4) – Զգաստ եղիր, բայց չորոնես իմ ստվերը կյանքի մեջ, – թոթովում էր նա՝ հետուառաջ անելով սենյակի երկայնքով:

**338. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Մենք հպարտանում էինք նրանով և հարգում նրան, որովհետև երևելի հայ էր և մեր ուսուցիչն էր, բայց չէինք սիրում նրան. ոչ մի անգամ հայերեն չխոսեց և նույնիսկ չժպտաց մեզ հայերեն:
- 2) Հետո, երբ կիսախուփ աչքերը բաց էր անում, հայացքը կառչում էր ինչ–որ կետի, և մի տաք հոսանք թրթռալով՝ գալիս–լցվում էր նրա էության մեջ ու մարմինը պատեպատ խփում:
- 3) Անհրապույր կայարանում ստիպված էինք երկար սպասել հայկական գնացքին, որը պիտի կազմվեր հենց այդտեղ՝ կայարանում, բայց այդ գործն ուշանում էր, և ոչ ոքի հայտնի չէր՝ շարժակազմը երբ պատրաստ կլինի:
- 4) Իհարկե, փոքր ազգերը մեծ ազգերի մոտ մանուկներ են, բայց միայն իրենց փոքրությամբ, իսկ հայ ազգի նման հին ազգը, տեսնելով դժխեմ ճակատագրի անթիվ–անհամար հարվածներ, պետք է մտքի երեխայական հասակից դուրս եկած և իմաստուն դարձած լիներ:

**339. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Հիմա թվում էր՝ մանրագին քննել է ամեն ինչ և գործը հարթ կրնթանա, բայց հոգու խորքում մի անորոշ կասկած կար, որ ինքն ուղղակի ի վիճակի չէ ճիշտ մտածելու:
- 2) Վաղուց ի վեր նրան հետաքրքրում էր մի հարց, թե ինչու են այնպես հեշտ հայտնաբերվում ու մերկացվում շատ հանցագործություններ ու այնպես պարզորոշ են լինում շատ ոճրագործությունների հետքերը:
- 3) Նրա համար ամենքը հավասար էին, և բոլորի հետ վարվում էր անխտիր միևնույն մտերմիկ պարզությամբ ու հանապազօրյա անմիջականությամբ:
- 4) Այս տոնը բացառապես ժողովրդական բնույթ էր կրում. ոչ մի կազմակերպություն, ոչ մի միություն չէր դեկավարում և տոնվում էր տարերայնորեն, ինքնաբուխ:

**ԲԱԺԻՆ 5**

**ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ**

**1. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Այդ գրքերը նրան ծանոթացնում են Դուկաս Վանանդեցու, Սիմեոն կաթողիկոսի, Մխիթար Աբբայի և այլ նշանավոր անձանց կյանքին, արթնացնում են սեր դեպի հայրենիքը:
2. Գրել-կարդալ սովորելով՝ Աբովյանը տասնհինգ տարեկան հասակում սկսում է հայրենասիրական գրքեր կարդալ:
3. Սակայն ո՛չ վանական միջավայրը, ո՛չ կարդացած գրքերը չէին կարող նրան ցույց տալ ազգին օգտակար լինելու այն ուղին, որը նա որոնում էր:
4. «Փափագում էի և ե՛ս ամբողջ կարողությամբս պիտանի լինել իմ սիրելի ազգին», – գրում է նա հայրենասիրական գրքերի ազդեցությամբ:

- 1) 2, 1, 4, 3
- 2) 4, 2, 1, 3
- 3) 4, 3, 2, 1
- 4) 3, 2, 1, 4

**2. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա դիմում է ներկայացնում Էջմիածնի սինոդին, որ կառավարում էր եկեղեցական գործերը, և խնդրում թույլ տալ իրեն մեկնել Դորպատ՝ բարձրագույն ուսում ստանալու:
2. Պարրոտը Էջմիածնից մեկնում է Դորպատ. նա Աբովյանին խոստանում է միջնորդել ուր և ում հարկն է և անպայման ձեռք բերել նրան Դորպատ ուսման ուղարկելու իրավունքը:
3. Սակայն սկսվում են բամբասանքն ու զրպարտությունը. կաթողիկոսից մինչև վերջին վանականը հորդորում էին Աբովյանին հրաժարվել Պարրոտին տված խոստումից, հյու-հնազանդ մնալ Էջմիածնում և վանքի կամարների տակ ծնկաչոք աղոթքներ մրմնջալ. այս էր նրանց պահանջը:
4. Աբովյանը սրտի թրթիռով սպասում է Դորպատ մեկնելուն՝ թաղվելով վարդագույն երազների մեջ, գուրգուրելով իր ապագա կյանքի գալուստը:

- 1) 2, 3, 1, 4
- 2) 2, 4, 1, 3
- 3) 4, 2, 1, 3
- 4) 3, 2, 4, 1

**3. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Օսմանցիք, տեսնելով ռուսների՝ իրենց սահմաններին մոտենալը և մանավանդ տեղյակ լինելով Պետրոս Մեծի աշխարհակալական ձգտումներին դեպի արևելք, գրավեցին իրենց սահմանակից բոլոր պարսկական նահանգները:
2. Տասնութերորդ դարի սկզբներին Պարսկաստանում կատարվեցին նշանակալի փոփոխություններ, որոնք Դարաբադի մելիքների դրության վրա ոչ պակաս ազդեցություն ունեցան:
3. Միևնույն ժամանակներում՝ Պետրոս Մեծի կայսրության օրերում, ռուսները տիրեցին Կասպից ծովեզրյա պարսկական գավառները՝ Դերբենդը, Բաքուն, Մազանդարանը և Աստրապատը:
4. Աղվանները ապստամբեցին. Միրզա Մահմուդ խանը, արշավանք գործելով, գրավեց պարսից մայրաքաղաքը՝ Սպահանը, և շահին գահընկեց անելով՝ ինքը թագավոր դարձավ:

- 1) 3, 2, 4, 1
- 2) 2, 4, 3, 1
- 3) 4, 1, 3, 2
- 4) 2, 1, 4, 3

**4. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ դասավորությանը:**

1. Բայց դեռ երկար ճանապարհ կար անցնելու կաուչուկի և ծծմբափոշու խառնուրդից ջերմության ու ցրտի նկատմամբ չեզոք նյութ ստանալու համար, որպեսզի կաշվե կոշիկների համեմատ կաուչուկե ոտնամանները առավելություն ունենային:
2. Պերուի հնդկացիներն այդ զանգվածից երկարաճիտ կոշիկների նմանվող բաներ էին ծեփում և հագնում անձրևների ժամանակ:
3. Արտաքուստ ոչնչով աչքի չընկնող ծառ է Հարավային Ամերիկայի արևադարձային անտառներում աճող հևեան, որի կեղևի կտրվածքներից թանձր խեժ է հոսում:
4. Երկար ժամանակ միայն կաշվե կոշիկներ հագնող և մշտապես անձրևներից նեղվող եվրոպացիները, առաջին անգամ հայտնվելով Պերուում, իրենց հետ տուն բերեցին հևեայի պնդացած հյութը՝ տեղացիների ասած կաուչուկը, որին տրվեց նոր անուն՝ «գումիմաստիկ»:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 1, 3, 4, 2
- 3) 2, 1, 4, 3
- 4) 3, 2, 4, 1

**5. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ դասավորությանը:**

1. Մոտ յոթանասուն տարի առաջ գիտնականները ստեղծեցին նաև հեղուկային շարժիչները, որոնցով այսօր զինված են տիեզերանավերը:
2. Այսպես գործում է ռեակտիվ շարժիչը, որը, արտանետելով գազեր, ինքը մղվում է առաջ:
3. Մարդկությունը դարեր շարունակ խորհել է թռիչքի շարժումն ապահովող նմանատիպ սարքի մասին, բայց միայն հազար տարի առաջ ստեղծվեցին առաջին պարզ շարժիչները, որոնց կատարելատիպերով այսօր զինված են մարտական և ազդանշանային հրթիռները:
4. Երկու աղյուս բռնած՝ չմուշկներով կանգնե՞ք սառույցին և աղյուսները հե՛տ նետե՞ք ու ակամա առաջ կշարժվե՞ք. որքան ծանր լինեն աղյուսները, այնքան ավելի հեռու կշարժվեք ինքներդ:

- 1) 3, 4, 2, 1
- 2) 1, 3, 4, 2
- 3) 2, 1, 3, 4
- 4) 4, 2, 3, 1

**6. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Այդ հսկա բորենու ծնոտը, որքան էլ զարմանալի է, ընդունակ էր 1սմ քառակուսու վրա 20 տոննա ծանրությամբ կծել: Ակնհայտ էր, որ «սարսափելի ժամանակների» ամենատիրական գիշատիչներից մեկը հենց բորենիները պետք է լինեին:
2. Հիշյալ կենդանիների կմախքները հայտնաբերվել են Միջերկրականի ավերից 200 մղոն հարավ նավթ որոնողների կողմից, և գիտնականների հավաստմամբ դրանք գուցե աշխարհում ամենախոշոր կմախքներն են:
3. Մոտավորապես 30–54 միլիոն տարի առաջ ներկայիս Լիբիայի տարածքում ապրում էին մաստոդոնտներ, ծովային կովեր, 50 ոտնաչափ երկարությամբ կոկորդիլոսներ, որոնք սարսափահար փախչում էին ռնգեղջյուրի մեծություն ունեցող բորենիներից:
4. Այդ շրջան ուղարկված գիտնական Սևիջը կարողացավ հայտնաբերել հսկայակմախք բորենու, ինչպես նաև հնագույն հսկա փղի՝ 120 սմ երկարությամբ մարգարտավարդագույն ժանիքներ: Որոշ ժամանակ անց Սևիջին պարզ դարձավ իր ուսումնասիրած կենդանիների, հատկապես գիշատիչ վտանգավորության չափը:

- 1) 4, 1, 2, 3
- 2) 4, 1, 3, 2
- 3) 3, 2, 4, 1
- 4) 2, 1, 3, 4

**7. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Թե ինչպես է ճանճը զգում մագնիսային դաշտը, և ինչու է բնությունը նրան այդպիսի հատկությամբ օժտել, առայժմ պարզ չէ: Ըստ երևույթին, նա ինչ–որ զգայուն օրգան ունի, որն ընդունակ է զգալու մագնիսական ուժագծերի ուղղությունը ոչ պակաս ճշգրտությամբ, քան կողմնացույցը, բայց գիտնականներն առայժմ այդ օրգանը չեն գտել:
2. Իսկ եթե զգուշորեն մագնիսը հեռացնեք, ապա ճանճը կսկսի մաքրվել՝ թաթը թաթին քսելով և թևերից ինչ–որ բան քերելով: Մի՞թե տարօրինակ չէ:
3. Միջատները շատ զգայուն են մագնիսական դաշտի նկատմամբ. բավական է հետևել տնային ճանճին, կողմնացույցով որոշել, թե որտեղ են հյուսիսն ու հարավը, և կտեսնեք, որ եթե քամի չկա, ոչինչ չի խանգարում ճանճին. նա միշտ նստում է որոշակի ուղղությամբ՝ կա՛ն հյուսիս–հարավ, կա՛ն արևելք–արևմուտք:
4. Եթե նրան դնեք ուժեղ մագնիսի բևեռների միջև, նախ կսկսի անհանգստանալ, ապա ճնշված կանշարժանա նշված ուղղություններից մեկում: Դուք կտեսնեք, թե ինչպես է նա գլուխը «հարդարում»:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 3, 1, 4, 2
- 3) 3, 1, 2, 4
- 4) 4, 3, 2, 1

**8. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հայաստանում հանդիպող օձերը շատ են. դրանց թիվը հասնում է 21 տեսակի: Դրանցից թունավոր են իժերի ընտանիքին պատկանող չորս տեսակները՝ տափաստանային, Դարևակու, փոքրասիական իժերը և անդրկովկասյան գյուրզան: Սրանց թույնը արագ ազդում է հյուսվածքների վրա՝ խտացնելով արյան մակարդեղիությունը, քայքայելով արյան կարմիր գնդիկները:
2. Գոյություն ունեն արտաքին որոշ նշաններ, որոնցով հնարավոր է տարբերել թունավոր օձին ոչ թունավորից: Պետք է ասել, որ ոչ մասնագետի համար դա այնքան էլ դյուրին չէ: Իժերի ընտանիքին պատկանող օձերի աչքերի բիբերը ճեղքվածքի են մման, գլխի վերնամասը ծածկված է անկանոն դասավորություն ունեցող թեփուկներով, գլուխն էլ եռանկյունաձև է, ակնհայտորեն առանձնացած իրանից:
3. Մեզ մոտ հանդիպում են ևս երկու տեսակի, բայց կեղծ թունավոր օձեր, որոնք վտանգ են ներկայացնում մանր կենդանիների համար: Դրանք մողեսանման և կատվանման օձերն են:
4. Մինչդեռ ոչ թունավորների գլխի թեփուկները մարմնի թեփուկներից մեծ են, և գլուխն ու մարմինը առավել հարթ անցումով են կապված: Նույնը չի կարելի ասել անդրկովկասյան գյուրզայի մասին, որի գլուխը խիստ սահմանազատված է մարմնից, և նրա խայթոցի դեպքերը մեծ մասամբ մահացու ելք են ունենում:

- 1) 2, 1, 3, 4
- 2) 1, 4, 2, 3
- 3) 1, 3, 2, 4
- 4) 2, 4, 3, 1

**9. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Վերակրուսի քարը գտնվել է Կասկախալ վայրում, որը տեղակայված է մ.թ.ա. 12–9–րդ դարերի խոշորագույն օլմեական քաղաքի ավերակներից մեկուկես կիլոմետր հեռավորության վրա, որն այժմ հայտնի է որպես Սան Լորենցո Տենոչտիտլան:
2. Մեքսիկական Վերակրուս նահանգում հնէաբանները հայտնաբերել են քարե սալ, որի վրայի փորագրությունները թվագրված են Քրիստոսից առաջ 10–րդ դարում: Մինչև այժմ համարվում էր, որ առաջին գրությունը Արևմտյան կիսագնդում հայտնվել է Ք. ա. 6–5–րդ դարերում:
3. Խորհրդանիշներից մի քանիսը հիշեցնում են օլմեկների ցեղի գրությունները, ցեղ, որը բնակվել է կենտրոնական Մեքսիկայում Ք. ա. 12–5–րդ դարերում: Հետևաբար, հենց օլմեկներին են պատկանում Ամերիկայի հնագույն գրությունները:
4. Վերակրուսի սալի վրա օգտագործվել են 28 խորհրդանիշներ, որոնցից մի քանիսը կրկնվում են 4 անգամ, 3 անգամ էլ հանդիպում են նշանների կրկնվող զույգեր: Ընդհանուր առմամբ սալի վրա զետեղված են 62 նշաններ, որոնք, ըստ երևույթին, անհրաժեշտ է կարդալ հորիզոնական և ձախից աջ: Գրության լեզուն և հետևաբար նրա բովանդակությունը հայտնի չեն, քանի որ մմանատիպ հիերոգլիֆներ ևս գիտնականներին հայտնի չեն:

- 1) 4, 1, 2, 3
- 2) 3, 4, 2, 1
- 3) 2, 4, 3, 1
- 4) 2, 3, 4, 1

**10. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Լուսնի վրա եղած տիեզերագնացները նշել են, որ փոշին կաշում է ցանկացած մակերեսի: Փոշու խնդիրը առկա էր «Լայոլոն» ծրագրի տիեզերագնացների համար ինչպես օդանավից դուրս, այնպես էլ ներսում: Տիեզերագնացների պատմածից զատ գիտնականներն իրենց տրամադրության տակ ունեին 382 կգ լուսնային փոշի, որի ուսումնասիրությունների տվյալները մտահոգիչ էին:
2. Ներկայումս Ճապոնիան թռիչքի է պատրաստում Լուսինն ուսումնասիրող սարք, որի խնդիրներից մեկը կդառնա էլեկտրամագնիսական դաշտերի ուսումնասիրությունը և Լուսնի մակերեսի լիցքավորված մասնիկների ու պլազմայի հետազոտությունը:
3. Լուսինը, հայտնի է, պատված է մանրագույն մասնիկներից կազմված փոշով, և ՆԱՍԱ–ի մասնագետները մտավախություն ունեն, որ լուսնային փոշին կարող է լուրջ խնդիրներ առաջացնել երկրի բնական արբանյակների վրա տիեզերագնաց–հետազոտողներ իջեցնելու հարցում, և այդ մասնիկները կարող են շարքից հանել սարքավորումները և վնասել մարդու առողջությանը:
4. Լուսնի փոշին կարող է նաև պարունակել էլեկտրական լիցքեր, որոնք փոփոխվում են Լուսնի շուրջ Լուսնի շարժմանը համընթաց: Փոշու լիցքավորվածությունը կարող է լինել նրա կաշտնության պատճառներից մեկը:

- 1) 4, 3, 2, 1
- 2) 2, 1, 3, 4
- 3) 3, 1, 4, 2
- 4) 1, 2, 4, 3

**11. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Իսկ Պետերբուրգի բժիշկներին հաջողվել է հատուկ սարքի օգնությամբ հաստատագրել, որ, բացի կշռի կորստից, մահվան պահին մարդկային մարմնից անջատվում է ինչ–որ ձվաձև բան: Դիշտ է, դեռ ոչ մեկին չի հաջողվել սեփական աչքերով տեսնել կամ ձեռքերով շոշափել մարդկային հոգին, բայց իմացության հնարավորությունները անսահման են, և առջևում դեռ բացահայտումներ են սպասվում:
2. Մարդկային հոգու մասին բանական մարդը խորհել է հնուց` տևական մի ժամանակ ոչինչ չիմանալով վերջինիս մասին, այսինքն` հստակ ոչինչ չի իմացել, և հոգին մի տեսակ վերացական, անիմանալի, անտեսանելի ու անկշռելի հասկացություն է եղել:
3. Տարբեր ժողովուրդների հավատալիքներում ասվում է, որ մահվան պահին հոգին լքում է մարդու մարմինը: «Եթե այդպես է, գուցե հնարավոր է կշռել մարդու հոգին»,– խորհել են ամերիկյան գիտնականները:
4. Ստեղծելով կշռող մի սարք, որը կարող է հաշվի առնել մեռնող մարմնի կշիռը կորցնելու հետ կապված հնարավոր բոլոր փոփոխությունները, նրանք բազում փորձեր են կատարել: Արդյունքները գերազանցել են բոլոր սպասելիքները. պարզվել է, որ հոգին կարող է կշռել 2,5–ից մինչև 6,5 գրամ:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 1, 3, 4, 2
- 3) 2, 3, 4, 1
- 4) 3, 2, 1, 4



**12. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Շատ տարիներ նրանք գաղտնիքը մի սերնդից մյուսին են փոխանցել բանավոր ձևով, և միայն ոչ հեռու անցյալում է այն գրվել թղթի վրա: Փաստաթուղթը տեղում կիսվել է երկու մասի և պահպանման հանձնվել չիրկիզվող երկու տարբեր պահարաններում:
2. Տրինիդատից և Տոբագոյից արտահանվող հայտնի դեղամիջոցներից մեկն է անգոստուրիան: Այն 1824 թվականից արտադրում է նույն ընտանիքը:
3. Նրանք պարտավոր են հանդիպել միայն դեղամիջոցի պատրաստման պահին, երբ պատրաստի արտադրանքի ստուգման համար մնում է միավորել գաղտնի գիտելիքները:
4. Դառը նյութի դեղատոմսը և պատրաստման տեխնոլոգիան պահվում են խիստ գաղտնի: Ընտանիքում ընդամենը չորս մարդ գիտեն գաղտնիքը, ընդ որում, նրանցից յուրաքանչյուրը տեղյակ է միայն գաղտնիքի քառորդ մասին, և բոլորն ապրում են տարբեր տեղերում, միասին ոչ մի տեղ չեն գնում ո՛չ գնացքով, ո՛չ շոգենավով, ո՛չ էլ ինքնաթիռով:

- 1) 1, 3, 2, 4
- 2) 3, 1, 2, 4
- 3) 2, 4, 3, 1
- 4) 4, 1, 3, 2

**13. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. «Փշրվող թղթադրամների» (դրանք այժմ պաշտոնապես այդպես են անվանվում) թիվը շարունակում է մեծանալ, և ամենից շատ՝ 50 եվրոյինը: Չի բացառվում, որ փողերը շփված լինեն աղի սուլֆատի փոշու հետ: Դրա հպումը ջրի հետ, օրինակ՝ ձեռքերի քրտինքի հետ, կարող է հարուցել հիմնային ռեակցիա, որի հետևանքով կգոյանա ծծմբական թթու:
2. Գերմանիայում հաճախացել են «ինքնաքայքայվող» եվրոների դեպքերը: Շատ քաղաքներում ավելի ու ավելի հաճախ են հայտնաբերվում թղթադրամներ, որոնք ձեռքի շփումից վիշրվում են չորացած տերևի նման:
3. Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ թղթադրամները քայքայվում են ոչ թե շրջանառության մեջ մտնելուց անմիջապես հետո, այլ որոշ ժամանակ անց: Եվ կարևորն այն է, որ գործարանային խտտանի վարկածը մասնագետները կտրականապես բացառում են:
4. Առաջ քաշված տեսակետներից մեկի համաձայն՝ փողի առեղծվածային ձևափոխումները տեղի են ունենում ծծմբական թթվի հետ շփման հետևանքով:

- 1) 1, 2, 3, 4
- 2) 4, 3, 1, 2
- 3) 2, 4, 1, 3
- 4) 3, 2, 4, 1

**14. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Քանի որ նրան մեղադրում էին եկեղեցու հանդեպ անհավատարմության մեջ (նա մահացել էր՝ հրաժարվելով հաղորդությունից), եկեղեցին արգելեց նրա աճյունը թաղել Ջենովայում: Թվում է մանրուք, սակայն դա պատճառ դարձավ, որ տասնյակ տարիներ երաժշտի մարմինը դեգերի Եվրոպայով մեկ:
2. Մենյակից, ուր նա մահացել էր, աճյունը տեղափոխել էին նկուղ, այնտեղից՝ լազարեթ, բայց այստեղ երկար չէին պահել: Սնապաշտ մարդիկ պնդում էին, որ տեսել են ոչ միայն մահացածի մարմնի լուսավորվելը, այլև լսել ջութակի կախարդական մեղեդին: Այս պատմությունը շատ երկարեց, քանի որ Հռոմը ևս հրաժարվեց Իտալիայում հուղարկավորելու թույլտվություն տալուց, և որդին հարկադրված էր հոր դիակը տեղից տեղ տեղափոխել:
3. Ջութակահարի մահից 53 տարի անց, երբ դագաղը բացվեց նրա թոռան ներկայությամբ, որպեսզի թաղեն Պարմի գերեզմանատանը, բոլորն ապշեցին՝ տեսնելով մահացածի հրաշալի պահպանված դեմքը, բայց արդեն ամբողջովին քայքայված մարմինը:
4. Պատմում են, որ Պագանինին մահացել է լուսնկա մի գիշեր՝ ջութակը ձեռքին: Նշանավոր Ջենովացին հագիվ է ավարտել մեղեդին, և հանկարծ աղեղն անշարժացել է մատներում:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 2, 3, 4, 1
- 3) 1, 2, 4, 3
- 4) 4, 1, 2, 3

**15. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Վերջերս հետազոտողների մի խումբ, ուսումնասիրելով Լիզա Ջերարդինայի ուսերին գցած թափանցիկ ծածկոցը, պարզել է, որ նման ծածկոց կրել են նոր ծծնդաբերած կանայք, և համադրելով տվյալները՝ եզրակացրել, որ նկարը ստեղծվել է 1503–ին, երբ ծնվել է Մոնա Լիզայի որդին:
2. Լեոնարդոյի պատկերած կինը, ըստ գիտնականի, 83% –ով երջանիկ է, 6%–ով վախեցած է, 2%–ով՝ չարացած: Ահա ինչ արձանագրեց համակարգչային հատուկ ծրագիրը դեմքի, աչքերի և շուրթերի ուսումնասիրությունից հետո:
3. Գեղեցկուհու ձեռքերի և դեմքի չափումներից հետո հնարավոր դարձավ որոշել վերջինիս հասակը՝ 168 սմ: Հաջորդ քայլը եղավ նրա գանգի մոդելի ստեղծումը: Շատ ավելի երկար տևեցին կնոջ ձայնը վերստեղծելու և նրա հանելուկային ժպիտի շուրջ վիճող ճապոնացի գիտնականների աշխատանքները, որոնք Սուգուկիի ջանքերով հետաքրքիր արդյունքներ ունեցան:
4. Դա Վինչիի «Ջոկոնդան» բոլոր ազգերի և ժամանակների ամենահայտնի դիմանկարն է: Նկարի ստեղծման տարեթիվը համարվում է 1503–1506 թթ. ժամանակահատվածը:

- 1) 3, 1, 2, 4
- 2) 2, 3, 4, 1
- 3) 4, 1, 3, 2
- 4) 2, 4, 1, 3

**16. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Կոստանդինը, կրթությամբ և կրոնով կաթոլիկ և նաև եվրոպացի լինելով, հենց որ թագավոր դարձավ, իր վարմունքով աստելի եղավ ժողովրդին, քանի որ նա իր արքունիքի մեջ մտցրեց եվրոպական խորթ սովորություններ: Ժողովուրդը և զորքը, չկարողանալով տանել այս անկարգությունները, նրան սպանեցին մեկ տարի թագավորելուց հետո:
2. Քանի որ Լևոն Ե–ի մահից հետո Ռուբինյան թագավորների ցեղը սպառնալից էր, նրանց հեռավոր ազգականներից մեկը՝ Կոստանդին անունով, ընտրվեց հայոց թագավոր: Այս Կոստանդինը որդին էր Լևոն Գ–ի Ջապել աղջկա, որն ամուսնացած էր Կիպրոսի թագավորի եղբոր հետ:
3. Այս ամենից հետո հայերը նոր միայն հասկացան օտարազգի և լատինական թագավորի՝ Կիլիկիայի գահի վրա նստեցնելու վնասները և թագավոր ընտրեցին Կոստանդին Գ–ին, որը չէր ունենում իշխանի որդին էր և մոր կողմից Ռուբինյան էր: Նա խաղաղեցրեց կրոնական երկպառակությունները և արգելեց հայոց եկեղեցում կաթոլիկական ծեսերը՝ այսպիսով խաղաղեցնելով ժողովրդի դժգոհությունը:
4. Հայերը, այս ամենից չխրատվելով, թագավոր ընտրեցին նրա եղբայր Գվիդոնին, որը, իր եղբոր վարմունքին հետևելով, ավելի ուժ տվեց կաթոլիկությանը և սկսեց պապի հետ դեպի անստիճանություններ անել: Գվիդոնը ևս արժանացավ իր եղբոր ճակատագրին:

- 1) 1, 2, 3, 4
- 2) 2, 1, 4, 3
- 3) 2, 1, 3, 4
- 4) 2, 4, 1, 3

**17. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Վիճելի նկարի տերը նախկին վարորդ, այժմյան թոշակառու Թերրի Հոբբոնն է, որի ավտոտնակում նկարը մնացել է մի քանի տարի: Մի օր, երբ այն նկատել է տեղի համալսարանի պրոֆեսորներից մեկը, իրավիճակը փոխվել է:
2. Հնավաճառից հինգ դուլարով գնված նկարը կարող է ամերիկացի նկարիչ Ջեքսոն Պոլլակի կտավը լինել. ահա այսպիսի ենթադրություն է արել արվեստագետ Պիտեր Բիրոն: Եթե ենթադրությունը ճիշտ է, ապա կտավը արժե 40–50 միլիոն դոլար:
3. Չէ՞ որ ամերիկյան հետպատերազմյան խոշորագույն նկարիչներից մեկն է համարվում Պոլլակը, որի «Համար 5, 1948» կտավը մասնավոր գործարքի շրջանակներում վաճառվել է 140 միլիոն դոլարով. դա գեղանկարչության մեջ երբևէ վճարված ամենախոշոր գումարն է:
4. Փորձագետները նկարի վրա կարողացել են հայտնաբերել նկարչի մատնահետքերը՝ համադրելով նկարչի արվեստանոցում եղած նկարներում առկա մատնահետքերի հետ, և կասկածները հաստատվել են: Արդյունքում յոթանասունչորսամյա թոշակառուն հսկայական կարողության տեր է:

- 1) 3, 4, 1, 2
- 2) 4, 3, 2, 1
- 3) 2, 1, 4, 3
- 4) 1, 3, 4, 2

**18. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. 2000–2001 թթ. Բրիտանիայում ոչնչացվեց 3,8 միլիոն խոշոր եղջերավոր կենդանի: Հիվանդության հարուցիչը հայտնաբերած ամերիկացի գիտնական Սթենլի Փրուզիներն արժանացավ Նոբելյան մրցանակի, համաճարակը հաջողվեց մարել, սակայն ո՛չ մարդկանց, ո՛չ կենդանիների մոտ հիվանդությունը բուժել չհաջողվեց:
2. «Կովերի կատաղությունը» կամ սպունգանման էնցեֆալոպատիան ոչխարների մոտ նախկինում հանդիպող հիվանդություն էր: Ինչպես հետո պարզվեց, այն վարակիչ էր նաև մարդկանց համար: Եվրոպայում անսովոր վարակից մահացավ 150 մարդ:
3. Պարզվեց, որ անասնաբույժներն իրենք էին կովերի կատաղության տարածման ակամա մեղավորները: Նրանք անասնակերի մեջ ավելացրել էին ոչխարների ոսկորներից պատրաստված ալյուր՝ չիմանալով հնարավոր հետևանքների մասին:
4. 2000 թվականին Մեծ Բրիտանիայում խաղաղ արածող կովերը հանկարծ սկսեցին սլանալ դաշտով մեկ: Կարճ ժամանակ անց սկսեցին հարձակվել մարդկանց ու մյուս կովերի վրա, կատաղի բառաչել, իսկ հետո՝ զանգվածաբար սատկել:

- 1) 1, 3, 2,4
- 2) 4, 2, 1, 3
- 3) 3, 2, 1, 4
- 4) 2, 1, 4, 3

**19. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Աֆրիկյան Կամերուն պետությունում նշում են թագուհիների տոնը: Այդ երկրի գյուղերն ունեն թագավորներ, որոնք էլ ունեն տասնյակ կանայք, այսինքն՝ թագուհիներ: Նրանք ինքնատիպ «գեղեցկուհիներ» են, որոնց շուրթերի միջով անցկացված են մետաղյա կամ ծղոտե ձողեր՝ ի նշան թագավորական տան անդամ լինելու: Նրանց ռունգերը զարդարված են պղնձե օղակներով, իսկ ականջների բլթակներից ծանր օղեր են կախված: Կանայք ինքնատիպ են նաև սանրվածքով. նրանց ծոծրակը զարդարում է մի մագափունջ, իսկ մնացած մագերը խնամքով սափրված են: Գեղուհիների աչքերի շուրջը կարմիր շրջանակներ են արվում՝ ընդգծելով դրանց մեծությունը:

- 1) Աֆրիկյան Կամերուն պետությունում գյուղերն ունեն թագավորներ, որոնք էլ ունեն տասնյակ կանայք, այսինքն՝ թագուհիներ:
- 2) Աֆրիկյան այս պետությունում թագուհիների մագերը խնամքով սափրում են՝ թողնելով մի մագափունջ, որը զարդարում է նրանց ծոծրակը:
- 3) Մետաղյա ձողով կամ պղնձե օղերով զարդարում են կամերունյան գեղեցկուհիների շուրթերը:
- 4) Ինքնատիպ սանրվածքից բացի՝ Կամերունի թագավորական ընտանիքի կանայք շրջապատին հայտնի են կարմիր շրջանակված աչքերով:

**20. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

1842 թվականին Բոստոնում անգլիացի նշանավոր գրող Չարլզ Դիկկենսը հանդիսավոր ճաշկերույթներից մեկի ժամանակ համարձակություն ունեցավ հայտարարելու, որ այն շահույթների մի մասը, որ ստանում են հրատարակիչները այլ երկրներում անգլիացի գրողների գրքերի տպագրումից, ցանկալի կլիներ տրամադրել հեղինակներին: Ըստ նրա՝ Վալտեր Սքոթը կյանքի վերջին շրջանում շատ թե քիչ բարվոք կյանքով կապեր, եթե ամերիկյան հրատարակիչները վերջինիս տալին հասանելիք գումարի գեթ մեկ տասներորդը... Այս դեպքից հետո տասնյակ տարիներ պահանջվեցին, որ հեղինակային իրավունքի պաշտպանության միջազգային մի քանի կոնվենցիաներ ստեղծվեին Բեռնում (1886), Մոնտեվիդեոյում (1889), Մեխիկոյում (1902) և այլն: Հեղինակային իրավունքի համաշխարհային կոնվենցիան ընդունվել է Ժնևում 1952 թվականին և ուժի մեջ է մտել 1955 թ. սեպտեմբերից:

- 1) Հեղինակային իրավունքի պաշտպանության միջազգային կոնվենցիաներից մեկը ստորագրվել է 1886 թվականին Բեռնում:
- 2) Հեղինակային իրավունքի պաշտպանության միջազգային կոնվենցիան Սքոթի գրքերի ամերիկյան հրատարակություններից գրողին հասանելիք գումարի մեկ տասներորդը տրամադրելու էր նրա ժառանգներին:
- 3) Վալտեր Սքոթը կյանքի վերջին շրջանում համենատաքաբ բարվոք կյանք կունենար, եթե ամերիկյան հրատարակիչները վճարեին նրան գրքերի վաճառքից ստացած շահույթի գեթ տասներորդ մասը:
- 4) Հեղինակային իրավունքի պաշտպանության համաշխարհային կոնվենցիայի ընդունման գործընթացը կարգավորման երկար ճանապարհ է անցել:

**21. Ո՞ր միտքը չէ հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Մալագիայի Քելանթանի նահանգի իշխանությունները կանանց արգելել են հագնել տաբատ, ցինա և կարճ շրջագգեստ: Այդ հագուստները, ըստ նրանց, «հակասում են իսլամի կանոններին և ընդունակ են հարուցելու անառողջ հետաքրքրություն»։ Որոշումն առաջինը վերաբերում է վաճառողուհիներին, քանի որ հենց նրանք են ամենից հաճախ նման հագուստ կրում: «Մենք այլևս մտադիր չենք հանդուրժելու իսլամի կանոնների նման խախտումները և պատրաստ ենք վճռական գործողություններ ձեռնարկելու տազնապեցնող այս միտումի դեմ», – ասում ենք նրանք: Ըստ նրանց՝ մուսուլմանուհին պետք է կրի ավանդական երկար զգեստ, որը պետք է հասնի մինչև կրունկները, կրի գլխաշոր, որը պետք է ծածկի մազերն ու ճակատը: Կտրականապես արգելվում են նաև թափանցիկ հագուստները:

- 1) Մալագիայում կանանց արգելվում է վաճառողուհի աշխատել:
- 2) Քելանթանի նահանգում կանայք իրենց հագուստներով սեփական հակաիսլամական դիրքորոշումն են արտահայտում:
- 3) Թափանցիկ հագուստը, երկար զգեստը, գլխաշոր կապելը դեմ են իսլամ դավանող կնոջ կերպարին:
- 4) Քելանթանի նահանգում այլևս մտադիր չեն հանդուրժելու իսլամի կանոնների խախտումները քաղաքի իգական սեռի ներկայացուցիչների և հատկապես վաճառողուհիների կողմից:

**22. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Սուղանցի մի միլիոնատեր հինգ միլիոն դոլար ամենամյա մրցանակ է սահմանել Աֆրիկայի լավագույն նախագահի համար: Այս տպավորիչ մրցանակը կստանա նա, ով կխուսափի իշխանության գայթակղությունից, չի փորձի նոր ժամկետով «կառչել» պետության ղեկավարի աթոռից և անկաշառ կմնա: Մո Իբրահիմը, որը, ինչպես ասում են, գրոյից է վաստակել իր միլիոնները, հայտարարել է, որ, բացի հինգ միլիոն միանվագ վճարից, դափնեկիրը կենսաթոշակի անցնելուց հետո տարեկան երկու հազար դոլար նպաստ կստանա:

- 1) Սուղանում նախագահական ընտրություններում չառաջադրվելու համար միանվագ հինգ միլիոն դոլար են խոստացել:
- 2) Սուղանի նախագահները կենսաթոշակի անցնելուց հետո տարեկան ստանում են մոտ երկու հազար դոլար:
- 3) Մո Իբրահիմը հինգ միլիոն դոլար մրցանակ է խոստանում այն նախագահին, որը գերծ կմնա կաշառակերության ախտից:
- 4) Մո Իբրահիմը Աֆրիկայի լավագույն նախագահ է համարում նրան, ով կարող է իշխանության գայթակղությունից խուսափել, իր աթոռից «չկառչել» և անկաշառ մնալ:

**23. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Չինաստանի հյուսիսային փոքրիկ քաղաքներից մեկում իրար են բախվել երկու ավտոմեքենա, որոնցից մեկի ղեկին, ինչպես պարզվել է, շուն էր: Բանն այն է, որ օրերից մի օր պատկառելի տարիքի մի կին նկատում է, որ իր սիրելի շնիկը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում մեքենայի նկատմամբ: Նա էլ որոշում է շանը մեքենա վարել սովորեցնել: Այսպես ամեն օր կինը նստում էր վարորդի տեղում, շանը նստեցնում գիրկը, որ ղեկը պահեր: Անուշադրության հետևանքով խառնելով գազի և արգելակման ոտնակները՝ տիկինը շանը դրել էր անհարմար վիճակի մեջ, և դեռ լավ է, որ արագության լուրջ գերազանցումներ չէին արձանագրվել, հակառակ դեպքում անսովոր վարորդները լուրջ վթարի պատճառ կդառնային:

- 1) Չինաստանի քաղաքներից մեկում շունը ուղղել է տիրուհու վարորդական սխալը՝ կանխելով անխուսափելի վթարը:
- 2) Երկու ավտոմեքենաների բախման ժամանակ պարզվել է, որ վարորդ շան սխալի պատճառը դիմացից եկող մեքենան է եղել:
- 3) Չինաստանի հյուսիսային նահանգներում շատ շնատերեր իրենց փոքրիկ բարեկամների հետ են մեքենա վարում:
- 4) Շան և նրա տիրուհու՝ մեքենա վարելու համատեղ փորձերը հանգեցրել են վթարի:

**24. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Աշխարհում ամեն օր տասնյակ մարդիկ են մահանում օձերի խայթոցներից, որոնց ծանրության աստիճանը սովորաբար կախված է օձի տեսակից, տարվա եղանակից, օձի վերջին սնվելուց անցած ժամանակից, խայթոցի տեղակայումից, խորությունից ու քանակից: Առավել վտանգավոր են գլխի և պարանոցի շրջանում արված խայթոցները, որոնք վերին շնչուղիների այտուցման պատճառով հեղձուկ են առաջացնում: Համեմատաբար թեթև են ստորին հատվածների խայթոցները: Օձերի կծելուց հետո մաշկի վրա մնում է վերին ծնոտի ատամնահետքը, որով կարելի է որոշել օձի թունավոր կամ ոչ թունավոր լինելը: Թունավոր օձը կծում է՝ թողնելով երկու մեծ և դրանց հաջորդող երկշարք մանր հետքեր: Ոչ թունավորները քառաշարք հետք են թողնում: Անոթի երկայնակի շարքերը ուղիղ են լինում, դրսինը՝ կոր: Խայթվածի վիճակը շատ արագ վատանում է՝ հաճախ բերելով մահացու ելքի:

- 1) Աշխարհում բազմաթիվ մարդիկ մահանում են թունավոր օձերի խայթոցներից. դրանց ելքը բացառապես մահացու է:
- 2) Ծանր ընթացք են ունենում պարանոցի, գլխի և ստորին վերջույթների խայթոցները, որոնք բերում են շնչառական օրգանների այտուցման և հեղձուկի:
- 3) Թունավոր օձերի վերին ատամնաշարի հետքերը երկայնակի են, քառաշարք կորերի տեսքով:
- 4) Խայթոցի ծանրությունը պայմանավորված է օձի տեսակից, տարվա եղանակից, խայթոցների քանակից ու խորությունից:

**25. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Արա Գեղեցիկի մահից հետո Հայաստանը կորցնում է իր ինքնիշխանությունը և դառնում է Ասորեստանի պետության ստորադրյալ: Թեպետ Հայաստանը կառավարող իշխանները համարվում էին Ասորեստանի կողմից դրված կուսակալներ, բայց նրանք հայոց մահապետների ցեղից էին: Նրանց իշխանությունը ժառանգական էր, և որդին փոխարինում էր հորը նրա մահից հետո: Հայոց կուսակալներն ունեին իրենց առանձին գործը, օգնում էին Ասորեստանի թագավորներին պատերազմների ժամանակ և ամեն տարի որոշակի հարկ էին վճարում:

- 1) Արա Գեղեցիկի իշխանության տարիներից սկսած՝ Հայաստանը կորցնում է իր ինքնիշխանությունը և դառնում է Ասորեստանի պետության ստորադրյալ:
- 2) Հայաստանը կառավարող իշխանները համարվում էին Ասորեստանի կողմից դրված կուսակալներ, և նրանց իշխանությունը ժառանգական էր:
- 3) Հայաստանը կառավարող իշխանները Ասորեստանի կողմից դրված կուսակալներ էին, բայց նրանք հարկատու չէին Ասորեստանին:
- 4) Հայոց կուսակալները պատերազմների ժամանակ օգնություն էին խնդրում Ասորեստանի թագավորներից:

## ԲԱԺԻՆ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

### 1. Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում հայերենը:

- 1) Չին–տիբեթական
- 2) Հնդեվրոպական
- 3) Իբերո–կովկասյան
- 4) Ուգրո–ֆիննական

### 2. Ո՞ր շարքում նշված բոլոր լեզուներն են պատկանում հնդեվրոպական լեզվաընտանիքին:

- 1) անգլերեն, վրացերեն, ուզբեկերեն, ռուսերեն
- 2) ուկրաիներեն, թուրքերեն, պարսկերեն, ճապոներեն
- 3) հունարեն, քրդերեն, գերմաներեն, տաջիկերեն
- 4) չինարեն, ֆիններեն, հոլանդերեն, բուլղարերեն

### 3. Ո՞ր լեզվին է ցեղակից հայերենը.

- 1) վրացերենին
- 2) քրդերենին
- 3) արաբերենին
- 4) դազախերենին

### 4. Նշված հայագետներից ո՞վ է ապացուցել, որ հայերենը հնդեվրոպական լեզուների մեջ ինքնուրույն լեզվաճյուղ է:

- 1) Նիկողայոս Մառը
- 2) Հայնրիխ Հյուբշմանը
- 3) Գևորգ Ջահուկյանը
- 4) Յոզեֆ Կարստը

### 5. Ո՞րը հայերենի զարգացման փուլերից չէ:

- 1) գրաբար
- 2) նախագրային հայերեն
- 3) աշխարհաբար
- 4) բարբառ

### 6. Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:

Սրտիս դառնահեծ հառաչանքների  
 Վայն ու ողբաձայն աղաղակները  
 Վերընձայում են քեզ, ո՛վ գաղտնատես.  
 Եվ իմ սասանված մտքի ճենճերող  
 Իդձերի պտուղ նվերն այս դրած  
 Անձս տոչորող թախձի կրակին՝  
 Կամքիս բուրվառով առաքում են քեզ:

- 1) գրաբարով
- 2) արևմտահայերենով
- 3) արևելահայերենով
- 4) միջին հայերենով



**7. Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Կսկիծ կա սրտիս մեջը վիրավոր՝  
 Ջոր արևին լո՛ւյսն անգամ չի բուժեր.  
 Խորունկ ու ցավոտ մորմոքում մը որ՝  
 Ա՛հ, պտի լայննա՛, երբ իջնե գիշեր:

- 1) գրաբարով
- 2) արևմտահայերենով
- 3) արևելահայերենով
- 4) միջին հայերենով

**8. Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Ամենակալ աստուած բարերար, ստեղծիչ բոլորից,  
 Լո՛ւր հառաչանաց ձայնիս վտանգի  
 Եւ երկիրէ տագնապի ապագայիցն կարծեաց  
 Փրկեա՛ կարող զարութեամբ՝ զերծեալ ի պարտեաց...

- 1) գրաբարով
- 2) արևմտահայերենով
- 3) արևելահայերենով
- 4) միջին հայերենով

**9. Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Ֆրիկըն հանց պարզ է խօսել,  
 Որ ամենայն մարդ իմանայ:

- 1) գրաբարով
- 2) արևմտահայերենով
- 3) արևելահայերենով
- 4) միջին հայերենով

**10. Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդես,  
 Երթա՛լ առվին պես՝ մարգերու տակ անտես.  
 Կապույտին մեջ հեզ, հողմավար ամպին պես...

- 1) գրաբարով
- 2) միջին հայերենով
- 3) արևելահայերենով
- 4) արևմտահայերենով

**11. Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Նայե՛ց–նայեց Սայաթ–Նովեն, ամպի նման տխուր մնաց.  
 Ասավ՝ Չարե՛նց, էս գոզալից սրտիս մի հին մրմուռ մնաց...

- 1) գրաբարով
- 2) արևմտահայերենով
- 3) արևելահայերենով
- 4) միջին հայերենով

12. Ո՞ր բարբառի հիման վրա է ձևավորվել գրական արևմտահայերենը:

- 1) Մարադայի
- 2) Պոլսի
- 3) Կարնո
- 4) Խոյի

13. Արևմտահայերենում սահմանական ներկան կազմվում է.

- 1) ած մասնիկով
- 2) ում մասնիկով
- 3) կը մասնիկով
- 4) կու մասնիկով

14. Բառարանների ո՞ր տեսակին է պատկանում Հայկական սովետական հանրագիտարանը:

- 1) ուղղագրական
- 2) ստուգաբանական
- 3) հանրագիտական
- 4) ճյուղային

15. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

ՀԱՅ, ի, գ. 1. Այլուրից թխած ամենօրյա ուտելիք: 2. Հացահատիկ (ցորեն, գարի): 3. Հացահատիկի արտեր: ..... 8. փխբ. Ապրուստ, ասպրուստի միջոց: .....  
 –Հաց զցել՝ դնել–սեղան պատրաստել:

- 1) ստուգաբանական
- 2) ուղղագրական
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

16. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

ԵՐԿԱՆ (սեռ. ի, յետնաբար ի, ի–ա հլ.) «ջաղացք, ջաղացքի քար» ՍԳր., Կոչ., որից՝ երկանաբար Ղուկ. ժե 2 .....  
 =Բնիկ հայ բառ հնիս. grawana–ձևից, որի մեջ –awa– տալով ա՝ ձևացրել է հյ. \*կրան–>երկան.  
 .....  
 Միտռ, զնր. asman «քար» բառի հետ, ճիշտ ինչպես այրս. asma=հյ. երկին ..... »

- 1) ստուգաբանական
- 2) թարգմանական
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

## ԲԱԺԻՆ 7 ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### 1. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցն է գործածվել:

Գոչում են, սակայն չեն լսում ոչինչ,  
Չայն են տալիս ինձ, և չեն արթնանում,  
Կանչում են, սակայն չեն շարժվում տեղից,  
Փողիարում են, և չեն ելնում մարտի,  
Վիրավորում են նույնիսկ՝ չեն զգում:

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

### 2. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցն է գործածվել:

Կամելով գնալ ավելի ուժգին՝ թաղվեցի սաստիկ,  
Անչափին միտված՝ իմին չհասա,  
Բարձրագույններին ձգտելով անդուլ՝  
Նախկին տեղից էլ գահավիժեցի,  
Երկնային ուղուց անդունդներ ընկա,  
Որքան ավելի շատ զգուշացա,  
Այնքան ավելի վնաս կրեցի....

- 1) անձնավորում
- 2) համեմատություն
- 3) բաղաձայնույթ
- 4) հակադրություն

### 3. Պատկերավորման արտահայտչական ո՞ր միջոցն է գործածվել:

Ողջ գյուղը կանգնեց պարըսպի նման,  
Ջոկվեց, բաժանվեց երկու բանակի,  
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,  
Կանգնեց թիկունքին տրդերանց մեկի:

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

### 4. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չ/ի գործածվել:

Անապատում, միրաժի մեջ մի բեղվին  
Շողքն է տեսել մի աղջրկա գեղեցիկ  
Եվ փնտրում է հոգեսլա՛ց, տենչագին  
Ծով–կարոտով ա՛յն աղջկան գեղեցիկ:

- 1) մակդիր
- 2) շրջադասություն
- 3) հանգավորում
- 4) անձնավորում

**5. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չ/ի գործածվել:**

Աղբյուրն անուշ հեքիաթի պես  
 Իր լույս երգով ժպտում է մեզ.  
 Դու մոտեցար մեղմ, համրաքայլ,  
 Որպես քնքուշ իրիկվա փայլ:

- 1) մակդիր
- 2) անձնավորում
- 3) համեմատություն
- 4) չափազանցություն

**6. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չ/ի գործածվել:**

Յերեկը լռեց... Երկինքը վառեց ոսկե բուրվառներ,  
 Լույսերը քնքուշ գրկեցին անուշ երկինք, ծով ու հող.  
 –Ա՛խ, եթե մեկը իմ հոգին այդ մեղմ լույսերին խառներ  
 Եվ փայփայեր իմ հոգնատանջ սրտի թախիծը մաշող...

- 1) փոխաբերություն
- 2) շրջադասություն
- 3) հանգավորում
- 4) չափազանցություն

**7. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չ/ի գործածվել:**

Եվ ժպտում ես ինձ, ակնարկում քնքուշ  
 Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում,  
 Եվ շշնջում ես և շրշում անուշ,  
 Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում:

- 1) մակդիր
- 2) հանգավորում
- 3) բաղաձայնույթ
- 4) չափազանցություն

**8. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չ/ի գործածվել:**

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,  
 Բա՛րձր, բա՛րձր,– հեռավոր ու մենավոր.  
 Այնտեղ՝ ցածում, դեռ նիրհում եմ դաշտ ու ձոր,  
 Դեռ խավար է այնտեղ դաժան ու լռին:

- 1) մակդիր
- 2) փոխաբերություն
- 3) շրջադասություն
- 4) համեմատություն

**9. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Գոռում են, դողում Թըմկա ձորերը,  
 Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման.  
 Չարկում են, զարկվում դուշման գորքերը,  
 Արյունը հոսում էն Քըռի նման:

- 1) համեմատություն
- 2) չափազանցություն
- 3) մակդիր
- 4) շրջադասություն

**10. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Պտույտ է գալիս ծաղիկ տիրուհին,  
 Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,  
 Հորդորում, խընդրում, որ ուրախ լինին,  
 Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

- 1) մակդիր
- 2) շրջադասություն
- 3) հանգավորում
- 4) համեմատություն

**11. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Երկինքն ու ծովը գրկել են իրար,  
 Մակույկն է սահում, չգիտես թե ուր.  
 Իսկն ու երազը ձուլվել են իսպառ,  
 Ոչինչ չի տենչում իմ հոգին տխուր:

- 1) շրջադասություն
- 2) հանգավորում
- 3) անձնավորում
- 4) չափազանցություն

**12. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Աղբյուրի նման արցունք են ցողում՝  
 Քո ճամփու վրա վարդեր վառելով,  
 Անձնագոհ մոր պես սրտագին դողում՝  
 Քո բախտի համար լուռ արտասվելով:

- 1) համեմատություն
- 2) փոխաբերություն
- 3) հանգավորում
- 4) հակադրություն

**13. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Եվ պիտի ծեծեն կուրծքս քարերին,  
 Եվ պիտի հեծեն ցնորքս անբիծ,  
 Եվ պիտի գտնեն սերը երկնային,  
 Որ հոգիս այրե և մաքրե նորից...

- 1) շրջադասություն
- 2) փոխաբերություն
- 3) մակդիր
- 4) համեմատություն

**14. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Ես շա՛տ եմ լացել սուրբ սիրո համար,  
 Եվ ես լավ գիտեմ գինը ամենքի.–  
 Սերն է անկումը մեր աստվածության,  
 Շրջմոլիկ հուրը կրքերի ճահճի:

- 1) մակդիր
- 2) շրջադասություն
- 3) հանգավորում
- 4) չափազանցություն

**15. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Լա՛վ օրերս գնացին,  
 Ափսո՛ս ասին, գնացի՛ն.  
 –Էս ի՞նչ զուլում աշխարհ է,  
 Սև դարդերս մնացին...

- 1) անձնավորում
- 2) մակդիր
- 3) հանգավորում
- 4) համեմատություն

**16. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մո՛տ ես,  
 Մորմոքող հրի՛ պես մեր հիվանդ արյան,  
 Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,  
 Օ՛, հեռու ընկեր իմ, օ՛, Վահան Տերյան...

- 1) շրջադասություն
- 2) չափազանցություն
- 3) համեմատություն
- 4) մակդիր

**17. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Մի փոքրիկ ցայտաղբյուր զովաշուրթ  
Իզուր է կանչում՝ ե՛կ ինձ մոտ,  
Ասֆալտին տրորված մի ծաղիկ  
Մեռնում է ձորերի կարոտից...

- 1) մակդիր
- 2) անձնավորում
- 3) չափազանցություն
- 4) շրջադասություն

**18. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Ձյունը լալիս է, ձմեռն է մեռնում,  
Ձյան եկած ճամփով զվարթ ու անվիշտ  
Գարունը գալիս, աշխարհն է բռնում...

- 1) անձնավորում
- 2) շրջադասություն
- 3) փոխաբերություն
- 4) համեմատություն

**19. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Հառաչում է ճերմակ քամին՝  
Աչքն անհայտին հառած,  
Իմ ծերության ճերմակ երգը  
Բերանացի արած:

- 1) անձնավորում
- 2) հանգավորում
- 3) մակդիր
- 4) համեմատություն

**20. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Յուրտ հեռուներում, անլռելի  
Կրկեսների մեջ, սրտով մոլոր,  
Երգում էի քո սիրելի  
Եվ մեղմ երգերը, որպես օրոր:

- 1) հանգավորում
- 2) մակդիր
- 3) համեմատություն
- 4) չափազանցություն

**21. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Անճառելի վայելչությամբ  
Իջավ տխուր իրիկուն,  
Արևմուտքում մի ոսկի ամպ  
Յնորում է ու խոկում:

- 1) անձնավորում
- 2) մակդիր
- 3) չափազանցություն
- 4) հանգավորում

**22. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Երանի՜ նրանց, որ մութ բանտերում  
Եվ չարչարանքում դժնի որպես մահ,  
Մաշեցին այնքան օրեր հրահրուն,  
Գերված թշնամուց անսիրտ ու ազահ:

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) անձնավորում
- 4) շրջադասություն

**23. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Նստած դաշտում Արարատյան,  
Մեջքը հենած Արագածին,  
Ականատես և ունկնդիր  
Աշխարհների անցուդարձին,  
Կռելով բախտն ու ապագան  
Թե՛ժ բովերում գործարանի,  
Բորբորում է օջախն իր հին,  
Ծխում է ծուխն իր ծիրանի,  
Վառած աստղերն իր նոր փառքի՝  
Ամենավեհ փառքերի մեջ,–  
Այսպիսին է Հայաստանը  
Մեր նորօրյա երգերի մեջ:

- 1) անձնավորում
- 2) շրջադասություն
- 3) համեմատություն
- 4) մակդիր

**24. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ  
Աշխարհքի վրա, Ջավախքի վրրա,  
Ավերակ բերդին, սև ամպի նման,  
Ծուխն ու թշնամին չոքել են ահա:

- 1) փոխաբերություն
- 2) մակդիր
- 3) շրջադասություն
- 4) չափազանցություն



**25. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՞նչ կա որ,  
 Ես եղել եմ, կա՛մ, կըլինեմ հար ու հավետ, ի՞նչ կա որ,  
 Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,  
 Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ:

- 1) հանգավորում
- 2) շրջադասություն
- 3) փոխաբերություն
- 4) համեմատություն

**26. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Հետզհետե մթնում էր երեկոն,  
 Ամեհի գոռում էր ծովը.  
 Եվ ես, ափին նստած, դիտում էի  
 Սպիտակ պարը ալիքների.  
 Իմ կուրծքն ուռչում էր ծովի նման,  
 Ու ես զգացի քո կարոտն անհուն:

- 1) շրջադասություն
- 2) համեմատություն
- 3) անձնավորում
- 4) հանգավորում

**27. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Նազում ես ու շորորում գմբուխտե քո շորերում,  
 Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի,  
 Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,  
 Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:

- 1) հանգավորում
- 2) մակդիր
- 3) անձնավորում
- 4) չափազանցություն

**28. Պատկերավորման–արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Երկի՛ր Նաիրի, երազ հեռավոր,  
 Քնած ես քնքուշ թագուհու նըման.  
 Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
 Եվ արքայական դնեմ գերեզման.  
 Եվ մի՞թե, մի՞թե սիրտըս ավերված  
 Ավերակներիդ լոկ պիտի պարզեմ,  
 Քո տեղ փայփայեմ ստվերդ մեռած,  
 Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը լսեմ...

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) բաղաձայնությ
- 4) շրջադասություն

**29. Ո՞ր հատվածում չափազանցություն չկա:**

- 1) Շանթն է բեկվում ճակտիս վրա,  
Մահ չգիտեմ կա թե չկա,  
Ելնում եմ ես ահերն ի վեր,  
Ելնում եմ ես մահերն ի վեր...
- 2) Գնում էր Աստաֆյան փողոցով,  
Աչքերը հառել էր հեռուն:  
Վառվում էր արև մի բոսոր  
Պողոսի խոնավ աչքերում:
- 3) Բարձրանամ կապույտ գահը լեռների,  
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,  
Հագնեմ ծիրանին արշալույսների...
- 4) Ինչի՞ց է, որ Հայաստանում  
Ջրերը չեն հանգստանում,  
Այլ քարեքար ընկած այսպես,  
Հնուց ի վեր, գժվածի պես,  
Շառաչում են կիրճերն ի վար...

**30. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Գետից այն կողմը ճանապարհը բարձրանում է ջրադացների կողքով: Այստեղ դեռևս հին Կյորեսի հետքերն են... Ահա կանաչ ընկուզենու տակ ննջում է այրոտ ջրադացպանը... Ճանապարհին ընկած է մի կոտրած նալ, այստեղ-այնտեղ թափված են խուրձերից վայր ընկած հասկեր:*

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) վարչական
- 4) հրապարակախոսական

**31. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Գրական ստեղծագործության մեջ պատկերված դեպքերի, գործողությունների, մարդկային հարաբերությունների ամբողջությունը կոչվում է սյուժե: Մակայն ոչ բոլոր երկերն ունեն սյուժե: Որոշ երկերում կերպարը բնութագրվում է ոչ թե դեպքերի շղթայի մեջ, այլ ուրիշ եղանակներով: Այսպիսի բնույթ ունեն քնարական բանաստեղծությունները:*

- 1) գեղարվեստական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

**32. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Անանդան՝ խուլ ու կույր, համր ու անշարժ ընկած էր լեռնագագաթին և խորհում էր իր հոգու մեջ: Եվ շուրջանակի հազարաբերան մռնչում էին հողմերը, և կայծակները՝ շանթում ժայռերը, բայց Անանդան ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում:  
Նա իր հոգու խորքում գոհ էր, որ մահը հեռացավ իրենից գոնե մի դար ևս:*

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) վարչական
- 4) հրապարակախոսական

**33. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Եվ դրա համար ցավում եմ, որ Դուք «անտեղի» եք համարում իմ հանդես գալը, այսինքն՝ իմ՝ ազատ կարծիք ունենալն ու այն արտահայտելը: Ցավում եմ մանավանդ նրա համար, որ Դուք այդպիսով հարում եք նրանց, որոնք կուզեին Հայաստանում ջնջել ամեն ազատ, անկախ միտք ու կարծիք, բացի իրենց մտքից ու կարծիքից, մինչդեռ Դուք ասում եք, որ «հայ ինտելիգենցիայի ամենաներիտասարդ ներկայացուցչական մարմինն եք» կազմում:*

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) վարչական
- 4) հրապարակախոսական

**34. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

*Գրական երկերի դասակարգման հարցով զբաղվել են դեռևս անտիկ աշխարհում: Արիստոտելն իր «Պոետիկայում» արդեն խմբավորում է դրանք որոշակի սկզբունքով: Մասնավորապես, նրա գրքում մենք գտնում ենք գրական բազմազան ստեղծագործությունների բաժանումը երեք մեծ խմբի՝ էպոս, լիրիկա և դրամա:*

- 1) գիտական
- 2) առօրյա-խոսակցական
- 3) վարչական
- 4) հրապարակախոսական

## ԲԱԺԻՆ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նշվածներից ո՞րը հայ հին և միջնադարյան բանահյուսության ժանրերից չէ:

- 1) էպոս
- 2) առակ
- 3) առասպել
- 4) շարական

2. Նշված անձանցից որի՞ անունը հայ գրերի գյուտի հետ չի կապվում:

- 1) Եզնիկ Կողբացու
- 2) Վռամշապուհի
- 3) Դանիել եպիսկոպոսի
- 4) Հռոփանոսի

3. Նշված վիպերգերից յուրաքանչյուրն արտացոլում է հայ ժողովրդի մղած պայքարը որևէ օտար նվաճողի դեմ. պատասխանների ո՞ր տարբերակն է ճիշտ:

- |                            |                   |
|----------------------------|-------------------|
| ա. «Հայկ և Բել»            | 1. ասորեստանցիներ |
| բ. «Արտաշես և Արտավազդ»    | 2. բաբելացիներ    |
| գ. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» | 3. մարեր          |
| դ. «Տիգրան և Աժդահակ»      | 4. պաններ         |

- 1) ա – 2, բ – 4, գ – 1, դ – 3
- 2) ա – 1, բ – 4, գ – 2, դ – 3
- 3) ա – 2, բ – 1, գ – 3, դ – 4
- 4) ա – 1, բ – 3, գ – 4, դ – 2

4. Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:

*Եւ ..... վազէր խարտեաշ պատանեկիկ...*

- 1) ի ծովուն
- 2) ի բոցոյն
- 3) ի հրոյն
- 4) ընդ եղեգան փող

5. Ո՞ր հերոսի խոսքերն են:

*Մինչ դու գնացեր  
Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,  
Ես անբակացս ո՞ւմ թագաւորեմ:*

- 1) Տիգրանի («Տիգրան և Աժդահակ»)
- 2) Հայկի («Հայկ և Բել»)
- 3) Արտավազդի («Արտաշես և Արտավազդ»)
- 4) Արա Գեղեցիկի («Արա Գեղեցիկ և Շամիրամ»)

**6. Ո՞ր բառն է բաց թողած:**

*Ե՛կ, հաւանեա՛ց բանից աշագեղոյ դստերս.....՝  
Տալ զպատանիդ:*

- 1) Արեաց
- 2) Ալանաց
- 3) Մարաց
- 4) Քուշանաց

**7. 5–րդ դարի հայ պատմիչների երկերը համարվում են նաև գրական հուշարձաններ, որովհետև պատմիչները՝**

- 1) աշխատել են հնարավորինս հավատարիմ մնալ նկարագրվող իրադարձությունների ժամանակագրությանը,
- 2) ստեղծել են նաև գեղարվեստական պատկերներ ու կերպարներ,
- 3) ներկայացրել են ոչ թե հնարովի, այլ իրական կերպարներ,
- 4) իրենց աշխատություններում ներառել են փաստագրական վիթխարի նյութ:

**8. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված պատմիչները և նրանց երկերում արտացոլված ժամանակաշրջանները:**

- |                    |  |
|--------------------|--|
| ա. Փավստոս Բուզանդ | 1. 3–րդ դարի վերջից 4–րդ դարի սկիզբը                 |
| բ. Ագաթանգեղոս     | 2. 4–րդ դարի վերջից 5–րդ դարավերջը                   |
| գ. Ղազար Փարպեցի   | 3. 4–րդ դարի 30–80–ական թվականները                   |
| դ. Մովսես Խորենացի | 4. հայ ժողովրդի ծագումից մինչև 5–րդ դարի առաջին կեսը |

- 1) ա–1, բ–2, գ–3, դ–4
- 2) ա–2, բ–1, գ–4, դ–3
- 3) ա–3, բ–1, գ–2, դ–4
- 4) ա–1, բ–3, գ–2, դ–4

**9. Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ «Դանիելյան նշանագրերի մասին» և «Մեսրոպյան նշանագրերի մասին, որ տրվեցին երկնային շնորհով» հատվածներին վերաբերող պնդումներից քանիստ՞նքում սխալ կա:**

- ա. Եպիսկոպոսները Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին հորդորում էին հոգ տանել հայոց գրերի գյուտի մասին:
- բ. Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, ուսումնասիրելով դանիելյան նշանագրերը, որոնք դասավորված էին ասորերենի օրինակով, համոզվեցին, որ դրանք «վանկ առ վանկ» ճիշտ չեն արտահայտում հայերեն բառերի հնչյունները:
- գ. Մեսրոպ Մաշտոցը հայերեն նշանագրերը ստեղծելիս ապավինում է ադոքսիին, և «ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ» նրան է պատկերանում մի այ ձեռք՝ քարի վրա գրեր գծող:
- դ. Մեսրոպ Մաշտոցը հույն գրչագրող Հռոփանոսի հետ վերջնական տեսքի է բերում տառերի զծագրերը՝ համապատասխանեցնելով լատիներենի հնչյուններին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**10. Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ հայ ժողովրդի անցած ուղուն և ապագային վերաբերող պնդումներից ո՞րն է սխալ:**

- 1) Ներկայացնում է հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական էջերը:
- 2) Ձևավորում է ազգային ինքնագիտակցություն և սեր հայրենիքի հանդեպ:
- 3) Յույց է տալիս հայ ժողովրդի և նրա մշակույթի զարգացման ուղիները:
- 4) Ներկայացնում է պատմության մեջ հայ ժողովրդի անթերի և բացառիկ դերը:

**11. Ո՞ր հեղինակի որ գործից է բերված հատվածը:**

*«... Նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր գրերի հանգամանքները նրա մտքում հավաքվեցին, ինչպես մի ամանում»:*

- 1) Կորյուն, «Վարք Մաշտոցի»
- 2) Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության»
- 3) Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»
- 4) Դևադար Փարպեցի, «Հայոց պատմություն»

**12. Ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ վիպական ո՞ր հերոսի մասին է տրված հատվածը:**

*«Եվ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքը և խոհականությունը, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինելու: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ ղնողներ և հարկապահանջներ...»:*

- 1) Տիգրանի
- 2) Հայկի
- 3) Արտաշեսի
- 4) Արա Գեղեցիկի

**13. Ո՞ւմ պատվերով է Դևադար Փարպեցին գրել իր «Հայոց պատմությունը»:**

- 1) Սմբատ Բագրատունու
- 2) Սահակ Բագրատունու
- 3) Վահան Մամիկոնյանի
- 4) Վարդան Մամիկոնյանի

**14. Նշված հեղինակներից ո՞վ հայ միջնադարյան գրականության ներկայացուցիչ չէ:**

- 1) Գրիգոր Նարեկացի
- 2) Միքայել Նալբանդյանը
- 3) Սայաթ-Նովան
- 4) Ֆրիկը

**15. Հեղինակներից ո՞րը որ բնագավառն է ներկայացնում:**

- |                    |                     |
|--------------------|---------------------|
| ա. Մովսես Խորենացի | 1. բանաստեղծություն |
| բ. Ֆրիկ            | 2. պատմագրություն   |
| գ. Վարդան Այգեկցի  | 3. վարքագրություն   |
| դ. Կորյուն         | 4. առակագրություն   |

- 1) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 2) ա-2, բ-1, գ-4, դ-3
- 3) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 4) ա-1, բ-2, գ-4, դ-3

**16. Նշվածներից ո՞վ է «Մասնա ծռեր» էպոսի տարբերակներից մեկը գրի առել և հրատարակել 1889 թվականին «Դավիթ ու Մհեր» վերնագրով:**

- 1) Մանուկ Աբեղյանը
- 2) Գևորգ Ախվերդյանը
- 3) Գարեգին Սրվանձտյանցը
- 4) Հրաչյա Աճառյանը

**17. Ո՞ր թվականին «Մասնա ծռեր» էպոսի ստեղծման 1000-ամյակի կապակցությամբ կազմվեց համահավաք բնագիրը՝ «Մասունցի Դավիթ» վերնագրով:**

- 1) 1908
- 2) 1912
- 3) 1939
- 4) 1945

**18. «Մասնա ծռեր» էպոսում Մհերի մահվանից հետո «յոթ դռների ետև» փակված Դեղձուն-Ծամը սգահան է լինում, երբ՝**

- 1) լրանում է որդու՝ Մեծ Մհերի մահվան քսանհինգ տարին:
- 2) Դավիթը Մսրա Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ սասունցիների «մնացե՛ք բարով»-ներ է ասում:
- 3) Դավիթը մենամարտում սպանում է Մսրա Մելիքին:
- 4) Վերջին արաբը հալածվում է հայրենի երկրի սահմաններից:

**19. Գաղափարական ո՞ր գիծը «Մասնա ծռեր» էպոսին բնորոշ չէ:**

- 1) ժողովրդի իղձերի ու ձգտումների արտահայտումը
- 2) հայրենասիրության և մարդասիրության դասերը
- 3) հայ ժողովրդի՝ իբրև բացառիկ ազգի գովերգումը
- 4) ժողովրդին հույս և լավատեսություն քարոզելը

**20. Աջ կողմում նշվածներից ո՞ր սխրանքը Մասնա ծռերից որին է վերագրվում:**

- |              |                                       |
|--------------|---------------------------------------|
| ա. Մանասար   | 1. Միայնակ կոտորում է Խոլբաշու զորքը: |
| բ. Մեծ Մհեր  | 2. Գրավում է Պղնձե քաղաքը:            |
| գ. Դավիթ     | 3. Սպանում է Սպիտակ Դևին:             |
| դ. Փոքր Մհեր | 4. Հաղթում է թշնամի յոթ թագավորներին: |

- 1) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 2) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 3) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 4) ա-4, բ-1, գ-2, դ-3

**21. «Մասնա ծռեր» էպոսում ո՞ւմ հետ է ամուսնանում Բաղդասարը, և ո՞րն է նրա վերջին հանգրվանը:**

- 1) Ամուսնանում է Դեղձուն–Ծամի քրոջ հետ և գնում է Բաղդադ:
- 2) Սպիտակ Դևից փրկում է Արմաղանին և ամուսնանալով հետը՝ գնում է Պղնձե քաղաք:
- 3) Ամուսնանում է Խալիֆայի զարմուհիներից մեկի հետ և մնում Բաղդադում:
- 4) Գնում է Գյուրջիստան, հավանում տեղի թագավորի աղջկան, կռվում քառասուն փահլևանների դեմ և նրանց հաղթելով՝ արժանանում արքայադստերն ու Գյուրջիստանի գահին:

**22. Մասնա ծռերից ո՞վ է հրաժեշտի հետևյալ խոսքերն ասում ժողովրդին:**

*Օ՛, քուրե՛ր, դուք կացե՛ք բարով,  
Դուք ինձի քուրությու՛ն եք արե.  
Օ՛, մերե՛ր, դուք կացե՛ք բարով,  
Դուք ինձի մերությու՛ն եք արե:*

- 1) Դավիթը
- 2) Մանասարը
- 3) Մեծ Սիերը
- 4) Փոքր Սիերը

**23. Ի՞նչ վերնագիր է ունեցել «Մասնա ծռեր» էպոսի՝ Գարեգին Սրվանձոյանցի գրի առած առաջին տարբերակը:**

- 1) «Մասունցի Դավիթ»
- 2) «Մասնա ծռեր»
- 3) «Մասունցի Դավիթ կամ Սիերի դուռ»
- 4) «Դավիթ ու Սիեր»

**24. «Մասունցի Դավիթ» էպոսի ո՞ր հերոսին են ծեծում, ատամները շարում ճակատին՝ տեսնելով, որ Մասունցից հարկ տանելու է եկել:**

- 1) Չարբահար Քամուն
- 2) Խոլբաշուն
- 3) Կոզբաղնին
- 4) Խալիֆի վեզիրներին

**25. Պոեմի ո՞ր տեսակին է պատկանում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը:**

- 1) դրամատիկական
- 2) քնարական
- 3) էպիկական
- 4) քնարաէպիկական

**26. Նշվածներից ո՞րը Գրիգոր Նարեկացու տաղերից չէ:**

- 1) «Տաղ Վարդավառի»
- 2) «Մեղեղի ծննդյան»
- 3) «Տաղ անձնական»
- 4) «Տաղ Հարության»



**27. Ո՞րն է միաստիցիզմի էությունը Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ:**

- 1) պայքարը աշխարհի անարդարությունների դեմ
- 2) աստվածային կատարելությանը հասնելու և ձուլվելու ձգտումը
- 3) Աստծու դեմ ընդվզումը
- 4) հնազանդությունը և խոնարհությունը որպես մարդու ինքնադրսևորման կարևորագույն պայման ընդունելը

**28. Ֆրիկի մասին կենսագրական տեղեկություններ մենք ստանում ենք՝**

- 1) 13-րդ դարի հայ պատմիչների երկերից
- 2) Մխիթար Գոշի «Դատաստանագրքից»
- 3) Ֆրիկի բանաստեղծություններից
- 4) միջնադարյան այլ բանաստեղծների երկերից

**29. Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Մխիթար Գոշը ծնվել է Գանձակում 12-րդ դարի առաջին քառորդին:
- 2) Մխիթար Գոշի գիտական նշանավոր աշխատանքը «Դատաստանագիրքն» է:
- 3) Մխիթար Գոշը, ի տարբերություն Վարդան Այգեկցու, իր առակները դասակարգման չի ենթարկել:
- 4) Մխիթար Գոշի առակներում առանցքային են կենտրոնացված միապետության գաղափարը, տիրոջ և հպատակների փոխհարաբերությունների խնդիրը:

**30. Ո՞ր դարի բանաստեղծ է Նահապետ Քուչակը:**

- 1) 10-րդ
- 2) 13-րդ
- 3) 14-րդ
- 4) 16-րդ

**31. Ո՞ր պնդումն է ճիշտ հայրենի կարգի (չափի) վերաբերյալ:**

- 1) Տասնչորսվանկանի ոտանավոր է՝ յոթվանկանի կիսատողերի բաժանումով:
- 2) Տասնհինգվանկանի ոտանավոր է՝ յոթ և ութվանկանի կիսատողերի բաժանումով:
- 3) Տասնհինգվանկանի ոտանավոր է՝ ութ և յոթվանկանի կիսատողերի բաժանումով:
- 4) Քսանվանկանի ոտանավոր է՝ հավասար կիսատողերով:

**32. Նշված բանաստեղծներից ո՞վ է տրված քառատողի հեղինակը:**

*Է՛յ չարիս, ըզվատին տունըն կու ծեփես ոսկով դու բոլոր,  
Չաղէկն ի յերկիր ի վար վըտարես, որ ժողվէ կըտոր.  
Չայն, որ խոզարած չ'վայլէ՝ կու գուգես ահեղ ծիատր,  
Եւ ըզդորդ մարդկանց գտունըն կու քակես առանց բահատր:*

- 1) Նահապետ Քուչակը
- 2) Ֆրիկը
- 3) Գրիգոր Նարեկացին
- 4) Սայաթ-Նովան

**33. Նշվածներից ո՞վ է հայ քնարերգության մեջ սկզբնավորել անձնական բանաստեղծությունը:**

- 1) Սայաթ-Նովան
- 2) Գրիգոր Նարեկացին
- 3) Նահապետ Քուչակը
- 4) Ֆրիկը

**34. Ո՞ր պնդումը ճիշտ չէ՝ Սայաթ–Նովայի ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) Բանաստեղծը դիմել է հայ քնարերգության ավանդներին, ինչպես նաև օգտագործել է արևելյան շռայլ պատկերներ:
- 2) Նա կատարելության է հասցրել կնոջ արտաքին գեղեցկության գովքը:
- 3) Սայաթ–Նովան իր երգերում հաճախ դատապարտել է հասարակության չարիքներն ու արատները, ծառացել սոցիալական անհավասարության դեմ:
- 4) Նրա հայրենասիրական տաղերը նույնքան բարձրարժեք են, որքան սիրային տաղերը:

**35. Սայաթ–Նովայի նշված բանաստեղծություններից քանի՞սն են սիրո երգեր.**

«Դուռն էն գլխեն իմաստուն իս», «Աշխարումս ախ չիմ քաշի», «Թամամ աշխար պտուտ էկա», «Աշխարս մե փանջարա է»:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

**36. Ո՞վ է հետևյալ քառատողի հեղինակը:**

Ուրիշ բլբուլ կգա, կմտնի բաղը,  
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,  
Ինչ որ ե՛ս չեմ ասե, նա՛ կասե վաղը,  
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

- 1) Նահապետ Քուչակը
- 2) Ֆրիկը
- 3) Եղիշե Չարենցը
- 4) Սայաթ–Նովան

**37. Սայաթ–Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Էրեգ լավ էր կանց վուր էսօր,– վաղերումեն բեզարիլ իմ.  
Մարթ համաշա մեկ չի ըլի,– խաղերումեն բեզարիլ իմ:

- 1) «Դուռն էն գլխեն իմաստուն իս»
- 2) «Աշխարումս ախ չիմ քաշի»
- 3) «Աշխարս մե փանջարա է»
- 4) «Թամամ աշխար պտուտ էկա»

**38. Ո՞ր շարքի բոլոր գրողներն են ստեղծագործել 19–րդ դարում:**

- 1) Սայաթ–Նովա, Խ. Աբովյան, Բաֆֆի
- 2) Հ. Պարոնյան, Մ. Նալբանդյան, Պ. Դուրյան
- 3) Մուրացյան, Ալ. Շիրվանզադե, Ակ. Բակունց
- 4) Հովհ. Թումանյան, Նար–Դոս, Գ. Մահարի

**39. Խաչատուր Աբովյանի կենդանության օրոք նրա երկերից ո՞րն է տպագրվել:**

- 1) «Պարապ վախտի խաղալիք»
- 2) «Վերք Հայաստանի»
- 3) «Առաջին սերը»
- 4) «Նախաշավիղ կրթության»

**40. Նշված հարցադրումներից ո՞րը չկա Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում»:**

- 1) նկարագրել ժողովրդի կյանքն ու նվիրական զգացմունքները՝ սերը, բարեկամությունը, ծնողասիրությունը
- 2) ներկայացնել կրոնի երկրորդական դերը հայ ժողովրդի գոյության հարցում
- 3) կենդանություն տալ անձնագրի հայրորդիների գործերին
- 4) արթնացնել հայոց ազգային արժանապատվության զգացումը

**41. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանի» վերաբերյալ:**

- 1) Աբովյանը խոսում է աշխարհաբարով գրելու անհրաժեշտության մասին:
- 2) Աբովյանը համաձայն է այն կարծիքին, որ մեր ազգը ուսումնասեր չէ, և կարդալը նրա համար արժեք չունի:
- 3) Աբովյանը բարձր է գնահատում գրաբարը՝ իբրև կատարյալ և անթերի լեզու:
- 4) Աբովյանը խոսում է ժողովրդին հոգեհարազատ թեմաներով գրելու անհրաժեշտության մասին:

**42. Ո՞ր ժամանակաշրջանն է ներկայացվում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում:**

- 1) 1826–28 թթ. ռուս–պարսկական պատերազմի
- 2) 1828–29 թթ. ռուս–թուրքական պատերազմի
- 3) 1877–78 թթ. ռուս–թուրքական պատերազմի
- 4) 1853–56 թթ. Ղրիմի պատերազմի

**43. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի երրորդ գլխում սարդարը ինչպե՞ս է ընդունում գերված քանաքեռցիներին չսպանելու խնդրանքով իր մոտ գնացած Մահակ աղային և Սվանդուկի խանին:**

- 1) սառն արհամարհանքով
- 2) նրանց անմիջապես կալանավորել է տալիս
- 3) գոռգոռալով վռնդում է
- 4) հարգում է նրանց խնդրանքը՝ բավարարվելով գերյալներից բանտ նետելով

**44. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի երրորդ գլխում ո՞վ է երկու մամակ բերում Լոռիում գտնվող Աղասուն:**

- 1) Գրիգոր եպիսկոպոսը
- 2) Հոհանջանը
- 3) գեներալ Մադաթովը
- 4) հորեղբայր Ավետիքը

**45. Ո՞վ է հետևյալ տողերի հեղինակը.**

*«Ո՛չ ասորիք, ո՛չ պարսիկք, ո՛չ մակեդոնացիք, ո՛չ հռովմայեցիք, ո՛չ պարթևք, ո՛չ մոնգոլք, ո՛չ օսմանցիք չէին կարող էն գորությունն ստանալ, եթե հայոց ազգը մեկի դեհը չէ՛ր պահել»:*

- 1) Բա.Ֆ.Ֆին
- 2) Մ. Նալբանդյանը
- 3) Խ. Աբովյանը
- 4) Հովհ. Թումանյանը

46. Ո՞ր գրողն է հնդկահայ մեծահարուստ Մասեհ Բարաջանյանի՝ նորնախիջևանցիներին թողած կտակի առիթով մեկնել Հնդկաստան:

- 1) Բաֆֆին
- 2) Հովհաննես Թումանյանը
- 3) Միքայել Նալբանդյանը
- 4) Վահան Տերյանը

47. Ո՞ր շարքում են միայն Միքայել Նալբանդյանի երկերը:

- 1) «Ազատություն», «Երկու տող», «Մանկության օրեր», «Ասպետի սերը»
- 2) «Ազատություն», «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Մանկության օրեր», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»
- 3) «Իտալացի աղջկա երգը», «Մանկության օրեր», «Ապոլլոնին», «Վազող ջրին»
- 4) «Ոսկեհանդերձ եկար», «Ազատություն», «Երկու տող», «Մանկության օրեր»

48. Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունն է ավարտվում «Նա այլ չէ լսում դելֆյան հարցուկին» տողով:

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Մանկության օրեր»
- 4) «Իտալացի աղջկա երգը»

49. Կ. Պոլսի ո՞ր թաղամասում է ծնվել Պետրոս Դուրյանը:

- 1) Բերայում
- 2) Սկյուտարում
- 3) Միջագյուղում
- 4) Սամաթիայում

50. Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունն է ավարտվում «Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...» տողով:

- 1) «Միրել»
- 2) «Տրտունջք»
- 3) «Իմ ցավը»
- 4) «Լճակ»

51. Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

Աստղ մ՛ալ ես կ՛երթամ հավելուլ երկնից,  
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ  
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,  
Որք թըռին այրել ճակատն երկնքին...

- 1) «Լճակ»
- 2) «Միրել»
- 3) «Տրտունջք»
- 4) «Իմ ցավը»

52. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Հակոբ Պարոնյանի ստեղծագործության վերաբերյալ:

- 1) Պարոնյանը երգիծանքի նյութ է դարձրել իր ժամանակի գրեթե բոլոր նշանակալից երևույթները:
- 2) Պարոնյանը գրել է հիմնականում կատակերգություններ:
- 3) Երգիծաբանը ծաղրել է հասարակության բարոյական անկումը:
- 4) Պարոնյանի ծաղրի առարկա է դարձել նաև թուրքական պետությունը:

53. Հակոբ Պարոնյանը, «Մեծապատիվ մուրացկանները» վեպում երգիծելով ռոմանտիկներին, հայ ո՞ր գրողին է անվանում «Մանուկենց»:

- 1) Բաֆֆուն
- 2) Մուրացանին
- 3) Ծերենցին
- 4) Պետրոս Դուրյանին

54. Հակոբ Պարոնյանը նշված ժանրերից որո՞վ չ/ի ստեղծագործել:

- 1) բանաստեղծություն
- 2) կատակերգություն
- 3) նորավեպ
- 4) ակնարկ

55. Տրված հատվածներից որո՞վ է ավարտվում Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպը:

- 1) «Այսպես ուրեմն, կարգվելու նպատակով Պոլիս եկողն աղջիկ մ' իսկ տեսնելու ժամանակ չունեցավ և, ինչպես կըսեն, **քուրդ ու քապուճ** փախավ մայրաքաղաքես»:
- 2) «Մենք կը հրատարակենք սույն գործն՝ ոչ այնքան մեղադրելու նպատակով ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն, որքան ներկայացնելու համար ապագա սերնդյան՝ ժամանակիս գրական մարդոց ողբալի կացությունն և գրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը»:
- 3) «Մեծատուններն ալ կը հիշեն Աբխտղոմ աղան, երբ գրական մարդ մը անոնց մեկենասությունը խնդրե: – Աբխտղոմ աղա չենք մենք, – կըսեն»:
- 4) «Երբ երկու–երեք հեղինակք մեկտեղին, «**Ինտոր** փախուցինք սա Աբխտղոմ աղան» կըսեն ու կը խնդան քիչ մը: Իսկ երբ դրամական տագնապի մեջ գտնվին, «Աստված, Աբխտղոմ աղա մը որկե մեզի» կըսեն և իրենց մտքով ալ կը հավելուն. «Խնդրեցեք զԱբխտղոմ աղան, և ամենայն ինչ հավելցի ձեզ»:

56. Բաֆֆին նշված ժանրերից որո՞վ չ/ի ստեղծագործել:

- 1) բանաստեղծություն
- 2) դրամա
- 3) վեպ
- 4) պատմվածք

57. Նշվածներից ո՞րը Բաֆֆու՝ ազգային–ազատագրական պայքարին նվիրված վեպերից չէ:

- 1) «Խենթը»
- 2) «Կայծեր»
- 3) «Ջալալեդդին»
- 4) «Ոսկի աքաղաղ»

58. Բաֆֆին «Սամվել» պատմավեպի կառուցվածքային ո՞ր հատվածում է դժգոհում հայոց պատմության մեջ ժողովրդի «մի նշանավոր տարրի»՝ կնոջ մոռացված լինելուց:

- 1) «Հառաջաբան»
- 2) «Համազասպուհի»
- 3) «Մայրը»
- 4) «Փակագծի մեջ»

59. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում Տաճատուհին ո՞ւմ էր փորձում ընթրիքի ժամանակ թունավորել, ինչը խափանվում է Մամվելի շնորհիվ:

- 1) Սահակ Պարթևին
- 2) Մուշեղ Մամիկոնյանին
- 3) Մեսրոպ Մաշտոցին
- 4) Որմիգրուխտին

60. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում ի՞նչ ճակատագրի է արժանանում Համազասպուհին:

- 1) Գերվում է Շապուհի կողմից և տարվում Պարսկաստան:
- 2) Դաժանաբար սպանվում է Վահան Մամիկոնյանի հրամանով:
- 3) Արտագերս ամրոցի գետնուղիներով կարողանում է փախչել գերությունից:
- 4) Նետահարվում է Մերուժան Արծրունու կողմից, երբ ամրոցի փոքրաթիվ պաշտպանների հետ անձնվիրաբար կռվում էր պարիսպների մոտ:

61. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի «Երեք երիտասարդ ուժեր» գլխում նշված հերոսներից ո՞րը հանդես չի գալիս:

- 1) Մուշեղ Մամիկոնյանը
- 2) Սահակ Պարթևը
- 3) Մեսրոպ Մաշտոցը
- 4) Մամվելը

62. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում Արտագերս ամրոցի անկման նախընթաց գիշերը Որմիգրուխտի երգած հին արիական ընդարձակ երգն ի՞նչ խոհեր է ծնում հայոց թագուհու հոգում:

- 1) Երգում հիշատակված յոթ հսկաների գեղանի քույրը հավերժ կանացի հմայքներով մման էր իրեն՝ հայոց թագուհուն:
- 2) Ինչպես երգի մեջ նկարագրված դիակառույց արյունոտ բերդը, այնպես էլ Արտագերս ամրոցը ներկայացնում էր հազարավոր զոհերի մի հսկայական գերեզման:
- 3) Անցյալի երջանիկ օրերի հիշողությունն էլ ավելի է խորացնում թագուհու ցավը:
- 4) Հայոց թագուհու համար ևս ժամանակին իրար դեմ էին ելել քաջագունները:

63. Նշվածներից ո՞վ Բաֆֆու «Մամվել» պատմավեպի հերոսուհիներից չէ:

- 1) Վահանդուխտը
- 2) Աշխենը
- 3) Փառանձեմը
- 4) Մամիկոնյաց Մեծ տիկինը

64. Բաֆֆու «Մամվել» պատմավեպում ո՞ւմ մատնությամբ է Մերուժան Արծրունին անարգել գրավում Արտագերս ամրոցը:

- 1) Տաճատուհու
- 2) Որմիգրուխտի
- 3) Հայր մարդպետի
- 4) Փառանձեմ թագուհու երկու նաժիշտների

65. Ի՞նչ է Հայր մարդպետի անունը Բաֆֆու «Մամվել» պատմավեպում:

- 1) Դերենիկ
- 2) Դղակ
- 3) Դրաստամատ
- 4) Դանիել

**66. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի տրված հատվածում ո՞ւմ խոհերն են ներկայացված:**

«Ապերախտ Բյուզանդիոն, քո վարմունքը աններելի կմնա իմ սրտում... Դու վատությամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծառայությունները... Քանի՛, քանի՛ անգամ մենք հեռացրինք քո զլխից պարսկական տակալի սուրը... քանի՛, քանի՛ անգամ ազատեցինք քեզ ամոթալի անկումից... Իմ հայրենիքը մի անխորտակելի վահանի պես միշտ պատասպարեց քեզ արևելյան խուժադուժների արշավանքներից... իմ հայրենիքը կրեց բարբարոսների հարվածները և քեզ ողջ պահեց... Ի՞նչն էր ստիպում մեզ անել այդ:– Քրիստոնեական եղբայրությունը: Մենք թողեցինք հեթանոս պարսկին և քո ձեռքը բռնեցինք: Իսկ դու միշտ դավաճանեցիր մեզ... Ես իմ ընդդիմադրության համար դատապարտվեցա և արստրվեցա... Բայց Նախախնամության աջը երկար չի թողնի արստրյալին այստեղ... Երբ նա ոտք կդնե հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, նենգավոր Բյուզանդիոն...»:

- 1) Մահակ Պարթևի
- 2) Վասակ Մամիկոնյանի
- 3) Ներսես Մեծի
- 4) Արշակ Երկրորդի

**67. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի տրված հատվածը ո՞ր հերոսին է վերաբերում:**

«Նա չդիպավ աղքատիկ ճաշին, որ բերել էին նրա համար, միայն վեր առեց խեցեղեն ամանը, խմեց ջուրը՝ փոքր-ինչ գովացնելու սրտի տապը: Հետո անցավ, ընկողմանեց յուր հարդյա անկողնի մեջ:

Նա դարձյալ շարունակեց նայել անշարժ արձանի վրա: Թավամազ դեմքը արտահայտում էր և՛ զայրույթ, և՛ ապաշավանք: Չայրո՛ւյթ, որ այդպես տմարդի վարվեցավ յուր հետ Արյաց արքան: Ապաշավանք, որ ինքը հարթեց յուր կործանման ճանապարհը: Խիղճը հանգիստ չէր: Ամեն անգամ, որ վերջին միտքը ծագում էր նրա մեջ, նա ամբողջ մարմնով դողում էր...»:

- 1) Ներսես Մեծին
- 2) Արշակ Երկրորդին
- 3) Մամվելին
- 4) Վասակ Մամիկոնյանին

**68. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի տրված հատվածում ո՞վ է այցելում Համազասպուհուն:**

«– Ողջո՛ւյն, սիրելի՛ Համազասպուհի,– ասաց նա՝ մոտենալով տիկնոջը:– Ես կարծում էի, որ դու քնած կլինես, երևի դրսի աղմուկը անհանգստացրեց քեզ:

– Այդ ի՞նչ աղմուկ է, – հարցրեց տիկինը խռովյալ ձայնով:

– Յնծությա՛ն աղմուկ, սիրելի՛ Համազասպուհի: Այդ դեռ հարսանիքի առաջին գիշերն է, քո հարսանիքի, սիրելի՛ Համազասպուհի: Տեսնո՞ւմ ես՝ ինչպե՛ս գեղեցիկ լուսավորված է քաղաքը: Ո՛չ, դու չես տեսնում, ես այս բուպեիս քեզ ցույց կտամ...

Նա մոտեցավ, բաց արեց տիկնոջ ոտքի շղթան, բռնեց նրա ձեռքից և տարավ, կանգնեցրեց պատուհանի մոտ՝ ասելով.

– Նայի՛ր...

Կարծես դժոխքը յուր բոլոր զարհուրանքով բացվեցավ թշվառ տիկնոջ աչքերի առջև»:

- 1) Մերուժան Արծրունին
- 2) Վահան Մամիկոնյանը
- 3) Գարեգինը
- 4) Մուշեղ Մամիկոնյանը

**69. Ո՞ր զլխով է ավարտվում Բաֆֆու «Մամվել» պատմավեպը:**

- 1) «Արաքսի որոգայթները»
- 2) «Ողական ամբողջը»
- 3) «Մայրը»
- 4) «Խայթ»

70. Ի՞նչ երկու չարիքների մասին է խոսվում Բաֆֆու «Մամվել» պատմավեպի «Երկու չարյաց փոքրագույնը» գլխում:

- 1) դավանափոխության և պետականության կորստի
- 2) Վահան Մամիկոնյանի և Մերուժան Արծրունու
- 3) Հայր մարդպետի և Մերուժան Արծրունու
- 4) Բյուզանդիայի և Պարսկաստանի վարած քաղաքականության

71. Մամվելը Բաֆֆու համանուն պատմավեպում ինչպե՞ս վարվեց վիրավոր Մերուժան Արծրունու հետ:

- 1) Կարգադրեց խարույկի վրա շիկացնել մի կաթսա և այն դրեց Մերուժանի գլխին՝ իբրև հայոց թագ:
- 2) Անսալով վիրավորի աղերսանքներին՝ սրի մի հարվածով սպանեց նրան:
- 3) Մերուժանի երեսին նետեց արհամարհանքի ու ատելության խոսքեր, խթանեց նժույզն ու սուրաց առաջ:
- 4) Մամվելն իր զինակիցներին կարգադրեց մինչև իր վերադարձը վահաններով պահպանել վիրավորին, իսկ ինքն աճապարեց դեպի հոր շիկակարմիր վրանը:

72. Բաֆֆու «Մամվել» պատմավեպի «Արաքսի որդայթներ» գլխում հոր հետ զրուցելիս Մամվելը հայ վիպերգերի և առասպելների ո՞ր հերոսներին է հիշում.

- 1) Արա Գեղեցիկին և նրա նահատակվելը
- 2) Արտաշեսին և նրա որդուն՝ Արտավազդին
- 3) Տիգրանին և Աժդահակին
- 4) Հայկին և նրա որդիներին

73. Գևորգ Գորդիսյանի «Ծիծեռնակ» բանաստեղծության մեջբերված քառատողում ո՞ր բառն է բաց թողած.

Ասիր, որ չիբացված՝  
 ..... միայնացած,  
 Ես ծաղիկ գեղեցիկ,  
 Հայրենի հողից գրկված:

- 1) Թալկացա
- 2) Թռչնեցա
- 3) Թառամեցա
- 4) Թափառեցա

74. Ռափայել Պատկանյանի «Օրորոցի երգ» բանաստեղծության մեջբերված քառատողում ո՞ր բառն է բաց թողած.

Կաչաղակ, ճարպիկ, գող, արծաթասեր,  
 Շահի գրույցով որդուս քունը բեր,  
 Բայց նա լալիս է, կաչաղակ, մի գալ,  
 Իմ որդին չուզե ..... դառնալ:

- 1) սագանդար
- 2) սովդաքար
- 3) սարկավազ
- 4) ալամդար



75. Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի ո՞ր հերոսն էր երագում տեսել Արտաշես Օթարյանի հանգուցյալ հորը՝ Առաքելին՝ «վիզը ծուռ, ձեռքը ծոցը դրած, դեղնած, մաշված», հետևյալ խոսքերով իրեն դիմելիս. «... դու խոն գիտես, որ մենք եղբայրներ ենք եղել, միասին ենք աշխատել այդ հարստությունը, ինչո՞ւ ես թողնում, որ նա երեխաներիս գրկի մի կտոր հացից»:

- 1) Արիստակես Կարինյանը
- 2) Սաղաթելը
- 3) Երանուհին
- 4) Արտաշեսի մայրը

76. Անդրեաս Էլիզբարյանը Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի այն դրվագում, երբ Սաղաթելի հետ միասին գիշերն արդեն Մարգարիտից գողացել էր նրա մոտ պահվող փաստաթղթերը, փորոցից լավող ինչի՞ ձայնից է անհանգստանում:

- 1) շան հաչոցի
- 2) ոստիկանական սուլիչի
- 3) գինարբուքից տուն դարձող Սուրենի բարձր երգի
- 4) կառապանի՝ ականջ ծակող գոռգոռոցի

77. Ո՞ւմ է հասցեագրված Սուրենի՝ «եռանդուն կոմերսանտ, ճարպիկ սպեկուլյանտ, աստառը շուռ տված ամերիկացի» բնորոշումը Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայում:

- 1) Սաղաթելին
- 2) Անդրեաս Էլիզբարյանին
- 3) Բագրատին
- 4) Աբուլովին

78. Ո՞ւմ է հասցեագրված Սուրենի՝ «գայլի ախորժակից և աղվեսի խորամանկությունից կազմած վինեգրետ» բնորոշումը Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայում:

- 1) Բագրատին
- 2) Սաղաթելին
- 3) Անդրեաս Էլիզբարյանին
- 4) Արտաշես Օթարյանին

**79. Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայից մեջբերված խոսքերից ո՞րը որ հերոսինն է:**

- |   |   |
|---|---|
| <p>ա. «Այո՛, ես էլիզբարյանների խնամքով մեծացած մարդ եմ: Դուք ինը տարի պահել ու պահպանել եք ինձ, մորս ու քույրերիս: Բայց ինչպես – այդ միայն ինձ է հայտնի: ...Դուք ձեր ամեն մի կոպեկի մեջ թույն եք սրսկել և այնպես տվել ինձ...»:</p> <p>բ. «Ես պատրաստ եմ քո վերջին գործակատարի աղախինք դառնալ, պատրաստ եմ դռներդ ընկնել, ողորմություն մուրալ, բայց գող հռչակվել, ո՛չ, այդ չեմ կարող: Նա ազնիվ է, նա ինձ էլ ազնիվ է համարում»:</p> <p>գ. «Բարություն՝ ւն: Բարություն՞նս որն է: Մարդս անասուն է, ցեխի մեջ որ տեսնես, պետք է ոտով խփես, խորը գցես, ոչ թե ձեռից բռնես բարձրացնես»:</p> <p>դ. «Ֆիդր՞ն, հիմա ամեն մի մակերի աղջիկ էլ քսան մանեթանոց գլխարկ է հագնում: Պարիզից է բերել տված, արժե իննսուն ռուբլի»:</p> <p>ե. «Մտածի՛ր, թե ինչ ահագին հարստություն ես ազատել, այն ժամանակ արածդ քեզ ոչինչ կերևա: Հա՛, քանի միտդ է, խոստումդ կատարիր: Մի թուղթ տո՛ւր, որ հինգ հարյուր սաժեն հող քաղաքի այսինչ տեղում բաշխում ես ինձ»:</p> | <p>1. Անդրեաս Էլիզբարյան</p> <p>2. Ռոզալյա</p> <p>3. Սաղաթել</p> <p>4. Արտաշես Օթարյան</p> <p>5. Մարգարիտ</p> |
|---|---|

- 1) ա-3, բ-5, գ-1, դ-2, ե-4
- 2) ա-4, բ-2, գ-3, դ-5, ե-1
- 3) ա-4, բ-5, գ-1, դ-2, ե-3
- 4) ա-4, բ-5 գ-3, դ-2, ե-1

**80. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայից մեջբերված խոսքերից ո՞րը որ հերոսինն է:**

- |  |   |
|--|---|
| <p>ա. Սուրեն</p> <p>բ. Անդրեաս Էլիզբարյան</p> <p>գ. Բագրատ</p> <p>դ. Սաղաթել</p> | <p>1. «Ի՞նչ պիտի մտածեն, կասեն, որ Էլիզբարյանը գող էր և այժմ, դատաստանից վախենալով, գողացածը ետ է տալիս: Արի ու այն ժամանակ երևացիր հասարակության մեջ: Աչքերդ թքով կհանեն»:</p> <p>2. «Ես ուզում եմ լինել հզոր ֆինանսական սյուն, մեկը այն հսկաներից, որոնց ձեռքում է մեր ժամանակի ամենամեծ ուժը՝ կապիտալը»:</p> <p>3. «Մեր փողը կեղտ է, նրա փչացնելը մեղք չէ»:</p> <p>4. «Մարդս անասուն է, ցեխի մեջ որ տեսնես, պետք է ոտքով խփես, խորը գցես, ոչ թե ձեռքից բռնես, բարձրացնես»:</p> |
|--|---|

- 1) ա-2, բ-4, գ-3, դ-1
- 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 3) ա-3, բ-4, գ-2, դ-1
- 4) ա-3, բ-1, գ-4, դ-2

**81. Նշվածներից ո՞րը գրական երկի սյուժեի բաղադրիչ տարրերից չէ:**

- 1) հանգույցը
- 2) գագաթնակետը
- 3) լուծումը
- 4) ներածությունը

**82. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի և «Պատվի համար» դրամայի նշված կերպարներից որո՞նք ընդհանրություններ չունեն:**

- 1) Մարկոս աղա Ալիմյան – Անդրեաս Էլիզբարյան
- 2) Սմբատ – Բագրատ
- 3) Իսահակ Մարութխանյան – Արտաշես Օթարյան
- 4) Միքայել – Սուրեն

**83. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի և «Պատվի համար» դրամայի հերոսներն ու նրանց խոսքերը:**

- ա. Միքայել
- բ. Մարութխանյան
- գ. Անդրեաս
- դ. Սուրեն

1. «...19-րդ դարը, սիրելի՛ս, խաբեության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խաբում են բոլորը և ամենից ավելի նրանք, որոնք ըմբռատանում են խաբեության դեմ»:
2. «Տեսնո՞ւմ եք այդ մթին բուրգերն իրենց սուր ու եռանկյունի զագաթներով... Դ-ա մի տարօրինակ քառս է, ես համեմատում էի այդ քառսը մեր կյանքի, մեր միջավայրի, .... իմ միջավայրի հետ և նույնը տեսնում էի այնտեղ...»:
3. «Պարոն Թանաք լպստող, ...խնդրեմ անկոչ վերահսկողի դեր չկատարեք: Քեռի՛, եթե այս թուպեին երեք հարյուր ռուբլի չունենամ, կխայտառակվեմ: Պատվի խնդիր կա մեջտեղ: Եթե ինձ սիրում ես, մի՛ ուշացնիր»:
4. «...Սաղաթել, գլխովս հագար ու մի փորձանք է անցել: Երդում եմ կոտրել,.... խեղճեր եմ գռփել ու կողոպտել, երեք անգամ կաշառքով ազատվել եմ դատարանից, բայց երբեք այս դրության մեջ չեմ եղել»:

- 1) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 2) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 3) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 4) ա-2, բ-1, գ-4, դ-3

**84. Ո՞ր ստեղծագործության հերոսներն են Սուլյանը, Դուլամյանը, Չարգարյանը և Արշակը:**

- 1) «Նահանջը առանց երգի», Շահան Շահնուր
- 2) «Քառս», Ալեքսանդր Շիրվանզադե
- 3) «Մամվել», Բաֆֆի
- 4) «Մայիտակ ձին», Ակսել Բակունց

**85. Որտե՞ղ են կատարվում Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքում ծավալվող գործողությունները:**

- 1) Վենետիկում
- 2) Պետերբուրգում
- 3) Օդեսայում
- 4) Սևաստոպոլում

**86. Ո՞ր շարքում են միայն Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոսները:**

- 1) Լուիզա, սինյորա Ստեֆանիա, Ռոզալյա
- 2) Լևոն, Սուրեն, Իցկո
- 3) Ալմաստ, Կավալարո, Չաուշենկո
- 4) Լուկրեցիա, Անտոնինա, Չելլինի

**87. Ինչո՞վ է ավարտվում Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքը:**

- 1) Լևոնի՝ «Խերսոն» շոգենավով Իտալիա մեկնելով
- 2) Լուիզայից մերժում ստանալուց հետո Լևոնի՝ հարբեցողությամբ զբաղվելով
- 3) Լևոնի ինքնասպանությամբ
- 4) Լևոնի՝ հռչակավոր երաժիշտ դառնալով և այդպես Լուիզայից վրեժխնդիր լինելով

**88. Պնդումներից ո՞րն է սխալ Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) Լևոնի հայրն աշխատել էր թատրոնում որպես վարսավիր:
- 2) Արտիստի հայրն անպատասխան սիրո զոհ էր դարձել, իսկ որդին կարծես հոր սխալը կրկնելու ուղին էր բռնել:
- 3) Լևոնը երագում էր մեկնել Իտալիա՝ թաքցնելով, սակայն, որ մեկնում էր ոչ թե երկիրը տեսնելու, այլ Լուիզային մոտ լինելու համար:
- 4) Արտիստն ինքնասպան է լինում այն դեպքից հետո, երբ գիշերով նրան կողոպտում են:

**89. Ի՞նչ է Նար-Դոսի անուն-ազգանունը:**

- 1) Գրիգոր Տեր-Հովհաննիսյան
- 2) Միքայել Հովհաննիսյան
- 3) Հակոբ Մելիք-Հակոբյան
- 4) Հայաստան Եղիազարյան

**90. Ո՞ր շարքում են միայն Նար-Դոսի ստեղծագործությունները:**

- 1) «Սպանված աղավնին», «Խորհրդավոր միանձնուհի», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը»
- 2) «Սպանված աղավնին», «Ռսկի աքաղաղ», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը»
- 3) «Ես և նա», «Նեղ օրերից մեկը», «Առաքյալը», «Նամուս»
- 4) «Սպանված աղավնին», «Ես և նա», «Նեղ օրերից մեկը», «Մեր թաղը»

**91. Գրական ի՞նչ ժանրի երկ է Նար-Դոսի «Նեղ օրերից մեկը»:**

- 1) նորավեպ
- 2) պատմվածք
- 3) ողբերգություն
- 4) դրամա

**92. Ինչո՞ւ է Նար-Դոսի պատմվածքը կոչվում «Նեղ օրերից մեկը»:**

- 1) Ներկայացվում է մտավորականի կյանքում անհաջողություններով լի բացառիկ մի օր:
- 2) Պատրիկյանի ներկա ծանր վիճակը հակադրվում է անցյալի բարեկեցիկ օրերին:
- 3) Հայ մտավորականի կյանքի մեկ օրը նյութական գրկանքների անվերջանալի շղթայի միայն մեկ օղակն է:
- 4) Պատրիկյանի դժվարին օրը ժամանակավոր է, քանի որ նա ունի նվիրված և առատաձեռն ընկերներ:

**93. Ի՞նչ է Նար-Դոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքի գլխավոր հերոսի ազգանունը:**

- 1) Մարտիկյան
- 2) Պետիկյան
- 3) Կետիկյան
- 4) Պատրիկյան

**94. Ո՞րն է Նար-Ղոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքի գլխավոր գաղափարը:**

- 1) հայկական լրագրերին արդիական նյութեր տրամադրելու հրատապությունը
- 2) ազգային-ազատագրական պայքար ծավալելու անհրաժեշտությունը
- 3) հայ գրողի նյութական ծանր կացության պատկերումը
- 4) ազգային մեծահարուստների ազահության քննադատությունը

**95. Մինչև կայսերական թատրոնների նշանավոր երգիչ դառնալը ո՞վ էր եղել Նար-Ղոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքի հերոսներից մեկը՝ Ջափինյանը:**

- 1) քելեխ ուտող տիրացու
- 2) երաժշտական դպրոցի սովորական ուսուցիչ
- 3) անուղղելի հարբեցող
- 4) թափառաշրջիկ երգիչ

**96. Հեղինակային ի՞նչ նշում կա Նար-Ղոսի «Ես և նա» պատմվածքի վերնագրի տակ:**

- 1) «Իրավաբանի հիշատակարանից»
- 2) «Կյանքի հատակն ընկած մարդու հիշատակարանից»
- 3) «Մի կորած մարդու հիշատակարանից»
- 4) «Հուսահատված մարդու հիշատակարանից»

**97. Նար-Ղոսի «Ես և նա» պատմվածքի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) «Ես»-ի անանուն հերոսը, չկարողանալով դիմագրավել սիրած աղջկա դավաճանության հետևանքով ունեցած դժվարություններին, ընկնում է կյանքի հատակը՝ դառնալով հարբեցող և մութ գործեր պաշտպանող փաստաբան:
- 2) Ջուլետտան Անտոնիոյին առաջարկում է դառնալ իր եղբայրը և բնակվել իրենց մեծահարուստ ընտանիքում, սակայն տղան մերժում է:
- 3) Անտոնիոն դառնում է աշխարհահռչակ երգիչ, որի ոտքերի առջև ծնկի է գալիս Ջուլետտան:
- 4) Ջուլետտայի անհոգի երկտողը մեծապես օգնում է Անտոնիոյին՝ շարունակ վեր բարձրանալու և սիրային մաքուր հարաբերություններում դասային խտրականություն դնող երբեմնի օրիորդին իր առջև ծնկի բերելու:

**98. Նար-Ղոսի «Ես և նա» պատմվածքի «Ես»-ի անանուն հերոսը նշվածներից իտալական ո՞ր վերնագրով սիրավեպն է թարգմանաբար ներկայացնում ընթերցողին՝ այն վերանվանելով «Նա»:**

- 1) «Հատուցում»
- 2) «Վրեժ»
- 3) «Ձղջում»
- 4) «Ծնրադրում»

**99. Ինչպե՞ս է դասավորվում Նար-Ղոսի «Ես և նա» պատմվածքի՝ իրավաբանություն ուսումնասիրող երիտասարդի ճակատագիրը:**

- 1) Միրո մեջ մերժված երիտասարդին հուսահատությունն ինքնասպանության է հասցնում:
- 2) Կիսատ թողնելով իր ուսումնառությունը՝ նա վերադառնում է հայրենի քաղաք, որպեսզի վրեժ լուծի սիրած աղջկա ամուսնուց:
- 3) Հայտնի փաստաբան դառնալով՝ կարողանում է վրեժ լուծել իրեն դավաճանած աղջկանից:
- 4) Երիտասարդը դառնում է կասկածելի դատեր պաշտպանող իրավաբան և անբուժելի հարբեցող:

100. Ո՞վ է «Խորհրդավոր միանձնուհի» և «Ռուզան» ստեղծագործությունների հեղինակը:

- 1) Խաչատուր Աբովյանը
- 2) Րաֆֆին
- 3) Մուրացանը
- 4) Ալեքսանդր Շիրվանզադեն

101. «Գևորգ Մարգարյանի» պատմավեպով Մուրացանն իր ժամանակի ո՞ր դեպքերին էր անմիջականորեն արձագանքում:

- 1) 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմին
- 2) 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմին
- 3) 1880–ական թվականներին ցարական կառավարության՝ «հայոց դպրոցները փակելու» որոշմանը
- 4) Արևմտյան Հայաստանում 1895–1896 թթ. հայկական ջարդերին

102. Մուրացանի «Գևորգ Մարգարյանի» պատմավեպում ո՞վ է իր կալվածքները փոխանակում արխագների հետ և հեռանում Հայոց աշխարհից:

- 1) Սահակ Սևադան
- 2) Հովհաննես կաթողիկոսը
- 3) Յիկ Ամրամը
- 4) Աշոտ Բռնավորը

103. Մուրացանի «Գևորգ Մարգարյանի» պատմավեպում Աշոտ Բռնավորն իր տանը հյուրընկալվածներից ո՞ւմ էր ցանկանում դավադրաբար կալանել, ինչը խափանվում է Գևորգ Մարգարյանում կողմից:

- 1) Աշոտ Երկաթին
- 2) Սահակ Սևադային
- 3) Աբաս արքաները
- 4) Հովհաննես կաթողիկոսին

104. Մուրացանի «Գևորգ Մարգարյանի» պատմավեպի թվարկված հերոսներից ո՞վ է հանդես գալիս միայն մեկ դրվագում:

- 1) Վահրամ սեպուհը
- 2) արքայամայրը
- 3) Բեշիրը
- 4) Բերը

105. Մուրացանի «Գևորգ Մարգարյանի» պատմավեպում ինչո՞ւ է Աշոտ Երկաթն անուսնանում Սահականույշի հետ:

- 1) Մխավում է՝ ժամանակավոր հրապուրանքը սիրո հետ շփոթելով:
- 2) Կատարում է արքայամոր՝ գեղանի Սահականույշին թագուհի տեսնելու վաղեմի ցանկությունը:
- 3) քաղաքական նկատառումներով
- 4) Սյունիքի իշխանին՝ իր վաղեմի հակառակորդին, ցավ պատճառելու համար

106. Մուրացանի «Գևորգ Մարգարյանի» պատմավեպի վերջում ո՞վ է մտորում, որ «...եղբայրը՝ թեպետ կույր, յուր աթոռը վերադարձավ, իսկ մյուս կողմից՝ արդյունք բերավ գանձարանին՝ լիովի ծածկելով պատերազմական վնասները»:

- 1) Սահականույշը
- 2) Գուրգենդուխտը
- 3) արքայամայրը
- 4) Գոհարը

**107. Ո՞ր պնդումն է սխալ Գրիգոր Զոհրապի ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) Զոհրապը մարդկային հոգու մեծ գիտակ է, նուրբ հոգեբան:
- 2) Նորավեպերում շեշտը դնելով հոգեբանական վերլուծությունների վրա՝ գրողը չի բավարարվում մի քանի դիպուկ մանրամասներով. նա հերոսներին ներկայացնում է հոգեբանական ծավալուն վերլուծություններով:
- 3) Նորավեպերում չկան բնության ընդարձակ նկարագրություններ:
- 4) Նորավեպերում քիչ են երկխոսությունները, որոնք նույնպես կրում են հեղինակային դիպուկ և սեղմ խոսքի վարպետության կնիքը:

**108. Ո՞ր շարքում են Գրիգոր Զոհրապի միայն «Փոստա՛լ» նորավեպի հերոսները:**

- 1) Տիգրանուհի, Դազար Էֆենդի, Մարտիրոս, Սուրբիկ հանրմ
- 2) Պերճուհի, Սուրբիկ հանրմ, Հաճի Տյուրիկ, Սահակ
- 3) Հաճի Տյուրիկ, Օննիկ, Սուրբիկ հանրմ, Տիգրանուհի
- 4) Զարդար, Օննիկ, Սուրբիկ հանրմ, Դազար Էֆենդի

**109. Տրված հատվածը Գրիգոր Զոհրապի ո՞ր նորավեպի վերջնամասից է. «Գիտեր, ստույգ գիտեր ալ, որ ամուսինը չպիտի գար. բայց իրիկունը, առանց ուզելու, քայլերը կ'առաջնորդեին զինքը այն արտը, ուրկե վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամբած էր իր երիտասարդ էրիկը»:**

- 1) «Երջանիկ մահը»
- 2) «Փոստա՛լ»
- 3) «Այրին»
- 4) «Այինկա»

**110. «Դանայան տակառ» արտահայտությունը Գրիգոր Զոհրապի ո՞ր նովելում է գործածվել ու դարձել համեմատության եզր:**

- 1) «Այինկա»
- 2) «Փոստա՛լ»
- 3) «Ճիտին պարտքը»
- 4) «Զարուղոն»

**111. Որտե՞ր են կատարվում Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի գործողությունները:**

- 1) Լոռիում
- 2) Սյունիքում
- 3) Ջավախքում
- 4) Գուգարքում

**112. Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Բայց քանի անգամ շեկ անապատի  
 Օրդուները սև  
 Իրարու ետև  
 Եկա՛ն զարկեցին մեր քարվանսն ազնիվ  
 Հայոց լեռներում,  
 ..... լեռներում:

- 1) Արնոտ
- 2) Սուգի
- 3) Դըժար
- 4) Կանաչ

**113. Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Տանում ենք հրնուց մեր գանձերն անգին,  
Սեր գանձերը ծով,  
Ինչ որ դարերով  
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին  
Հայոց լեռներում,  
..... լեռներում:

- 1) Բարձրը
- 2) Սուգի
- 3) Դըժար
- 4) Կանաչ

**114. Հովհաննես Թումանյանը «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ ի՞նչ հմարք է օգտագործել յուրաքանչյուր տան բովանդակությունն ընդհանրացնելու համար:**

- 1) վերջին երկտողում մեկ բառի փոփոխությամբ կրկնություն
- 2) վերջին երկտողի ամբողջական կրկնություն
- 3) տան առաջին տողի փոփոխությամբ կրկնություն
- 4) վերջին երկտողի ամբողջական փոփոխություն

**115. Ո՞ր հատկանիշը բնորոշ չէ էպիկական (պատմողական) պոեմին:**

- 1) հերոսների արարքների ու բախումների պատկերումը
- 2) չափածո ստեղծագործություն լինելը
- 3) հեղինակի նվազ միջամտությունը
- 4) հերոսի կամ հեղինակի ներքին մենախոսությանը մեծ տեղ տալը

**116. Ո՞ր բառն է բաց թողած:**

Կյանքըս արի հրրապարակ, ոտքի կոխան ամենքի.  
Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի:  
Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին...  
Ի՞նչ պատասխան պիտի էս տամ ..... ու ծաղիկ տըվողին...

- 1) հող
- 2) ջուր
- 3) ծառ
- 4) ծիլ

**117. Ո՞ր բառն է բաց թողած:**

Իմ կրնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.  
Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն .....,  
Ու կընքողըս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

- 1) հոտավետ
- 2) բուրավետ
- 3) կենսավետ
- 4) խնկավետ



**118. Ո՞ր բառն է բաց թողած:**

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան  
 Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:  
 Չեռքերն արնոտ գնում է նա դեռ .....  
 Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

- 1) անկար
- 2) անճար
- 3) անմար
- 4) կամկար

**119. Ո՞ր բառն է բաց թողած:**

Ամեն մի սիրտ ցավով լըցվեց մեր դարում,  
 ..... սրբտով աշխարհ լըցվեց մեր դարում.  
 Ցավոտ աշխարհքն եկավ լըցվեց բովանդակ  
 Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

- 1) Թախծոտ
- 2) Վշտոտ
- 3) Ցաված
- 4) Ցավոտ

**120. Ո՞րն է Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադում արծարծված հիմնական գաղափարը:**

- 1) մերժված սիրտ տառապանքը
- 2) կյանքի անցողիկությունը
- 3) հավերժական սիրտ ձգտումը
- 4) գործի անմահության գաղափարը

**121. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Հույսը հատավ... Ու լաց եղավ  
 բ. Տխուր աղջիկն արքայի  
 գ. Որ լիճ կապեց արտասուքը  
 դ. Ծածկեց քաղաքն ու ամրոց  
 ե. Ծամփաներին ամայի  
 զ. Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր  
 է. Էսպես անցան շատ տարիներ  
 ը. Էնքա՛ն արավ լաց ու կոծ

- 1) ա, գ, բ, զ, դ, է, ը, ե
- 2) է, գ, բ, ա, ե, ը, գ, դ
- 3) է, բ, գ, ե, ա, ը, գ, դ
- 4) ա, բ, գ, է, ը, դ, գ, ե

**122. Ո՞ր բառն է բաց թողած:**

Էսպես անցան շատ տարիներ.  
Տըխտը աղջիկն արքայի  
Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր,  
..... ամայի:

- 1) Կածաններից
- 2) Շավիղներից
- 3) Բավիղներից
- 4) Ճամփաներից

**123. Ո՞ր պնդումն է սխալ Հովհաննես Թումանյանի երկերի ժանրային բնութագրման վերաբերյալ:**

- 1) «Գիքորը» դրամա է:
- 2) «Հոգեհանգիստը» բանաստեղծություն է:
- 3) «Հառաչանքը» պոեմ է:
- 4) «Փարվանան» բալլադ է:

**124. Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքում Գիքորին հանդիպած համազյուղացիներն ի՞նչ են զգում նրա նկատմամբ:**

- 1) խոր կարեկցանք
- 2) արհամարհանք
- 3) բարի նախանձ
- 4) հիասթափություն

**125. Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքում հարազատներն ի՞նչ չեն գտնում մահացած Գիքորի շորերի գրպաններում:**

- 1) փայլուն կոճակներ
- 2) մի քանի գրոշներ
- 3) նախշուն թղթեր
- 4) չթի կտորներ

**126. Տարվա ո՞ր եղանակին է մահանում Գիքորը Հովհաննես Թումանյանի համանուն պատմվածքում:**

- 1) գարնանը
- 2) ամռանը
- 3) աշնանը
- 4) ձմռանը

**127. Հովհաննես Թումանյանի «Գելը» պատմվածքում ինչո՞վ է ավարտվում պարանով գայլերի ոհմակին վախեցնող սրտոտ ու քաջ Եղոյի ճակատագիրը:**

- 1) Եղոն, պարանը ձիու հետևից պտտեցնելով և այդպես վախեցնելով գայլերին, անվնաս տուն է հասնում:
- 2) Եղոն մի կերպ փրկվում է, սակայն դառնում է խեղանդամ:
- 3) Փախչելու ընթացքում Եղոյի պարանը ձեռքից ընկնում է, և գայլերը նրան հոշոտում են:
- 4) Եղոյին օգնության են հասնում հարևան գյուղի գուռնաչիներն ու նվազի ձայնով փախցնում գայլերին:

**128. Գրական ի՞նչ ժանրի երկ է Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարը»:**

- 1) կատակերգություն
- 2) հեքիաթ
- 3) պատմվածք
- 4) բալլադ

**129. Ինչպե՞ս է ավարտվում Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթը:**

- 1) Քաջ Նազարի կինը ցախավելի մի հարվածով գահընկեց է անում նրան:
- 2) Ժողովուրդն ի վերջո հասկանում է Քաջ Նազարի բախտախնդիր լինելը և վռնդում գահից:
- 3) Մինչև այսօր էլ Քաջ Նազարը քեֆ է անում ու ծիծաղում աշխարհի վրա:
- 4) Քաջ Նազարը խոր ծերության հասակում մահանում է:

**130. Նշվածներից ո՞րը Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթի սյուժետային դրվագներից չէ:**

- 1) Նազարն ընկնում է մի անծանոթ գյուղ, մասնակցում հարսանիքի ու շարժում հարսանքավորների հետաքրքրությունը:
- 2) Յոթ հսկա եղբայրների քույրը սիրահարվում է Նազարին և ամուսնանում նրա հետ:
- 3) Պատերազմից հետո ժողովուրդը հաղթանակը վերագրում է Նազարին ու նրան առքով-փառքով բազմեցնում թագավորի թախտին:
- 4) Հեքիաթի վերջում Նազարին գահընկեց են անում:

**131. Ավետիք Իսահակյանի տրված ստեղծագործություններից ո՞րը ինչ ժանրի է:**

- |                         |                     |
|-------------------------|---------------------|
| 1. «Ռավեննայում»        | ա. պոեմ             |
| 2. «Աբու-Լալա Մահարի»   | բ. բալլադ           |
| 3. «Համբերանքի չիբուխը» | գ. բանաստեղծություն |
| 4. «Հավերժական սերը»    | դ. պատմվածք         |

- 1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
- 3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

**132. Ո՞ր ստեղծագործության հերոսի խոսքերն են.**

«... հաշիվս իստկել եմ աշխարքի հետ: Ուրիշ ի՞նչ կրնայի անել: Կռվեցի, բանտ դրին, մենակ մնացի: Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարքի սարքի դեմ: Չարկես-գարկվես, օգուտն ի՞նչ: Գեղ պիտի կանգնի, որ գերան կոտրի»:

- 1) «Ծիրանի փողը» (Ակսել Բակունց)
- 2) «Գելը» (Հովհաննես Թումանյան)
- 3) «Համբերանքի չիբուխը» (Ավետիք Իսահակյան)
- 4) «Ավելորդը» (Դերենիկ Դեմիրճյան)

**133. Ըստ Ավետիք Իսահակյանի բանաստեղծության՝ ովքե՞ր...**

Վիպերգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծագոր  
 Եվ ծաղրեցին պարտությունը ռոտինների մեր բյուրավոր:  
 Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող ժողովուրդի,  
 Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի...

- 1) մեր նախահայրերը
- 2) մեր գուսանները
- 3) մեր պատմիչները
- 4) մեր ազգային գործիչները

**134. Ո՞ր բառն է բաց թողած:**

.....սերունդների  
 Աչքն է դիպել լույս գագաթին,  
 Ու անցել:

- 1) Եղեռնապուրծ
- 2) Խուճապահար
- 3) Մահախուճապ
- 4) Աստանդական

**135. Պոեմի նշված տեսակներից որի՞ն է պատկանում Ավետիք Իսահակյանի «Աբու–Լալա Մահարին»:**

- 1) քնարական
- 2) էպիկական
- 3) քնարաէպիկական
- 4) դրամատիկական

**136. Ո՞րն է Աբու–Լալա Մահարու խորհրդանշական վերջին հանգրվանը Ավետիք Իսահակյանի համանուն պոեմում:**

- 1) ժեռ քարերը
- 2) անապատը
- 3) արևը
- 4) աստղերը

**137. Ո՞ր բառն է բաց թողած:**

Կույր ու գուլ մարդի՛կ, առանց երազի,– առանց լսելու հեքիաթն այս վսեմ,  
 Իրար ..... պատառ եք հանում և դարձնում աշխարհն՝ ահավոր ջեհնեմ:

- 1) բերանից
- 2) գրպանից
- 3) կոկորդից
- 4) ձեռքերից

**138. Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» լեգենդի վերջում Ադամը տեսնում է, որ՝**

- 1) Լիլիթը փորձում է դուրս պրծնել սատանայի գրկից:
- 2) Լիլիթը, օձին գրկած, դուրս է փախչում դրախտից:
- 3) Լիլիթը, սատանային գրկած, արագ թռչում է դեպի երկինք:
- 4) Սատանան, Լիլիթին գրկած, մխրճվում է երկրի մեջ:

**139. Հեղինակային ի՞նչ հավելում կա Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» լեգենդի վերնագրի տակ:**

- 1) (Աստվածաշնչյան լեգենդ)
- 2) (Հրեական առասպել)
- 3) (Հունական ավանդավեպի մշակում)
- 4) (Սերբական լեգենդ)

**140. Ո՞ր միտքն է սխալ Ավետիք Իսահակյանի «Մաադիի վերջին գարունը» ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) Իսահակյանի հերոսը՝ պարսիկ բանաստեղծը, կյանքի վերջնագծին խորհում է աշխարհի ու կյանքի մասին:
- 2) Մաադին մտորում է, որ հարյուր տարվա կյանքն անցել է մի գիշերվա երազի պես:
- 3) Խոր ծերության հասած բանաստեղծը շարունակում է հիանալ աշխարհի հավերժող գեղեցկությամբ:
- 4) Մաադին մահանում է՝ խորապես հիասթափված աշխարհից և կանանցից:

**141. Նշված հատվածը Ավետիք Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունից է:**

Կանաչ դաշտի պարզ հովիկը  
Շահի ոսկե քոշքից լավ է,  
Քրտինքովդ կերած հացը  
Սուրբանների ճաշից լավ է:

- 1) «Աբու–Լալա Մահարի»
- 2) «Համբերանքի չիբուխը»
- 3) «Օտար, ամայի ճամփեքի վրա»
- 4) «Մև–մութ ամպեր...»

**142. Նշվածներից ո՞րը արծարծված չէ Ավետիք Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքում:**

- 1) գյուղում տիրող սոցիալական անհավասարության թեման
- 2) մարդու լավ գործի կարևորության գաղափարը
- 3) օտար զավթիչների դեմ զենքով պայքարելու անհրաժեշտությունը
- 4) աշխարհից և մարդկանցից հիասթափված հերոսի ապրումները

**143. Ավետիք Իսահակյանի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողով. «Ծնվում ենք ականա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...»:**

- 1) «Մաադիի վերջին գարունը»
- 2) «Հավերժական սերը»
- 3) «Համբերանքի չիբուխը»
- 4) «Լիլիթ»

**144. Ի՞նչ էր Մաադիի սիրած աղջկա անունը Ավետիք Իսահակյանի «Մաադիի վերջին գարունը» պատմվածքում:**

- 1) Ասիմաթ
- 2) Նազիաթ
- 3) Գյուլնարա
- 4) Չեմֆիրա

**145. Նշված գրողներից ո՞վ է սովորել Բելգիայում՝ Գեմտի համալսարանում:**

- 1) Խաչատուր Աբովյանը
- 2) Միքայել Նալբանդյանը
- 3) Դանիել Վարուժան
- 4) Վահան Տերյանը

**146. Նշված գրողներից ո՞վ է ստացել բարձրագույն կրթություն:**

- 1) Վահան Տերյանը
- 2) Հովհաննես Թումանյանը
- 3) Մուրացանը
- 4) Բաֆֆին

**147. Նշված շարքերից ո՞րը Դանիել Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուից չէ:**

- 1) «Գողգոթայի ծաղիկներ»
- 2) «Բագինին վրա»
- 3) «Կրկեսին մեջ»
- 4) «Դյուցազնավեպեր»

**148. Ո՞ր պնդումն է սխալ Դանիել Վարուժանի վերաբերյալ:**

- 1) Վարուժանը ծնվել է 1884 թվականին Սեբաստիա գավառի Բրզնիկ գյուղում:
- 2) Վարուժանն ավարտել է Վենետիկի Մխիթարյան վարժարանը:
- 3) Վարուժանի «Սարսուռներ» ժողովածուն առանձին գրքով լույս է տեսել 1906 թվականին:
- 4) Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն լույս է տեսել հետմահու:

**149. Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուի ո՞ր բանաստեղծության բոլոր տներն են սկսվում միևնույն՝ «Հովե՛ր կ'անցնին» տողով:**

- 1) «Հունձք կը ժողվեմ»
- 2) «Արտերուն հրավերը»
- 3) «Առաջին ծիլեր»
- 4) «Յորյանի ծովեր»

**150. Դանիել Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ չէ:**

- 1) Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն լույս է տեսել 1912 թվականին. այն բաղկացած է երկու ենթաշարքից՝ «Հեթանոս երգեր», «Գողգոթայի ծաղիկներ», և «Հարճը» պոեմից:
- 2) «Հացին երգը» ժողովածուն առանձին գրքով լույս է տեսել 1921 թվականին:
- 3) «Հունձք կը ժողվեմ...» և «Ձոն» բանաստեղծություններն ընդգրկված են «Հացին երգը» ժողովածուում:
- 4) «Ձոն» բանաստեղծության մեջ Դ. Վարուժանն օգտագործել է Վահագնի առասպելի ոճական որոշ հնարքներ:

**151. Ո՞վ է «Դյուցազնորեն», «Հայրդիներ», «Հոգեվարքի և հույսի ջահեր» ստեղծագործությունների հեղինակը:**

- 1) Լևոն Շանթը
- 2) Միամանթոն
- 3) Դանիել Վարուժանը
- 4) Եղիշե Չարենցը

**152. Ո՞րը Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամային բնորոշ չէ:**

- 1) հոգու և մարմնի հակադրությունը
- 2) հեթանոսության և քրիստոնեության հակադրումը
- 3) բանականության և զգացմունքի հակադրումը
- 4) հեթանոսության նկատմամբ նոր հավատի առավելության ընդգծումը

**153. Ո՞րը բանաստեղծական ժողովածու չէ:**

- 1) «Աշնան մեղեդի» Վահան Տերյան
- 2) «Հացին երգը» (Դ-անիել Վարուժան)
- 3) «Եղիցի լույս» (Պարույր Սևակ)
- 4) «Նոր տաղեր» (Միսաք Մեծարենց)

**154. Ո՞ր բառն է բաց թողած:**

Ո՛վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ.  
 Ո՛վ պերճությունը ..... իր հրպարտ.  
 Ճամբուն վրրա՝ իր քայլերուն հետքը վարդ,  
 Ուր հեշտորեն կը հաճի դեռ իմ մենիկ....

- 1) նազանքին
- 2) հայացքին
- 3) աչքերուն
- 4) գրնացքին

**155. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Միսաք Մեծարենցի ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) Մ. Մեծարենցի «Նոր տաղեր» ժողովածուն լույս է տեսել հետմահու:
- 2) «Հյուղը» բանաստեղծությունը տողորված է անանձնական սիրո տրամադրություններով:
- 3) «Միրերգ» («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին») բանաստեղծությունը պարուրված է գիշերային ցնծագին ու քաղցրալի տրամադրություններով:
- 4) «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծության մեջ Մեծարենցը նկատում և պատկերում է բնության նուրբ շարժումները:

**156. Ո՞րը Միսաք Մեծարենցի ստեղծագործությանը բնորոշ չէ :**

- 1) բնության և մարդկային ապրումների զուգակցումը
- 2) գիշերերգը որպես որոշակի տրամադրությունների արտահայտություն դիտելը
- 3) անհատապաշտությանը տուրք տալը
- 4) անսահման մարդասիրությունը

**157. Միսաք Մեծարենցի ո՞ր բանաստեղծությունից է մեջբերված հատվածը:**

Ջուրը ցայտքեն ծաղիկ ծաղիկ կը կաթե.  
 Վըճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,  
 Նըվազն անոր կը հեծեծե հեշտական:

- 1) «Արևին»
- 2) «Միրերգ» («Գիշերն անույշ է...»)
- 3) «Աքասիաներու շուքին տակ»
- 4) «Նավակները»

**158. Ի՞նչ է Վահան Տերյանի ազգանունը:**

- 1) Տեր–Հովհաննիսյան
- 2) Տեր –Գրիգորյան
- 3) Տերտերյան
- 4) Տեր–Հակոբյան

**159. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Վահան Տերյանի ստեղծագործության վերաբերյալ:**

- 1) «Մթնշաղի անուրջներ» շարքում կան տխրության, թախծի տրամադրություններ, ինչպես նաև զարնան պատկերներ:
- 2) Վ. Տերյանը ևս իր բանաստեղծությունները դասավորեց շարքերի մեջ՝ հետևելով Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին:
- 3) «Երկիր Նաիրի» շարքում բանաստեղծն արտահայտել է տագնապ հայրենիքի ապագայի համար, կարոտ հայրենիքի, հայրենի գյուղի հանդեպ:
- 4) Վահան Տերյանը գրել է նաև սոնետներ, տրիոլետներ և գազելներ:

**160. Նշվածներից ո՞րը բանաստեղծական ժողովածու չէ:**

- 1) Վահան Տերյան, «Շշուկ ու շրշյուն»
- 2) Դանիել Վարուժան, «Հեթանոս երգեր»
- 3) Պարույր Սևակ, «Մարդը ափի մեջ»
- 4) Միսաք Սեծարենց, «Ծիածան»

**161. Ի՞նչ է նշանակում *բանաստեղծական շարք*:**

- 1) լեզվական և բովանդակային ներքին ընդհանրություն ունեցող բանաստեղծությունների ամբողջություն
- 2) տարբեր թեմաներով գրված բանաստեղծությունների ժողովածու
- 3) տասը բանաստեղծություններից բաղկացած ժողովածու
- 4) մի քանի մասերից բաղկացած երկար բանաստեղծություն

**162. Ո՞ր շարքում են միայն Վահան Տերյանի բանաստեղծական շարքերը:**

- 1) «Մթնշաղի անուրջներ», «Ծիածան»
- 2) «Գիշեր և հուշեր», «Կատվի դրախտ»
- 3) «Ոսկե շղթա», «Տեսիլաժամեր»
- 4) «Ոսկի հեքիաթ», «Հեռացումի խոսքեր»

**163. Ո՞վ է իր բանաստեղծական շարքերից մեկի անվանումը կապել Հայաստանի հնագույն անուններից մեկին:**

- 1) Հովհաննես Թումանյանը
- 2) Դանիել Վարուժանը
- 3) Վահան Տերյանը
- 4) Ավետիք Իսահակյանը



**164. Բանաստեղծական ո՞ր հատվածը Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի որ բանաստեղծությունից է:**

- ա. «Իջնում է գիշերն անգութ ու մթին...»  
 բ. «Մի՛ խառնեք մեզ...»  
 գ. «Կարծես թե դարձել եմ ես տուն...»  
 դ. «Մի՞թե վերջին պոետն եմ ես...»

1. Վտարանդի, երկրում աղոտ,  
 Լուսե՛ղ, քեզ եմ երագում,  
 Եվ հնչում է, որպես աղոթք,  
 Արքայական քո լեզուն:
2. Ամրակուռ է մեր հոգին – դարերի զավակ՝  
 Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:
3. Թող կիսովի խավարն ավելի խրթին,  
 Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,  
 Ու թող գա, թե կա, ավելի՛ չար բոթ,  
 Մեխվի գոհ–երկրիս անարգված սրտին:
4. Մանում ու հեքիաթ ես ասում,  
 Մանում ես անվերջ ու արագ.  
 Միրում եմ պարզկա քո լեզուն,  
 Ձեռներդ մաշված ու բարակ:

- 1) ա–3, բ–2, գ–1, դ–4
- 2) ա–1, բ–3, գ–4, դ–2
- 3) ա–3, բ–2, գ–4, դ–1
- 4) ա–2, բ–4, գ–1, դ–3

**165. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- ա. Իմ բացված սրտում հնչում է մի երգ  
 բ. Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք  
 գ. Անտես զանգերի կարկաչն եմ լսում  
 դ. – Կարծես թե մեկը ինձ է երագում

- 1) ա, գ, դ, բ
- 2) բ, գ, դ, ա
- 3) դ, բ, գ, ա
- 4) գ, ա, դ, բ

**166. Ո՞ր գրողն է հայ գրականության նորագույն շրջանի սկզբնավորողը:**

- 1) Հովհաննես Թումանյանը
- 2) Ավետիք Իսահակյանը
- 3) Վահան Տերյանը
- 4) Եղիշե Չարենցը

**167. Եղիշե Չարենցի ո՞ր բանաստեղծությունից է մեջբերվող քառատողը:**

...Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,  
 Որպես ուրու հալածական, որպես տեսիլ–  
 Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ  
 Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...

- 1) «Անվերնագիր» («Իմ մահվան օրը...»)
- 2) «Տաղ անձնական»
- 3) «Հեռացումի խոսքեր»
- 4) «Մահվան տեսիլ» («Որպես լքված թավջութակի...»)

168. Նշվածներին որի՞ն Եղիշե Չարենցը «Հարդագողի ճամփորդները» բալլադում չ/հ անդրադառնում:

- 1) երագի և իրականության հակադրությանը
- 2) իր՝ բանաստեղծի հանդեպ մարդկանց հեզմանքին
- 3) լավ, բարի գործի անմահության գաղափարին
- 4) գեղեցիկի, կատարյալի փնտրտուքին

169. Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողերով:

Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,  
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.  
-Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,  
Որ երազում երագեցինք ու անցանք...

- 1) «Մահվան տեսիլ»
- 2) «Տաղ անձնական»
- 3) «Դանթեական առասպել»
- 4) «Հարդագողի ճամփորդները»

170. Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության ո՞ր բառն է բաց թողած:

Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը ..... –  
Իմ բա՛րձր, հին ու աստղային երագների ճանապարհով...

- 1) Ամեհի
- 2) Ամենտի
- 3) Բարձունքի
- 4) Անհունի

171. Եղիշե Չարենցի «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության մեջ ո՞ր բառն է բաց թողած:

– Ի՛նչ էլ լինի, քո՛յր իմ, քո՛յր, հեռանալիս .....  
Խե՛ղճ կարոտը թևերիս, որ երբեք թեզ չհասան...

- 1) չտխրես
- 2) կհիշես
- 3) չանիծես
- 4) չտանես

172. Եղիշե Չարենցը «Դեպի յառը Մասիս» պոեմում ի՞նչն է համարում Խաչատուր Աբովյանի գլխավոր մտահոգությունը՝ կապված «Վերք Հայաստանի» վեպի հետ:

- 1) քաղաքական կողմնորոշման խնդիրը
- 2) վիպական հյուսվածքի անկատարությունը
- 3) վեպի՝ վերջնական սրբագրման կարոտ լինելը
- 4) վեպը ձեռագիր վիճակում թողնելը

173. Դերենիկ Դեմիրճյանին և նրա ստեղծագործությանը վերաբերող պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Գրել է բանաստեղծություններ և պոեմներ:
- 2) Եղել է «Վերնատուն» գրական խմբակի անդամ:
- 3) Դրամատիկական ստեղծագործություններ չի գրել:
- 4) Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը:

**174. Տրվածներից ո՞րն է Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի սկիզբը:**

- 1) «Գիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա: Ամեն ինչ ընկղմվել էր խավարի մեջ: Միայն հեռուն ալիքավորված լեռներից դեպի վերև բացվում էր հանդիսավոր երկինքը՝ տենդային աստղերով առլեցուն»:
- 2) «Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե լեռան ետևում, և Տարոնը ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ: Ոչ մի աստղ այդ գիշեր չէր երևում: Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի Կրկուռ և Նեմրոթ լեռների կողմերը...»:
- 3) «Լուսինը շտապով սահում էր դեպի Սիփանի բարձր գագաթները, որ ընկղմված էին խորին թախծալի մթության մեջ»:
- 4) «Ուրախ, աղմկալի Հադամակերտը ներկայացնում էր մի մեռյալ քաղաք. փողոցներում ոչ ոք չէր երևում»:

**175. Ո՞ր գրողի որ ստեղծագործությունից է հետևյալ մեջբերումը.**

«Հիմա էր հաշիվ տալիս իրեն և զգաստորեն հաշիվ տալիս, որ հենց այդ սարսափներն է կրել իր քույրը, այն արհամարհված էակը, որի մեռնելը ինքը ցածոգի կերպով ա՛յնքան հեշտ և հասկանալի համարեց փախի օրը: ...Եվ ի՛նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը իր համար որոշած վիճակը և ի՞նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին»:

- 1) Ալ. Շիրվանզադե, «Քառս»
- 2) Դ. Դեմիրճյան, «Ավելորդը»
- 3) Ակ. Բակունց, «Սպիտակ ձին»
- 4) Հ. Մաթևոսյան, «Կանաչ դաշտը»

**176. Ի՞նչ ավարտ է ունենում Մրբունի ճակատագիրը Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում:**

- 1) ինքնասպան է լինում
- 2) սպանվում է թուրքերի կողմից
- 3) վախճանվում է թոքաբորբից
- 4) անհետ կորչում է

**177. Ո՞րն է Հաճի աղայի հոգեկան տվայտանքների գլխավոր պատճառը Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի վերջնամասում:**

- 1) հարստության մի մասի անդառնալի կորուստը
- 2) օր օրի վատթարացող առողջական վիճակը
- 3) մեղավորության զգացումն ու արթնացած խիղճը
- 4) նոր իրավիճակում որդիների ճակատագրի անորոշությունը

**178. Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում հրաժեշտի ժամանակ ի՞նչ է նվիրում Հաճի աղային նրա անդամալույծ քույրը:**

- 1) բրդյա գուլպաներ
- 2) բրդյա ձեռնոցներ
- 3) ասեղնագործ թաշկինակ
- 4) բրդյա շալ

**179. Ո՞ր պատմիչների ստեղծագործություններն են Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի սկզբնաղբյուրները:**

- 1) Մովսես Խորենացի և Եղիշե
- 2) Եղիշե և Դազար Փարպեցի
- 3) Եղիշե և Փավստոս Բուզանդ
- 4) Ագաթանգեղոս և Եղիշե

**180. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպից:**

- 1) Սրվանձտյա Գարեգին, Չոհրակ, Արտակ Ռշտունի
- 2) Արտակ Սոկաց, Մամիկոնյան Սեծ Տիկին, Աշխեն
- 3) Ատոմ Գնունի, Արծրունյաց տիկին, Գևորգ երեց
- 4) Գաղիշո Խորխոռունի, Գոռ, Կողակ

**181. Գերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ ընդունելության է արժանացնում հոների առաջնորդ Աթրլն իրենից ռազմական օգնություն հայցող հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանին:**

- 1) Հարգում է զորականի՝ «մարտերում մոխրացած ալիքը», բայց, ըստ արարողակարգի, նախքան իրեն մոտենալը նրանից վերցնել է տալիս զենքը:
- 2) Հարգում է զորականի՝ «մարտերում մոխրացած ալիքը» և արգելում է իրեն մոտենալուց առաջ նրանից վերցնել զենքը:
- 3) Ընկնելով բյուզանդական դեսպանների՝ Վարդան Մամիկոնյանի դեմ հյուսած դավերի ցանցը՝ որևէ հետաքրքրություն չի ցուցաբերում:
- 4) Վճռում է՝ ասելով. «Դուք այնպիսի ցեղ եք, որ կռվեցնում եք ամենքին ամենքի դեմ»:

**182. Նշվածներից ո՞րը ինչ ժանրի ստեղծագործություն է:**

- |                               |                  |
|-------------------------------|------------------|
| 1. «Վարդանանք» (Գ. Դեմիրճյան) | ա. ծրագրային վեպ |
| 2. «Կայծեր» (Բա.Ֆ.Ֆի)         | բ. վիպակ         |
| 3. «Ռուզան» (Մուրացան)        | գ. դրամա         |
| 4. «Հին աստվածներ» (Լ. Շանթ)  | դ. պատմավեպ      |

- 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
- 2) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
- 4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-գ

**183. Ո՞րը Ակսել Բակունցի ժողովածուներից չէ:**

- 1) «Անձրևը»
- 2) «Մթնածոր»
- 3) «Սև ցելերի սերմնացանը»
- 4) «Կյորես»

**184. Ակսել Բակունցի ո՞ր պատմվածքից է հետևյալ հատվածը.**

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզզաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ: Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց: Ավին շատ մոտ զգաց վիրավոր գազանի տաք շունչը...»:

- 1) «Խոնարհ աղջիկը»
- 2) «Մթնածոր»
- 3) «Միրհավ»
- 4) «Մալիտակ ձին»

**185. Ակսել Բակունցի «Մթնածոր» պատմվածքում անտառապահ Պանինը ի՞նչ է պահանջում որտորդ Ավուց մի շալակ ցախի դիմաց:**

- 1) մենամարտել արջի հետ
- 2) Ավու որտորդական հրացանը
- 3) մեկ տարի որտորությունը չզբաղվել
- 4) քսան ռուբլի տուգանք տալ կամ մի արջ սպանել

**186. Ակսել Բակունցի ո՞ր պատմվածքն է սկսվում հետևյալ հատվածով:**

«Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասերն ու թփերը:

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը»:

- 1) «Խոնարհ աղջիկը»
- 2) «Միրհավ»
- 3) «Ալպիական մանուշակ»
- 4) «Սալիտակ ձին»

**187. Խորհրդանշական ի՞նչ իմաստ ունի աշնան պատկերումը Ակսել Բակունցի «Միրհավ» պատմվածքում:**

- 1) Ըստ Բակունցի՝ աշունը տարվա ամենագեղեցիկ եղանակն է:
- 2) Հեղինակը զուգահեռներ է գծում իր հերոսի ծերության և ուշ աշնան պատկերների միջև:
- 3) Աշունը Դիլան դայուն հիշեցնում է, որ մինչև ձմեռ դեռ շատ գործ կա անելու:
- 4) Հեղինակը պարզապես ստեղծել է գեղեցիկ բնանկար:

**188. Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի հերոսն ինչպե՞ս է արձագանքում Խոնարհի հոր՝ ճաշին իրենց տուն գնալու հրավերին:**

- 1) Միրով այցելում է նրանց տուն, քանի որ շատ էր ուզում մոտիկից շփվել Խոնարհի հետ:
- 2) Մերժում է հրավերը՝ պատճառ բռնելով գրքի ընթերցանությունը:
- 3) Մերժում է հրավերը՝ պատճառաբանելով, որ այդ օրը պետք է քաղաք մեկնի:
- 4) Չի ցանկանում գնալ նրանց տուն, բայց ստիպված գնում է:

**189. Ակսել Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը.**

«Միակ ժամացույցն ինձ մոտ էր: Մի օր էլ բլրակը բարձրանալիս ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց և մինչև տարվա վերջ մնացի առանց ժամացույցի: Արև օրերին սավերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք»:

- 1) «Խոնարհ աղջիկը»
- 2) «Մթնածոր»
- 3) «Ալպիական մանուշակ»
- 4) «Միրհավ»

**190. Ի՞նչ է խորհրդանշում Ակսել Բակունցի «Ալալիական մանուշակ» պատմվածքում կրկնվող հետևյալ միտքը.**

«Ճաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:

- 1) կյանքի երազային գեղեցկության և կոպիտ իրականության հակադրությունը
- 2) քաղաքաբնակ և գյուղաբնակ մարդկանց հակադրությունը
- 3) երանավետ անցյալի և գորշ ներկայի հակադրությունը
- 4) հնագետի և նկարչի աշխարհայացքների հակադրությունը

**191. Ակսել Բակունցի նշված պատմվածքներից ո՞րն է տրվում վերնուշի ձևով:**

- 1) «Ալալիական մանուշակ»
- 2) «Միրիսով»
- 3) «Մթնածոր»
- 4) «Սպիտակ ձի»

**192. Ո՞ր պատմվածքի համար է Ակսել Բակունցը մեղադրվել ազգայնականության մեջ:**

- 1) «Մթնածոր»
- 2) «Սպիտակ ձի»
- 3) «Խոնարհ աղջիկը»
- 4) «Ծիրանի փողը»

**193. Նշված թեմաներից որի՞ն չի անդրադարձել Ակսել Բակունցը «Սպիտակ ձի» պատմվածքում:**

- 1) ծեր գեղջկուհու կրոնական զգացումներին
- 2) կորսված հայրենիքի թեմային
- 3) գյուղում առկա սոցիալական անհավասարությանը
- 4) գյուղացու նյութական ծանր պայմաններին

**194. Ակսել Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը.**

«Եվ այդ հին հավատով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրոնական զգացումները: Եկեղեցի չէր գնում. ո՛չ աղոթք գիտեր, ո՛չ ծանոթ էր եկեղեցական ծեսերի: Բայց և այնպես մի խորհրդավոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյան երգում էին զանգերը, երգում էր և հին դուռը, բլուրների և աշխարհի վրա իջնում էր մի խաղաղ երեկո, ճախրում էին ոսկեթև աղավնիները. և այդ ամենը ռամիկ հավատով նա ընդունում էր որպես անքննելի խորհուրդ, որ մնացել էր գյուղական աղջկա անուրախ մանկությունից»:

- 1) «Խոնարհ աղջիկը»
- 2) «Միրիսով»
- 3) «Ալալիական մանուշակ»
- 4) «Սպիտակ ձի»

**195. Ի՞նչ հիմնահարց է արծարծում Շահան Շահնուրն իր «Նահանջը առանց երգի» վեպում:**

- 1) նահանջ մարտի դաշտից
- 2) նահանջ ազգային արմատներից
- 3) նահանջ իրականությունից
- 4) նահանջ Արևմտյան Հայաստանից

**196. Ի՞նչ դրվագով է սկսվում Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը:**

- 1) հեղինակին արտոբելու սրտմաշուկ տեսարանով
- 2) անձայրածիր տայգայի նկարագրությամբ
- 3) արտրականների՝ ճամբարային բանահյուսության գրույցներով
- 4) Լյուդմիլա Շարթի՝ Իվան Բիչկոյի ուղեկցությամբ բրուտանոց գալով

**197. Տրված հատվածը ո՞ր գրողի որ ստեղծագործությունից է.**

«Ո՞ր եմ տանում մեզ: Ո՞ր փողոցի վրա ենք: Բայց ահա աղմուկը քիչ-քիչ նոսրացավ: Կասկած չկա, որ մեզ տանում են քաղաքից դուրս: Ու՞ր եմ տանում մեզ, ո՞ր եմ տանում մեզ: Այսպես տանում են գողացած ապրանքը: Գողացած ապրանք չենք, ի՞նչ ենք: Գողացան մեզ մեր տներից, մեր հարազատներից, մեր ժողովրդից, գողացան մեզ: Վերադարձրե՞ք մեզ մեր օրինական տիրոջը, մենք ժողովրդի թշնամիներ չենք...»:

- 1) Ալսեյ Բակունց, «Սպիտակ ձի»
- 2) Գուրգեն Մահարի, «Ծաղկած փշալարեր»
- 3) Վիլյամ Սարոյան, «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը»
- 4) Հրանտ Մաթևոսյան, «Կանաչ դաշտը»

**198. Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» ինքնակենսագրական վիպակում պատկերված են՝**

- 1) գրողի առաջին արտրի տարիները
- 2) գրողի երկրորդ արտրի տարիները
- 3) գրողի գաղթի տարիները և Արևելյան Հայաստանում հաստատվելը
- 4) գրողի ծանր կյանքը հետաքստրյան տարիներին

**199. Նշվածներից ո՞ր գրողն է իր պատանեկության թշվառ տարիների մասին գրել հետևյալ տողերը.**

«1915 թվականին ես Էջմիածին ընկա, հետո՝ Դիլիջան, հետո՝ Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց, մահճակալից մահճակալ»:

- 1) Հովհաննես Թումանյանը
- 2) Հովհաննես Շիրազը
- 3) Գուրգեն Մահարին
- 4) Նաիրի Զարյանը

**200. Ո՞ր ստեղծագործությունից է հատվածը.**

«Քնում էինք ոտք-գլուխ, կամերկոմը լուցկու տուփով չափում է ամեն մեկին հասնող կենսական տարածությունը: Յերեկները ոչինչ, մարդիկ նստում են կողք կողքի, իրար սեղմված: Գիշերը ծանր է, մի կողքից մյուս կողքին շրջվելը կապված է տիեզերական դժվարությունների հետ: Չնայած դրան՝ մարդը քարից ամուր է...»:

- 1) «Համբերանքի չիբուխը»
- 2) «Ծաղկած փշալարեր»
- 3) «Ծիրանի փողը»
- 4) «Վարդանանք»

**201. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկը»:**

- 1) պոեմ
- 2) ողբերգություն
- 3) վիպերգ
- 4) վիպակ

**202. Նշվածներից ո՞րն է դրամատիկական ստեղծագործություն:**

- 1) «Մեծապատիվ մուրացկանները», Հակոբ Պարոնյան
- 2) «Սպանված աղավնին», Նար-Դոս
- 3) «Արա Գեղեցիկ», Նաիրի Չարյան
- 4) «Քաջ Նազար», Հովհաննես Թումանյան

**203. Նշվածներից ո՞րը Հովհաննես Շիրազի ժողովածուներից չէ:**

- 1) «Հուշարձան մայրիկիս»
- 2) «Երգերի գիրք»
- 3) «Գարնանամուտ»
- 4) «Տոհմի կանչը»

**204. Հովհաննես Շիրազի ո՞ր ստեղծագործության բովանդակության խտացումն է հետևյալ տողը.**

«Այնինչ՝ նիրհում է աստված իր հոգում»:

- 1) «Հայ ժողովրդի երգը»
- 2) «Մայրս փոքրիկ»
- 3) «Բիբլիական»
- 4) «Կուզեի նստել մի քարի վրա»

**205. Տրված հատվածը Հովհաննես Շիրազի ո՞ր բանաստեղծությունից է:**

Բայց արևի լույսի տակ,  
Երբ ցավեր եք ինձ բերում,  
Մրտիս մռայլն անհատակ՝  
Այն խեղճ ճրագն է ցրում:

- 1) «Հայ ժողովրդի երգը»
- 2) «Կուզեի նստել մի քարի վրա»
- 3) «Մայրս»
- 4) «Մայրս փոքրիկ...»

**206. Ո՞ր բառն է բաց թողած:**

Բարձրանան կապույտ գահը լեռների՝  
Արևն իբրև թագ իմ գլխին առնեն,–  
Հագնեն ծիրանին .....–  
Գարնան թագավոր ինձ թագադրեն...

- 1) առավոտների
- 2) վաղորդայինների
- 3) արշալույսների
- 4) արևազալի

**207. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծության վերաբերյալ:**

- 1) Բանաստեղծը չի ցանկանում, որ կյանքի հավերժական տոնի մեջ սողոսկի մահը:
- 2) Գարնան թագավոր թագադրվելով՝ բանաստեղծը ուզում է մարդուն տեսնել անմահ, հավերժի բախտով ցնծացող:
- 3) Հեղինակը պատկերում է բնության հզոր ուժերի առջև թույլ մարդու անզորությունը:
- 4) Բանաստեղծը սեփական երջանկությունը պայմանավորում է համայն մարդկության երջանիկ լինելու հանգամանքով:



**208. Հովհաննես Ծիրազի ո՞ր բանաստեղծությունից է մեջբերվող հատվածը:**

Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,  
 Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,  
 Գնամ ետևից ծիծեռնակների,  
 Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ...

- 1) «Գարնանամուտ»
- 2) «Թագադրում»
- 3) «Կուզեի նստել մի քարի վրա»
- 4) «Հայ ժողովրդի երգը»

**209. Ի՞նչ վերնագիր ունի Հովհաննես Ծիրազի՝ սույնը նվիրված ժողովածուն:**

- 1) «Մայրս»
- 2) «Հուշարձան մայրիկիս»
- 3) «Մայրս մի բուռ Հայաստան»
- 4) «Մորս հիշատակին»

**210. Ի՞նչ քեմա է արծարծվում Հովհաննես Ծիրազի «Կուզեի նստել մի քարի վրա» բանաստեղծության մեջ:**

- 1) հայրենիքի
- 2) մայրական
- 3) բնության
- 4) սիրո

**211. Ի՞նչ է խորհրդանշում մասրենին Համո Սահյանի համանուն բանաստեղծության մեջ:**

- 1) բնության գեղեցկությունը
- 2) հայ ժողովրդի տոկունությունը
- 3) մարդու և բնության կապը
- 4) հայրենի եզերքի կարոտը

**212. Ո՞րն է Համո Սահյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն:**

- 1) «Բարձունքի վրա»
- 2) «Իրիկնահաց»
- 3) «Նահիրյան դալար բարդի»
- 4) «Որոտանի եզերքին»

**213. Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Հիմա այդ մեծ գերդաստանից  
 Ոչ մեկը չկա...  
 Ես եմ մնում.....  
 Եվ իբրև վկա:

- 1) իբրև նմուշ
- 2) իբրև ժառանգ
- 3) լոկ իբրև հուշ
- 4) իբրև մեծ թոռ

**214. Ո՞ր բառը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Փայտահատը հին երգն էր կրկնում  
 Եվ տաք սղոցն էր յուղում իր կրկին,  
 Թեղին անտարբեր ականջ էր դնում  
 Տապալված կաղնու խուլ .....

- 1) տառապանքին
- 2) հառաչանքին
- 3) արձագանքին
- 4) չարչարանքին

**215. Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Անտառում խորին խորհուրդներ կային,  
 ..... կային անտառում,  
 Օրոր էր ասում աշունն անտառին,  
 Սակայն անտառի քունը չէր տանում:

- 1) Կապույտ մշուշներ
- 2) Մարդկային հետքեր
- 3) Խոնավ բուրմունքներ
- 4) Եվ արձագանքներ

**216. Նշվածներից ո՞րը Պարույր Սևակի բանաստեղծական ժողովածուներից չէ:**

- 1) «Բարձունքի վրա»
- 2) «Եղիցի լույս»
- 3) «Մարդը ավի մեջ»
- 4) «Անմահները հրամայում են»

**217. Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Դու՛ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,  
 Գիրն ու տառն ես Հայոց երգի:  
 Հայոց երգի  
 Անձիր հերկի  
 Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,  
 Ե՛վ մատնընտիր սերմը նրա,  
 Ե՛վ խոստումը գալիք բերքի...

- 1) «Անլռելի զանգակատուն»
- 2) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»
- 3) «Եռաձայն պատարագ»
- 4) «Մարդ էլ կա, մարդ էլ»

**218. Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Բարեկամաբար ասացե՛ք նաև.  
Քանի՞ տարին մեկ աշխարհ է գալու  
Ա՛յն անդերսենյան մանուկը,  
Որից  
Թագավորները պիտի իմանան,  
Որ մերկ են իրենք:

- 1) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 2) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 3) «Վարք մեծաց»
- 4) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»

**219. Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր  
Միրում է կյանքում նա իր... աթոռը:  
Աթոռն է սիրում  
Ու նրան տիրում.  
Ցանկացած գնով ելնում է նա վեր,  
Փորձում է թռչել նա առանց թևեր,  
Անվերջ սողալով առաջ է գնում...

- 1) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 2) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 3) «Վարք մեծաց»
- 4) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»

**220. Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի  
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,  
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լույսի այն պատճառով,  
Որ անչափ շատ են սպասել Նրանց:

- 1) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 2) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 3) «Վարք մեծաց»
- 4) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»

**221. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

...Նրանից առաջ կային աստվածներ՝  
Երկրնքի, սիրո, պտղավորումի,  
Ինչպես փոթորկի, նաև... դպրության:

Եվ բոլորը՝ մինչևիսկ ստույգ,  
Վերջինըս սուտ էր, սուտ ասուցապես.  
Աստված կար, սակայն դպրություն չկա՛ր:  
Նա՝ հավատավորն իր նոր հավատի,  
Դպրության մեր սուտ աստծուն վրռնդեց  
Եվ Ինքը մնաց նրա փոխանակ:

- 1) Պարույր Սևակ, «Անլռելի զանգակատուն»
- 2) Պարույր Սևակ, «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
- 3) Լևոն Շանթ, «Հին աստվածներ»
- 4) Դանիել Վարուժան, «Հարճը»

**222. Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝  
Հայտարարվում է և օրենքից դուրս:  
Բայց չե՛ն վախենում նրանք չար մահից.  
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

- 1) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 2) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 3) «Վարք մեծաց»
- 4) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»

**223. Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի տրված հատվածում ո՞ր տողն է բաց թողած:**

Ամեն քար՝ լուռ մահարձան,  
Ամեն տուն՝ վառման հնոց.  
.....

- 1) – Գարուն ա, ձուն ա արել...
- 2) – Ջուրը մեր տունն ա տարել...
- 3) – Բնավեր հավք ենք դառել...
- 4) – Արունը ջուր ա դառել...

**224. Նշվածներից ո՞րը արձակ ստեղծագործություն չէ:**

- 1) Վիլյամ Սարոյան, «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը»
- 2) Հրանտ Մաթևոսյան, «Աշնան արև»
- 3) Հովհաննես Թումանյան, «Հառաչանք»
- 4) Ակսել Բակունց, «Մթնաձոր»

**225. Նշվածներից ո՞վ Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի հերոսներից չէ:**

- 1) Արուսը
- 2) Ադունը
- 3) Ռոստոմը
- 4) Միմունը

226. Ո՞ր շարքի բոլոր գրողներն են նորագույն շրջանի հայ գրականության ներկայացուցիչներ:

- 1) Խաչիկ Դաշտենց, Վահան Տերյան, Վահագն Դավթյան
- 2) Հրանտ Մաթևոսյան, Սերո Խանգաղյան, Մուշեղ Գալոսյան
- 3) Լեռ Կամսար, Նար-Դոս, Վարդգես Պետրոսյան
- 4) Կոստան Զարյան, Մուրացան, Գևորգ Էմին

227. Միլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծության վերջին քառատողում ո՞ր բառն է բաց թողած.

Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ր էլ լինես,  
Այս լուսնի տակ ո՛ր էլ գնաս,  
Թե մորդ անգամ ..... հանես,  
Քո մա՛յր լեզուն չմոռանաս...

- 1) սրտից
- 2) մտքից
- 3) գլխից
- 4) հոգուց

## ԳԼՈՒԽ 2 ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

### ԲԱԺԻՆ 1 ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### I ՏԵՄԱԿ

1. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում է գրվում է.**  
ջր-ջր, երբև-, դող-րոցք, ան-անալ, հն-աբան, մանր-աբան, առ-ջ, չ-ինք, միջօր-ական, հ-կ:
2. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում գրվում է .**  
ան-, երբևից-, մանր-, վայր-ջր, լայն-կրան, առօր-ական, լուսն-ջր, այժմ-ական, ինչև-, գոմ-շ:
3. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում է գրվում օ.**  
հանապազ-րոյ, հանապազ-րյա, աման-ր, պնդ-ղակ, օրըստ-րե, նախ-րոք, ամեն-րյա, բախտ-րոշ, գիշերուզ-ր, ապ-րիհի, հ-գուդ, մեղմ-րեն:
4. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում չի գրվում չ.**  
կոր-նթարդ, դյուր-նթեռնելի, չ-նդհատել, թր-խկ, առ-նչվել, ակ-նկալել, հոտ-նկայս, կ-նկնի, հյուր-նկալ, համ-նկնել, ունկ-նդիր, ինքն-ստինքյան:
5. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում և.**  
գոտ-որ, եր-ույթ, հոգ-արք, կար-որ, ոսկ-որել, հոգ-որ, օթ-ան, իջ-անել, բ-եռային, կար-եր, սերկ-իլ, ազ-ազ:
6. **Տրված բառերից և բառաձևերից քանիստ՞ում չի գրվում յ.**  
է-ույթյուն, Մարի-ամ, Ռ-աֆա-ել, ուխտադրու-ժ, պո-են, ա-երողաբոց, ժողովածու-ում, բերե-ի, Կահիրե-ից, Ամալ-ա, Սերգե-, բար-ացական:
7. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ք .**  
թամ-, բամ-ակ, Սերո-, պղնձակո-, իրավամ-, խա-շիկ, թմ-լիկ, քերով-ե, խա-կանք, խարխա-ել:
8. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում կ .**  
անհար-ի, տաղտո-, տա-դեղ, վար-աբեկել, ֆրա-, ռե-վիեն, սև-նած, ստուգար-, սրտխառնու-, ճ-վածք, ճա-ճ-ել, վարա-:
9. **Նախադասություններից քանիստ՞ում է գծիկների փոխարեն գրվում միայն դ.**
  - Բնության գար-ունքը մեզ դր-եց դեռ երկար ժամանակ մնալ դրսում:
  - Ըն-արմացած ուղևորներին սկսեց անհանգստացնել խոր-ուրոր- ճանապարհը:
  - Մի ակնթար-ում անհետացավ կորնթար- քթով մարդը:
  - Չվար-ի արյունը լեր-ացել էր:
10. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ջ.**  
հաղար-, չղ-իկ, խառնիճաղան-, թր-ոց, շեղ-ակույտ, գո-ի, ա-պարար, գի-ել, լա-վարդ, գղ-ալ, գաղ-, մար-ան:
11. **Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ճ.**  
շեղ-, ակնակապի-, աղ-ատել, ա-պարար, թառան-, խո-կոր, պա-ու-անք, գո-ի, գա-ան, փայտո-իլ, խառնիճաղան-, ար-առ:

**12. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում չ.**

ակնակապի-, աղ-ատել, ա-համբույր, կո-կել, պ-նանք, թր-ել, քուր-, փար-, խո-կոր, մի-և, ուռ-անալ, գոքան- :

**13. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ց.**

կաղկան-, հերար-ակ, բար-իթողի, վար-կան, տր-ակ, խուր-, քուր-, փղ-կալ, ուր- , դեղ-անիկ, խոտհուն-, որ-աքար:

**14. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ծ.**

դողերո-ք, այրու-ք, դաջվա-ք, ճրագալույ-, անդամալույ-, տխեղ-, վեհապան-, մտա-ություն, ձվա-եղ, շղթայապուր-:

**15. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ղ.**

դժո-ք, թու-ս, Ջավա-ք, ա-տեղություն, նա-շագարդ, երկնամու-, փայծա-, սպանա-, ճո- փյուն, ա-տորոշել, գա-տագողի, տա-տակ:

**16. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում խ.**

բա-տակ, Սանդու-տ, խրո-տ, ա-ճատել, ու-տապան, Վա-թանգ, կ-տար, հա-ճապակի, վա-ճան, փա-չել, պանդու-տ, թ-կի:

**17. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում խ.**

խա-տել, ե-կելի, կթ-ա, նա-կին, պ-տոր, ա-ք, բո-կ, մ-կտալ, նա-ճիր, տա-տկալի, գ-ջալ, սանդու-ք:

**18. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ռ .**

ե-եսուն, ոսկո-, պայտա-, ժխո-, անախո-ժ, սարս-ալ, փ-փռալ, բ-ոնգ, փ-թկացնել, կ-ճիկ, ուղղափա-, մա-ախուղ:

**19. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում մ.**

ա-բարտավան, ա-բիծ, վերա-բարձ, Դուշա-բե, ա-բարիշտ, բա-բասանք, բա-բիշ, սի-ֆոնիա, ա-բասիր, թ-բուկ, սուսա-բար, ա-բին:

**20. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում մ.**

բա-բեր, բա-բիռ, ա-պաճույճ, ա-փառունակ, ա-բիծ, ա-պատճառ, ա-պարփակ, ա-պայման, ա-փույթ, ա-փայլ, Մա-վել:

**21. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում հ .**

արհամար-անք, ամպ-ովանի, խոնար-ում, բարեշնոր-, ապաշխար-անք, արհավիր-ք, ընդ-ամենը, ընդ-անուր, մանադագագ-, հեթ-եթալ:

**22. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ս.**

Թեոդո-իա, Ա-պրամ, բա-կաթոռ, տրոլեյբու-, Մանա-, հիպնո-, իշիա-, Սուքիա-, Վարդգե-, ան-ալ, ա-ոխ, ան-քող:

**23. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում ֆ.**

փլա-, Օ-սաննա, հարա-, թա-շյա, նա-թ, աս-ալտ, Ա-դանստան, նգո-ք, արմա-, մա-ր:

**24. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում յու.**

ընկ-գ, համբ-ք, ներկան-թ, դաշ-ն, բագմանկ-ն, անագոր-ն, ս-նագարդ, աստղաբ-լ, պայթ-ն, դ-րին:

**25. Տրված բառերից քանիստ՞ում չի գրվում իս.**

ակաց-, բամ-, Անան-, գործուն-, Սուք-ս, դաստ-րակ, հր-, Սիր-, միլ-րդ, մում-, Անալ-, Եղ-:

**26. Տրված բառերից քանիստ՞ում է գրվում *առ*.**

չեմպ-ն, Լ-նարդո, մարմար-ն, քամեղ-ն, լեզ-ն, ակորդ-ն, բրաբ-ն, թ-րեմ, մեղալ-ն, պանթ-ն, Թ-դոսիա:

**27. Տրված բառերից քանիստ՞ում *կրկնակ բաղաձայն* կա.**

հո-երգություն, հետաք-ին, պ-սահողմ, բա-աղ, ա-կուն, հո-ուիի, այ-ուբեն, ֆի-ական, ու-աբերձ, բնօ-ան, տա-ական, եր-ենցաղ:

**28. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

առհամարիել, նշտարենի, ամբարիշտ, խառնիճաղանճ, կոթնել, ապաշխարիել, վարկյան, բամբեր, մարմարիոն, սահմուկել, թիկնօթոց:

**29. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

Օվսաննա, իշիագ, արհավիրիք, ուղղորդել, տարրալուծել, անբարիշտ, քողտիք, սուսանբար, հանապագօրդ, նախօրոք, նախճիր:

**30. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

ռահվիրա, արտասուզ, տնօրհնեք, սիգապանձ, ստնտու, վարաքիչ, վաղորդայն, գահրնկեց, քղանցք, փասյան, միմիայն:

**31. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

փախչել, գեղչել, գղչալ, գիջել, թաղկել, գաղջ, աղջամուղջ, գոճի, եղջերու, ընչանցք, գոքանչ, կիսափուտ:

**32. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

սպանաղ, բամիա, բողկ, աղցան, սուսամբար, սիբեղ, կուլիչ, ակրատ, հաղարջ, բաղարջ, բրդուչ, եղինջ:

**33. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

մարմարիոն, տրիլյոն, մշկընկույզ, Ամալյա, ակարդեոն, Սիբաելյան, միմյայն, սյունակ, փասիան, Մետաքսյա, Բենյամին, աշխույժ:

**34. Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

կարկառել, առնթեր, անհեթեթ, թավալզոր, երկորյակ, խրթվիլակ, դժխեմ, առընչություն, նաղազարդ, հարթաքանդակ, հանապագօրդ:

**35. Տրված տեքստում քանի՞ ուղղագրական սխալ կա:**

Տարերգի դեմ կռվելը տարրական բան չէ: Թեկուզ շտուլանդական քաթանից կարված լինեն, չեն դիմանա մրրիկին, կնկնեն առագաստները: Դեկտեմբերի տասնինին բարձրացավ իններորդ ալիքը: Մրրկածուփ օվկիանոսի ալիքների հուշկու շեղջերը բարձրանում էին վեր ու հսկայական շաշուն-շառաչունով ընկնում ցած:

**36. Տրված տեքստում քանի՞ ուղղագրական սխալ կա:**

Մի քանի օրից տանջալուկ հիվանդն ապաքինվեց: Նրա ոսկորն ու կաշին էին մնացել, և մումյա հիշեցնող կմախքացած մարդու հագուստները խրտվիլակի լաթերի պես կախվել էին վրայից: Գզգզված մորուքն ու ընչանցքը, ալեզարդվող երկար մագերը տարորինակ տեսք էին տվել նրան:



**37. Տրված տեքստում քանի՞ ուղղագրական սխալ կա:**

Կտակը բաց արին հանգուցյալի մահվան երրորդ օրը: Դ-ա հանգուցյալի զգացմունքների սրտաբուղ զեղումն էր, ինչպես նաև գործնական, պաշտոնական անհույզ մի վավերաթուղթ՝ նրա թողած միլիոնների հետագա բախտի վերաբերյալ: Ծերունին ասել էր, ծխական քահանա Սիմոնը՝ արձանագրել: Հանգուցյալը ամենից առաջ պատվիրում էր Սմբատին Սիքայելի արփշիռ վարկագիծը փոխել, նրան ուղիղ ճանապարհի բերել՝ կտրելով այն այլասերված կենցաղից, ցույ ու շվայտ կյանքից, որի մեջ օրըստօրե փթում է նրա երիտասարդ մարմինը: Հետո պատվիրում էր արթուն հսկողություն ունենալ Արշակի վրա, սիրել և հարգել մորը, ապրել նրա հետ մի հարկի տակ, անբաժան:

**38. Տրված տեքստում քանի՞ ուղղագրական սխալ կա:**

Իշխանուհին մոտ եռեսուն տարեկան մի կին էր՝ գեղեցիկ ու գրավիչ: Նրա մեծագույն հմայքը թերևս պայմանավորված էր հեզահամբյուր դեմքով, որը դրսևորում էր հոգու յուրօրինակ խորություն ու բարյացակամություն շրջապատի նկատմամբ: Շականակագույն աչքերը՝ ասես փոքր-ինչ մշուշապատ ինչ-որ սևեռուն մտքից, խոսում էին ներքին խռովահույզ կյանքի ու բախտին հոգեպես լիովին համակերպված լինելու մասին: Իշխանուհու կոպերը, որոնք գրեթե միշտ խոնարված էին, քողարկում էին աչքերի կենսաթոթիո հուրը: Եթե նույնիսկ գոյություն չունենար ոչ մեկն այս նշաններից, որոնց միջոցով փորձված դիտողի խորագննին հայացքը կարողանում է պարզել բնավորության սքողված գծերը, ապա միայն նրա նրբորոք, բայց և շփոթահար շարժումները պատկերացում կտար իշխանուհու՝ առեղծվածներով լի ու փոթորկահույզ հոգեվիճակի մասին:

**39. Տրվածներից քանիսի՞ քաղաղրիչներն են գրվում միասին.**

փութ(եռանդ), թան(ապուր), հետ(մնալ), հարյուր(հազար), ի(հեճուկս), առ(այն), ափ(հանել), դեմ(դիմաց), իրար(անցում), միտք(անել), հենց(որ), ամենից(երկար), առ(և)տուր, վեր(կենալ), խուլ(համր), պատ(շարել):

**40. Տրվածներից քանիսի՞ քաղաղրիչներն են գրվում միասին.**

մարտ(արվեստ), ազդր(ոսկր), մակ(երիկամ), գրուց(ընկեր), առ(հասարակ), թույլ(տվություն), բուժ(օգնություն), հև(ի)հև, հետ(գրություն), խոտ(հարք), թերի(բարձրագույն), երկաթ(զիծ):

**41. Տրվածներից քանիսի՞ քաղաղրիչներն են գրվում գծիկով.**

գործ(ընկեր), հենց(որ), ինչը(որ), վազք(ուղի), մինչև(որ), պետ(կրկես), ճեփ(ճերմակ), կենաց(մահու), բառ(մասնիկ), պատե(պատ), զին(գրքույկ), օղ(ուղի):

**42. Տրվածներից քանիսի՞ բոլոր քաղաղրիչներն են գրվում մեծատառով.**

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅ, ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ, ԱՐԳԻՇՏԻ ԹԱԳԱՎՈՐ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ:

**43. Քանի՞ բառակապակցության մեջ մեծատառի գործածության սխալ կա.**

Հայաստանի Ազգային պատկերասրահ, Կիրոս Կրոսեր, Սիլոսյան Վեներա, Գրիմ Եղբայրներ, Չմեռային Պալատ, Սուրբ Հաղպատի վանք, Սուրբ Դազար Կղզի, Պեր Լաշեզ, Հայրորդաց Տուն, Մյասնիկյանի Հրապարակ:

**44. Քանի՞ բառակապակցության մեջ մեծատառի գործածության սխալ կա.**

Արևմտյան Ուկրաինա, գատկի կղզի, Նուբիական անապատ, Հայկական Տավրոս, հին Հունաստան, Նյուրնբերգյան դատավարություն, Աքեմենյան Պետություն, Արաբական թերակղզի, Բագրատունյաց հարստություն, Բալեարյան Կղզիներ:

**45. Քանի՞ ձայնավոր հնչյուն կա քրթմնջյուն բառում:**

**46. Քանի՞ քաղաձայն հնչյուն կա Երզնկա բառում:**

**47. Բառերից քանի՞սն են սկսվում ձայնավոր հնչյունով.**

Եվրոպա, հոգուտ, որմզդեղն, եղեգնուտ, հիրավի, ընթրիք, յոթանասուն, էկոլոգիա, յուրային, ով, ոգևորվել, եռօրյա:

**48. Բառերից և բառաձևերից քանիսի՞ վերջին վանկն է շեշտվում.**

միթե, նամանավանդ, Կապան, որպիսի, Գ-յումրի, որերորդ, ուսուցիչը, հանձն առնել, դուստր, միջնորմ, առաքյալ:

**49. Բառերից և բառաձևերից քանիսի՞ բոլոր վանկերն են փակ.**

անպայման, կարկանդակ, ներամփոփ, ծածկույթ, ծածկոցներ, ընդգծվել, քայլվածք, փշրտել, սայլապան, բանակցել, նրբագեղմ, ամրացնել:

**50. Բառերից քանիսի՞ բոլոր վանկերն են փակ.**

հնչեցնել, հյուսվածք, գոմնել, հիշեցնել, բնաշխարհ, բորբոքվել, բոցկլտալ, հյուրընկալ, ընթերցել, ինքնավար, ինչքան, ընկղմել:

**51. Բառերից և բառաձևերից քանիսի՞ բոլոր վանկերն են բաց.**

հեռակա, հյուրասիրելու, հնամենի, ձեռնտու, ձևափոխելու, հայելի, մեկուսի, վերարկու, Սամարա, նայելու, մեղավորի, հիշատակելի:

**52. Բառերից քանիստ՞ն գաղտնավանկ չկա.**

մանրահատակ, դասընկեր, փափկամորթ, չմուշկ, գրքային, դեղորայք, մանրել, մարդկային, զննել, ատամնաբույժ, գանգրահեր, ամբաստանյալ:

**53. Բառերից քանիստ՞ն է գաղտնավանկի ը-ն սխալ տեղադրված.**

կռթ(ը)նել, մկ(ը)տել, մարմ(ը)նական, ձեռ(ը)նբաց, խ(ը)նդրանք:

**54. Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավանկ.**

կուսակցական, կրավորչի, գնդասեղ, թիավարել, ալեծուփ, տղամարդ, մորաքույր, մտահայեցություն, ավարառու, փախստական, կետորսանավ, մշտադալար:

**55. Բառերից քանիսի՞ վերջին արմատն է միավանկ.**

տեղատվություն, անմեղասակից, կենսաժալիտ, ինքնուսույց, մանրագին, փոշեկուլ, շահամուլ, վաղանցիկ, ալեկոծ, կառավարում, վերնաշապիկ, կռփամարտ:

**56. Բառերից քանիսի՞ առաջին արմատն է բազմավանկ.**

կնճռապատ, որդեսեր, բազմազբաղ, դրույքաչափ, պատմվածք, փոշեկուլ, մանրախնդիր, ուղեվճար, ջրօրհնեք, ծամծմված, ծնրադիր, սկզբնական:

**57. Բառերից քանիսի՞ վերջին արմատն է բազմավանկ.**

ծանոթագրություն, մեծապատիվ, գաղտնաձածուկ, նվիրատվություն, ռազմաճակատ, մեղրածոր, ծանրակշիռ, գեղագանգուր, խորագին, մեծաշնորհ, բարեխնամ, մելամաղձոտ:

**58. Բառերից քանիսի՞ առաջին արմատում հնչյունափոխություն կա.**

ակնդետ, դիպակազգեստ, ընձուղտ, թռչնորս, նստակյաց, մտամոլոր, ծանրաձող, ժողովրդական, թիկնաթոռ, ծածկալեզու, տարեմուտ, գինետուն:

**59. Բառերից քանիսի՞ երկրորդ արմատում հնչյունափոխություն կա.**

թռչնաբուծարան, ալեծփուն, տղամարդկային, գնահատել, պատասխանատվություն, ջրածնային, նկարագրություն, դասացուցակ, մանկապատանեկան, ցուցափեղկ, ուղենշային:

**60. Բառերից քանիստ՞ն ու ձայնավորի հնչյունափոխություն կա.**

բնութագիր, շարակցական, սնունդ, հնոց, խցանահան, մշկենի, գուժկան, տնկարան, բռնագրոսիկ, արծվենի, սառցահատ, նշածն:

**61. Բառերից քանիստ՞ում *Հ(ե)* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

իմանալ, իջևան, իհարկե, ինքը, իրական, իշիաս:

**62. Բառերից քանիստ՞ում *ի* ձայնավորի սղում կա.**

հոգատար, աղավնատուն, թշնամաբար, սնահավատ, ձգողություն, կղզյակ, գերություն, դարչնագույն, հոգևոր, հաշվապահ, գծագիր, միջնակարգ:

**63. Բառերից քանիստ՞ում ձայնավորի հնչյունափոխություն կա.**

առաքելություն, սպավիհներ, պտտվել, ձվակեր, լվիճ, կարոտախտ, արաղաց, որկրամոլ, դրժել, շողակն, իջվածք, շոգեբաղնիք:

**64. Բառերից քանիստ՞ում հնչյունափոխություն կա.**

շնչասպառ, որևէ, փախստական, սղագրել, ելարան, շամփրել, նետածիգ, սնկանման, գիտական, կաշուն, ընչացք, ծնրադիր:

**65. Բառերից քանիստ՞ում *երկհնչյունի* հնչյունափոխություն կա.**

փութաջան, դրժել, լուսատու, արնաշաղախ, խուզարկու, ուսուցչապետ, նստացույց, արաղաց, սենեկապետ, բուրումնալից, սուրալ, ակեհույզ:

**66. Բառերից քանիստ՞ում *ույ երկհնչյունի* հնչյունափոխություն կա.**

ծուլանալ, արնաներկ, սնգուրել, վարագուրածածկ, թռչնաբույծ, համբուրել, գունավորել, կուտակում, խուսափել, ձուլածո, հուսահատ, կուսակրոն:

**67. Տրված բառաշարքերից քանիստ՞ում *յա* երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

- այժմեական, մշտնջենական, որդիական, տնայնագործ
- կատարելագործել, բույեական, վայրկյան, գոյական
- դշխոյական, ջղայնանալ, ստորոգելիական, մարմնական
- վերջնական, առաքելական, առօրյա, հավիտենական

**68. Նախադասություններից քանիստ՞ում հնչյունափոխված բառ *չկա*:**

- Պատանին դժվարությամբ արթնացավ արևածագից առաջ:
- Մեկ ուրիշը պնդում էր, թե թեյն ավելի անուշաբույր էր թվում այդ բաժակների մեջ:
- Նա հագավ հատուկ այդ օրվա համար պատրաստված և սպիտակ դերձանից կարված արաբական տարազը:
- Արմավենիների արանքում սփռված էին անհամար գույնզգույն վրաններ:

**69. Քանի՞ շարքի բոլոր բառերի արմատները ոչ մի դեպքում *չեն* հնչյունափոխվում.**

- գիստ, գինդ, հրապարակ, մուրճ
- ոլորտ, դուքս, կուղբ, ուրբաթ
- ցողուն, թեմ, քուղ, քուրդ
- վիթ, մարդ, նետ, նիգ

**70. Հնչյունափոխության քանի՞ դեպք կա տրված հատվածում:**

Նա ուսանողներին բացատրում էր, որ բոլոր երկրները պետք է առաջադիմեն, և իրենք նույնպես չեն կարող հետ մնալ. դա կլինի ճակատագրական: Նա նաև ասում էր, որ առաջընթացն անխուսափելի է, բայց խնդրահարույց կլինի, եթե մենք դրա մաս չկազմենք: Ինչ վերաբերում է ժողովրդի մասնակցությանը կյանքի առաջընթացին, սպա պետք է ձգտել դեպի առավելագույնն ու լավագույնը:

## II ՏԵՍԱԿ

### 71. Նշել այն բառերի համարները, որոնցում գրվում է *զ*.

1. գա-բախտս, 2. ան-ալ, 3. ան-այթաք, 4. թիկնա-որ, 5. ասուլի-, 6. Հա-կերտ, 7. պար-կա,
8. ան-թափ, 9. Վարդգե-:

### 72. Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերում գրվում է *դ*.

1. որ-նել, ջարդուխուր-, Սե-րակ, Վար-իթեր
2. վր-ովել, նյար-ային, նշ-արենի, հար-արել
3. հոր-առատ, հաշման-ամ, եր-իկ, եր-ում
4. զար-արանք, զար-ուղի, ընդ-արմանալ, լյար-
5. դր-ապատճառ, Նվար-, Ջվար-, Վր-անես
6. բր-ուճ, ար-ուկ, ար-ար, գր-նակ

### 73. Նշել այն շարքերի համարները, որոնց բառերից ոչ մեկում չի գրվում *ժ*.

1. ն-տար, որմնախոր-, պատ-գամբ, ճ-գրիտ
2. հու-կու, նաժի-տ, խո-որ, երա-տահավ
3. դ-խուհի, խոր-ակ, պագ-ոտ, գու-ակ
4. անախոր-, ն-դարենի, բ-տիկ, ն-խար

### 74. Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա.

1. տ-ալ, կ-անք, ծաղկափ-իթ, լուսա-իկ
2. ու-ամիտ, ծառու-ի, ա-ահայր, ըն-իմանալ
3. Հե-ադա, Աքի-ես, Հո-անդիա, Վիե-ա
4. ֆի-ական, խ-ալ, հո-երգություն, բա-աղ
5. ի-սունական, բու-այական, բնօ-ան, մ-կահավ
6. ճոճ-ալ, միատա-, վշտա-ուկ, այ-ենական

### 75. Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա.

1. թփուտ, 2. հապշտապ, 3. պարփակել, 4. թղպամած, 5. թփրտալ, 6. հապճեպ, 7. հափշտակել,
8. ինքնանփոփ, 9. ամպահյուս:

### 76. Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա.

1. ճկոել, 2. ճքնել, 3. ճկվել, 4. ճաքճքել, 5. ճամառտակել, 6. ճեղքել, 7. ճմրթել, 8. ճպրոտել,
9. ճառագել:

### 77. Նշել այն բառերի համարները, որոնք գրվում են միասին.

1. պատե(պատ), 2. առ(հասարակ), 3. շաքար(եղեգն), 4. սայաթ(նովյան), 5. հյուսիս(կորեական),
6. ըստ(իս), 7. հյուսիս(արևելք), 8. առ(այն):

### 78. Նշել այն բառերի համարները, որոնք չեն գրվում զծիկով.

1. մեծ(բրիտանական), 2. Արփա(Սևան), 3. առ(հավետ), 4. Նոր(Նորք), 5. շիփ (շիտակ),
6. կենաց(մահու), 7. գնալ(գալ), 8. սրբություն(սրբոց):

### 79. Նշել այն հատուկ անունների համարները, որոնց ոչ բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.

1. ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ, 2. ԳԱՅԼ ՎԱՀԱՆ, 3. ԿԱՊՈՒՏԱՆ ԼԻՃ, 4. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍՎՈՐԻՉ,
5. ՀԱԿՈՒ ՄԵՂԱՊԱՐՏ, 6. ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ, 7. ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 8. ՓՈՔՐ ԱՄԻԱ:

80. Նշել այն տարբերակների համարները, որոնցում տառակապակցության թվային արժեքը սխալ է նշված.

1. ԲԱԱ–9011
2. ՆԽԶ–446
3. ՃԺԵ–115
4. ՏՇՃԾ–4550

81. Նշել այն բառերի համարները, որոնցում ընդգծված *n*–ն հնչում է *o*.

1. եռոտանի, 2. ծնկոսկր, 3. որակագրկել, 4. անորակ, 5. բախտորոշ, 6. ամենաորակյալ,
7. ողբանվագ, 8. նրբառճ, 9. հայորդի:

82. Նշել այն շարքերի համարները, որոնցում կա բառ կամ բառաձև, որի վերջին վանկը *չի* շեշտվում.

1. միակ, հարս, համր, ամանորյա
2. մինչև, հեքիաթ, երրորդ, վարագույր
3. դեմ դիմաց, ընկերական, գիտեմ, չեմ տա
4. հիմար, տերև, դուր գալ, այսպիսի
5. աշակերտներ, դասագրքերից, թրղխկ, իբրև
6. կանգնիր, վագիր, խոսում եմ, կգրեմ

83. Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի սղում կա.

1. փոքրիկ, 2. հնանալ, 3. զինամթերք, 4. լուսավոր, 5. առաջնային, 6. պատանյակ, 7. բացառիկ,
8. ձեղնահարկ, 9. մաքրակենցաղ:

84. Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.

1. կուսակից, 2. ծուլամիտ, 3. չարագույժ, 4. լռակյաց, 5. հաճոյախոս, 6. ջերմամեկուսիչ,
7. մահագուշակ, 8. պաճուճանք, 9. արևտախայ:

85. Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխության 3 դեպք կա.

1. ծնրադրություն, 2. մատնահարդար, 3. կիսաշրջագետ, 4. ձկնաբույժ,
5. պատմավիպագրություն, 6. սննդաբուժություն, 7. սրամտաբար, 8. վշտակցություն:

86. Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերում հնչյունափոխություն կա.

1. մանկիկ, մանվածապատ, կտրականորեն, ոսկյա
2. կազմալուծել, գաղտնախորհուրդ, բենզալցակայան, պատմիչ
3. ալեխիվ, բարձրատոհմիկ, ծնկոսկր, թիկնապահ
4. մեղեդայնություն, թունավոր, բռնագաղթ, դիվանագետ
5. ծխածածկույթ, հրաման, խրախուսանք, իջևան
6. անգգուշաբար, միգամած, միանման, ծիրանավառ

## ԲԱԺԻՆ 2 ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### I ՏԵՍԱԿ

**1. Քանի՞ բառագույգեր են իրար հոմանիշ.**

բարդ–կույտ, դշխո–թագուհի, խախուտ–կայուն, խաժակն–դեղին, դեղձան–խարտյաշ, սեպուհ–մատռվակ, սաղավարտ–վահան, դարման–սպեղանի:

**2. Քանի՞ բառագույգեր են իրար հոմանիշ.**

երկբայություն–տարակուսանք, դեզերել–իջևանել, գույժ–բոթ, գումարտակ–ամբարտակ, բոսոր–գանգրահեր, բանասարկել–բանավիճել, անընտել–անվարժ, անթաքույց–բացահայտ:

**3. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

անգուգական, առհավատչյա, լեզվազար, անըստգյուտ, գեխ, անխռով, երաշխիք, կատաղի, հեղզ, աննման, գրավական, շատախոս:

**4. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

ծեքծեքել, ողբասաց, ոլորան, խանդավառվել, պարուրել, կեռման, նագել, ոգորել, պչրել, եղերերգու, ոգևորվել, ճառագել:

**5. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

հմայություն, սրածություն, կականել, կափկափել, գանակոծել, ողբալ, կախարդանք, եղեռն, քարկոծել, կոծել, մոգություն, սպանդ:

**6. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

անգութ, պայմանագիր, լրջախոհ, ժանտ, համաձայնագիր, շրջահայաց, դժկամ, ստորագրություն, լրջմիտ, խստասիրտ, խստապահանջ, անցողիկ:

**7. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

գրավել, բորբոքվել, խանդաղատել, բռնանալ, հմայել, կառավարել, առիւնքել, գերիշխել, բռնկվել, այրել, փաղաքշել, գորովել:

**8. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

ծածուկ, բարեկարգել, բարվոքել, սրդողել, բրդել, գայթել, գողունի, գլորվել, թաքուն, մեխել, բարելավել, հոշոտել:

**9. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

սսկվել, պապանձվել, մունջ, անջրդի, տռզել, անձայն, տենչալ, ուռչել, լիքը, մղում, փափագ, տոկալ:

**10. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

որոգայթ, շառափ, թառափ, գանգ, տեգ, ականատ, շող, թակարդ, կառափ, մկունդ, լարել, ցուք:

**11. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

երկչոտ, դյուրաթեք, խարդախ, անիրավ, առաձգական, դրուժան, անարդար, տավիղ, վախկոտ, բնագդ, վեհերոտ, ենթագիտակցություն:

**12. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

գզգզել, այպանել, հեգել, արտանետել, ծվատել, ծանակել, կքել, արտաբերել, ձգել, պատառոտել, տատանվել, կեղտոտել:

**13. Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

փառահեղ, մեծաշուք, մահակ, ցուպ, հոգաբարձու, խնամակալ, շքեղագարդ, գավազան, պատճառ, առիթ, պատրվակ, խնամատար:

**14. Քանի՞ բառագույգեր են իրար հականիշ.**

կապա-պատմունճան, հանուն-ընդդեմ, զարտուղի-օրինական, ապառիկ-կանխիկ, տարտարոս-գեհեհն, անձուկ-նեղ, ճապաղ-ծավալուն:

**15. Քանի՞ բառագույգեր են իրար հականիշ.**

բանադրանք-օրհնություն, լախտ-մտրակ, լայնախոհ-նեղմիտ, ճաղատ-թավամազ, թոշնել-փթթել, անըստգյուտ-կատարյալ, ունևոր-մեծատուն, գռեհիկ-բարեկիրթ:

**16. Քանի՞ բառագույգեր են իրար հականիշ.**

քողտիկ-պալատ, անգո-իրական, առաքինի-բարոյագուրկ, տարտամ-որոշակի, առնական-կանացի, լուրթ-մով, տնանկ-մեծատուն, գողոն-անթաքույց:

**17. Բառերից քանի՞սն են երերուն բառին հականիշ.**

վախկոտ, կայուն, թույլ, առածգական, անհողդողդ:

**18. Բառերից քանիսի՞ բացատրությունն է սխալ.**

**տոնատ**-բանաստեղծության տեսակ, **սողոսկել**-ներս թափանցել, **տարվողել**-թաքուն պահել, **ուծատ**-ուժեղների հավաքատեղի, **ուղերձ**-զեկուցում, **ակրատ**-ընչագուրկ:

**19. Բառերից քանիսի՞ բացատրությունն է սխալ.**

**հոմանի**-մերկ, **ապապրել**-պատվիրել, **անըստգյուտ**-կասկածելի, **աճապարել**-շտապել, **առաքել**-քայլել, **քողտիկ**-հյուղակ, **քարվանսարա**-ուղտերի քարավան:

**20. Ընդգծված բառերից քանի՞սը փոխաբերական իմաստով գործածված չեն:**

- Լուռ հեկեկանքը պեկոծում էր նրանց, և «Արտասուքի աղբյուրը» յուր տխուր հառաչանքներով ձայնակից էր լինում նրանց **դառը** հառաչանքների:
- Այդ միտքը վրդովեցնում էր նրան և սիրտը լցնում մի **խուլ** տարակուսանքով:
- Բարկությունը **խեղդում էր** նրան, երբ մտաբերում էր վաղեմի ժամանակները:
- Բոլոր դռների պատուհանները փակ էին և պատված **սև** պաստառներով:

**21. Տրվածներից քանիստ՞ն է երես դարձնել դարձվածքի իմաստը սխալ բացատրված.**

արհամարհել, խռովել, մոռանալ, ծեծել, խուսափել:

**22. Տրված բառաշարքում *ան-* նախածանցով քանի՞ բառ կա.**

անգութ, անագ, անմման, անողոք, անհույս, անդրիագործ, անօդ, անող, անագնիվ, անոթ:

**23. Տրված բառաշարքում *-զույն* վերջածանցով քանի՞ բառ կա.**

վարդագույն, լավագույն, վեհագույն, դարչնագույն, կարմրագույն, հզորագույն, հնագույն, ոսկեգույն, ստորագույն, մեծագույն:

**24. Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

մանր-մունր, դեղ-դարման, առք-փառք, գիշեր-ցերեկ, այսօր-վաղը, հաց-մաց, կաս-կարմիր:

**25. Բառերից քանի՞սն են հողակապով.**

լուսանցք, բառախաղ, վայրէջք, ինքնատե, գինեմոլ, հարսնատես, սևերես, լուսաշող, այրուձի, մարդանման:

**26. Բառերից քանի՞սն են անհողակապ.**

նկարագիր, պատուհան, հրանոթ, գնդացիր, հրատարակիչ, դյուցագուն, ոգեղեն, բազմանկյուն, այգեպան, անձնանուն:

**27. Բառերից քանի՞սն են բարդ.**

անասնաբույժ, հետազիծ, անարժեք, միջնապատ, թուլակազմ, բյուրեղապակի, լեռնագագաթ, արծաթասեր, հնավանդ, գոյամարտ:

**28. Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *արտ*– նախածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

պարտատեր, անժամանակ, երկրագործ, տարադրամ, քսայուղ, հագուստ, ցուլցուն, կարկտախառն, գնացք, սահմանապահ:

**29. Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *տար(ա)*– նախածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

հանքափոր, ձևական, ուղեբեռ, կուսակցություն, կետադրություն, գիրանալ, երկսեռ, դժբախտաբար, կցկտուր, կարգապահ:

**30. Բառերից քանի՞սը միևնույն արմատն ունեն.**

երդիկ, երդնագանց, երդվյալ, երդում:

**31. Բառերից քանիստ՞մ կա *տար* արմատը.**

տարասեռ, ջրատար, տարակույս, տարուբերել, գործակատար, տարանցիկ:

**32. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ –ային*, *և՛ –ական* վերջածանցները և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

իրավունք, իսկություն, անգլուխ, դիվոտել, անգիր, ժողովուրդ, հնչյունաբանություն, լեռնաստան:

**33. Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *–վածք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

կավաշեն, վերադառնալ, արևայրուք, միակտուր, մենախոսական, կիսափուլ, բառակազմիչ, բնագիր, խառնիխուռն, սրտաբացություն:

**II ՏԵՄԱԿ****34. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *մեկենաս* բառին.**

1. միայնակ, 2. հովանավոր, 3. առաջնորդ, 4. բանբեր, 5. համհարգ:

**35. Նշել այն բառերի համարները, որոնք հոմանիշ են *գուպար* բառին.**

1. ապար, 2. կռիվ, 3. ծունկ, 4. հաշիվ, 5. գումար:

**36. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. ավազակ, 2. ավարառու, 3. թափառական, 4. թալանչի, 5. ելուզակ, 6. հեն:

**37. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. ակնաայիշ, 2. ակնկոր, 3. անքթիթ, 4. ակնդետ, 5. ուշադիր, 6. սևեռուն:

**38. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. պատիր, 2. խարուսիկ, 3. բանասրկու, 4. կեղծավոր, 5. ստահող, 6. սին:

**39. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. երևակայական, 2. հնարովի, 3. մտացածիմ, 4. ինքնահնար, 5. մտացի, 6. մտացրիվ:

**40. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. անամոթ, 2. անպատկառ, 3. լկտի, 4. ամբարիշտ, 5. ամբոխավար, 6. ժպիրի:

**41. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.**

1. նախօրինակ, 2. բնագիր, 3. բնաբան, 4. բովանդակություն, 5. նախերգանք, 6. բնօրինակ:



42. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հոմանիշ են.  
1. եզրակացություն, 2. պարբերություն, 3. ամփոփում, 4. խորագիր, 5. ներածություն, 6. գլուխ:
43. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.  
1. կամային, 2. անտեղյակ, 3. կամովին, 4. թուլակազմ, 5. կամկար, 6. թուլամորթ:
44. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.  
1. հեղզ, 2. ներհուն, 3. տարտամ, 4. չքմեղ, 5. որոշակի, 6. թույլ :
45. Նշել այն բառերի համարները, որոնք հականիշ են *կատարյալ* բառին.  
1. անկատար, 2. թերի, 3. գռեհիկ, 4. իրատեսական, 5. վատագույն, 6. պակասավոր:
46. Նշել այն բառերի համարները, որոնք հականիշ են *ընդարձակ* բառին.  
1. անձուկ, 2. ծավալուն, 3. լայն, 4. հակիրճ, 5. նեղ, 6. համառոտ:
47. Նշել այն բառերի համարները, որոնցում *դար* արմատը նշանակում է *բարձրություն*.  
1. միջնադար, 2. դարեդար, 3. դարավանդ, 4. դարամուտ, 5. ոսկեդար:
48. Նշել այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է.
1. գործակալ – որևէ գործի մեջ խիստ զբաղված անձ
  2. գրամոլ – գրելու հիվանդագին մոլուցք ունեցող անձ
  3. գրչակ – երիտասարդ գրող, ստեղծագործող
  4. գրչագիր – որևէ սկզբնաղբյուրից ընդօրինակված ձեռագիր հուշարձան
  5. գրչատուն – գրչության տուն, վանք, կամ դպրոց, որտեղ զբաղվում էին գրչությամբ
  6. գրաստ – բեռներ կրող կենդանի
49. Նշել այն շարքերի համարները, որոնցում բառիմաստի սխալ բացատրություն կա.
1. անօրինակ – 1. նմանը չունեցող, 2. անօրինական, 3. անսովոր, տարօրինակ, 4. արտակարգ, բացառիկ
  2. երախտագիտություն – 1. երախտիքը իմանալն ու գնահատելը, 2. երախտագետ լինելը
  3. զգացում – 1. զգալը, 2. հոգեկան ապրում, հույզ, 3. տենչ, 4. զգալու կարողություն, զգացողություն
  4. հազվագյուտ – 1. դժվարությամբ, հազիվ գտնվող, 2. բացառիկ, արտակարգ
  5. ակնարկ – 1. հարևանցի նայվածք, թռուցիկ հայացք, 2. աչքով արված նշան, 3. ոչ ուղղակի ասված խոսք, 4. համառոտ արված քննություն՝ նկարագրություն
50. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված բառերի՝ փակագծերում նշված բացատրությունները սխալ են:
1. Դիմացս **բացվել** էր մի չքնաղ տեսարան: (*տարածվել*)
  2. Ծաղկի պես **բացվել** էր նրա սիրտը: (*հրճվել*)
  3. Նա վախենում էր, որ հանկարծ **կբացվի**, ամեն ինչ կասի: (*հորինել*)
  4. Այգումս **բացվել** էին չքնաղ ծաղիկներ: (*ծաղկել*)
51. Նշել այն բառերի կամ բառակապակցությունների համարները, որոնք *առաջ տանել* դարձվածքի իմաստը *չեն* արտահայտում.
1. շարունակել, 2. կատարելագործել, 3. իր ասածն անցկացնել, 4. ճիշտ ուղու վրա բերել, 5. զարգացնել:

**52. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը ճիշտ է բացատրված.**

1. **ձյուն գալ գլխին**–գլխարկ չղնել, 2. **մուկ դառնալ**–խեղճանալ, 3. **շան նման**–չարքաշարար, 4. **ոտքի ելնել**–ապստամբել, 5. **սառը ջուր լցնել**–անտարբեր լինել, 6. **ռուբիկոնն անցնել**–մեծանալ:

**53. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.**

1. **աղբյուրը կտրել**–ծարավ թողնել, 2. **ակնարկ անել**–անուղղակի ինչ–որ բան հասկացնել, 3. **բերանի գոլն իմանալ**–ջերմությունը չափել, 4. **գերանդին քարի առնել**–անհաջողության հանդիպել, 5. **գործի մեջ քաշել**–ներգրավել, 6. **դեմը առնել**–կանխել:

**54. Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.**

1. **այլուրը մաղել, մաղը կախել**–գործերն ավարտել, հանգստանալ, 2. **առաքուր անել**– պատվի արժանացնել, 3. **առաջ բերել**–ուռճացնել, 4. **աչքի պոչով նայել**–աննկատելի նայել, 5. **առյուծ կտրել**–արիանալ, 6. **ասեղ բռնել իմանալ**–լավ տեսողություն ունենալ:

**55. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դարձվածք կա:**

1. Աղջիկը երիտասարդ ղեկավարին ընդունեց քիթը կախ և առանց մի բառ ասելու, բայց նրանից հեռացավ ժպտալով:
2. Կինը նկատեց այդ և գլուխը հակեց այնպիսի կոկետությամբ, որ բոլորը տեսան նրա սիրուն վիզը, մարմնի հազվագյուտ կատարելությունը:
3. Դառը շեշտով ասված այս խոսքերը այնպես ուժեղ ազդեցին նրա վրա, որ նա ապշահար նայեց Ռաֆայելին:
4. Ու մի ցատկով քիչ էր մնում՝ իսկույն ինձ մահի բաժին աներ, բայց հանդիպեց իմ հարվածին:
5. Նա մի կողմից անգուսպ պահանջ էր զգում բավարարելու իր մոլեգնությունը, մյուս կողմից՝ պարտվածի ոտքերն ընկնելու և ներողամտություն հայցելու:
6. Առանց հրամանի կատարված այդ գնդակահարության վայրագությունն ու նենգությունը համապատասխանում էին նրա սրտի գաղտնի իղձերին:

**56. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բառագործածության սխալ կա:**

1. Գործի դնելով էլեկտրական շառափը՝ թունելագործները փորձում էին աստիճանաբար քանդել այն մեծ քարաբեկորը, որի մյուս կողմում մնացել էին մի քանի բանվորներ:
2. Ջերմամիջուկային ռումբերի կիրառումը պատերազմող կողմերից մեկին ոչ միայն կարող է հաղթանակ պարգևել, այլև լիովին բնաջնջել կյանքը մոլորակի մեծ մասում:
3. Հերոսիմա և Նագասակի քաղաքների ռմբակոծությունից հետո ատոմային ռումբերն այլևս ռազմական ոչ մի գործառնություններում չեն կիրառվել:
4. Նրանք զայրացած կարդում էին նոր օրինագիծը, ըստ որի՝ ավելացվելու էին պետծառայողներից բռնագրավվող հարկաչափերը:
5. –Ինչպե՞ս կարողացաք վիրավորել մի մարդու, որը միշտ գուրկ է եղել չարակամությունից ու բանասարկությունից,– վրդովված ասում էր հայրս:

**57. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բառագործածության սխալ կա:**

1. Փոքրիկը փոփոացրեց բաժակի օճառը և սկսեց օճառագնդեր բաց թողնել պատուհանից:
2. Մեղադրական դատավճռով նախատեսված էր ոչ միայն մեղադրյալի երկարաժամկետ ազատազրկում, այլև ամբողջ գույքի բռնագանձում:
3. Աշխատանքային խումբը պարտականություն էր վերցրել սեղմ ժամկետում ավարտել գրքի սրբագրական աշխատանքները:
4. Միսաք Մեծարենցի «Ըլլայի՛, Ըլլայի՛ ...» շարքում իր համապարփակ դրսևորումն է ստացել այլապիրությունը:
5. Դրվատելի է ձեր պատրաստականությունը մեզ աջակցելու հարցում:

**58. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բառագործածության սխալ կա:**

1. Բոլոր տեղերից մի նպատակով էին գալիս. հույս ունեին մի բան իմանալու, մի լուր ստանալու իրենց գոհված հարազատի մասին:
2. Նրա հասկացողությանը խորթ է տարրական հասկացությունների իմացությունը:
3. Աշխարհում ավելի քան 12 մլն ժայթքում ունեցած հրաբուխը Մավադորում գտնվող Իսլակոն է:
4. Արքան մի փոքր մտածեց և վերահաս լինելով կատարվածին՝ կտրուկ բարձրացավ տեղից՝ նշանացի հասկացնելով, որ ներկաներն իրենց մենակ թողնեն:
5. Պալատական պերճ սրահներում աչքի էին զարնում տարբեր դարաշրջաններում ստեղծված գլուխգործոցները՝ հանրահայտ նկարիչների կտավները, ոսկեգօծ սկահակներն ու անոթները, բյուրեղապակե ջահերն ու նրբաճաշակ գորգերը, նաև շինական թրերն ու ասպետական հանդերձանքի պարագաները:

**59. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությանը ածանցավոր են.**

1. աղաման, 2. նոնենի, 3. որևէ, 4. հորդաբուխ, 5. լուսավառ, 6. սհեղ, 7. մահակ, 8. տարբեր, 9. հյուլե:

**60. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությանը ածանցավոր են.**

1. շրթունք, 2. անկյուն, 3. ցանցկեն, 4. դիմում, 5. անջատ, 6. աշխատանք, 7. վրիպակ, 8. անձավ, 9. գրգիռ:

**61. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությանը նախածանցավոր են.**

1. տհաս, 2. վերադարձ, 3. անդրաշխարհ, 4. անիմատ, 5. անագ, 6. նախնադար, 7. մակագիր, 8. անթացույ, 9. հակամետ:

**62. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությանը վերջածանցավոր են.**

1. տեսություն, 2. ազևոր, 3. համընդհանուր, 4. վերլուծական, 5. փոխնախագահ, 6. գերբնական, 7. հյուսվածք, 8. զագրելի, 9. քաղիան:

**63. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությանը բարդածանցավոր են.**

1. գունափոխություն, 2. դառնաղի, 3. դավադրորեն, 4. դարչնագույն, 5. դեղամիջոց, 6. դեղնակտուց, 7. վիպասան, 8. դասալիք, 9. արտասուք:

**64. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հետ ընդհանուր արմատ ունեն.**

1. անակնկալ, 2. կալանավոր, 3. որձկալ, 4. հյուրընկալ, 5. դնչկալ:

**65. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն նույն ածանցը.**

1. արտաբերել, 2. արտագնա, 3. արտագաղթ, 4. արտատեր, 5. արտաշունչ:

**66. Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հետ ընդհանուր արմատ ունեն.**

1. սպառնալիք, 2. ուժասպառ, 3. սպառնալից, 4. սպառնագին, 5. սպառնացող:

**67. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ –ի վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

1. խաղամոլ, 2. պատանեկան, 3. այգեգործ, 4. գերագույն, 5. քարայր, 6. ծերունական, 7. այրաբնակ, 8. տարկետում, 9. ծառատունկ:

**68. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ –իչ արմատը և բարդ բառ կազմել.**

1. տասնյակ, 2. ձողածուկ, 3. շարժուձև, 4. միամտություն, 5. փորձանոթ, 6. բազմավաստակ, 7. մարդանման, 8. ուղեմոլոր, 9. այսչափ:

## ԲԱԺԻՆ 3 ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### I ՏԵՍԱԿ

1. Տրված նախադասության մեջ ձևաբանական փոփոխության ենթարկված (ձևափոխված) քանի՞ բառ կա:

Կար մի ուրիշ խենթ, որ ամեն օր ընտրում էր մի փողոց և դրա մի որոշ կետից մի ուրիշ կետ անընդհատ գնում էր ու գալիս բացարձակորեն հանգիստ, երբեմն կանգ էր առնում՝ քիչ անց շարունակելով երթևեկը:

2. Տրված բառաշարքում *ուտել* բառի քանի՞ բառաձև կա.

ուտելիք, կերել եմ, չկերա, ուտում էին, ուտեստ, կուտեր, կե՛ր, կերած, ուտես, չեմ ուտի, կերել է, կերակուր:

3. Տրված բառաշարքում *հոգի* բառի քանի՞ բառաձև կա.

հոգեկան, հոգոց, հոգու, հոգիներով, հոգյակ, հոգուց, հոգիներին, հոգատար, հոգիները, հոգուն, հոգս, հոգիդ:

4. Քանի՞ զոյական կա տրված հատվածում:

Մենք Բուենոս Այրեսում հյուրընկալվելու էինք տեղի հայկական համայնքի կողմից: Մեր ուղեվարը Վահանն էր՝ բարձրահասակ, գեղահոն, փայլփլող աչքերով մի երիտասարդ: Գեղեցիկ տղա է ու մերն է: Շնորհակալ եղա մեր պապերին, որ մեզ համար ծնել են վայելչատես այս հայորդուն:

5. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է սխալ կազմված.

խցանահաններ, կողմնացույցեր, մաքսատներ, վերջնագիրներ, հետախույզեր, գրաբերներ, հարացույցներ, կարմրահերներ, օրապահներ, սպիեր, վիպագրեր, բաղաձայներ:

6. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է սխալ կազմված.

ծնկներ, ձևաբայեր, բաղաձայներ, ջերմաչափեր, տղամարդիկ, ստեղնաշարներ, անասնակերներ, կաթնասուններ, ատամնաբույժեր, շարասյուններ, էներգակիրներ, մակբայեր:

7. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *–եր* վերջավորությամբ.

խառնածին, լրտես, ժողովատեղ, գարեհաց, բայաձև, գազանյութ, եգրաշերտ, կցաթերթ, մարգատոն, նախրապահ, քարայր, սուզանավ:

8. Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *–ներ* վերջավորությամբ.

խորագիր, խոտհարք, ծանրաչափ, խռչափող, ծովախույզ, կավահանք, հեռախոս, ձայնատառ, հրաբուխ, ճահճաջուր, մակդիր, շամբահավ:

9. Գոյականներից քանի՞սն են անձնանիշ.

արքայորդի, արշավախումբ, անասնակեր, գրագիր, դպիր, դեսպանորդ, օրապահ, դերձան, հռետոր, երջանկություն, մրցավար, ուսանողություն:

10. Քանի՞սն են բաղադրյալ հատուկ անուն (կապակցությունները տրված են փոքրատառ).

եգիպտական հիերոգլիֆ, մագե կամուրջ, գլխավոր վարչություն, արծրունյաց տիկին, արտակարգ և լիազոր դեսպան, արյունոտ կիրակի, զինված ուժեր, մարդու իրավունքների եվրոպական դատարան:

**11. Գոյականներից քանի՞սն ունեն հոլովական զուգաձևություն.**

աղջիկ, տիրուհի, ամիս, հանգիստ, սուգ, օր, ձմեռ, դուստր, ծունկ, երեկո:

**12. Քանի՞ բառ ստացական կամ դիմորոշ հոդ ունի:**

- Երեխաներս աչքներս չէինք հեռացնում արագիլներից և ուշիուշով դիտում էինք նրանց ամեն մի շարժումը:
- Ավա՞ղ, խավարն ու չարը դժնյա և աշխարհիս գոռ հզորների սուրն ու բռունցքը խորտակեցին քեզ:
- Ողբում եմ դառը վիճակդ տխուր, ո՛վ իմ վիրավից, խոցված հայրենիք:
- Եվ վերքդ պոկի՛ր, տու՛ր ինձ, սիրելի՛ս, գոտեպնդվի՛ր և խրոխտ ու վեա կոչնակդ հնչեցրո՛ւ:
- Ինչո՞ւ ես տխուր, ամենաերջանիկդ մահկանացուներիս մեջ:
- Ամենայն երևույթ, ամենայն առարկա իր պատճառն ունի և իր հետևանքը, և մահկանացուներս կանգնած ենք պատճառների սանդուղքի մի անհայտ աստիճանի վրա:

**13. Քանի՞ ածական կա տրված հատվածում.**

Բարեկազմ մի աղջիկ էր նա՝ մոտ քսանհինգամյա, խարտյաշ մազերով, որի դեմքի գույնը՝ կաշվի թարմությամբ, այտերի առողջ կարմրությամբ, զատորոշում է այդ տարածքի կանանց: Նրա ծավի աչքերի հայացքը խելացիություն չէր արտացոլում, բայց արտահայտում էր նկարագրի որոշ ուժ՝ քնքշության հետ միախառնված: Ըստ նորմանդական սովորության՝ նրա մազերը հավաքված էին մի փոքր գդակի տակ և նրա դեմքին տալիս էին մի գրավիչ պարզություն՝ առանց սալոնների պայմանական ազնվականության:

**14. Թվականներից քանիսի՞ գրությունն է սխալ:**

- «Շոկոլադ» բառն առաջի անգամ Եվրոպայում լսել են իսպանացիները ացտեկների հնագույն մայրաքաղաքը թալանելիս:
- Լոս Անջելեսի կենդանաբանական այգում գիշատիչների համար վերակացուներ են կարգվել քսանից–հիսուն տարեկան կանայք:
- Օձը թույնը դուրս չի ցայտեցնում մինչև զոհի՝ մեկուկես–երկու մետր հեռավորության վրա գտնվելը:
- Ստոկհոլմում բացվել է նոր տիպի կինոթատրոն. այն բաղկացած է երեք փոքրիկ դահլիճներից, որոնցից յուրաքանչյուրն ունի հինգից մինչև մի քանի տասնյակ նստատեղեր:
- Կատուների թիվը հասել է վաթսուն միլիոնի, դեղձամիկներինը՝ քառասուն միլիոնի, շներինը՝ երեսուն միլիոնի:

**15. Քանի՞ դերանուն կա տրված հատվածում:**

Նա հիսունին մոտ մարդ էր, որ մի քանի տարի առաջ երևաց մորաքրոջս տանը և հետաքրքրվում էր հարմար սենյակով: Չեղնահարկում վարձելով մի փոքրիկ սենյակ և կողքի նեղլիկ ննջախուցը՝ այդ մարդը վերադարձավ երկու ճամպրուկով ու գրքերի ծանր արկղով և ապրեց մեզ մոտ ինը կամ տասը ամիս: Ապրում էր շատ անաղմուկ, ինքն իր համար, և եթե չլիներ մեր ննջասենյակների մոտիկությունը, որի հետևանքով պատահաբար հանդիպում էինք աստիճանների վրա կամ միջանցքում, առհասարակ անձանոթ կմնայինք միմյանց:

**16. Հատվածներից քանիստ՞ում հարաբերական դերանուն կա:**

- Ինչու է այդպես՝ գլխի չեմ ընկնում,
- Եվ գլխի ընկնող կա՞ մեկը տեսնես:
- Երբ հոգնած օրը կորչում է մթնում,
- Հոգնած լեռները ձորերն են մտնում:
- Մինչև նրանք հասցնեին
- Հանգուցյալից պատմել մի հուշ,
- Չարթնած հավքը կանչեց քարին.
- Ծնվող օրվա ճիչն էր անուշ:
- Փակ աչքին ի՞նչ, թե ջրվեժի
- Ուլունք–ուլունք արցունքի մեջ
- Մի ծիածան կպակասի:
- Շնորհակալ եմ իմ բախտից
- Եվ քեզանից՝ շնորհակալ,
- Որ կարող ես իմ տունը գալ
- Նորագյուղյան քո դրախտից:

**17. Նախադասություններից քանիստ՞ում բազմապատկական բայ կա:**

- Լեռնային անընդհատ շղթաներն իրենց բազմաթիվ ճյուղավորություններով կտրատել էին երկրի մակերևույթը:
- Երկար փնտրտելուց հետո նրանք վերջապես գտան կորած հարազատներին:
- Չայրույթից այլալված դեմքին աչքերը փայլվիտում էին դանակի շեղքի նման:
- Ժայռերի շիկացած լանջերից իջնող ուրցաբույր գեփյուռը շոյում էր նրա գրգռված նյարդերը:
- Լուսադեմին հողմը կայմից կտրեց մի քանի պարան և պատռեց չորրորդ առագաստը:
- Բուխարուց, որտեղ բոցկլտում էին վերջին ածխակոթերը, մերթընդմերթ ներս մտնող ծխի քուլաները ավելի էին բարձրացնում սենյակի խավարը:

**18. Բայերից քանի՞սն են պարզ.**

գարթնել, բռնել, հառնել, խթանել, սասանել, հավանել, խառնել, գետնել, զբոսնել, վատնել, օգնել, հայտնել:

**19. Բայերից քանի՞սը պատճառական չեն.**

սահեցնել, եզրակացնել, հասցնել, կանգնեցնել, յուրացնել, աճեցնել, դադարեցնել, հիշեցնել, հարցնել, լցնել, հազցնել, փախցնել:

**20. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ:**

Սակայն ինձ չհաջողվեց տեսնել նրա դեմքը. իմ կանգնելու տեղից առաջ գնալ չէի կարող, որովհետև լեփ–լեցուն եկեղեցում ընդհանրապես անհնար էր շարժվել, և ես առանց մի վայրկյան ձանձրանալու սպասեցի մինչև պատարագի վերջը:

**21. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ:**

Անընդհատ հոխորտում էր, ամպագոռգոռ խոսքերով փորձում էր բոլորին ապշեցնել՝ նույնիսկ մի ակնթարթ չմտածելով, որ երկու անպաշտպան կանայք կարող են հակառակ գնալ իր կամքին և դուրս գալ իր իշխանության տակից՝ նպաստելով նրա ինքնաուճանչացմանը:

**22. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված հատվածներում:**

- Եթե չեք իջել դուք երբևէ  
Ու չեք անրջել դուք երբևէ  
Ադոթարանիս լճակներում,  
Չվո՞ղ կարապներ, ձեզ չեմ ներում:
- Արդեն չես ուզում դրսում երևալ,  
Չես ուզում, որ քեզ տեսնեն քայլելիս,  
Չես ուզում արդեն մայթին երերալ,  
Յուպով բազմակետ դնել քայլելիս:
- Մեկ–մեկ այնպես է թվում,  
Թե ջահել եմ դեռևս.  
Ուզում եմ վեր սլանալ,  
Եվ չեն բացվում թևերս:
- Ձուրն ընկանք, կրակն ընկանք,  
Չմեռանք, բայց և չամրացանք,  
Խլացանք շատ լսելուց  
Եվ շատ լռելուց համրացանք:
- Սավերիս վրա փլվել,  
Փռվել եմ հայրենի արտում,  
Հայրենի արտի վրա  
Արտույտն իմ հայրենն է կարդում:

**23. Քանի՞ անկախ դերբայ կա տրված հատվածում:**

Տեղ է հասել ու տեսել, որ կնոջ ներկայությունը տղաներին ոգևորել է, նրանց թմրած ջղերը կենդանացրել, և յուրաքանչյուրը կարծում է՝ նրա ուզածն ինքն է: Եկել են խանութ՝ առևտուր անելու, գիտեն՝ ինչ են առնելու և ինչքան: Խանութին մոտենալիս պառավներից մեկը, ճանաչելով մեզանից սերվածին, փորձել է խոսքի բռնվել, բայց հանդիպել է նրա խայթող հայացքին ու հետ կանգնել իր մտադրությունից:

**24. Քանի՞ անկախ դերբայ կա տրված հատվածում:**

Հաջորդ գարնանը մեր արագիլը եկավ մեն–մենակ: Բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա, կանգնեց ու նորից եկավ բույնը: Եվ ամեն օր գնում էր նա այնտեղ, մի ոտքի վրա ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծռած, գլուխը թևերի տակ դրած: Տեսնում էինք հաճախ, թե ինչպես մի արագիլ մոտենում է նրա բնին, սկսում է նրա հետ խոսել ու դժկամ հեռանում է: Երբեմն էլ այդ եկվոր արագիլները փորձում էին նստել բնի մեջ, բայց նա մերժում էր և բույն մտնելիս նրանց հեռացնում: Քանի մեր արագիլը վանում էր նրան, նա նույնքան համառությամբ նորից թևերը փռում էր արագիլի վրա:

**25. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ:**

Այդ մեխը չէր կարող միայն իր ծանրությունից պոկվել. ո՞վ է ձգել, պոկել պարանը, ապա ջուր լցրել վրան՝ ուշքի բերելով անէացած վիճակից:

**26. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ:**

Եղել էր չափազանց աղքատ, բայց կարողացել էր ինչ–ինչ միջոցներով պահել ինքն իրեն, հայթայթել հանապազօրյա հացը, քանի որ միայն իրեն հայտնի բազմաթիվ աղբյուրներ գիտեր, որոնցով կարողանում էր վաստակել փոքրիկ գումարներ:

**27. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված հատվածում:**

Տասնյակ տարիներ էին անցել: Բարու գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս: Որքա՞ն փոխվել էր նա: Նրա զգգված մորուքը ճերմակ էր բամբակի պես, արագաշարժ ոտքերը թուլացել էին: Նա մեջքից կորացել էր, վառվռուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես: Բայց նա հպարտությամբ փորձեց պատասխանել իմ բարևին, ուղիղ ու ձիգ կանգնել, ու ես զգացի, որ սիրում ու հարգում եմ նրան:

**28. Ընդգծվածներից քանի՞սն են ժխտական ձևաբայ:**

- Տեսնո՞ւմ է աստված, որ այսքան տարի  
Բան **չի որել** մեր բախտի ամանում,  
Եվ **չորածն** էլ շատ է համարում:
- Եթե **չեք իջել** դուք երբևէ  
Ու **չեք անրջել** դուք երբևէ  
Աղոթարանիս լճակներում,  
Չվո՞ղ կարապներ, ձեզ **չեմ ներում**:
- Ես ձեր խիղճն եմ, ինձ **մի՛ խաբեք**,  
Ձեր թևերն եմ, ինձ **մի՛ կապեք**,  
Ինձ **մի՛ կտրեք**, ձեր երակն եմ:
- Չէ՛, աստված **չկա**: Լիներ՝ անպատճառ  
Մեզ իր մեծության սրբազան ծառից  
Կտար բարության այնպիսի պաշար,  
Որ հող **չմնար** խափանված չարից:
- Մենակությունն է քայլ պահում քեզ հետ,  
Երբ **չունես** արդեն ուրիշ լծակից,  
Որպեսզի դու քո դեմքը **չտեսնես**,  
Փախչում ես անգամ լիճ ու լճակից:

**29. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ:**

Բայց երբեմն տեսնում եմ ամբարտավան մեկին, որը այնպես կտրիճավարի է անցնում, ասես ուր որ է շուռ է տալու համաշխարհային պատմության անիվը, այն հանելու է վատ ճամփից ու ավելի վատ ճամփի վրա դնելու՝ դույզն–ինչ չանհանգստանալով, թե ինչ են խոսելու ու պատմելու մարդիկ իր մասին:

**30. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ:**

Բայց նրա՝ տարիներ շարունակ վարժված աչքերը շուտով ձեռք էին բերելու առարկաները ականակիր մթնում բորենու պես տեսնելու տարօրինակ ընդունակություն, որը նրան օգնելու էր՝ շրջապատը զգալու և լավ տեսնելու:

**31. Սահմանական եղանակի քանի՞ բայաձև կա տրված հատվածում:**

Մենք ականա շրջեցինք քաղաքում, եղանք ասիական թաղամասերին բնորոշ լաբիրինթոսում, եղանք նաև բարեկարգ փողոցներում, ուր գրանիտե հունի միջով ջրերը հոսում են առանց շառաչունի՝ չհանդիպելով ոչ մի խոչընդոտող քարի, բայց այդ փողոցներից ոչ մեկը չունի այն դերը, ինչ Աստաֆյանը:



**32. Հարկադրական և ենթադրական եղանակների քանի՞ բայաձև կա տրված նախադասություններում:**

- Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա, մատներով տրորի հողը՝ տեսնի՝ խո՞րն է ծծել ջուրը:
- Լառ–Մարգարը, գիշերվա ջրտուքից բեզարած, պառկում էր բարդիների տակ, ոտն ու ձեռը փռում լայն ու հանգիստ:
- Եթե բարձրանար ամպի վրա, Լառ–Մարգարը հեռու սարերի հետև պահված իրենց գյուղը կտեսներ՝ կտուրները եղեգով ծածկված:
- Լառ–Մարգարը, ծիրանուտի տակ պառկած, ցերեկվա շոգին ծիրանի ճյուղերի արանքով կնայեր երկնքի կապույտին, ամպի սպիտակ քուլային, որ ճերմակ լաթի պես պետք է սուզվեր կամ պռունկները պետք է հաներ:

**33. Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ ժամանակաձևեր.**

չի տեղավորվում, պետք է արժանացնել, երգչուհի էր, ուրախ եմ, մարդ դարձավ, քաղաք կոչվեց, լաց է լինում, խորհուրդ է տալիս, պետք է մաքրել:

**34. Չեզոք սեռի քանի՞ բայ կա տրված հատվածում:**

Չոհրապը մտավ Լատինական թաղամաս: Հանդիպելու էր Արշակ Չոպանյանին, որը բնակվում էր Մոնե փողոցում: Պոլսից հետո, որտեղ երկրորդ ձերբակալումից Չոհրապը մի կերպ էր խուսափել, Փարիզում կյանքը փոխվել էր գրող–իրավաբանի համար: Հիմա նա պարզապես յուրաքանչյուր նյարդով զգում էր ապրելու հրճվանքը: Այստեղ մարդկանց աչքերի մեջ տազնապ չկար:

Չոպանյանը մի հաճելի անակնկալ մատուցեց Փարիզի շնչով արբած Չոհրապին՝ տանելով նրան Մոնմարտը:

**35. Նախադասություններից քանիստ՞ն կրավորական սեռի բայ կա:**

- Իմ թախիժն էլ այն ամպի պես Յնորում է քնքշաբար, Բոցավառվում՝ հիշելով քեզ, Եվ արտասվում քեզ համար:
- Իմ հոգին որպես թափառիկ մի շուն, Մոլորված քայլով ու մահն աչքերում՝ Ահաբե՛կ, անօ՞գ փախչում է հեռուն:
- Կփակվեմ, կփակվեմ իմ խցում Ու մենակ, մեն–մենակ կմնամ, Խոհերի, մտքերի օվկիանում Մինչև լույս, մինչև մութ կլողամ:
- Օրորված է հոգիս ձմեռվա Օրերի օրորով, ու անուշ Թախիժն է ծավալվել ինձ վրա: Եվ նուրբ է իմ կյանքը՝ որպես հուշ:
- Ես չար հոսանքից մղված եմ հեռուն, Եվ անվերադարձ փակված է ուղին, Մի որբ մանուկ է հոգիս մոլորուն՝ Մատնված մութին ու մառախուղին:

**36. Հատվածներից քանիստ՞ում մեկից ավելի ներգործական սեռի բայ կա:**

- Սանձահարել, սանձել է պետք  
Ժամանակի չարիքները,  
Քանի դեռ մեր գլուխը կա,  
Եվ դեռ կան այդ գլխի վերև  
Մեր սեփական տանիքները:
- Ու ես չասացի ոչ որի ոչինչ  
Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ,  
Ու կարդալու ես դու երկար, երկար  
Եվ թրջելու ես արցունքով քո ջինջ:
- Տեսնենք՝ ջրերն ինչ են բերում,  
Տեսնենք՝ ինչ է անում քամին,  
Եվ ամփոփենք ամբողջ օրվա  
Առաքածը ուրիշ անգամ:
- Գարնան լույսի պես իմ տունը մտար,  
Եվ քո ձայնի մեջ գարնան լույսը կար,  
Թեկուզ աշունն է տանս տիրանում,  
Եվ ձմռան հոտ եմ իմ տնից առնում:
- Եթե չեք իջել թեկուզ մի ժամ,  
Խաղաղ չեք ննջել թեկուզ մի ժամ  
Իշխանասարիս վրաններում,  
Չվո՞ղ թռչուններ, ձեզ չեմ ներում:

**37. Նախադասություններից քանիստ՞ում մակբայ կա:**

- Վերջապես գիշերն ընկավ:
- Գիշեր–ցերեկ նա հանգիստ չուներ:
- Գիշերվա քունը նա ոչ մի բանի հետ չէր փոխի:
- Նա որոշեց ճամփա ընկնել գիշերով:
- Միանգամից չկարողացավ հարցերին պատասխանել:

**38. Տրված բառերից քանի՞սն են կապ.**

վաղ, տակ, հետ, դեպի, ապա, իր, այլևս, ուրեմն, առթիվ, նույնիսկ, կամ:

**39. Քանի՞ կապ կա տրված հատվածում:**

Մինչ դրսում տեղի էին ունենում այս դեպքերը, գորականների պարագլուխները խորհրդակցում էին ապագա ճակատամարտի մասին: Հանկարծ լավեց գնդակի ճաթյուն՝ որպես չարաղետ պատերազմի արձագանք, որ այս ազնվական դավադիրներն ուզում էին մղել հանրապետության դեմ: Տիկինը սարսուռաց, և նրա՝ իր ախտյանից ազատված զգալու ուրախությունից առաջացած շարժման վրա հյուրերը լուռ իրար նայեցին, իսկ մարկիզը վեր կացավ սեղանից և դուրս գնաց:

**40. Նախադասություններից քանիստ՞ում է որ–ը շաղկապ:**

- Ու նորից լռեց երգը, **որ** սավառնում էր կտրիճ դյուցազունների գլխավերևում:
- Այդ միջոցին մի հուժկու արծիվ, **որ** սավառնում էր նրանց վրայով, շեշտակի իջավ:
- Նա զգում էր, **որ** շղթայված են իր միտքն ու հոգին:
- **Որ** դու ճիշտ ես, ոչ ոք չի կասկածում:
- Խուլ աղմուկը, **որ** ելնում էր ճահճուտներից, նինջի նման իջնում էր գյուղի վրա:

**41. Տրված բառերից քանի՞սն են ստորադասական շաղկապ.**

չնայած որ, թեկուզ, թեև, բայց, ոչ միայն...այլև, հենց որ, ու, թեպետև, նույնպես, քանի դեռ:

**42. Տրված բառերից քանի՞սն են վերաբերական.**

խկույն, իրավամբ, երևի, ուրախալի, ցավոք սրտի, կասկածելի, անպատճառ, արդյոք, թեպետ, թերևս, ավստասնք, մի՞թե:

**43. Տրված բառերից քանի՞սն են վերաբերական.**

անշուշտ, գեթ, մոտ, փոքր-ինչ, արդյոք, իբր, չգիտես ինչու, մյուս, անկասկած, ինչ-ինչ, նույն:

**44. Տրված բառերից քանի՞սն են ձայնարկություն.**

ջան, այո, իբրև, հարայ, հեյ, հիմա, տեսնես, թրղխկ, այ:

**45. Տարբերակներից քանիստ՞նմա նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Մոկաց իշխանը՝ Արտակը, իջավ նժույգից, սանձը տվեց թիկնապահին և զգուշորեն մոտ գնաց այն խրճիթին, որտեղ ապաքինման էր թողել Անահիտին՝ թունավոր նետից վիրավոր:

- **տվեց** – դիմավոր բայ, պարզ ժամանակաձև
- **թիկնապահին** – հասարակ գոյական, որոշյալ առում
- **թողել** – անդեմ բայ, անորոշ դերբայ
- **գնաց** – կանոնավոր բայ, չեզոք սեռ
- **իջավ** – է խոնարհման պարզ բայ, անցյալ կատարյալ ժամանակաձև

**46. Տարբերակներից քանիստ՞նմա նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Գնացքն ընթանում էր դանդաղ, որովհետև մի տարի չկար, որ երկաթուղու գիծը շինվել էր, և մեքենավարը վախենում էր սպասվող արկածներից:

- **ընթանում էր** – սահմանական եղանակ, ածանցավոր բայ, **մի** – անորոշ դերանուն
- **որովհետև** – համադասական շաղկապ, **չկար** – պակասավոր բայ, սահմանական եղանակ
- **որ** – հարաբերական դերանուն, **երկաթուղու** – գոյական, սեռական հոլով
- **շինվել էր** – բաղադրյալ ժամանակաձև, վաղակատար անցյալ, **վախենում էր** – անկատար անցյալ, չեզոք սեռ
- **սպասվող** – անդեմ բայ, ենթակայական դերբայ, **արկածներից** – գոյական, բացառական հոլով

**47. Տարբերակներից քանիստ՞նմա նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ կա:**

Արծրունու միհարկանի տնակը շրջապատված էր շքեղ պարտեզով, որի մի մասը ծաղկանոց էր, որը անխնամ վիճակում էր, իսկ մրգանոցի հասուն պտուղները, ծառերից պոկվելով, ծածկել էին ծառուղիները:

- **Արծրունու** – հատուկ գոյական, **ու** հոլովում, **միհարկանի** – ածական
- **ծաղկանոց** – հասարակ գոյական, անորոշ առում, **որի** – հարաբերական դերանուն
- **իսկ** – համադասական շաղկապ, **մրգանոցի** – գոյական, սեռական հոլով
- **վիճակում էր** – դիմավոր բայ, անկատար անցյալ, **պոկվելով** – անորոշ դերբայ, չեզոք սեռ
- **ծածկել էին** – դիմավոր բայ, բաղադրյալ ժամանակաձև, **ծառուղիները** – գոյական, **ու** հոլովում

## II ՏԵՄԱԿ

48. Նշել այն շարքերի համարները, որոնցում միայն *ոջ* հոլովման ենթարկվող բառեր են.

1. հորաքույր, աներ, պարընկեր
2. տալ, տիկին, սկեսրայր
3. տանտիկին, պարտատեր, գուգրնկեր
4. սկեսուր, տեգր, եղբայր
5. բուժքույր, կնքահայր, երեցկին

49. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում որոշիչ հոդի գործածության սխալ կա:

1. Հեքիաթային երազն դեռ նոր էր սկիզբ առել, երբ հանկարծ լսեց մի ահասարսուռ ձայն:
2. Բարձրացավ մի հոնքը իմաստուն երգչի, թրի պես կեռվեց ճակատի վրա:
3. Անպարփակ վիշտն հոգու մեջ՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում:
4. Մեպուհներն՝ ամենքն էլ խրոխտ, կորովի, պիրկ կեցվածքով, տարվել էին զինախաղով:
5. Սրամարտողներն ինքնամոռաց մխրճվել էին թեժ կովի մեջ:
6. Սպարապետն եկավ իր բնօրրանը՝ թեթև շունչ քաշելով:

50. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերանուն *չկա*:

1. Նորից կթողնեմ քաղաքն ադմկոտ  
Ու ճամփա կընկնեմ հավետ միայնակ:
2. Աշխարհում այս աղոտ ես քնքուշ  
Մի հեքիաթ հյուսեցի քո մասին:
3. Մեկով հիացա, մեկից խոցվեցի,  
Այնքան փորձեցի, այնքան փորձվեցի,  
Բայց էությունս, ավա՛ղ, մինչև վերջ  
Բաշխել, բաժանել չկարողացա:
4. Խելագարվել է տիեզերքն ամբողջ,  
Իսկ ինձ ասում են, թե խելոք մնա:  
Եկողները թող չիմանան  
Մոված օրեր ու սև տարի:
5. Ինձպեսները գան ու գնան,  
Աշխարհին ոչինչ չպատահի:  
Բոլոր ահերն ինձնից վանում,  
Պարզ եմ նայում ապագային:

51. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերանվան գործածության սխալ կա:

1. Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց գյուղերում՝ նվիրվելով մանուկ սերնդի ազգային կրթությանը:
2. Եվ քանոնի հավասար բախումներին ներդաշնակ՝ ամբողջ աշակերտները սկսեցին բարձր ձայնով երգել:
3. Հանցագործներից քանիսները վիրավորված բողոքել էին բանտի վարչությանը:
4. Նրանց հայրերն ու մայրերը պարծենում էին իրենց կտրիճ որդիներով:
5. Մինչև քառասուն տարին Օհան ամին ապրել էր իրեն պապերի գյուղում:
6. Նստեցինք ծառերի ստվերում. Ասլանը սեղանակից էր մեզ՝ մի փոքր հեռու պսպած:

**52. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայ կա:**

1. Աղբյուրն անուշ հեքիաթի պես  
Իր լույս երգով ժպտում էր մեզ.  
Դու մոտեցար մեղմ, համրաքայլ.  
Որպես քնքուշ իրիկվա փայլ:
2. Լույսն էր մեռնում, օրը՝ մթնում,  
Մութը տնից տուն էր մտնում,  
Ես տեսա քեզ իմ ճամփի մոտ,  
Իմ մտերի՛մ, իմ անծանոթ:
3. Եվ ես արթնացա խնդության ցավից.  
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,  
Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ,  
Մենակությունն էր քարի պես լռում:
4. Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում  
Երեկոն վառեց լույսեր դժգունակ.  
Մութը հյուսում է տրտմության ժանյակ,  
Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում:
5. Մեռած լուսնյակը՝ մենակ ու աղոտ,  
Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ,  
Հավետ լռում է մի տխուր խորհուրդ:

**53. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի սուկածանցավոր բայ կա:**

1. Անցած օրերս շարքերով դալուկ,  
Շողում են ահա և անհետանում,  
Չգիտեմ՝ կյանքը ինձ ուր է տանում,  
Ամեն ինչ հարց է, մթին հանելուկ:
2. Կար մի դյութական ուրիշ ժամանակ,  
Ես թողնում էի օրերս մենակ  
Եվ այս աշխարհից սլանում հեռու:
3. Անծիր աշխարհի դժկամ ու դաժան  
Ուղիների մեջ իմ սերը կորած՝  
Էլ չորոնես: Մթնում մոլորված՝  
Դառը խոհերս գրկեմ, հեկեկամ:
4. Որքան էլ գիշերն ահավոր իջնի,  
Եվ ուր էլ գնամ գլուխ դնելու,  
Հարագատ մի հող ես չեմ գտնելու  
Սև ճանապարհիս օրերում դժնի:
5. Այս ցուրտ երկրի անհայտում անհուն  
Ընկնել և կորչել և ննջել հավետ,  
Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,  
Ավերված երագ, հայրենակա՛ն տուն:

**54. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անկախ դերբայ կա:**

1. Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
2. Թեքությունն այնքան զգալի է, որ մարդ ինքնապաշտպանական բնագրով հետ է քաշվում:
3. Առաջին հայացքից կարծես թե հանցանքը մատնող որևէ նշան չկար:
4. Նա մանրագին ուսումնասիրել է այդ ջրառատ գետը և հայտնաբերել է մի հոյակապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի թագուհու:
5. Սևադան սրդողած պատմեց, որ հաղթանակից հետո թագավորն իջել էր Սևորոյաց ձորը:
6. Լեռնալանջերի ճերմակաթույր ձյունը հալվել էր, սարերն առաջվա նման ամպրոպներին չէին արձագանքում:

**55. Նշել այն հատվածների համարները, որոնցում հարակատար դերբայ կա:**

1. Մութ գիշերում կնատեմ՝  
Լցված սիրով խնդագին,  
Քո գաղտնիքը ես գիտեմ,  
Բայց չես ասի ոչ ոքի:
2. Ամայացած իմ սրտում,  
Մենության մեջ իմ սև տան  
Փռի՛ր քնքուշ ու տրտում  
Ժպիտը քո խնդության:
3. Մի գարնան հեքիաթ՝ քեզ վրա հյուսված,  
Հնչում է դարձյալ իմ դյուքված սրտում,  
Եվ լուսեղեն է գիշերս արթուն,  
Եվ սիրտս տխուր սիրով է լցված:
4. Նայվածքով խորին եկար, ներո՛ղ,  
Եկար կրկին գերող, խորհրդավո՛ր,  
Եկար հուշիկ, անչար ավաղներով,  
Օրորներով ամենօրոր:

**56. Նշել այն շարքերի համարները, որոնցում ասպառնի ժամանակով դրված բայաձև չկա.**

1. կարել են, կատեն, չեն երևում, ասել էր
2. կան, պիտի գրավեր, խմեի, տալիս է
3. երգելու էր, կարդաց, կտա, չպիտի լսեր
4. թռչեի, ունեմ, չեմ հավատում, չգնաց
5. չբերեր, դարձան, չգա, պետք է հավատալ
6. գալիս են, պետք է հավատար, մի՛ երկնչիր, պարզել են

**57. Ընդգծվածները տրված եղանակներից որո՞նց են համապատասխանում (նշել համարները՝ հաջորդականությունը չխախտելով):**

Որքան էլ գիշերն ահավոր **իջնի**,  
Եվ ուր էլ գնամ գլուխ դնելու,  
Հարազատ մի հող ես **չեմ գտնելու**  
Սև ճանապարհիս օրերում դժնի:

1. ենթադրական
2. ըղձական
3. սահմանական
4. հարկադրական

**58. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական սխալ ձևերի գործածություն կա:**

1. Չնայած խեղդող շոգին՝ օրիորդն առանց հովանոցի էր, հերարձակ ու քայլելուց էլ մի տեսակ ծիծաղելիորեն թափահարում էր ձեռքերը:
2. Առօրյա դժվարություններից խոսելիս լսելի էր, թե ինչպես են ալիքները խփվում իրենց խոչընդոտող քարերին:
3. Երիտասարդը լիովին գրավվեց այդ յուրօրինակ տեսարանով և սկսեց ապշած նայել աղջկան, որը գալիս էր ճիշտ իր կողմը:
4. Նա բացեց պատուհանի փեղկը, և ներս խուժեց սարսռեցնող սյուրքը՝ բերելով խոնավ հողի բույրը:
5. Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,  
Չգալ, որ դու կաս, և լինել հեռու:
6. Փոքրիկին վախացնող շունը անակնկալ դուրս թռավ բնից ու սկսեց հաչել:

**59. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ըղձական եղանակի բայաձև չկա:**

1. Շանթն է բեկվում ճակտիս վրա,  
Մահ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա:
2. Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ...
3. Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,  
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:
4. Չէ՞ որ նա գիտեր, թե ում է ծնել...
5. Երկրի մեջ մարդ չմնաց՝  
Մարդ թաղեր մարդու նման...
6. Տուն կանչե մորս ձայնը իրիկվան՝  
Չպոկեմ սարից աչքս կարոտած:

**60. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում հարկադրական եղանակի բայաձևեր կան:**

1. Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ  
Եվ կամ աստղը երկրնքի...
2. Եվ դեմքով տխուր ու լուռ աչքերով  
Պիտի միևնույն սուգը հաղորդեն...
3. Տարիներ հետո նա պիտի դառնա  
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...
4. Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման...
5. Ու գղջում եմ ես մի պահ. սեր ու բարիք եմ ցրել,  
Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել:
6. Դու փոքր ես դեռ, դեռ չգիտես, թե ոնց պիտի կյանքին նայել:

**61. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում հրամայական եղանակի բայաձևեր կան (առողջանության նշանները դրված չեն):**

1. Թող շուրջըս փովի անանց լռություն,  
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան:
2. Դու կգաս ու կրկին հեքիաթով կըղյութես,  
Լուսերես կըցրես մառախուղն իմ հոգու:
3. Արիացիր, սիրտ իմ, ել հավատով տոկուն:
4. Որպես փյունիկ կրակից կելնես, կելնես նոր  
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:
5. Տխուր երեկոն զարկել է վրան.  
Միտաս կարոտով կանչում է քեզ՝ եկ:
6. Լսում ես, Մարիամ,  
Ինձ ներս ու դրսից կապույտ հագրորու...

**62. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բաղադրյալ ժամանակածև կա:**

1. Նա մի անգամ հետ չնայեց ու չտեսավ, թե ինչպես է պանդոկապանը աշխույժ խոսում ու մատով ցույց տալիս իր կողմը:
2. Նա ինձ դուր է գալիս, ու ես կփորձեմ հաճոյանալ նրան:
3. Յուրաքանչյուր գրող դժբախտ կզգա իրեն՝ տեսնելով՝ ինչպես է խամրում իր երբեմնի համբավը:
4. Ինքնըստինքյան հասկանալի էր, որ չկարողացա շատ բան անել գերդաստանիս մյուս անդամներին կատարյալ դարձնելու համար:
5. Ձգաց, որ պետք է շտապեիր, արագ գործեր, բայց ապարդյուն:
6. Աշխարհում ապրող ամեն մի մարդ իր նպատակին է ձգտում:

**63. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ներգործական սեռի բայ կա:**

1. Նրա այդ համոզմունքի ամբողջացմանը նպաստում էին ամբարտավանությունը, արհամարհանքն ու սնափառությունը:
2. Ժամանակ անցավ, ու հարմարվեցին ծառի ներկայությանը:
3. Իսկ ամռանը չարաճճի երեխաները, իրենց աշխույժ գոռում-գոչյուններով կենդանացնելով կեսօրվա տաղտկալի անդորրը, մազլցեցին պատերն ի վեր:
4. Յուրաքանչյուր տարուբերումից շրթայի ժանգոտած օղակները սուր ճռռում էին՝ խախտելով շրջապատի անդորրը:
5. Հանկարծ երևաց մի կին, որը քայլում էր դեպի ճոճանակը՝ երեխան գրկած, մեջքից մի տուպակ կախ:
6. Այդ փոքրիկ գեղեցկուհին նայողի մեջ իր թմբիկ այտերը կծելու ցանկություն էր առաջացնում:

**64. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում չեզոք սեռի բայ կա:**

1. Նրա ստեղծած փոքրիկ բանջարանցում բուրում էին սամիթն ու ռեհանը, անանուխն ու թարխունը:
2. Տատը ոչ ոքի չէր թողնում խառնվել իր գործին՝ երեխայի նման ուրախանալով օրեցօր փարթամացող ու փթթող հուռթի բանջարանցով:
3. Ու հիմա նա շատ բարձր էր գնահատում իր այդ վճռականությունը, որով փորձել էր նրան բարձրացնել մինչև իր մակարդակը:
4. Նրան հանդիպելիս մի մեծ բաժակաճառ ասաց:
5. Այդ սեթևեթող աղջիկներին հաճոյանալը շատ զավեշտալի էր:
6. Փոքր-ինչ ընտելանալուց հետո կրիաները նույնիսկ կեր էին վերցնում ձեռքիցդ:

**65. Նշել այն հատվածների համարները, որոնցում պակասավոր բայ չկա:**

1. Վառվում է մոմը դողդոջ փայլերով  
 Հեռու անկյունում,  
 Ելնում ես անխոս, հպարտ քայլերով,  
 Մահապարտի պես այնտեղ ես գնում:
2. Բոլոր հույսերին օրոր է ասում,  
 Օրոր է ասում,  
 Բաբախում սիրտս գրկել է ուզում.  
 Անխաբ խնդություն ոսկե երագում:
3. Չկան օրերն ահարկու,  
 Չկա ժամ ու ժամանակ,  
 Ուրվական ենք մենք երկու  
 Միշտ իրար հետ, միշտ մենակ:
4. Ոսկեհանդերձ եկար և միգասքող,  
 Տխուրաչյա՛ աշուն, սիրա՞ծ աշուն:
5. Տեսնո՞ւմ ես՝ որքան, որքան արագ  
 Անցնում են քոլորն ու դառնում հուշ:



**66. Նշել այն հատվածների համարները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են:**

1. Չեզանից հետո եկավ գիտություն՝  
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա...
2. Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,  
Դեմքը այլալված, քայլվածքը մոլոր:
3. Լինեի չորքան սարերում հեռու,  
Գայի ը, անցնեի ը վրանիս մոտով:
4. Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,  
Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա ք բարով, մնա ք բարով:
5. Չյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
6. Գնամ հետևից ծիծեռնակների,  
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ:

**67. Որո՞նք են մակբայներ (նշել համարները).**

1. հավետ, 2. բացեիքաց, 3. եռյակ, 4. հազվիհազ, 5. խստիվ, 6. օր օրի, 7. մոտակա, 8. հաճախակի, 9. այսպես:

**68. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Գրասեղանի մոտ նստել էր հայ երիտասարդության մտքի ամենասիրելի ղեկավարը, նա, որի անունը տարածված էր ամենուրեք, ուր կար գեթ մի բուռ հայություն:

1. **տարածված** – դիմավոր բայ, հարակատար դերբայ, **մոտ** – կապ, հետադրություն
2. **նստել էր** – դիմավոր բայ, վաղակատար անցյալ, **երիտասարդության** – հասարակ գոյական, **ա** ներքին հոլովում
3. **նա** – անձնական դերանուն, ուղղական հոլով, **ամենուրեք** – տեղի մակբայ
4. **որի** – ստորադասական շաղկապ, **կար** – պակասավոր բայ, անկատար անցյալ
5. **ուր** – հարաբերական դերանուն, **գեթ** – վերաբերական

**69. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ անկարելի էր հանգիստ հոգով զբաղվել իմ գործով. զգում էի, որ իմ նյարդերը սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

1. **դառնում էր** – անկանոն բայ, անկատար անցյալ, **որ** – ստորադասական շաղկապ
2. **նման** – կապ, **ինձ** – անձնական դերանուն, տրական հոլով
3. **զբաղվել** – անորոշ դերբայ, չեզոք սեռ, **գործով** – գոյական, գործիական հոլով
4. **զգում էի** – դիմավոր բայ, սահմանական եղանակ, **բացի** – կապ, երկդրություն
5. **աստիճանաբար** – վերաբերական, **համար** – կապ, հետադրություն

**70. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Ես շարունակ նայում էի հետ մերձավորներից բաժանվող աքսորականի նման, որ հույս չունի երբևէ նրանց կրկին տեսնելու:

1. **ես** – անձնական դերանուն, ուղղական հոլով, **շարունակ** – ածական
2. **նայում էի** – բաղադրյալ ժամանակաձև, անկատար անցյալ, **հետ** – կապ, հետադրություն
3. **նման** – կապ, **բաժանվող** – ենթակայական դերբայ, ածանցավոր
4. **որ** – ստորադասական շաղկապ, **հույս չունի** – հարադիր բայ, ներգործական սեռ
5. **երբևէ** – անորոշ դերանուն, **տեսնելու** – անորոշ դերբայ, ածանցավոր

**71. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Ինձ պաշարեց մի տարօրինակ տրտմություն. գառիվայրից իջնելիս թվաց ինձ, թե իջնում եմ մի տեսակ գեհե՛ն, ուր պիտի հավիտյան տանջվեմ այդ թանձր ծխի ու մրի մեջ:

1. **թվաց** – անցյալ կատարյալ, ներգործական սեռ, **մի** – անորոշ դերանուն
2. **տարօրինակ** – ածական, **իջնելիս** – համակատար դերբայ, պարզ բայ
3. **թե** – ստորադասական շաղկապ, **իջնում եմ** – անկատար ներկա, չեզոք սեռ
4. **ուր** – հարաբերական դերանուն, **պիտի տանջվեմ** – դիմավոր բայ, ենթադրական ապառնի
5. **հավիտյան** – ժամանակի մակբայ, **այդ** – ցուցական դերանուն

**72. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Ես նախանձում էի ամենքին, ով գնում էր այդ նավերով, և ինձ թվում էր, որ գնացողները խղճում են մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:

1. **նախանձում էի** – դիմավոր բայ, չեզոք սեռ, **ամենքին** – որոշյալ դերանուն
2. **ով** – հարաբերական դերանուն, **նավերով** – գոյական, գործիական հոլով
3. **թվում էր** – սահմանական եղանակ, չեզոք սեռ, **որ** – ստորադասական շաղկապ
4. **գնացողները** – գոյական, հոգնակի թիվ, **խղճում են** – բաղադրյալ ժամանակաձև, **ա** խոնարհում
5. **որպես** – կապ, նախադրություն, **զրկվածների** – հարակատար դերբայ, **ե** խոնարհում

## ԲԱԺԻՆ 4

## ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## I ՏԵՍԱԿ

## 1. Ընդգծվածներից քանի՞սն են նախադասություն:

- Քեռիս փիլիսոփա էր, **ինչպես առհասարակ բոլոր դերձակներն են լինում**, բայց ոչ հոռետես:
- Հաճախ նրա անփույթ արտասանած խոսքերը, **թվում էր**, նույնքան սուր էին, որքան ասեղի ծայրը, և թունավոր, բայց ոչ չարամիտ:
- Ես միշտ կանգ էի առնում և **հաղորդում նորություններ ծովից ու ցամաքից** կարկուտի արագությամբ:
- Հայրս ներողամտաբար ժպտաց՝ **հասկացնելով ինձ**, թե դրանից ավելի դյուրին բան չկա իր համար:
- Ես սկսեցի նկարագրել իմ մոտակա վիճակն այնպիսի փայլուն գույներով, որ ես արդեն երջանիկ զգացի ինձ, և **թվաց**՝ ուզում էի համբուրել նրա մշտապես խճճված մորուքը:

## 2. Քանի՞ պարզ (բաղադրիչ) նախադասություն կա տրված հատվածում:

Ուզում էի մեկ էլ փորձել, սատանան տանի, որ էլ ոչ մի կասկած չմնա: Դռները հրելով՝ ներս մտա, և անձանոթը դուրս փախավ: Իհարկե, ասիացի էր, կարող էր դաշույն բերել: Բայց ես, անշուշտ, չվախեցա: Ես առհասարակ վախկոտ մարդ չեմ. զինվոր եմ եղել:

## 3. Քանի՞ պարզ (բաղադրիչ) նախադասություն կա տրվածում:

–Մենք մեր տեր Հիսուսից խելոք չենք, չնայած ինքն էլ մարդու ճակատին նոր գիր փորողներից էր. ինչ որ նա մեզ սովորեցնում է, դրա համար պիտի ասենք՝ հանապազօրյա հացիդ համար շնորհակալ ենք, տե՛ր, որ երկնքում ես, – սփռոցի գլխին ծալապատիկ նստած՝ ասաց ծերունին:

## 4. Ընդգծված նախադասություններից քանի՞սն են համառոտ:

- Մեր տաղտկալի ճանապարհորդության չորրորդ օրն էր, և **հասանք Թավրիզ**:
- Չնայած նախընթաց ամբողջ օրը ճանապարհորդել էի, այնուամենայնիվ **վաղ արթնացա**:
- Այդ մտացածին պատմությունը ազդեց դյուրահավատ ժողովրդի վրա և **խոր տապալորություն գործեց**:
- Միայն երբեմն լսվում էին ինչ–որ **հնչյուններ և խախտում լռությունը**:

## 5. Նախադասություններից քանի՞սն են բարդ:

- Նա լռեց՝ իր պաղ հայացքը դարձնելով դեպի անորոշ տարածություն՝ դեպի, ով գիտե, ինչ մթություն:
- Այս փոքրիկ դեպքը ես պատմեցի ցույց տալու համար՝ երբեմն կյանքի մեջ ինչ տարօրինակ գուգաղիպումներ են լինում:
- Համակրանք, կարեկցություն, սեր դեպի նա, ասելություն դեպի ծերունին. ամեն ինչ խառնվել ու շփոթվել էր իմ հոգու մեջ:
- Մի ամիս բժշկվելուց հետո ես, մեծ որդիս ու աղջիկս (կինս ու հիվանդ որդիս չէին թունավորվել), ամբողջովին կազդուրված, վերադարձանք Իտալիայից:

## 6. Նախադասություններից քանի՞սն են բարդ:

- Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել, գուրգուրել ու փայփայել:
- Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, ամենին մոռանալ...
- Դալուկ դաշտեր, մերկ անտառ,  
Մահացողի տխուր կյանք...
- Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,  
Որ սուրբ հողըդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը...

**7. Նախադասություններից քանիստ՞ում շարադասության սխալ կա:**

- Հանքային խմելու ջուրը շատ օգտակար հատկություններ ունի:
- Առաջին հայկական օլիմպիական խաղերը մեծ հաջողություն բերեցին հայերիս:
- Վերջերս գրեթե բոլոր խանութներում գործում են աննախադեպ գարնանային զեղչեր:
- Նորաստեղծ մարզային ծրագրերի հանձնախմբի համակարգողը իմ ընկերն է:
- Այսօր բոլոր ընտանեկան ծեսերը փորձում ենք պահպանել:

**8. Տրված նախադասության ստորև առանձնացված կապակցություններից քանի՞սն են կապված խնդրառությամբ:**

Այստեղ դարավոր քաղաքակրթության հետևանքներն են տեսնում, լսում են բարձրաձայն գոռոցներ, այստեղ ոչ ոք ոչ ոքի չի դիպչում, չի անհանգստացնում, բացի հին ծանոթներից:

- հետևանքներն են տեսնում
- լսում են գոռոցներ
- ոչ ոք չի դիպչում
- ոչ ոքի չի դիպչում
- ոչ ոքի չի անհանգստացնում
- հին ծանոթներից

**9. Ընդգծվածներից քանի՞սն են ենթակա:**

- **Հավերժությունն**, աչքդ լո՛ւյս, Ուղևորդ է մի նորոգ, Կանաչ-կարմիր, ծիրանի, Ճերմակ ու բիլ **Հայաստան**:
- **Հարդագողը հարդ** դարձնեն, Հարդից ջոկեն աստղ ու լուսին Ու տուն բերեն լուսը-լուսին:
- **Վերհուշերս** կրկին Ինձ այնտեղ տարան, **Լեռնաշխարհը** տարան Այն երկնամերձ:
- Դեռ նոր է պայթում **բողբոջը** քո, Տերևաթափ է իմ անտառում:
- Մանուշակագույն մշուշների մեջ **Երգեր** են շաղում **արտույտներն** էլի:

**10. Տրված հատվածներում քանի՞ ենթակա կա:**

- Հիմի բացել են հանդես, Երգիչները իմ անտես, Ջա՛ն, հայրենի՛ ծղրիղներ, Ո՞վ է լսում հիմի ձեզ:
- Կյանքից հարբա՛ծ անցավոր, Ահա դարձյալ անցավ օր, Դու վազում ես դեսյի մահ, Մահը բռնում հանցավոր:
- Հոգիս տանը հաստատվել, Տիեզերքն է ողջ պատել, Տիեզերքի տերն եմ ես, Ո՞վ է արդյոք նկատել:
- Հե՛յ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր, Անդարձ ու հի՛ն ճամփանե՛ր, Ովքե՞ր անցան ձեզանով, Ո՞ր գնացին, ճամփանե՛ր:

**11. Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ ենթակա կա:**

- Ո՞վ է այստեղ ներկեր ծախում,—  
Ներկարա՞ր եմ ու նախշո՞ւմ եմ...
- Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում  
Որն է լավ, ո՞րը՝ վատ:
- Այդ ո՞վ է ասել՝ նորից չեմ սիրում:
- Կբանասն ոմանք իմ գիրքը գուցե,  
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր:

**12. Տրված հատվածում քանի՞ խոսքի մասով (նաև փոխանվանաբար) արտահայտված ենթակա կա:**

Գրելն ու ստեղծելը այն մարդկանց գործն է, ովքեր պահանջ են գգում գրելու ու ստեղծելու: Գրելու ցանկությունը մաքուր ու բացարձակ պիտի լինի: Հավատացած եմ՝ կգա այն օրը, երբ գրամոլն այլևս գրիչ չի վերցնի՝ թութակի պես կրկնելու համար ուրիշների մտքերը: Մեկը խելացի մի միտք է արտահայտում, և հայտնվում են հազարավորներ, որ աղավաղում են այդ միտքը, խեղաթյուրում:

**13. Տրված հատվածում քանի՞ պարզ ստորոգյալ կա:**

Երբ դասաժամն ավարտվեց, ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն: Ուսուցիչը պատասխանեց, որ ինքը բաղաձայն է և երգ չի սովորեցրել, սակայն ավելացրեց, որ աշակերտների մեջ երգողներ կան, և առաջարկեց նրանց, թե ով կարող է, թող երգի:

**14. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Ամենքինն ես, իմը չես,  
Ամենքինն ես սիրում դու.  
Ա՛խ, ոսկով են գնում քեզ,  
Անհաս ցնորք իմ հոգու...

**15. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Ինչո՞ւ են նետվում, ի՞նչ թոհուրոհում,  
Հանուն ի՞նչ քանի կյանքերն են զոհում...  
... Ով սերմ է ցանել ու բերք է հնձում,  
Անքունն է միայն նրան նախասնձում...

**16. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Նույն հարցն եմ հաճախ ինքքս ինձ տալիս.  
– Ի՞նչ ես աշխարհի ցավերը լալիս,  
Աշխարհի դարդը հո քեզ չե՞ն տվել:  
Եվ ի՞նչդ է պակաս, կամ ի՞նչդ է ավել.  
Ամենքի նման մի մարդ ես, հոգի՛ս,  
Ամենքի պես էլ աշխարհով գնա՛...

**17. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Յորենը՝ ցորեն, գարին գարի էր,  
Քամին էր քամին, քարը՝ քար,  
Կարծես ամեն ինչ հասկանալի էր,  
Ոչ մի բանի մեջ խորհուրդ չկար:

**18. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Մեծությանը չեն ների  
Փոքրածիններն անարդար,  
Չար է նախանձն էլ բարի,  
Երբ քեզ ազգն է սիրահար:

**19. Տրված հատվածներում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- Ամեն ձորակը հոգսի մի ծալ է,  
Աղբյուրն արցունք է անգապելի,  
Հովը հեքիաթի բարի հեծյալ է,  
Հողմը ասպետ է առասպելի:
- Եթե ձեր հոգուն մեղք եք արել,  
Հավերժության պես չեք երկարել  
Դուք բանաստեղծի երազներում,  
Չվո՞ղ վայրկյաններ, ձեզ չեն ներում:
- Ջրվեժն օրնիբուն անքուն է,  
Ջրվեժը հրաշք է իրական,  
Թռիչք է ջրվեժի անկումը,  
Ջրվեժի արցունքը՝ ծիածան:
- Դեռ ինչքան պիտի ջանալով ջանամ,  
Որ ամբողջանամ, ինչպես լեռներս:

**20. Բաղադրյալ ստորոգյալներից քանիսի՞ ստորոգելին է արտահայտված դերանունով:**

- Դարձյալ իջավ գիշեր, դարձյալ ու կրկին  
Մենակ ես դու, ինքդ քո դեմ՝ մերկ ու բաց:
- Այնքան քնքշություն կա սրտում իմ,  
Այնքան մեղմություն՝ իմ հոգում:
- Մենք մենակ ենք՝ ես ու դու,  
Ես էլ դու եմ, ես չկամ:
- – Ի՞նչ պիտի լինեն կյանքից հետո,–  
Հարցում արի ես բնության:
- Հետ դառնար հիմա հասակս մատաղ,  
Լինեի նորից այն խենթ պատանին:

**21. Նախադասության ստորոգյալներից քանիսի՞ ստորոգելին է արտահայտված ածականով:**

Տեղանքը, որն ընտրվել էր մեր կողմից, բարձրադիր էր, անտառածածկ, իսկ տեղի կլիման ավելի շատ ծովային էր, ու մենք հենց դրանից էինք գոհ:

**22. Քանի՞ որոշիչ կա տրված հատվածում:**

Հնչյունները կրծում են սիրտս ու խոր ցավեցնում: Չեմ սիրում այդ երաժշտությունը. դաժան է այն: Նայում եմ մյուսներին. ոմանք հանգիստ նստել են, ոմանք ուրախ կատակում են, ոմանք՝ ներանձնացած լսում: Ամեն մարդ զոց աշխարհ է՝ անմատույց ու անիմանալի: Տարիներ հետո ոչ ոք չի մնալու այս ապրող բազմությունից: Բայց աշխարհը տակավին իմն է ու ձերը, և հերթը մերն է:

**23. Քանի՞ որոշիչ կա տրված հատվածում:**

Սարգսի ապաշխարությունը փարոսի նման հավերժ կվառվի իր արքայական իշխանության անհաս կատարին և ուղիղ ճանապարհի կբերի մյուս «մոլորյալներին»: Գուցե արդեն աչքին պատկերանում էր իր հաղթական մուտքը Անի, ինքը՝ սպիտակաթույր ձիու վրա, ահեղ Վեստը՝ իր առջև:

**24. Ընդգծվածներից քանի՞սն են որոշիչ:**

- **Արծաթաշող** առուն առվին  
Ձայն է տալիս ու երգում,  
**Անտրտունջ** է լալկան ուռին,  
Առուն առվի եզերքում:
- **Մեղմիվ** փովեց **քնքուշ** մութ՝  
Խորհրդավոր, թափանցիկ:
- Գիշերվա փողոցները **թափուր**  
Շրջեցի **տրտում** ու **միայնակ**:
- Կապույտ լույսերի ցուրերում ճոճուն  
Հայտնվում է նա, **մեղմագին** փարվում,  
Գունատվում է **լուռ** ու էլ չի շնչում:

**25. Տրված հատվածներում դերբայներով արտահայտված քանի՞ որոշիչ կա:**

- Ինձ՝ վախենալու խիզախությունը,  
Ինձ՝ տառապանքի ուրախությունը...  
Մնացածը՝ ձեզ:
- Երագներից քարե ծաղիկ  
Եվ քարեղեն հեքիաթ հյուսող  
Երկու ձեռք էլ ավելացավ:
- Հրճվի՛ր արևով, նայի՛ր արևին,  
Արևին նայող աչքե՛րը համբուրի՛ր,  
Սարերին փարված ամպերը համբուրի՛ր:
- Վերջապես քի՞չ կան հրճվելու բաներ,  
Եվ լալու բաներ քի՞չ կան աշխարհում:

**26. Նախադասություններից քանիստ՞ն ածականով արտահայտված հատկացուցիչ կա:**

- Ավա՛ղ, խավարը և չարը դժնյա և այս աշխարհիս գոռ հզորների սուրն ու բռունցքը խորտակեցին քեզ:
- Ողբում եմ դառը վիճակդ դժնի, բռունցքի գոհ հազարամյա՝ ընկած ազգերի մեծ ճամփի վրա:
- Ողբում եմ նորից քո արտասվելի վիճակը անգութ, խավարի մեջ միշտ լույս որոնող իմ հա՛յ ժողովուրդ, արդ առավոտից մինչև առավոտ ոտներիդ ներքև ես քեզ եմ հսկում:
- Եվ քո դարավոր ցասման, զայրույթի ամպրոպի շանթը արձակի՛ր հիմա, ջախի՛ր, ջախջախի՛ր բռունցք ու շղթա, նոր արև վառի՛ր մեր խավարամած, հոգնած բիբերին:
- Դու պետք է ապրես, դու կուզես ապրել, ո՛վ դու ախոյան լույսի, վսեմի:

**27. Նախադասություններից քանիստ՞ն բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- Այդ մի մատաղ և խարտյաշ եղնիկ էր սև ու ջինջ աչքերով որ ծածկվում էին երկայն նուրբ թարթիչների տակ:
- Արդյոք գիտեր նա որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխան ծնվել ու մեծացել էր այդ խուլ անտառներում:
- Մի գիշեր մի քամի գիշեր սարերից անսանձ փչում էր քամին դուռն ու պատուհանները ծեծում:
- Մեր երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից և ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:
- Այդ գեղգեղանքը սիրավառ սրտի անծայր կարոտի մի ամբողջ հեքիաթ էր մի դյուրական հեքիաթ հազարան ծաղիկների բույրերով ներդաշնակված:
- Թե գյուղերում թե գինետներում բաժակի առաջ գուսանական բամբիռով երգում էր իր քաղցր ու տխուր գրույցները:

**28. Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:**

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ որ մեզ,  
 Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,  
 Բութ հեզմեցին մեր կարոտները հրկեզ  
 Ու հեռացան: Ու ոչ մի լուր չբերին:

**29. Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:**

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,  
 Իմ՝ երգիչի երազներով ու հրերով,  
 Անհրապույր իմ օրերի երգով մթար...  
 Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ:

**30. Տրված հատվածներում դերբայով արտահայտված քանի՞ ուղիղ խնդիր կա:**

- Տեսնո՞ւմ է աստված, որ այսքան տարի  
 Բան չի դրել մեր բախտի ամանում  
 Եվ չորածն էլ շատ է համարում:
- Դնում են իրենց մեղքն ինձ վրա  
 Եվ հետո հերքում են հերքելս:  
 Բայց ե՛կ կրակն է պատրանք,  
 Ե՛վ փնտրելն է անտեղի:
- Ինչպե՞ս չսիրեմ, երկիր իմ կիզված՝  
 Պարզված վերստին սրերին սուրսայր.  
 Ինչպե՞ս չսիրեմ, հեզությամբ լցված  
 Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր:

**31. Տրված հատվածում քանի՞ հանգման անուղղակի խնդիր կա:**

Տարիներ հետո, երբ ոտքս նորից ընկավ Օդեսա, շատ որոնեցի ծերունուն. ուզում էի նորից հանդիպել նրան, թոռանը, բայց չգտա: Կարոտով նայեցի նրա վաղեմի բնակարանին և վերհիշեցի նրա բոլոր խոսքերը: Ո՞վ գիտե, ո՞ր է նա. արդյոք մարդկանց կոշիկները համբերությամբ կարկատո՞ւմ է, թե՞ պատմում է գոյության կռվի դաժան ալիքների մասին, որոնք այնքան զորեղ են աղբատներին փշրելու, գեղեցկությունները խորտակելու մեջ: Աչքերիս առաջ երևաց թոռնիկը, բարևեց ինձ, մոտեցավ պատուհանին և խոհուն աչքերով նայեց սարերին:

**32. Տրված հատվածներում քանի՞ միջոցի անուղղակի խնդիր կա:**

- Քեզ բախտն ուր էլ տարավ,  
 Մտքով քո տանն էիր:
- Ամպը հառաչում էր լեռան լանջին,  
 Դողում, սարսռում էր հասակով մեկ:
- Եթե ես մի օր աշխարհից գնամ,  
 Ո՞ւմ սուտ մեղքով ես մեղքդ հերքելու:
- Երգել ես, լցվել եմ երգով,  
 Իզուր է հերքելդ:
- Ես հարուստ էի: Ես կարող էի  
 Իմ անհատների երազանքներով  
 Գնել յոթ երկինք ու տալ քեզ նվեր:



**33. Տրված հատվածում քանի՞ անուղղակի խնդիր կա:**

Այդ երկու տարիները ակնթարթի նման անցան, և կրկին ստվերի նման հայտնվեց կործանման վտանգը: Կրկին կատվի պես գողունի ու փափուկ մոտեցավ, զարմացրեց բոլորին: Սկզբում հոռոմները զորահավաք արեցին Վասպուրականում, վերջին հայ զինվորներին էլ տարան արևմուտք: Հոռոմաց ղեսպանի ժպիտով հմայված արքան չհիշեց, որ գահ բարձրանալուն պես երդվել էր մոտենալ Տարոնին, իսկ Անիում նստած իշխաններն ավելի ու ավելի նվաստացուցիչ թղթեր էին հղում կայսերը:

**34. Տրված հատվածներում քանի՞ խնդիր կա:**

- Շղթայված է իմ հոգին, գերի խանդոտ հուշերիս,  
Եվ չկա ինձ ազատում անվախճան այս գիշերից:
- Նա իր բույրերով այրեց ու գնաց,  
Նա բերեց հոգուս մահու քաղցր կյանք:
- Երանի նրանց, որ մութ բանտերում  
Եվ չարչարանքում դժնի որպես մահ  
Մաշեցին այնքան օրեր հրահրուն՝  
Գերված թշնամուց՝ անսիրտ ու անաս:

**35. Տրված հատվածներում քանի՞ տեղի պարագա կա:**

- Տարիներն արագ, ամպերի նման անցնում են անհետ,  
Մոխիր է հիմա իմ հոգում անուշ երազների տեղ:
- Բոլոր հուշերը, բոլոր խոսքերը մարել են այնտեղ,  
Եվ այն, ինչ քաղցր էր, մաքուր էր, երագ, ննջել է հավետ:
- Երկար տարիներ իրարից բաժան հեռու կողմերում  
Դու, ինձ մոռացած, ես, քեզ հիշելով, կյանք էինք մաշում:
- Ու խավարն անհուն գգվանքով թեթև  
Ծավալվեց շուրջս ու փռվեց վրաս:
- Ու ոչ մի հեռվում լույս չէի փնտրում,  
Եվ համր էր ընդմիջտ աշխարհն ինձ համար:

**36. Նախաստություններից քանիստ՞նքա պատճառի պարագա կա:**

- Ոտքերս թրջվել էին հորդ անձրևից:
- Չարմանքից քար կտրած ամբոխը պապանձվել էր:
- Չմրուխտյա ալիքներ տալով՝ դաշտի դալար բուսականությունը ծփում էր զով քամուց:
- Գիշերային անհեղ փոթորկից նավը խորտակվել էր:

**37. Տրված հատվածներում կապական կառույցով արտահայտված քանի՞ պարագա կա:**

- Չորե՛ր, ա՛յ ձորեր, սև, լայնաբերան,  
Սրտիս էս խորունկ վերքերի նման,  
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,  
Չեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել:
- Անապատի մեջ՝ խավար ու տխուր,  
Յրված քարերից մի քարի վրա,  
Գլխիկոր նստած մտախոհ ու լուռ՝  
Աշխարհի մասին մտածում էր նա:
- Երանի՛՜ քեզ, հա՛յ ուխտավոր,  
Որ կարոտով ու սիրառատ  
Ուխտ ես գնում դեպ Այրարատ:

**38. Նախադասություններից քանիստ՞ում են ընդգծվածները դերբայական դարձվածներ (նախադասությունները կետադրված չեն):**

- Ամեն անգամ **նորանոր ալիքների հսկա դեզերի հանդիպելիս** ինձ պատում էր սարսափը:
- Նավը հետ էր ցատկում **շունչ առնելու** որպեսզի նորեն դիմադրի զայրացած թշնամուն:
- Երբեմն **քամուց զազազած** վայրագ ալիքները ուժգին թափով բարձրացնում էին նավը իրենց բաշերի վրա:
- Դա տարերքների ցատկոտ հեզնանք էր թվում էր ծովը իր **դեպի վերև ցատկող** հորձանքներով թքում է երկնքի երեսին:
- Նավը մի պահ պտտվեց օդի մեջ **արագորեն վար իջնելով** տնքաց այնպես որ կարծես նրա ողնաշարը կոտրվեց:

**39. Նախադասությունից դուրս գրված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից քանիստ՞ում սխալ կա:**

«Գայանե» բալետի նկարչական ձևավորման վրա Մինաս Ավետիսյանն աշխատեց մոտ մեկ տարի՝ ծախսելով շուրջ երեսուն կտավ ստեղծելու համար պահանջվող ջանք:

- «Գայանե» – որոշիչ, **աշխատեց** – պարզ ստորոգյալ, **ջանք** – ուղիղ խնդիր
- **բալետի** – հատկացուցիչ, **կտավ** – ուղիղ խնդիր, **պահանջվող** – որոշիչ
- **նկարչական** – որոշիչ, **Ավետիսյանը** – ենթակա, **ձևավորման վրա** – հանգման խնդիր
- **մեկ** – որոշիչ, **ծախսելով** – ձևի պարագա, **երեսուն** – չափ ու քանակի պարագա

**40. Նախադասությունից դուրս գրված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից քանիստ՞ում սխալ կա:**

Չինացիները խոսում են յոթ տարբեր բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:

- **խոսում են** – պարզ ստորոգյալ, **յոթ** – որոշիչ, **բոլորովին** – չափի պարագա
- **որոնք** – ենթակա, **այլ** – որոշիչ, **խոսողին** – հանգման խնդիր
- **չինացիները** – ենթակա, **տարբեր** – որոշիչ, **բարբառներով** – միջոցի խնդիր
- **հասկանալի չեն** – բաղադրյալ ստորոգյալ, **էլ** – ժամանակի պարագա, **այլ** – որոշիչ

**41. Նախադասությունից դուրս գրված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից քանիստ՞ում սխալ չկա:**

Մեծ երգահանի կերպարը իր՝ Սևակի վկայությամբ վաղուց է եղել բանաստեղծի ստեղծագործական որոնումների կենտրոնում:

- **երգահանի** – հատկացուցիչ, **վաղուց** – ձևի պարագա, **եղել է** – պարզ ստորոգյալ
- **կերպարը** – ենթակա, **վկայությամբ** – ձևի պարագա, **կենտրոնում** – տեղի պարագա
- **մեծ** – որոշիչ, **կերպարը** – ենթակա, **ստեղծագործական** – որոշիչ
- **կերպարը** – բուն բացահայտիչ, **վկայությամբ** – հիմունքի պարագա, **որոնումների** – հատկացուցիչ

**42. Նախադասությունից դուրս գրված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից քանիստ՞ում սխալ չկա:**

Ի՞նչ իմանամ՝ որտեղ էր մոլորվել այն աստղը, որը ինձ էր շողալու այս աշխարհում:

- **ի՞նչ** – ուղիղ խնդիր, **մոլորվել էր** – պարզ ստորոգյալ, **այս** – որոշիչ
- **իմանամ** – պարզ ստորոգյալ, **որտեղ** – տեղի պարագա, **աստղը** – ուղիղ խնդիր
- **որը** – ուղիղ խնդիր, **շողալու էր** – պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման խնդիր
- **ի՞նչ** – պատճառի պարագա, **աստղը** – ենթակա, **որը** – ենթակա

**43. Տարբերակներից քանիստ՞ում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Ով քնած եք, արթո՞ւն կացեք...
- Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ, հազար–բյուր անգամ երանի նրան...
- Կռիվ զնացող ընկեր տղերքից նա է միշտ ուրախ, ով լավ ձի ունի...
- Ինչ տալիս եմ, այն է մնում  
Գանձարանում իմ սրտի...
- Թագավորին զարմացնում էր, որ իշխանները չեն հրաժարվում մայրաքաղաքը պաշարմամբ գրավելու մտքից:

**44. Տարբերակներից քանիստ՞ում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Երևում է՝ դուք ինձ լավ չհասկացաք:
- Վստահ եմ, որ քեզ լավ սպագա է սպասվում:
- Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ:
- Ինքնըստիներյան հասկանալի էր, որ նա իրեն վեր էր դասում բոլորից:
- Ամեն կերպ փորձում էի, որ հանգստացնեի նրան:

**45. Տարբերակներից քանիստ՞ում ենթակա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Նա կլինի հաղթողը, ով աչքի կընկնի հումորի սուր զգացումով:
- Նա, ով չէր երկնչում մահից, կանգնել էր հարձակման առաջին գծում:
- Վերջապես գտա, ինչ փնտրում էի:
- Չիմացվեց՝ ինչ էր ուզում:
- Երկար քննարկումից ի վերջո պարզվեց՝ բոլորս մոլորության մեջ ենք:

**46. Նախադասություններն ավարտելու դեպքում քանիսի՞ ստորադաս (երկրորդական) նախադասությունները կլինեն ենթակա:**

- Միանգամայն անհավատալի էր, որ .....
- Ինձ համար պարզ դարձավ, որ.....:
- Գիտեի, որ.....
- Հավաքվածների համար անհասկանալի էր, որ.....:
- Ոչ ոքի չասաց՝ .....

**47. Տարբերակներից քանիստ՞ում ստորոգելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Այնքան շատ էր բերածը, որ մի ամբողջ օր էր տևելու արկղերը դատարկելը:
- Դու նա ես, ով ներել չգիտի:
- Անուրանալի էր, որ գիտնականը մեծ վաստակ ուներ աստղաֆիզիկայի բնագավառում:
- Ինչ փնտրում էի առավոտից, աչքիս առաջ էր անընդհատ:
- Ամենից վտանգավորն այն էր, որ իրականում չէինք ճանաչում ո՛չ մեր բարեկամներին, ո՛չ էլ թշնամիներին:

**48. Տարբերակներից քանիստ՞ում ուղիղ խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Պարզվեց, որ բոլորը տեղում էին արդեն:
- Պատահում է, որ մարդ չի կարողանում ինքն իրեն տիրապետել:
- Պարզ երևում էր, որ իմ ներկայությունը նրան հաճելի էր:
- Երեք օր շարունակ տեսնում էինք՝ մեր դռանը մի ուղտ էր չոքել:

**49. Տարբերակներից քանիստ՞ում ուղիղ խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Ով էր նրան օգնում՝ չգիտեի:
- Այն, որ դու իմ լավ բարեկամն ես, բոլորը գիտեն:
- Աղջիկը պատմում էր այն մասին, թե ինչպես էր ինքն ամեն օր այցի գնում ծերունուն:
- Երկար մտածեցի ու վերջապես հասկացա՝ ով էր մեղավորը:

**50. Տարբերակներից քանիստ՞ում հանգման խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Ամբողջ հոգով տենչում էի, որ ծանոթանալի պաշտելի դերասանի հետ:
- Նա բոլորովին էլ գոռոզ չէր, մինչդեռ երկար ժամանակ կարծում էի, որ արհամարհում է շատերին:
- Ինքն արքային ներկայանալու էր երկուշաբթի օրը, որ զեկուցեր անցած շաբաթվա անցուդարձի մասին:
- Նրա վարքագիծն ինձ դրդում էր, որ կապերս լիովին խզեի իր հետ:
- Ես հակված եմ նրան, որ Ձեր տեսակետներն անհիմն չեն:

**51. Տարբերակներից քանիստ՞ում անուղղակի խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Մի՞թե կարելի է արդարացնել այդ հանցանքը նրանով, որ ոճրագործը վրեժի մաղձով էր լցված:
- Արծիվն ու կաղնին վիճեցին այն բանի շուրջ, թե ով է իրենցից ավելի երկար ապրում:
- Իմաստունն ում կմոտենա, նրան էլ կդարձնես քո ուղեկիցը:
- Մի՛ գլացեք օգնել նրանց, ովքեր կարոտ են օգնության:

**52. Տարբերակներից քանիստ՞ում ժամանակի պարագա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Մինչև միմյանց տեսակետները չեն ընդունում, համատեղ աշխատանքը արդյունք չի տալիս:
- Չայները լռեցին թե չէ, նա դանդաղ առաջացավ դեպի հակառակորդի դիրքերը:
- Չարմանալի է, երբ իրար քծնում են նախկին հակառակորդները:
- Քանի որ չէր հաստատվել մրցաշարի մեկնողների ցուցակը, հենց ես էի ամենից ավելի անհանգիստ վիճակում:

**53. Տարբերակներից քանիստ՞ում պարագա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- Պարզ չէ՝ երբ է գալու ավգյան ախոռները մաքրելու ժամանակը:
- Որտե՞ղ է ընկած այն քարը հիմի, Որ հողիս վրա շիրիմ պիտ լինի...
- Որտեղ կհոգնիս, գլուխդ վա՛ր դիր Ժեռ քարերի մեջ, փշերի վրա...
- Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

**54. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Թեև Աստվածաշունչը պատվիրում է սուտ երդում չտալ, բայց մարդը Հիսուսից և բոլոր աստվածներից առաջ պաշտել է սուտը:*  
Չնայած Աստվածաշնչի՝ սուտ երդում չտալու պատվերին՝ մարդը Հիսուսից և բոլոր աստվածներից առաջ պաշտել է սուտը:
- *Խուսափենք այնպիսի իրավիճակներից, երբ մեզ գովում են ուրիշների ներկայությամբ:*  
Խուսափենք այնպիսի իրավիճակներից ուրիշների ներկայությամբ մեզ գովելու ժամանակ:
- *Ոչ մի աղքատ չի կարող հասկանալ, թե ինչ դրդապատճառ ունի հարուստի բարեպաշտությունը:*  
Ոչ մի աղքատ չի կարող հասկանալ հարուստի բարեպաշտության՝ ինչ դրդապատճառ ունենալը:
- *Նա, ով չի հանդուրժում սուտը, պետք է ողջունի ամուսնալուծությունը:*  
Սուտը չհանդուրժողը պետք է ողջունի ամուսնալուծությունը:

**55. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Պատեհ առիթով չստողը նման է նրան, ով չի վերցնում գետնին ընկած դրամը:*  
Պատեհ առիթով չստողը նման է գետնին ընկած դրամը չվերցնողին:
- *Ով առաջին անգամ ծով է տեսնում, պետք է իր բերանը ոսկոր դնի:*  
Առաջին անգամ ծով տեսնողը պետք է իր բերանը ոսկոր դնի:
- *Տատս աղաղակեց այնպիսի մի տարօրինակ ձայնով, որ կարծես դժոխքից էր հնչում:*  
Տատս աղաղակեց կարծես դժոխքից հնչող մի տարօրինակ ձայնով:
- *Երբ վիրավորը ցավերից գանգատվում էր, պառավը հանդիմանում էր նրան:*  
Պառավը հանդիմանում էր ցավերից գանգատվող վիրավորին:

**56. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Առավոտ շուտ, երբ անցնում է պատշգամբի տակով, նա մի հայացք է նետում տանտիրոջ՝ թավշյա ծանր վարագույրներով ծածկված պատուհաններին:*  
Առավոտ շուտ՝ պատշգամբի տակով անցնելիս, նա մի հայացք է նետում տանտիրոջ՝ թավշյա ծանր վարագույրներով ծածկված պատուհաններին:
- *Ճանապարհ ընկնելիս հանկարծ հիշեցի, որ կարևոր իրեր եմ մոռացել հետս վերցնել:*  
Երբ ճանապարհ էի ընկնում, հանկարծ հիշեցի, որ կարևոր իրեր եմ մոռացել հետս վերցնել:
- *Դուք՝ որ դավեցիք մեզ՝ ձեր հավատարիմ զինակիցներին, արժանի եք ամենաձանր պատժին:*  
Դուք՝ մեզ՝ ձեր հավատարիմ զինակիցներին դավողներդ, արժանի եք ամենաձանր պատժին:
- *Հենց երեկոյան կարող ես գալ մեր տուն, և եթե մայրս տանը լինի, երկուսս էլ կշահենք:*  
Հենց երեկոյան կարող ես գալ մեր տուն, և մորս՝ տանը լինելու դեպքում երկուսս էլ կշահենք:

**57. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Միտում էր թռչունը, որ մնացել էր առատ տեղացող ձյան տակ:*  
Միտում էր առատ տեղացող ձյան տակ մնացած թռչունը:
- *Պապս ինձ փոքր տարիքում պատմել էր այն մասին, որ տարիներ առաջ՝ վանքի ավերակներում շրջելիս, գտել է հին ձեռագրերի գաղտնարանը:*  
Պապս ինձ փոքր տարիքում պատմել էր տարիներ առաջ՝ վանքի ավերակներում շրջելիս, հին ձեռագրերի գաղտնարանը գտնելու մասին:
- *Թե կարողանայի Վանում գտնել ապուպապերիս տոհմական տունը, հորս պատգամը կատարած կլինեի:*  
Վանում ապուպապերիս տոհմական տունը գտնելու դեպքում հորս պատգամը կատարած կլինեի:
- *Ըստ այն վարկածի, թե հանցագործները թանգարան էին սողոսկել աշխատակիցներից մեկի աջակցությամբ, քննիչը կազմեց կասկածյալների նախնական ցուցակը:*  
Ըստ հանցագործների՝ աշխատակիցներից մեկի աջակցությամբ թանգարան սողոսկելու վարկածի՝ քննիչը կազմեց կասկածյալների նախնական ցուցակը:

**58. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- *Պարզվեց, որ հրավիրյալները բնավ շահագրգռված չէին մեր՝ օրեր առաջ ներկայացրած առաջարկով:*  
Պարզվեց հրավիրյալների՝ մեր՝ օրեր առաջ ներկայացրած առաջարկով բնավ շահագրգռված չլինելը:
- *Կյանքում ինձ շատ են պատահել մարդիկ, որ չեն գնահատել ո՛չ իրենց, ո՛չ էլ մերձավորներին:*  
Կյանքում ինձ շատ են պատահել ո՛չ իրենց, ո՛չ էլ մերձավորներին չգնահատած մարդիկ:
- *Եթե մեկը տասը տարի օգտագործում էր այդ արոտավայրը, սպա այդ տարածքը դառնում էր նրա սեփականությունը:*  
Մեկի՝ տասը տարի այդ արոտավայրը օգտագործելիս այդ տարածքը դառնում էր նրա սեփականությունը:
- *Համաձայն այն տեսակետի, որ առաջ է քաշում նշանավոր գիտնական Պարիս Հերունին, եգիպտական քաղաքակրթության մեջ մենք՝ հայերս, որոշակի ներդրում ենք ունեցել:*  
Համաձայն նշանավոր գիտնական Պարիս Հերունու՝ առաջ քաշած տեսակետի՝ մենք՝ հայերս, եգիպտական քաղաքակրթության մեջ՝ որոշակի ներդրում ենք ունեցել:

**59. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված պարզի:**

- *Որդեկորույս մայրը արդյոք կհավատա՞, թե քո որդուն զոհ ես բերել իր զավակի հանդեպ տաժած սիրո համար:*  
Որդեկորույս մայրը արդյոք կհավատա՞ քո որդուն՝ իր զավակի հանդեպ տաժած սիրո համար զոհ բերելու:
- *Եթե բժիշկներն իրոք ճանաչեն մարդուն, կամաչեն իրենց կատարած ավերածությունների համար:*  
Մարդուն ճանաչելու դեպքում բժիշկներն իրոք կամաչեն իրենց կատարած ավերածությունների համար:
- *Մերը սաից կազատվի, եթե հոգուց մարմնին անցնելիս անունը փոխի:*  
Մերը սաից կազատվի հոգուց մարմնին անցնելիս անունը փոխելու դեպքում:
- *Մարդիկ հաճախ կամագուրկ են համարում նրան, ով չի կարողանում ստել:*  
Ստել չկարողացողին մարդիկ հաճախ կամագուրկ են համարում:

**60. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Երբեմն սուտ խոսելու միակ նպատակը ասելիքը լավ պարզաբանելն է:*  
Երբեմն սուտ են խոսում, որպեսզի ասելիքը լավ պարզաբանեն:
- *Կնոջը հմայք տվող զարդերը տղամարդուն նողկալի են դարձնում:*  
Այն զարդերը, որոնք հմայք են տալիս կնոջը, տղամարդուն նողկալի են դարձնում:
- *Ազահությունը հանկարծակիի է գալիս հանկարծակի հարստացածի առատաձեռնությունից:*  
Ազահությունը հանկարծակիի է գալիս նրա առատաձեռնությունից, ով հանկարծակի է հարստացել:
- *Բավականաչափ զարգացում ունենալու դեպքում նա կարող էր լինել բավական լավ հրապարակախոս:*  
Եթե բավականաչափ զարգացում ունենար, նա կարող էր լինել բավական լավ հրապարակախոս:

**61. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Ես, զբաղված լինելով միայն գրական աշխատանքով, չէի հետաքրքրվում նրանց գործերով:*  
Ես, որ զբաղված էի միայն գրական աշխատանքով, չէի հետաքրքրվում նրանց գործերով:
- *Ստախոսի փաստարկը մեռած մարդուն վկայակոչելն է:*  
Ստախոսի փաստարկն այն է, որ վկայակոչում է մեռած մարդուն:
- *Հորեղբայրս, գինետնից հարբած դուրս գալով, հանդիպում է իր քրոջ որդուն:*  
Երբ հորեղբայրս հարբած դուրս է գալիս գինետնից, հանդիպում է իր քրոջ որդուն:
- *Համբարձումը չէր վիրավորվում իր մասին արտասանված սրախսություններից:*  
Համբարձումը չէր վիրավորվում, երբ իր մասին սրախսություններ էին արտասանվում:

**62. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Ստեղծագործական ամուլ դրության պատճառով գեղարվեստն ու գրականությունը գոհանում էին երեկվա հնոտիքը ծամծմելով:*  
Գեղարվեստն ու գրականությունը գոհանում էին երեկվա հնոտիքը ծամծմելով, քանի որ ստեղծագործական ամուլ դրություն էր:
- *Նրա մեկնաբանմամբ այդ անզուգական ողբերգությունը հասարականում էր հոր ու զավակների միջև մի սովորական ընտանեկան կռվի վերածվելու աստիճան:*  
Նրա մեկնաբանմամբ այդ անզուգական ողբերգությունը այն աստիճան հասարականում էր, որ վերածվում էր հոր ու զավակների միջև մի սովորական ընտանեկան կռվի:
- *Այդ կարճատև ճանապարհորդությունը վերջնականապես համոզեց ինձ հրաժարվել անհայրենիք թափառումներից:*  
Այդ կարճատև ճանապարհորդությունը վերջնականապես համոզեց ինձ, որպեսզի հրաժարվեմ անհայրենիք թափառումներից:
- *Ինչո՞ւ Գյոթեի և Հեգելի ժողովուրդը չըմբոստացավ այդքան արյուն տեսնելուց:*  
Ինչո՞ւ Գյոթեի և Հեգելի ժողովուրդը չըմբոստացավ, երբ այդքան արյուն տեսավ:

**63. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Զննիչները բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցներով պարտադրում էին ինձ տեղեկություններ հայտնել նրա մասին:*  
Զննիչները բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցներով պարտադրում էին ինձ, որ տեղեկություններ հայտնեմ նրա մասին:
- *Դժվար էր զարմացնել Ռուբենին՝ տարիներ շարունակ գրականության ու արվեստի մեծերի հետ շփված մարդուն:*  
Դժվար էր զարմացնել Ռուբենին, որ տարիներ շարունակ գրականության ու արվեստի մեծերի հետ շփված մարդ էր:
- *Իր զգացմունքների մասին ընկերոջն ամեն ինչ պատմելը նրա մեծագույն սխալն էր:*  
Նրա մեծագույն սխալն այն էր, որ իր զգացմունքների մասին ամեն ինչ պատմել էր ընկերոջը:
- *Մայր Սեդա, Աշոտին մեկ անգամ տեսնողը չի կարող այլևս մոռանալ նրան:*  
Մայր Սեդա, ով մեկ անգամ տեսնում է Աշոտին, չի կարող այլևս մոռանալ նրան:

**64. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Վերջին դեպքերը, չնայած լուրջ ազդեցություն չթողնելուն, վախով էին լցրել նրա հոգին:*  
Չնայած վերջին դեպքերը լուրջ ազդեցություն չէին թողել, վախով էին լցրել նրա հոգին:
- *Եղել են իմ և նրա փոխհարաբերությունների վրա արտաքինապես ոչ մի ազդեցություն չունեցած, բայց իրականում ամեն վստահություն խարխլած դեպքեր:*  
Եղել են դեպքեր, որ իմ և նրա փոխհարաբերությունների վրա արտաքինապես ոչ մի ազդեցություն չեն ունեցել, բայց իրականում ամեն վստահություն խարխլել են:
- *Ձորքի՝ թշնամու առաջապահ գնդերի հետ առճակատման գնացած շարքերը ընկնում էին հնձած խոտի նման:*  
Հնձած խոտի նման ընկնում էին գորքի շարքերը, երբ թշնամու առաջապահ գնդերի հետ առճակատման էին գնացել:
- *Վաղ առավոտյան լճի պաղպաջուն ալիքների ոսկևորվելուն նայելը ես գերագույն երջանկություն էի համարում:*  
Ես գերագույն երջանկություն էի համարում այն, որ վաղ առավոտյան նայում էի լճի պաղպաջուն ալիքների ոսկևորվելուն:

**65. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Գույնը գցած պահակը վազում էր շինության պարսպի երկայնքով՝ քիչ առաջ փախած ավազակին բռնելու հույսով:*  
Պահակը, որ գույնը գցել էր, վազում էր շինության պարսպի երկայնքով՝ քիչ առաջ փախած ավազակին բռնելու հույսով:
- *Մերձավորների հետ համաձայն չլինելով՝ նա փոխզիջման ուղիներ էր որոնում:*  
Թեպետ մերձավորների հետ համաձայն չէր, նա փոխզիջման ուղիներ էր որոնում:
- *Երկու շաբաթ շարունակ պահարանը տակնուվրա անելու արդյունքում գտածը ընդամենը այս հին նամա՞կն էր:*  
Այն, ինչ երկու շաբաթ շարունակ պահարանը տակնուվրա անելու արդյունքում գտել էիր, ընդամենը այս հին նամա՞կն էր:
- *Գիշեր–ցերեկ մտածում էր այդ դժվարին վիճակից ինչպես դուրս գալու մասին:*  
Գիշեր–ցերեկ մտածում էր այն մասին, թե ինչպես դուրս գա այդ դժվարին վիճակից:

**66. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Դժվարանցանելի ճանապարհի վերջին ոլորանին հասնելով՝ ուղևորը ականա կանգնեցրեց մեքենան:*  
Երբ հասավ ճանապարհի վերջին դժվարանցանելի ոլորանին, ուղևորը ականա կանգնեցրեց մեքենան:
- *Ատելով կնոջը և նրանից ատվելով՝ Սմբատ Ալիմյանը սփոփվում էր միայն գավակներով:*  
Քանի որ ատում էր կնոջը և նրանից ատվում, Սմբատ Ալիմյանը սփոփվում էր միայն գավակներով:
- *Պարտված լինելու մտքի հետ չհաշտվելով՝ հակառակորդը կռվում էր հուսահատ համառությամբ:*  
Հակառակորդը կռվում էր հուսահատ համառությամբ, քանի որ պարտվելու մտքի հետ չէր հաշտվել:
- *Պատվիրակների՝ արքայական վրաններին հասնելուն պես ինչեցին հակառակորդի շեփորների բարձրագույն ձայները:*  
Երբ պատվիրակները հասան արքայական վրաններին, ինչեցին հակառակորդի շեփորների բարձրագույն ձայները:

**67. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Դմիտրին իր սիրածին փրկելու համար իր վրա է վերցնում հանցանքը և նրա փոխարեն կախաղան բարձրանում:*  
Որպեսզի Դմիտրին փրկի իր սիրածին, իր վրա է վերցնում հանցանքը և նրա փոխարեն կախաղան բարձրանում:
- *Ես, ծանոթ չլինելով վրաց լեզվին ու վրացական թատերագրությանը, դժվարությամբ էի հետևում այդ ներկայացումներին:*  
Ես, որ ծանոթ չէի վրաց լեզվին ու վրացական թատերագրությանը, դժվարությամբ էի հետևում այդ ներկայացումներին:
- *Սիրանույշը, չնայած Արմենյանի նկատմամբ չսքողված հակակրանք ունենալուն, օգտվում էր նրա մտահղացումներից:*  
Թեև Սիրանույշը Արմենյանի նկատմամբ չսքողված հակակրանք ուներ, օգտվում էր նրա մտահղացումներից:
- *Հազարավոր հովեկներ էին գալիս հեռավոր քաղաքներից՝ վայելելու մեր լեռնային քաղաքի օդն ու ջուրը:*  
Հազարավոր հովեկներ էին գալիս հեռավոր քաղաքներից, որպեսզի վայելեն մեր լեռնային քաղաքի օդն ու ջուրը:



**68. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Նա գրում էր ֆիզիկական ծանրագույն մի գործ կատարելու նման:*  
Նա գրում էր այնպես, կարծես ֆիզիկական ծանրագույն մի գործ էր կատարում:
- *Ձեր կարծիքով՝ Փարիզը չտեսած մարդը չի՞ կարող դատողություններ անել գեղեցկության մասին:*  
Ձեր կարծիքով՝ եթե մարդ Փարիզը չի տեսել, չի՞ կարող դատողություններ անել գեղեցկության մասին:
- *Լինելով հնչյունների նուրբ վարպետ՝ բանաստեղծության մեջ Ռոմանոս Մելիքյանը գնահատում էր մեղեդայնությունը, արձակում՝ ռիթմը:*  
Քանի որ Ռոմանոս Մելիքյանը հնչյունների նուրբ վարպետ էր, բանաստեղծության մեջ նա գնահատում էր մեղեդայնությունը, արձակում՝ ռիթմը:
- *Երևի չպիտի չափից ավելի տարվելի նրանով՝ նրա մահով անփարատելի տառապանքի չմատնվելու համար:*  
Երևի չպիտի չափից ավելի տարվելի նրանով, որ նրա մահով անփարատելի տառապանքի չմատնվելի:

**69. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Անտառամիջյան ճանապարհով դեսպի գյուղ էին իջնում ցորենի խրճերով ծանրաբեռնված մի քանի սայլեր:*  
Մի քանի սայլեր, որոնք գյուղ էին իջնում անտառամիջյան ճանապարհով, ծանրաբեռնված էին ցորենի խրճերով:
- *Ալֆոնս Դոդեի հումորի նրբությունը անհասկանալի է Ֆրանսիայում չապրող մարդուն:*  
Մարդուն անհասկանալի է Ալֆոնս Դոդեի հումորի նրբությունը, եթե նա Ֆրանսիայում չի ապրում:
- *Չնայած արդեն պեզարդ ծերունի լինելուն՝ Շիրվանգադեն արվեստի խնդիրներում պատանու պես խանդոտ էր ու բռնկուն:*  
Թեև Շիրվանգադեն արդեն պեզարդ ծերունի էր, արվեստի խնդիրներում նա պատանու պես խանդոտ էր ու բռնկուն:
- *Նա համաձայն չէր թատերագրի՝ իբրև ստեղծագործողի, թատրոնում երկրորդական լինելու գաղափարին:*  
Նա համաձայն չէր այն գաղափարին, որ թատերագիրը՝ իբրև ստեղծագործող, երկրորդական է թատրոնում:

**70. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:**

- – *Մենք այնքան մտերմացել ենք, քո՛ւյր Սեդա, որ ես ազատ կարող եմ իմ մի քանի կարծիքը հայտնել քեզ, – ասաց իշխանը ժպտալով:*  
*Իշխանը ժպտալով ասաց Սեդային, որ իրենք այնքան մտերմացել են, որ ինքը ազատ կարող է իր մի քանի կարծիքը հայտնել նրան:*
- *Մոսկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել մոտենամ ու ասեմ.*  
*– Ես քո որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:*  
Մոսկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել մոտենամ ու ասեմ, որ ես իր որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:
- – *Եթե ձեր ծնողները շատ սիրելուց ձեզ կուռք են դարձրել, բարի՛ եղեք նրանցից գոհ չպահանջել, – դառնացած ասում էր ուսուցիչը:*  
Ուսուցիչը դառնացած ասում էր, որ եթե նրանց ծնողները շատ սիրելուց իրենց կուռք են դարձրել, ապա թող նրանք բարի լինեն նրանցից գոհ չպահանջել:
- – *Եթե ձեր հանձնաժողովը չընդունի մեր սկզբունքները, միևնույն է, մենք շարունակելու ենք մեր գործը, – հանգիստ պատասխանեց Հակոբյանը:*  
Հակոբյանը հանգիստ պատասխանեց, որ եթե նրանց հանձնաժողովը չընդունի իրենց սկզբունքները, միևնույն է, իրենք շարունակելու են իրենց գործը:

**71. Քանի՞ ստորակետ պիտի դրվի տրված տեքստում (նախադասությունները կետադրված չեն):**

Ապրում էր այդպես և շուրջբոլորը նայելը զզվելի էր ու նողկալի: Բայց շուտով շատ բաներ ապշեցրին նրան և կամա-ակամա սկսեց ավելի մանրագնին նայել շուրջը: Նրան առավելապես զարմացնում էր այն անանցանելի անդունդը որ կար իր և մյուսների միջև: Բոլորն իրեն անբարյացակամ ու թշնամաբար էին նայում և նա գիտեր ու հասկանում էր որն էր այդ մեկուսացման ընդհանուր պատճառը և դրանից բոլորովին էլ վատ չէր զգում: Այդ պատճառով ոչ ոք նրան չէր սիրում և խուսափում էին նրանից:

**72. Քանի՞ ստորակետ պիտի դրվի տրված տեքստում (նախադասությունները կետադրված չեն):**

Ինքը երբևիցե ոչ ոքի հետ չէր խոսել Աստծու և հավատի մասին բայց այդ մարդիկ ուզում էին իրեն սպանել անհավատությունը պատրվակ դարձրած և ինքը չէր էլ դիմադրում: Երբ մի կալանավոր կատաղի ոգևորությամբ հարձակում գործեց նրա հոնքն էլ չշարժվեց ու ոչ մի դիմագիծ չթրթռաց: Բանտի պահակը կարողացավ ժամանակին կանգնել երկուսի միջև: Այլապես արյուն էր թափվելու:

**73. Քանի՞ ստորակետ պիտի դրվի տրված տեքստում (նախադասությունները կետադրված չեն):**

Գեղեցիկ է կապուտաչյա Լեմանը որ ասես փիրուզ երկնքի կտոր լինի ընկած Ջվիցերիայի և Ֆրանսիայի միջև: Մի հրաշք է երկնայինի կապուտակ անհունն ու անչափելի անդորրը հետը երկիր բերած: Թվում է չի ուզում խառնվել այս աշխարհի և ոչ մի գործին: Արոտներ գյուղեր վիլլաներ սրանք են իրենց դողդոջուն սովերները թափել նրա ակնախափող ալյակներում ու երկաթուղու ճեպընթաց գնացքները օղակ-օղակ քանդելով ծխի սպիտակ կծիկները սլանում են նրա ափերով տանել-բերելով աշխարհի ծագերից մի ամբողջ խառնուրդ:

Լեմանն է քմահաճ և գեղուհու պես նրբին շարժումն ունեցող: Հանկարծ ճակատը կծկվեց ու խոժոռվեցին ալյակները իսկ ձկներն ու ձկնկույները հանդիսության ժամանակ օդում թռչող գլխարկների պես վերովար արին կարծես գրգռելով մոտեցող ալիքներին: Լիճը դա փաստում են բոլորը գերբնական ձգողականություն ունենալով թույլ չի տալիս մոռանալ իրեն:

**74. Նախադասություններից քանիստ՞ում է 4-ից առաջ ստորակետը սխալ դրված:**

- Այդ պահին պարեկն ուշիուշով նայում էր դեպի հարավ-արևմուտք՝ Մասիսի կողմը, և այնտեղ ինչ-որ բան էր սևին տալիս:
- Հայտնվեց կարճ ու գնդիկ մի գորական՝ կորովի շարժումներով, և ընդառաջ գնաց եկվորներին:
- Նա մոտեցավ գրակալին, և վերցնելով մագաղաթյա մատյանը՝ զգուշորեն բաց արեց նշան դրած էջը:
- Օրն այնպես քնքուշ էր, և շուրջբոլորը՝ խաղաղ, որ մղում էր միմիայն երագանքի:
- Նրա թե՛ կշտամբալից, և թե՛ սպառնագին ձայնից սթափվեցին կովոդները:
- Այո՛, սրանք՝ այս զինվորները, և՛ ուժ են, և՛ հույս, և՛ կյանք:

**75. Նախադասություններից քանիստ՞ում ստորակետի գործածության սխալ կա:**

- Ծերունին, ինչպես երևում էր, մտքի թելը չկտրելու համար սկսեց տենդորեն լրացնել նախադասությունը մինչև վերջակետ, որից նրա դողդոջուն ձեռքի մեջ ավելի թախծալի սկսեց ճռճռալ եղեգնյա գրիչը:
- Երբ Արարատյան ավերված աշխարհը վերջապես շունչ քաշեց նվաճողների կամայականություններից, Փիլիպոս կաթողիկոսը վերադարձավ Էջմիածին՝ կաթողիկոսի մատավայր և արագ զարկ տվեց ավերված կոթողների վերաշինմանը:
- Երբ գալիս էր երեկոն, ու նրա արնավառ ամպերը հրդեհում էին շրջակա լեռները, նա մենակ մտած ձորաբերանի մի ժայռի վրա, հետևում էր ամպերի խաղին, ունկնդրում վտակի աղեկտուր խշշոցը:
- Մրրիկը թեև վտանգավոր չէր, սակայն ծովաջուրը առատորեն հոսում էր և թափվում թիավարների թիկունքին, իսկ ուղևորները կուչ էին եկել՝ ծածկվելով, ով ինչպես կարող էր:
- Ծովով նա պիտի անցներ իսպանական ափերով, ըստ ընդունված ուղեգծի՝ պիտի կանգ առներ մի քանի նավահանգիստներում, ապա մինչև Ամստերդամ պիտի կտրեր մոտ քսաներկու օրվա ճանապարհ:

**76. Քանի՞ բուք պիտի դրվի տրված նախադասության մեջ:**

Նրա դիմաց աստիճաններից քիչ ձախ դռան փեղկերի արանքում կանգնած էր տարօրինակ այգելուն իսկ միջօրեի արևի պատուհաններից թափանցող ոսկեգօծ ճառագայթները բեկվում էին նրա տարիների տառապանքից երբեմնի փայլը կորցրած պղտոր ու փոքր-ինչ արնակալած աչքերի մեջ:

**77. Քանի՞ բուք պիտի դրվի տրված նախադասության մեջ:**

Ով թերթել է արևելահայ մամուլը ուշադրության առնելով նրանում տպագրված բանաստեղծությունները չի կարող նկատած չլինել որ բոլոր բանաստեղծությունները այդ մամուլի էջերում 1908–10 թվականներից սկսած տերյանական են դառնում իշխում են տերյանական մշուշներն ու տխրությունը տերյանական բառընտրությունը արտահայտությունները մեղեդիականությունը:

**78. Քանի՞ բուք պիտի դրվի տրված հատվածում:**

Տասներեքերորդ դարում օրըստօրե փթթող Անի քաղաքում հարուստ ու ինքնագոհ մի իշխան էր ապրում Անանիա անունով: Նա ուներ մի քնքուշ դուստր դեղձան ծամերով ականակիտ ծավի աչքերով: Լուսափթիթ աղջիկը ցանկանալով գրավել բոլորի ուշադրությունը հաճախ ճեմում էր հոր ապարանքի քարե պատշգամբում: Իր անբասիր գեղ ու հմայքով ազնվազարմ նազանքով նա հմայում էր անցորդներին և ամենքը ամեն ինչ մոռացած նայում էին նրան:

**79. Քանի՞ բուք պիտի դրվի տրված հատվածում:**

Նորընծա վարպետ Սկրտչի բարեհամբույր մայրը նախօրոք որոշել էր երբ որդին դառնա ուստա անմիջապես ամուսնացնի: Որոշվեց այսպես Սկրտչիչը պետք է իր կառուցած աղբյուրի բացման հաջորդ օրը այգածագին թաքնվի աղբյուրի մոտ տեսնելու աղջիկներից ով է առաջինը ջուր վերցնելու ով լինի առաջինը նա էլ կդառնա ուստայի կինը:

**80. Քանի՞ բուք պիտի դրվի տրված հատվածում:**

Երկու օր հետո ուստայի մայրը գնաց Հեղնարին խնամախոսության սակայն աղջկա ծնողները չսիրելով Սկրտչին անբարյացակամորեն էին տրամադրված նրա նկատմամբ ուստի կտրուկ մերժեցին նրան:

Սկրտչի մայրը սուկալի վիրավորված ու վրդովված այդ ամբարիշտների արհամարհական վերաբերմունքից վերադարձավ տուն ճանապարհին խորհելով վրեժխնդրության միջոցների մասին:

**81. Քանի՞ բուք պիտի դրվի տրված տեքստում հատվածում:**

Նորից բացեց աչքերը պղտոր հայացքով նայեց շուրջը կողքին կանգնած բուժքրոջը և մշուշի մեջ նրան պատկերացավ մի դեմք հաստ ու խոիվ հոնքերով: Գլխում ուժեղ խշշոց էր մի խշշոց որը հանկարծ ճեղքեց ու նրա գիտակցությանը հասավ միայն մի բառ կապրի: Ստքերի քառսում աշխատում էր որևէ բան հիշել բայց մտքերը խառնված էին ու նրա ցավից մշուշված հայացքի դեմ կրկին գծագրվում էին խայտաբղետ աղճատված պատկերներ:

**82. Քանի՞ բուք պիտի դրվի տրված տեքստում հատվածում:**

Մշուշը լեռներից կիրճն էր իջել թավալգլոր լցվելով ձորը լեռների գլխին հիմա գորշ ամպեր էին ճոճվում իսկ արևը ծիկրակում ցրիվ ամպերի արանքից հրաշք էր: Հագրոյի հայացքի դիմաց լույսի ու ստվերի խաղ էր ծառի շուրջբոլորը ողողված էր արևով իսկ քիչ այն կողմ ստվեր էր խոնավ ու մութն առած: Լույսը ստվերն էր շեշտել ստվերը լույսը: Անսովոր պայծառ շողեր էին գունեղ թրթռում և թվում էր ծառի շուրջբոլորը ծիածաններ էին քանդվում ու հյուսվում: Իսկ ներքևի կածանում լույսը պահմտոցի էր խաղում: Հագրոն հասկացել էր ինչու է ծառն այսպես երկար ապրել համառ կանգնել տարիներ: Մնացել էր որ տեսնի ինչպես է խաղում լույսի ստվերը մի կաթ ջրում:

**83. Բանի՞ միջակետ պիտի դրվի տրված հատվածում:**

Երեք օրից վերադարձաւ տունս այժմ այդպէս եմ անվանում իմ վրանն ու քարանձավը և հիացմունքով վերապրեցի սքանչելի հովիտը հայտնաբերելու պահը մտքում վերականգնելով նրա անմատույց դիրքը արգավանդ հողն ու ծառերը հովիտը քամիներից պատսպարված արքյուրների պաղպաջուն ջրով: Սկսեցի խորհել որ սխալ էր տունս կառուցելու դիրքը դա կղզու ամենավատ տեղերից էր: Բայց հովիտ տեղափոխվելու պլանը քննարկելով հասկացա միակ դրականը իմ տնից երևում է ծովը և հույս կա ինձ պէս դժբախտ մեկի կղզում հայտնվելու դեպքում կիմանամ դրա մասին: Բայց և այնպէս հովտում շինեցի մի քողտիկ ցանկապատված մարդու հասակից բարձր ամուր կրկնակի ցցապատնէշով ցցերի մեջ երկար սանդուղքով:

**84. Նախադասություններից քանի՞սն են ճիշտ կետադրված:**

- Եվ լռելայն մի իրարանցում սկսվեց. տանտիրուհին թեքվում, երեխաների ականջին ինչ–որ բաներ էր ասում և ճանապարհում:
- Հիմա էլ նույն զգացումն էմ ասլրում Միացյալ Նահանգներում՝ զարմանք պատճառելով թե՛ ուղեկիցներին և թե՛ հյուրընկալ հայրենակիցներին:
- Եվ, չգիտեմ ինչու, որոշում եմ՝ տուն հասնելուս հենց հաջորդ օրը ավտոմեքենա պիտի նստեմ ու գնամ Թաիլնի շրջանի Վերին Մասնաշեն գյուղը:
- Բամին Արագածի արևի ոսկեգօծումից զարթնող բնության թովչական գրկում աստղերի արցունքից գոյացած վճիտ լճակի փաղաքուշ հովը կբերի, հորդացած ջրերի խենթությունն ու ծաղիկների նրբաբույրը:
- Ուզեցի ափսոսանքով հրաժէշտ տալ, մի ուրիշ անգամ այցելելու խոստումով, բայց այդ լեռնուհին փխրուն ու փոքրամարմին, մեծ ուժով բռնեց թևերիցս՝ նստեցնելով սեղանի մոտ:

**85. Նախադասություններից քանիստ՞ն մեկից ավելի բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Հիշեց սպարապետի Հայոց աշխարհի պաշտպանության մասին հրամանն ու պատվերները Տիգրոն գնալուց առաջ:
- Մի պահ Ատոմը կարկամեց անակնկալ էր այս ամենը չտեսնված չլսված անակնկալ և անկարող եղավ միանգամից ըմբռնել ինչ կատարվեց իր աչքերի առջև:
- Երկիրը տագնապի մեջ էր և ինքը Գնունյաց իշխանը պատասխանատու լինելով երկրի առջև արձակեց երկիրը պաշտպանելու իր հրամանը:
- Մինչ Արծվին կպատասխաներ երկրորդ նետը սուրաց պարզ էր նետաձիգը հեղեղատի մյուս ափին էր իրենց դեմ դիմաց:
- Փախչողի նժույզը արագոտն ու կատաղի ճարակորեն թոցնելով հեծյալին վերջապէս հասավ Արծվիի նժույզին:

**86. Նախադասություններից քանիստ՞ն է բուժով տրոհված հետադաս ծավալուն որոշիչը:**

- Մենք մի գաղթական հայ ընտանիք էինք՝ զուսպ, համեստ ու համերաշխ, կապված մեր լեզվին, սովորություններին ու եկեղեցուն:
- Իմ կարիերայի՝ պարտություններով ու դժվարություններով լի առաջին տարիներին միշտ հայրս, մայրս, քույրս իմ կողքին էին:
- Իմ փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով, գտնվում էր տան երկրորդ ու երրորդ հարկերի մեջտեղում:
- Տուփը բացեցի. թավշյա բարձիկի վրա դրված էր մի ոսկեկուռ հրաշալի մատանի՝ վրան իմ անվան սկզբնատառերը փորագրված:
- Մարտելի գերեզմանոցը՝ նոճիածածկ ծառուղիներով, ոսկետառ շիրմաքարերով, քամիների ժամանակ լցվում էր պշրագեղ դաշտերի և սոճուտի զգլխիչ խեժահոտով:

**87. Նախադասություններից քանիստ՞ում փակագծեր պիտի դրվեն :**

- Հաջորդ օրը առավոտյան որոշեցինք այցելել Սուրբ Ղազար կղզի Վենետիկ այցելող հայր ուխտավայր դարձած այս կղզին տեսնելու առիթը չպիտի բաց թողնի և խոնարհվեցինք սուրբ մասունքների առաջ:
- Շունն անմիջապես հորս ճանաչեց պոչը ճոճելով մերթնումները հորս ոտքերին քսմավելով այս էր նրա գոհության և ուրախության արտահայտությունը մեզ առաջնորդեց մինչև վանք:
- Եկեղեցու ներքին բակը մի եղեմական պարտեզ է գեղեցիկ ծառերով ու վարդի թփերով զարդարուն այստեղ է հանգչում Մխիթար աբբահոր սուրբ շիրիմը:
- Հայրս պատմեց նա սիրում էր պատմել հայտնի մարդկանց մասին որ երբ անգլիացի մեծ բանաստեղծը ինչ–որ ժամանակ գալիս է Վենետիկ այցելում է նաև Սուրբ Ղազար կղզի ուր սովորում է նաև հայերեն:
- Եվ հիմա հիսուն տարի անց նստած եմ դեմ հանդիման հողիվոտյան այդ կենդանի կինոլեգենդի հետ իր ամառանոցում այդ տաղանդավոր հայր տասնամյակներ շարունակ ցնցել է կինոաշխարհը:

**88. Նախադասություններից քանիստ՞ում փակագծեր պիտի դրվեն:**

Տավուշում բարձրաստղարթ անտառներով հարուստ այդ երկրում մի ժայռեղեն բարձունքի վրա վեր է խոյացել անավարտ հոյակերտը Մակարավանքը այն կառուցվել է 12–րդ դարում Մակար քարագործի երկար տարիների տքնության արդյունքում շունչ ստացած վանքը որ թեև կառուցվում էր դանդաղ բայց վարպետն ուխտել էր որ մինչև վանքը ավարտին չհասցնի ոտքերը հողին չառնեն: Օր օրի բարձրանում էին վանքի պատերը իսկ վարպետ Մակարը հողից կտրվում: Նա գիշերում էր վանքի իր ձեռքով շարված ամուր պատերի վրա դրանք կիսով չափ բարձրացել էին իր երդումը չդրժելու համար: Վրա է հասնում աղետը որդին հիվանդանում է անբուժելի ախտով և վախճանվում: Հորը խնայելով բոլորը քաջատեղյակ էին նրա երդմանը հարազատները թաքցնում են կատարվածը: Բայց վարպետը սկսում է ինչ–որ բան գուշակել նա լավ գիտեր որդու տաշած քարերը և ի վերջո տեղեկանում է կատարվածի մասին: Չդիմանալով կորստի ցավին ցած է նետվում պարսպից: Գժբախտ վարպետի պատմությունը քչերը գիտեն բայց գեղեցիկ Մակարավանքը ծանոթ է բոլորին:

**89. Քանի՞ բութ պետք է դրվի տրված հատվածում:**

Ես արդեն համարյա վստահ էի որ դա նա է: Հուսախաբ քայլեցի առաջ չիմանալով ուր գնամ: Կյանքը զգալիորեն դառը համ ուներ և ես զգում էի ինչպես է վաղուց ի վեր հասունացող սրտխառնուքը հասնում իր գագաթնակետին ինչպես է կյանքն ինձ դուրս հրում և մի կողմ շարտում: Կատաղած քայլում էի գորշ քաղաքով ամեն ինչից խոնավ հողի հոտ առնելով: Աստված իմ ինչպես հնարավոր եղավ այս ամենը ինչպես հասա ես դրան ես ոգևորված պատանիս: Ու մինչ ես Հարրի Հալլերս կանգնած էի փողոցում հանկարծակիի եկած ինձ մոտեցավ մի գեղեցկատես պատանի գրքերի կապոցը ձեռքին:

**90. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Առջևից գնում էր տարեց որսորդ Ավետը, նրա հետևից՝ Գարեգինը, իսկ վերջում՝ խմբի ամենակրտսեր անդամն էր՝ Աշոտը:
- –Հրացանդ պատրաստ պահիր, Գարեգի՛ն. այստեղ արջեր շատ կան, – զգուշացրեց Ավետ ապերը:
- Կածանից պոկվող քարերը դողդյունով գլորվում էին ներքև, տեղահան անում ուրիշ քարեր ու մինչև ձորը հասնելը մեկը դառնում էր հազար:
- Հեռվում՝ կապտաթույր մշուշի մեջ թաքնված, երևում էր սարը՝ փեշերը պատած խիտ թփուտներով, իսկ կատարը՝ անտառով:

**91. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Մենք եղեգների մեջ թաքնված՝ հետևում էինք այդ թռչունների խելացի որսին:
- Բայց որքան հեռանում էր, այնքան ավելի էր զգում ինչ–որ մեկի անհանգստություն պատճառող ներկայությունը:
- Եթե հնարավոր լիներ այդ բուսերին գնալ որևէ տեղ և թեկուզ ամբողջ կյանքում բոլորովին մենակ մնար, ապա նա դա կհամարեր երջանիկ ապաշխարություն:
- Բայց վերջում հանկարծ անհանգստացավ, ու խղճի՝ մի պահ քնած խայթը նորից արթնացավ:

**92. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Արդեն մի քանի ամիս էր՝ Շիրվանգաղեն պառկած էր հիվանդանոցում և ասում էին, որ վիճակը լավ չէ:
- Չարմացած ու ապշած՝ իրար էինք նայում՝ չըմբռնելով նրա տարօրինակ պահվածքի պատճառը:
- Հանկարծ հիշեցի, որ բոլորն էլ զայրացած են ու զգուշացա:
- Բայց քիչ–քիչ ցրվեց աչքերի մշուշը ու մեզ ճանաչելով՝ փոքր–ինչ զվարթացավ:
- Կարծում են՝ մեր այցելությունն էլ իրեն ոգևորեց ու երկու շաբաթ հետո նա քայլում էր Աբովյանն ի վար:

**93. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

- Ու ես, աստիճանաբար հաշտվելով դժխեմ ճակատագրին, մի որոշ ժամանակ էլ անցկացրի, ու նախօրոք վճռված ժամկետը չլրացած, գնացի հարևան փողոցի վեցերորդ շենքը՝ զինվոր գրվելու:
- Ինքը դուրս եկավ, մոտեցավ գետի հուռքի կանաչով ծածկված ափին ու նստելով այնտեղ ընկած մի փտած գերանի՝ սկսեց անթարթ հայացքով դիտել շառաչուն գետի հաստատուն վազքը:
- Սմբատը, ծովեզրին արձանացած, լռելյայն ըմբռնում էր չքնաղ տեսարանը, ու հրճվում:
- Բայց հիմա ամեն ինչ պարզ է և չի կարելի խոչընդոտ դառնալ մի ուժի առջև, որը երբեք չես կարող կասեցնել:

**94. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Լեռան գագաթին թառած այդ անմատչելի ամրոցը, որ մութն իջնելուն պես սարսռագրու տպավորություն էր թողնում ամեն անցորդի վրա, մոտեցող իշխանի սիրտը տխրությամբ համակեց:

- **լեռան** – հատկացուցիչ, **թառած** – որոշիչ
- **ամրոցը** – ենթակա, **իջնելուն պես** – ձևի պարագա
- **տպավորություն էր թողնում** – բաղադրյալ ստորոգյալ, **ամեն** – որոշիչ
- **մոտեցող** – որոշիչ, **սիրտը** – ենթակա
- **անցորդի վրա** – տեղի պարագա, **համակեց** – պարզ ստորոգյալ

**95. Տարբերակներից քանիստ՞ում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Խոնարհին մի քանի օր չէի տեսել, ու թվում էր՝ էլ չեմ տեսնելու, սակայն մի անգամ նրան հանդիպելու ցանկությամբ կանգ առա նրանց տան առաջ և բաց դռնով նայեցի ներս:

- **Խոնարհին** – հանգման անուղղակի խնդիր, **չէի տեսել** – պարզ ստորոգյալ
- **էլ** – ժամանակի պարագա, **նրան** – հանգման անուղղակի խնդիր
- **մի քանի օր** – չափի պարագա, **կանգ առա** – բաղադրյալ ստորոգյալ
- **նրանց** – հատկացուցիչ, **տան առաջ** – տեղի պարագա
- **ցանկությամբ** – միջոցի անուղղակի խնդիր, **նայեցի** – պարզ ստորոգյալ

## II ՏԵՄԱԿ

96. Նշել այն նախադասությունների համարները, որոնց կազմում համառոտ նախադասություն կա:

1. Գնում էի մի երկիր, ուր գնում էին շատ-շատերը՝ բախտ որոնելու:
2. Բարեբախտաբար, հայրս բացակա էր, ապա թե ոչ ինձ պիտի պատժեր:
3. Ա՛հ, երջանիկ չի եղել ո՛չ իմ մանկությունը, ո՛չ էլ պատանեկությունը, որովհետև միջավայրը, ուր ծնվել եմ, անթափանցելի խավար էր:
4. Իմ մանկության և պատանեկության տվայտանքների աղբյուրը միջավայրն էր, մթնոլորտը, որ ես շնչում էի:

97. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածները պարզ ընդարձակ նախադասություններ *չեն*:

1. Աջ ու ձախ երևաց բուսականություն, **որին կարոտել էին իմ աչքերը**՝ չոր ու ցամաք Բաքվում ապրելով:
2. Այսօր եթե ինձ հարցնեն, թե ինչ է հարստությունը, կասեմ, **որ դա անհոգ երիտասարդությունն է՝** երջանիկ հասակ մարդկային կյանքի:
3. Նավը հետ էր ցատկում, **կարծես շունչ էր առնում**, որպեսզի նորից դիմադրի զայրացած թշնամուն:
4. Մրրիկից հալածվող անձրևի շիթերը ճիպտում էին նավապետի պղնձյա դեմքը, **սակայն ես, չգիտես ինչու, հանգիստ էի**:

98. Նշել այն նախադասությունների համարները, որոնց դիմաց սխալ է նշված նախադասության տեսակը:

1. Օրեր, ծիլ-ծիլ մի ծո՛ւխ բերեք Պատանության կրակներից: *(անենթակա)*
2. Կանաչ-կարմիր մի ծիածան Ճայրը ծալած քարերի տակ: *(անվանական անդեմ)*
3. Որտե՞ղ են ննջում Իմ վաղնջական Առավոտները: *(թերի)*
4. Գիշե՛ր, գիշե՛ր, լռություն, Անուշ թախծի լուսե երգ: *(անենթակա)*
5. Մեռնել անտրտունց հնազանդության Մեղմագին երգով, ժպիտով քնքուշ: *(բայական անդեմ)*

99. Նշել այն նախադասությունների համարները, որոնք անվանական անդեմ են:

1. Յուրտ է դարձյալ, մութ՝ իմ ուղին, Սրտումս՝ մահ և աշուն:
2. Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու, Հեքիաթի պես էր, երազի նման:
3. Երազնե՛ր իմ անդարձ, ծաղիկնե՛ր իմ զարնան, Ի՞նչ կանչով ձեզ կանչեմ, ինչպե՞ս լամ ձեզ համար:
4. Մութ հավերժության դառնությունն զգալ, Եվ թախծել անհուն և անչար լինել:
5. Ա՛խ, այն գիշե՛րը՝ անասհման երկար, Այն լռությո՞ւնը՝ մահու պես տխուր:

**100. Նշել այն նախադասությունների համարները, որոնց կազմում միակազմ նախադասություն կա:**

1. Մռայլ գիշերն է լռում,  
Խավար գիշերն ամենուր,  
Ես վառել եմ խավարում  
Իմ ճրագը ոսկեհուր:
2. Արդյոք ո՞վ հյուսեց ձեր դժկամ լեզուն,  
Ո՞վ շղթայեց մեզ ձեր մեռած կամքին:
3. Կրկին եկար, անո՛ւշ գարուն,  
Նեղ փողոցիս ծառին վտիտ  
Բերիք քնքուշ ծիլ ու ժպիտ:
4. Ոչ մի հույս, ոչ մի լույս, իմ ճամփան մենավոր,  
Քո արցունքն ամոքիչ, քո ժպիտը չկա:

**101. Նշել բարդ ստորադասական նախադասությունների համարները:**

1. Փարիզի երկրորդ նշանավոր մասը Մոնմարտրն է՝ արտիստական արվարձանը և գիշերային զվարճությունների միջավայրը: 2. Այստեղ կյանքն սկսվում է կեսգիշերին, երբ քաղաքն ամբողջովն ու համերգներն ավարտվում են: 3. Այստեղ են իրենց գիշերներն անցկացնում օտարականները, նրանք, ում համար Փարիզը միայն և միայն զվարճությունների վայր է: 4. Այստեղ բուն Փարիզը գործ չունի, որովհետև նա մի անտարբեր և հեռավոր վկա է: 5. Մոնմարտրը համաշխարհային զվարճարան է, ուր շատ աննշան տեղ ունի ֆրանսիացին: 6. Այդ անթիվ սրճարանները, զվարճարանները միշտ լեցուն են օտարականներով, իսկ հաճախորդների տասը տոկոսը միայն ֆրանսիացիներ են:

**102. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. նշել այն նախադասությունների համարները, որոնցում համաձայնության սխալ կա:**

1. Այվագովսկու կորած գեղանկարչական գլուխգործոցներից մեկը վերջերս պատահականորեն հայտնաբերել են Տրետյակովյան թանգարանի նկուղում մնացած շինարարական թափոնների մեջ:
2. Նա հոգով կաշառակեր էր. հնար էր գտնում կաշառք վերցնել իր ծառայակիցներից, բարեկամներից, և միայն աստված գիտի՝ ինչպես և ինչի համար:
3. Հնդկաստանը և Հայաստանը բազմաթիվ միջազգային կազմակերպություններում աջակցում են միմյանց քաղաքական հարցերում:
4. Որքան էլ ընթերցելն այսօր հետին դիրքեր է մղվել երիտասարդության շրջանում, կա զանգված, այնուամենայնիվ, որ հետաքրքրվում են, կարդում են և բավականաչափ զարգացած են:
5. Կեսարիայի հայերը 1573 թվականին սուլթան Սելիմ Երկրորդի հրամանով ենթարկվել է զանգվածային տեղահանության և տարվել Կիպրոս կղզի:

**103. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. նշել այն նախադասությունների համարները, որոնցում շարադասության սխալ կա:**

1. Երբ մարդ այնպիսի պայմաններում է (ջրի տակ, թունավոր ծխով շրջապատված), որ օդ չնչել չեն կարողանում, որոշ ժամանակ ստիպված են շունչը պահել. մարդու կողմից շունչ պահելու ռեկորդը հավասար է 7 րոպե 1 վայրկյանի:
2. Օրնիբուն զգոն է արտակարգ իրավիճակների նախարարության շարժական ճգնաժամային կառավարման կենտրոնը, որը արագ արձագանքման գործընթացի արդյունավետ կազմակերպիչն է մեր հանրապետությունում:
3. Հանրապետության դեղատնային ցանցերում վաճառքի են հանվել էլեկտրոնային արյան ճնշման չափիչ սարքեր:
4. Միտքն ազատ թռչունի պես թևածում էր նրա գլխում՝ այդպես էլ չվերածվելով որևէ կոնկրետ ծրագրի, չտալով որևէ օգուտ շրջապատին:
5. Նա տանը եղած պահերին սովորաբար առանց փողկապ ու առանց բաճկոն էր, մի բան, որ նրա համար ազգության ու կամայականության լուրջ դրսևորում էր դիտվում:



**104. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառության սխալ կա:**

1. Մնջախաղի Երևանի թատրոնը պատրաստվում է նոր բեմադրության:
2. Նախասենյակում բարձրացրած աղմուկով նա հույս ուներ քնած տանտիրոջն արթնացնելու և ընկերակցելու վերջինիս ընթրիքի ժամանակ:
3. Անտառները հանդիսանում են Երկրագնդի բնական գոյիչներ, որ մաքուր են պահում օդը և գետերը:
4. Իրավապահները հայտնաբերել են Պոլ Մեզանի Յուրիխի պատկերասրահից հափշտակված նկարներից մեկը, որը գողացողն այդպես էլ չի կարողացել վաճառել այն պատճառով, որ նկարը չափազանց հայտնի է եղել:
5. Խաղաղօվկիանոսյան կամ, ինչպես ընդունված է ասել, Օվկիանիայի կղզիները բաժանվում են ըստ երեք հիմնական խմբերով՝ Միկրոնեզիայի, Մելանեզիայի և Պոլինեզիայի, որ շատ ավելի մեծ տարածքներ են զբաղեցնում, քան ցամաքային շատ պետություններ:

**105. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառության սխալ կա:**

1. Չեր նշումների հետ ծանոթանալով՝ եզրակացրի, որ նախագիծը լուրջ շտկումների կարիք ունի:
2. Նա այդ պահին այնպիսի հայացք ուներ, ասես պատրաստ էր ընկնող մսի կտորը խլելու, ինչպես սոված շունը:
3. Ասում են՝ Կեսարի գորբերում դասալքություն բացարձակապես չի եղել, իսկ գերի ընկած հռոմեացի զինվորները նախընտրում էին մեռնելու, քան կռվելու Կեսարի դեմ:
4. Թեղենիսի լանջերին կառուցված օտարերկրյա զբոսաշրջիկներին այսուհետ սպասարկող նոր հյուրանոցային համալիրի սպասարկումը ստանձնել է արտասահմանյան մի ընկերություն:
5. Որպես գորավար՝ Հուլիոս Կեսարի հաջողությունները պայմանավորված են եղել հատկապես հասարակ զինվորների հետ ունեցած փոխհարաբերություններով:

**106. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառության կամ շարադասության սխալ կա:**

1. Ֆրանսիայի հյուսիս–արևելքում՝ Բրետոնում, քարե մեծ հուշարձան կա, որն իր մոտակայքում գտնվող քաղաքի հետ կոչվում է Քարակ, իսկ բրետոներենով արտասանվում է «Քարնիխ», այսինքն՝ Քարնակ, Քարնիշ, որն է՝ «հնչող քարեր»:
2. Հավատացած են քո հետագա հաջողությունների մեջ և վստահ են՝ կհաղթես առաջիկա մրցաշարերում:
3. Երվանդ Քոչարի Երևանի թանգարանի ցուցանմուշներից շատերը ժամանակակից եռաչափ նկարների նախանմուշներ կարող են համարվել:
4. Ըստ աստղագիտության պատմաբան Վ. Օլբոթի՝ առաջին մարդիկ, ովքեր բաժանել են երկինքը համաստեղությունների, ապրել են ոչ թե Բաբելոնում, Եգիպտոսում, այլ Հայկական բարձրավանդակում՝ Եփրատ գետի հովտում և Արարատ լեռան շուրջը՝ 36–41 աստիճան լայնություններում:
5. Անհրաժեշտ է խրախուսել նրա բոլոր քայլերին և աջակցել անվերապահորեն:

**107. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում խնդրառության կամ շարադասության սխալ կա:**

1. Առաջիկա Մոսկվայի դրամանիշների համաշխարհային մրցույթում կներկայացվեն նաև հայկական ցուցանմուշներ:
2. Հրամանատարների անհեռատեսության պատճառով գորաջոկատները հայտնվել էին շրջափակման մեջ:
3. –Առայժմ կարող եք չշտապել,– ասաց տնօրենը. – ծրագիրը պատրաստ պետք է լինի միայն երկու շաբաթից:
4. Հնավայրը վաղուց զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում է, ինչը պայմանավորված է ինչպես նրա պատմամշակութային բարձր արժեքով, այնպես էլ աշխարհագրական հարմար դիրքից:
5. «Մթար» հանրախանութների ցանցում տեղական ապրանքների գները գրավիչ են հաճախորդների համար:

**108. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում որոշյալ դերանունով արտահայտված ենթակա կա:**

1. Բոլորն այսպես թող կրկնվեր,  
Եվ չլիներ վերհուշ մի հին:
2. Ամենքի համար ամեն ինչ արել,  
Նստել արածիս վարձին եմ նայում:
3. Ու ճչաց սիրտս վայելքից անկայծ,  
Թվաց, թե մեկը կանչում է տրտում:
4. Օրհնենք բոլորը, ինչ էլ որ գա,  
Եվ ընդունենք սրտով հոժար,  
Գուցե և նա մեր ցավն զգա:
5. Ո՞վ մեր հոգին խոցված  
Պիտի փրկե մահից,  
Եթե չկա Աստված:
6. Տեսնո՞ւմ ես՝ որքան, որքան արագ  
Անցնում է ամեն ինչ ու դառնում հուշ:

**109. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում փոխանուն թվականով արտահայտված ենթակա կա:**

1. Լուռ է երկիրը, երկինքը՝ ամպոտ,  
Մեկը թախծազին նայում է հեռուն:
2. Երդիկն ի վեր թրթռալով  
Իմ առաջին ճիչը թռավ  
Եվ առաջին ծիծեռնակի  
Ծիվ-ծիվի հետ  
Քիվից կախվեց բակի վրա:
3. Իսկ երկրորդները նրանք են, ովքեր  
Կոչված են կյանքի խորհուրդն օրհներգել:
4. Եվ քարեղեն հեքիաթ հյուսող  
Երկու ձեռք էլ ավելացավ:
5. Խփի՛ր, այս պահի կենացը խմենք,  
Մի վայրկյան հետո գուցե չլինենք:

**110. Նշել այն դերանունների համարները, որոնցով արտահայտված ենթակա տրված նախադասություններում չկա.**

1. անձնական, 2. ցուցական, 3. հարցական, 4. հարաբերական, 5. որոշյալ, 6. անորոշ, 7. փոխադարձ, 8. ժխտական:

1. Հիմա դուք կուռք եք, շքեղ բազին,  
Իսկ ե՞ս... ո՞վ եմ ես, մի հեգ անցորդ:
2. Հմայք ու դյութանք անգոր են քո դեմ,  
Արդյոք ո՞վ գիտե անունդ անուշ:
3. Ա՛խ, եթե մեկը իմ սրտին նետեր նոր հույսերի փայլ,  
Մեղմաբար ասեր, քնքուշ համոզեր, որ նա կգտնի:
4. Ձեզ չի գզվի, տխու՛ր խոսքեր,  
Յուրտ աշխարհում ոչ ոք, ոչ ոք:
5. Եվ թվում է, որ անեզր է ամեն ինչ,  
Որ ողջ կյանքդ է մի անսահման քաղցր միևնջ:
6. Հիշում եմ խոսքեր, ակնարկներ անձայն,  
Մի լուսե պատկեր ցնորք աղջկա,  
Այն ամենը, որ երագ էր միայն,  
Այն ամենը, որ հավիտյան չկա:

**111. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորոգյալի տեսակը սխալ է նշված:**

1. Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,  
Զնքուշ ու տրտում որպես իրիկուն: *(պարզ ստորոգյալ)*
2. Զնքուշ երագով պաճուճի՛ր հոգիս,  
Նստի՛ր մահճիս մոտ ու տխուր երգի՛ր: *(պարզ ստորոգյալ)*
3. Թո՛ղ որսդ, արի՛, քաջասի՛րտ բազե: *(բաղադրյալ ստորոգյալ)*
4. Ես տառապանքս բախտ եմ համարում: *(պարզ ստորոգյալ)*
5. Ամենուրեք մի կարոտ ես դու նետել,  
Քո սավերն ես փռել անձի՛ր աշխարհում: *(բաղադրյալ ստորոգյալ)*
6. Այստեղ է լացել իմ մայրը  
Մորմոքն իր և իր օրորը: *(պարզ ստորոգյալ)*

**112. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ածականով արտահայտված ստորոգելի կա:**

1. Մենակ մանկության օրերն են անուշ,  
Գողտրիկ ու բուրյան, չքնաղ, ոսկեփայլ:
2. Նա մի փոքրիկ աղջիկ է,  
Լուսափթիթ աղավճի:
3. Լուռ է ամեն ինչ և ամենուրեք,  
Ժամանակը՝ անշարժ, և ողջ տիեզերք՝  
Լցված խորագեեստ, խորին լռությամբ:
4. Ա՛խ, երանի չէ՞ բյուր և բյուր անգամ,  
Որ կույր ու անգետ լինեի կրկին:
5. Հարմար է երկիրն ինձ համար,  
Ե՛վ ցուրտ, և՛ լուռ, և՛ ունայն,  
Հոգիս անհույս ու խավար,  
Սառը որպես գերեզման:

**113. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Կանգնել էր բարձունքին որպես մի արծիվ:
2. Բոլորը հարգում են նրան որպես մեծ մտածողի:
3. Պատրիկյանը իբրև պարսպ մարդ խմբագրության ամենօրյա այցելուն էր:
4. Արջը հարվածից գլորվեց ինչպես մի կոտրված ծառ:
5. Սարյանի կտավները որպես ազգային արժեք զարդարում են մեր պատկերասրահը:
6. Սամվելը գնում էր որպես մի սգավոր:

**114. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում գոյականով արտահայտված ուղիղ խնդիր կա:**

1. Ա՛խ, սերունդներ աշխարհ եկած,  
Որ կանգնած եք հերթի,  
Գտե՛ք մեկին, որ մի հնարքով  
Այդ օրերը հերքի:
2. Խաղն այնքան բարդ է,  
Որ կարող է հանկարծ  
Մարդը իր տունը քանդի:
3. Մեր ինչքը խլում, ծախում մեզ վրա  
Եվ հետո մեզ են մեզ վրա ծախում:
4. Մեր բարեկամները՝ ուսյալ, անուսում,  
Անեծքի դիմաց օրհնանք են ուզում:
5. Մի բուռ դարձա կամաց–կամաց,  
Աճյունիս սավորին հասա:

**115. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անջատման անուղղակի խնդիր կա:**

1. Մոտեցած երկնից աստղերը պայծառ  
Ժպտում են խաղաղ քո աչքերի պես:  
Էլ չեմ անհծում ցավերը կյանքիս,  
Էլ չեմ տրտնջում վիճակիցս ունայն:
2. Անտուն անցորդից կխնդրեմ ես հաց,  
Պայծառ աղբյուրի ջուրը կխմեմ:
3. Տխուր մեռան կապուտաչյա  
Երազները երկնաշող,  
Գագաթներից ես ցած իջա  
Անդունդները սիրտ մաշող:
4. Մահից չեմ վախենում, գալիքին  
Նայում եմ հավատով,  
Կարոտ է սիրտս քո հմայքին՝  
Մաքուր ու հոգեթով:
5. Եվ հարցնում եմ կրկին՝  
Ջեռքս սրտիս դրած.  
Կյանքից ինձ ի՞նչ մնաց,  
Ես ի՞նչ տվի կյանքին:

**116. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը միջոցի անուղղակի խնդիր չէ:**

1. Ես չար **հոսանքով** մղված եմ հեռուն,  
Եվ անվերադարձ փակված է ուղին:
2. Սառն **աչքերով** եմ նայում ես հեռվում  
Մեռած օրերիս ցնորքին հիմա:
3. Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեջ  
Եվ **խորհուրդներով** դյուբես վերստին սիրտս տարագիր:
4. Դառը մենության ու անհուսության մթին վիհերում  
Իմ թույլ սիրտը կամեցա քաղցր **հուշով** ամոքել:
5. Շրջում եմ դարձյալ պուրակում այն հին՝  
Աշնան թախծալի **երգով** օրորված:
6. Ու խավարն անհուն **զգվանքով** թեթև  
Ծավալվեց շուրջս ու փռվեց վրաս:

**117. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածներից ոչ մեկը դերանունով արտահայտված պարագա չէ:**

1. Դու չգիտես՝ **դեռ** որքան անմիտ եմ  
Իմ ցնորքները և **որքան** խենթ եմ:
2. Որքան դեռ տրտունջ, **քանի** տրտմություն  
Պիտի օրորեն օրերս **կրկին**:
3. **Այնտեղ** հանգիստ կմնջեմ մեռած իմ մոր հետ,  
Կգրկեն ինձ երազներ դյութական **հավետ**:
4. **Որպես** ծաղիկն է անխոս գունատվում  
Յուրտ շվաքի մեջ արևից հեռու,  
**Այնպես** թող սերը մեռնի իմ սրտում,  
Որ քաղցր կյանքիդ տխրանք չբերի:
5. Կար մի դյութական ուրիշ ժամանակ,  
**Երբ** նրա կանչի հրաշքին **հլու**,  
Ես թողնում էի օրերս մենակ:

**118. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը դերբայական դարձված է:**

1. Հին պատմության ուսուցչուհին շատ գոհ էր **այս աննշան թեմայի շուրջ արտասանված** հարուստ ճառից:
2. Բանն այն է, որ **իրենք էլ իմանալով** գնացել էին այդ գործարքին:
3. Նման գործակցությունը համաշխարհային պրակտիկայում **շատ է օգտագործվում:**
4. Նրան ասացին, թե այդ թեկնածուի դեմ կոմունիստների ելույթները **նախօրոք համաձայնեցված** են եղել:
5. Նա ասում էր, որ օտարամուտ բառերի փոխարեն **պետք է գործածել** մեր աստվածային բառերը:
6. Նրանք ժամանակին ջանք ու եռանդ չէին խնայել **իրենց ուտելու դեղատոմսերը** նախապատրաստելու համար:

**119. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը դերբայական դարձված է:**

1. «Թոմսոնի խրամ» մենք անվանում էինք **գետի կանգնած** տեղը, որտեղ ջուրն սկսում էր լճանալ:
2. Եթե ամռանը ծանծաղուտը խանգարում էր **խոտերի վրա շունչ առնելուն**, ապա մենք տեղափոխվում էինք մյուս ափ:
3. Այդ ակնթարթներն ինձ ձմռան երազի գիշերներ թվացին, ձմռան, քանի որ **վախենալուց բացի** ես նաև մրտում էի:
4. Եթե **կամաց քայլելով** ես ջուրը մտնում, ուրեմն լողորդ չես:
5. **Հոսանքի արագ փախուստից** մյուս ափը մեզ անսահման հեռու էր թվում:
6. Բայց իմ պապը **տեղում հանգիստ նստողներից** չէր. նա անպայման պետք է մի բան աներ:

**120. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձված կա:**

1. Տասներեք տարեկան էի, երբ ինձ կնքեցին հայկական կաթոլիկ եկեղեցում, չնայած ես դեռ երգում էի եկեղեցական երգչախմբում: 2. Ես քննադատաբար էի վերաբերվում եկեղեցական ծիսակատարություններին և ձգտում էի յուրովի հաղորդակցվել տեր Աստծու հետ: 3. Նույնիսկ մկրտվելիս ես իմ հոգում խոր անբավարարություն ունեի: 4. Սկրտվելուց երկու ամիս անց ձայնս կտրվեց, և օրիորդի հետ կնքած պայմանը ի չիք եղավ: 5. Ինձ համար դա մեծ թեթևություն էր, իսկ նրա համար՝ սարսափելի հարված: 6. Ծննդյան և Ջատկի տոներին ես լինում էի հայկական կաթոլիկ եկեղեցում, իսկ մնացած ժամանակ մի կրոնից մյուսն էի անցնում: 7. Հիմա ես ցանկացած դավանանք ընդունում եմ՝ դրանից ավելի վատը չդառնալով: 8. Ի վերջո, հավատալով կամ չհավատալով ոչինչ չի փոխվում. միայն թե լավ մարդ լինես:

**121. Նշել այն նախադասությունների համարները, որոնք բարդ համադասական են:**

1. Թե որքան խոր մենակության մեջ էր նա թաղել ինքն իրեն, անշուշտ, իմացա միայն նրա թողած գրառումներից: 2. Բայց դրանից առաջ էլ՝ կարճատև հանդիպումների ու գրույցների ընթացքում, արդեն որոշ չափով կարողացել էի ճանաչել նրան: 3. Այդ մարդու արտաքինի մասին մի քանի տեղեկություններ տվել եմ արդեն. նա առաջին հայացքից թողնում էր անսովոր մարդու տպավորություն: 4. Նրա դեմքը լի էր խելացիությամբ, իսկ գծերի արտակարգ նուրբ ու շարժուն խաղերն արտացոլում էին բացառիկ խոր ու զգայուն ներաշխարհը:

**122. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնց բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կապված են հարաբերական դերանուններով:**

1. Մայրս, երբ տեսնում էր ինձ գիշերները կարդալիս, անմիջապես հրահանգում էր քնել:
2. Պապը մի տեսակ սուր հայացքով նայում էր թռռներին, ուրեմն պիտի լռեին:
3. Ով մի անգամ լսեր նրա գեղեցիկ ձայնը, երբեք չէր մոռանա այն:
4. Չկար մի ամերիկահայ, որ ոսկե ատամ չունենար:
5. Ասում էին, որ այդ ընտանիքն ունեցել է հայր, որ վաղուց գաղթել է Ամերիկա:
6. Ովքե՛ր անցան ձեզանով, ո՛ր գնացին, ճամփաներ...

**123. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ստորոգելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

1. Նրա միակ ցանկությունն էր, որ որդին բարձրագույն կրթություն ստանար:
2. Իմ ուզածն էր այն, որ նա միշտ ինձ հետ լինի:
3. Այս ամենը նրանից է, որ մենք այլևս չենք նայում աստղերին:
4. Ինձ համար ամենաանտանելին այն է, որ մարդիկ նախանձում են իրար:
5. Ով ամեն օր պայքարում է այս կյանքի դեմ, իմ իդեալը նա է:
6. Արդյոք ատելուց չէ, որ այսքան շատացել են դառնությունները:

**124. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում հատկացուցիչ ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

1. Թանկարժեք քարերն ապացուցում էին, որ նա վերջերս հանդիպել է թագավորի:
2. Միաժամանակ զավակն էմ նրա, Որ դեռ չի ծնվել աշխարհի վրա:
3. Երկուսիս էլ ժամանակ էր պետք հասկանալու, որ մաքրեինք ուղեղներս հնարավոր կասկածներից:
4. Մենք չարտաբերեցինք նրանց անունները, ովքեր ամենևին չօժանդակեցին մեզ այդ հարցում:
5. Նա երջանիկ էր և գիտեր՝ ինչու է ապրում:

**125. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

1. Շատ վտանգավոր էր այն, որ ձիերը շարունակ սայթաքում էին:
2. Մեզ վախեցրեց այն, որ անձրևը սաստկացավ:
3. Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր:
4. Եվ ինչ որ բերվում էր, վատնվում էր անմիջապես:
5. Կցանկանայի իմանալ, թե ինչն է ձեզ ինձ մոտ բերել:
6. Ուզում էր, որ քաջ մարդ դառնար ձեր աչքին:

**126. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

1. Մենք չենք հանդուրժում, երբ մեզ մոլորեցնում են հարազատ մարդիկ:
2. Հերոսները նրանք են, ովքեր կարողանում են արհամարհել մահը:
3. Մեզ ավելի հաճելի են նրանք, ովքեր պաշտպանում են մեզ ոչ իրենց շահի համար:
4. Ինչ որ կատարվում է երկրի վրա, Աստծու կամքով է կատարվում:
5. Զգացի, որ երկրաշարժ չէ, այլ մի ուրիշ աղետ:

**127. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնց ստորադաս (երկրորդական) նախադասության բնույթը սխալ է նշված:**

1. Թույլ մի՛ տուր, որ լեզուդ մտքիցդ առաջ անցնի (ենթակա):
2. Երկու վիճողներից ավելի շատ բորբոքվում է նա, ով իրավացի չէ (ենթակա):
3. Իմ բարեկամը նա է, ում ամեն ինչ կարող եմ ասել (ստորոգելի):
4. Դժբախտ է նա, ով բարի անուն չի թողնի (ստորոգելի):
5. Օդում կախված մնացին բառերը նրա, ով փորձում էր ասել ողջ ճշմարտությունը (որոշիչ):
6. Նրան, ով հաղթող է ճանաչվել, շնորհվեցին մեծ պարգևներ (հատկացուցիչ):

**128. Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնց ստորադաս (երկրորդական) նախադասության բնույթը սխալ է նշված:**

1. Ես չգիտեմ, թե ինչու քեզ հիշեցի (պատճառի պարագա):
2. Հիմարը նա է, ով փոթորկի ժամանակ նավ է նստում (ենթակա):
3. Պատահեց, որ մի այրի կնոջ մի հատիկ որդին մեռավ (ուղիղ խնդիր):
4. Իսկ ես, որ կրթություն չունեմ, մեղավո՞ր եմ (պատճառի պարագա):
5. Իջավ պարտեզը, որ նորից լսի հավքերի երգը (նպատակի պարագա):
6. Թվաց՝ մեկը ինձ է կանչում (ենթակա):

**129. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

- 1. *Չկա այլևս մարդու համար անապական երջանկություն այն օրից, երբ նա բաժանվում է ծնողների գուրգուրանքից:*  
Չկա այլևս մարդու համար անապական երջանկություն նրա՝ ծնողների գուրգուրանքից բաժանվելու օրից:
- 2. *Թեև անգրագետ էր, նա լավ գիտեր ուսման հարգը:*  
Չնայած անգրագետ լինելուն՝ նա լավ գիտեր ուսման հարգը:
- 3. *Ես, որ ինձ համարում էի ճակատագրի խորթ զավակ, գտա իմ բարձրագույն սփոփանքը՝ գիրքը:*  
Ես, ինձ ճակատագրի խորթ զավակ համարելով հանդերձ, գտա իմ բարձրագույն սփոփանքը՝ գիրքը:
- 4. *Ինձ պարտավորեցրին երկու ամիս ծառայել առանց որևէ ամսականի, մինչև որ ձեռագիրս շտկեմ:*  
Ինձ պարտավորեցրին երկու ամիս ծառայել առանց որևէ ամսականի մինչև ձեռագիրս շտկելս:

**130. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

- 1. *Երբ երկաթի շղթան վիթխարի օձի պես փաթաթվել էր նավի կտուցին, աշակերտները խմբովին սկսեցին երգել:*  
Երկաթի շղթան վիթխարի օձի պես նավի կտուցին փաթաթվելուց հետո աշակերտները խմբովին սկսեցին երգել:
- 2. *Հույս չունենաք, թե գթասիրտ մարդուն կբռնեք ստախտության մեջ:*  
Գթասիրտ մարդուն ստախտության մեջ բռնելու հույս չունենաք:
- 3. *Կատարյալ հուսահատության պահին դրանք հեռանում են մեզանից, ինչպես առնետներն են լքում սուզվող նավը:*  
Կատարյալ հուսահատության պահին դրանք հեռանում են մեզանից սուզվող նավը լքող առնետների նման:
- 4. *Թեպետ հոգատարությունն ամենևին էլ սիրո նշան չէ, այն սիրուց ավելի է գնահատվում ամուսինների կողմից:*  
Չնայած հոգատարության՝ ամենևին էլ սիրո նշան չլինելուն՝ այն սիրուց ավելի է գնահատվում ամուսինների կողմից:

**131. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված պարզի:**

- 1. *Սպասում եմ առավոտին, սպասում եմ, որ մայրս ինձ կանչի արևի հակինթյա սրինգով:*  
Սպասում եմ առավոտին, սպասում եմ մորս՝ արևի հակինթյա սրինգով ինձ կանչելը:
- 2. *Ըստ նրա, ինչ լրատվությունն է ներկայացնում հեռուստատեսերով, կարելի է կարծիք կազմել մեր տարածաշրջանում տիրող քաղաքական լարված փոխհարաբերությունների մասին:*  
Ըստ տարածաշրջանում տիրող լարված փոխհարաբերությունների՝ կարելի է կարծիք կազմել լրատվության՝ հեռուստատեսերով ներկայացրածի մասին:
- 3. *Ինքն իրեն մոռացության տալու համար օրնիբուն որսորդության էր գնում, բայց սիրած օրիորդին պատահմամբ հանդիպելու էր թե չէ, հոգին տակնուվրա եղած գալիս էր ամբողջ:*  
Ինքն իրեն մոռացության տալու համար օրնիբուն որսորդության էր գնում, բայց սիրած օրիորդին պատահմամբ հանդիպելուն պես հոգին տակնուվրա եղած գալիս էր ամբողջ:
- 4. *Այն չարաբաստիկ օրից, ինչ պարոն Մոնրեն կորցրել էր սիրելի կնոջը, անցել էր մի քանի տարի՝ տխուր հիշողություններով պարուրված:*  
Պարոն Մոնրեի՝ սիրելի կնոջը կորցնելու չարաբաստիկ օրից անցել էր մի քանի տարի՝ տխուր հիշողություններով պարուրված:

**132. Նշել այն բարդ ստորադասական նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված պարզի:**

1. *Նայում էի գեղեցիկ մակույկներին, որ կարապների նման սահում էին այս ու այն կողմ:*  
Նայում էի կարապների նման գեղեցիկ այս ու այն կողմ սահող մակույկներին:
2. *Ճնշման լկտի ձևերից մեկն է այն, որ պարտապանը պարտքից ավելին է վերադարձնում:*  
Ճնշման լկտի ձևերից մեկը պարտապանի՝ պարտքից ավելին վերադարձնելն է:
3. *Չի կարելի ուրանալ, որ սուտը երբեմն ամոքիչ ազդեցություն է գործում:*  
Չի կարելի ուրանալ ստի՝ երբեմն ամոքիչ ազդեցություն գործելը:
4. *Ես նախանձում էի նրանց, ովքեր ճամփորդում էին այդ նավերով:*  
Ես նախանձում էի նրանց՝ այդ նավերով ճամփորդողներին:

**133. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Այդ մարդը ծնվել էր առավելագույնը մի դպրոցի վարիչ կամ լրագրի շնորհալի աշխատակից լինելու:*  
Այդ մարդը ծնվել էր, որ առավելագույնը մի դպրոցի վարիչ կամ լրագրի շնորհալի աշխատակից լիներ:
2. *Բաֆֆին ձեռքերը ծալած չէր սպասում մուսանների՝ իրեն այցելելուն:*  
Բաֆֆին ձեռքերը ծալած չէր սպասում, որ մուսանները այցելեն իրեն:
3. *Թիֆլիս տեղափոխվելով՝ պատահմամբ ընկա հեղափոխական մտավորականների մի շրջան:*  
Երբ տեղափոխվեցի Թիֆլիս, պատահմամբ ընկա հեղափոխական մտավորականների մի շրջան:
4. *Ինձ համար ցավալի էր այդ հրաշալի մտավորականին այդպիսի ողորմելի վիճակի մեջ տեսնելը:*  
Ինձ համար ցավալին այն էր, որ այդ հրաշալի մտավորականին տեսնում էի այդպիսի ողորմելի վիճակի մեջ:

**134. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Նավաստիները գնում էին ձկնորսների մոտ՝ իմանալու գետաբերանի ուղղությունը:*  
Նավաստիները գնում էին, որ ձկնորսների մոտ իմանան գետաբերանի ուղղությունը:
2. *Ես կառապանի հետ ժամեր շարունակ քայլում էի մի բարեկամի կամ ծանոթի հանդիպելու հույսով:*  
Ես կառապանի հետ ժամեր շարունակ քայլում էի՝ հույս ունենալով, որ կհանդիպեմ մի ծանոթի կամ բարեկամի:
3. *Սամսոնն սպասում էր մեկի՝ իր փառավոր անցյալով հետաքրքրվելուն:*  
Սամսոնն սպասում էր, որ մեկը կհետաքրքրվի իր փառավոր անցյալով:
4. *Նա բոլորին համոզելու չափ եռանդուն էր քարոզում իր կասկածելի գաղափարները:*  
Նա այնքան եռանդուն էր քարոզում իր կասկածելի գաղափարները, որ համոզում էր բոլորին:

**135. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Չնայած իմ՝ տասնչորս տարեկան լինելուն՝ արդեն կարողում էի հայտնի փիլիսոփաների գործերը:*  
Քանի որ ես արդեն տասնչորս տարեկան էի, արդեն կարողում էի հայտնի փիլիսոփաների գործերը:
2. *Իր վաստակած ողջ դրամը, սակայն, նա ծախսում էր գինարբուքներում:*  
Ողջ դրամը, որ իր վաստակածն էր, նա ծախսում էր գինարբուքներում:
3. *Մենք չէինք կարողանում հավատալ Մարգարիտ տատի մահանալու լուրերին:*  
Մենք չէինք կարողանում հավատալ այն լուրերին, որ Մարգարիտ տատը մահացել է:
4. *Շուտով փրփրաբաշ ալիքները նավի՝ տաշեղի պես նրանց մրրկածուփ կատարները ելնելու աստիճան բարձրանում էին:*  
Շուտով փրփրաբաշ ալիքները այնքան էին բարձրանում, որ նավը տաշեղի պես նրանց մրրկածուփ կատարներն էր ելնում:



**136. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Յերեկվա երրորդ ժամին հյուրերը հետզհետե հավաքվեցին Վորոնցովի զբոսայգում, որը գտնվում էր բարձունքներից մեկի վրա:*  
Յերեկվա երրորդ ժամին հյուրերը հետզհետե հավաքվեցին բարձունքներից մեկի վրա գտնվող Վորոնցովի զբոսայգում:
2. *Հետևյալ օրը, երբ Պապը պատրաստվում էր մեկնել Տերենտի դղյակը, եղանակը հանկարծ փոխվեց:*  
Հետևյալ օրը՝ Պապի՝ Տերենտի դղյակը մեկնել պատրաստվելիս, եղանակը հանկարծ փոխվեց:
3. *Եվ տարօրինակն այն էր, որ բոլորը նույն կերպ էին մտածում:*  
Եվ տարօրինակ էր բոլորի՝ նույն կերպ մտածելը:
4. *Սակայն երկուսն էլ ըմբռնում էին, որ խիստ անհրաժեշտ էր որևէ բավարարող վճիռ ընդունել:*  
Սակայն երկուսն էլ ըմբռնում էին որևէ բավարարող վճիռ ընդունելու խիստ անհրաժեշտությունը:

**137. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Դու, որ շատ ես տառապել, չես հասկանում ուրիշի տառապանքը:*  
Դու, շատ տառապած լինելով, չես հասկանում ուրիշի տառապանքը:
2. *Այս երեկո հիշել եմ քեզ, որ հեռացար ու մոռացար ինձ:*  
Այս երեկո հիշել եմ քեզ՝ հեռացողիդ ու ինձ մոռացողիդ:
3. *Ես երագում եմ նրա ներկայությունը, ով կմեղմի հոգուս ցավը:*  
Ես երագում եմ նրա ներկայությունը հոգուս ցավը մեղմելու համար:
4. *Ճակատագրական պահերին Արամը միշտ անցել է նրանց կողմը, ովքեր գորեղ են:*  
Ճակատագրական պահերին Արամը միշտ անցել է նրանց՝ գորեղների կողմը:

**138. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Մենք դեռ երանի ենք տալու նրանց, ովքեր այդ պահին ներկա չէին:*  
Մենք դեռ երանի ենք տալու նրանց՝ այդ պահին ներկա չեղողներին:
2. *Մարդ միշտ պետք է սիրի ուսուցչին, ով իրեն սովորեցնողն է:*  
Մարդ միշտ պետք է սիրի ուսուցչին՝ իրեն սովորեցնողին:
3. *Ով չի պատժում հանցանքը, դրա մեղսակիցն է:*  
Հանցանքը չպատժողն է դրա մեղսակիցը:
4. *Աղջիկն ապշած նայում էր, թե ինչպես էր նա դողում ծիծաղից:*  
Աղջիկն ապշած նայում էր ծիծաղից նրա դողալուն:

**139. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Մտնելով ծառերով շրջապատված բակը՝ Պապը տանտիրոջ ուղեկցությամբ քարե սանդուղքներով բարձրացավ դղյակը:*  
Երբ Պապը մտավ ծառերով շրջապատված բակը, տանտիրոջ ուղեկցությամբ քարե սանդուղքներով բարձրացավ դղյակը:
2. *Մինչ տնեցիների՝ իրերը հավաքելը Հաճի աղան մտածում էր իր հետագա անելիքների մասին:*  
Հաճի աղան, մինչ տնեցիները հավաքում էին իրերը, մտածում էր իր հետագա անելիքների մասին:
3. *Քո լավ սովորելը անհրաժեշտ է մայրիկիդ տրամադրությունը բարձր պահելու համար:*  
Մայրիկիդ տրամադրությունը բարձր պահելու համար անհրաժեշտ է, որպեսզի դու լավ սովորես:
4. *Հայր սուրբը մեկ շաբաթ առաջ վերջնականապես որոշել էր դուրս պրծնել այս դաժան վիհի ճիրաններից:*  
Հայր սուրբը մեկ շաբաթ առաջ վերջնականապես որոշել էր, որ դուրս պրծնի այս դաժան վիհի ճիրաններից:

**140. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Ոմանք նույնիսկ պնդում էին ճարտարապետի՝ աշտարակին դիտավորյալ մասամբ թեքություն տալը:*  
Ոմանք նույնիսկ պնդում էին, որ ճարտարապետը աշտարակին դիտավորյալ է մասամբ թեքություն տվել:
2. *Նրանք անվերջ վկայակոչում են պատերազմի ժամանակ ռմբակոծությունից քաղաքն անվերջ ցնցվելու, բայց աշտարակի կանգուն մնալու փաստը:*  
Նրանք անվերջ վկայակոչում են, որ պատերազմի ժամանակ ռմբակոծությունից քաղաքն անվերջ ցնցվել է, բայց աշտարակի կանգուն մնալը փաստ է:
3. *Մտներով հյուրասրահ՝ Մանեն զարմացած կանգ առավ:*  
Երբ Մանեն մտավ հյուրասրահ, զարմացած կանգ առավ:
4. *Շատ դառնություն, անամոք վիշտ կար նրա՝ վիրավորանքից մղկտացող մայրական հոգում:*  
Շատ դառնություն, անամոք վիշտ կար նրա մայրական հոգում, որ մղկտում էր վիրավորանքից:

**141. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Առաջ չնայողն է հայտնվում հետևում:*  
Նա, ով առաջ չի նայում, հայտնվում է հետևում:
2. *Սեփական ասելիք չունեցողը պետք է լռի:*  
Նա, ով չունի սեփական ասելիք, պետք է լռի:
3. *Թույլ մի՛ տուր լեզվիդ՝ մտքիցդ առաջ ընկնելը:*  
Թույլ մի՛ տուր լեզվիդ, որ մտքիցդ առաջ ընկնի:
4. *Դրանք մարդկությանը մշտապես հուզող հարցեր են:*  
Դրանք հարցեր են, որոնք մշտապես հուզում են մարդկությանը:

**142. Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:**

1. *Եվ իրեն զգալով մենակ ու անընկեր՝ սկսեց ձանձրանալ սաստիկ:*  
Եվ քանի որ իրեն զգում էր մենակ ու անընկեր, սկսեց ձանձրանալ սաստիկ:
2. *Աստված, տեսնելով Ադամի՝ հոգու տառապանք պատճառող մեղությունը, մտածեց նրա համար ստեղծել մի քնքուշ ընկեր:*  
Աստված, որ տեսնում էր Ադամի՝ հոգու տառապանք պատճառող մեղությունը, մտածեց նրա համար ստեղծել մի քնքուշ ընկեր:
3. *Եվ ստեղծեց նրան՝ սքանչանալու իր վեհ գործերով և աստվածային անունը փառավորելու համար:*  
Եվ ստեղծեց նրան, որ սքանչանա իր վեհ գործերով և փառավորի աստվածային անունը:
4. *Ադամը, անկարող լինելով խավարի մեջ գտնել դարձի արահետը, հոգնած քնեց մի ծառի տակ:*  
Ադամը, որն անկարող էր խավարի մեջ գտնել դարձի արահետը, հոգնած քնեց մի ծառի տակ:

**143. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *–Դու երեխային թո՛ղ մեզ մոտ, Ավե՛տ ապեր, ես կհագցնեմ, կպահեմ նրան, ինչպես որդու, – ասաց Պետրոսը:*  
 Պետրոսը Ավետ ապորն ասաց, որ նա երեխային թողնի իրենց մոտ, ինքը կհագցնի, կպահի նրան, ինչպես իր որդուն:
2. *Մայրը բռնեց Ստեփանի ձեռքը՝ ասելով.  
 – Աստծու սիրուն, դու մի՛ գնա, ես ինքս կգնամ. եթե ինձ վրա բարկանա, ես ձայն չեմ հանի, իսկ դու հաստատ կռիվ կսարքես:*  
 Մայրը բռնեց Ստեփանի ձեռքը՝ ասելով, որ նա թող չգնա, ինքը կգնա. եթե իր վրա բարկանա, ինքը ձայն չի հանի, իսկ նա հաստատ կռիվ կսարքի:
3. *–Մի՞թե Դուք ինձ չեք հիշում, – զարմացած դիմեց ինձ անձանոթը, հետո ավելացրեց, – ես ձեր տանը երկու անգամ եղել եմ Ձեր եղբոր՝ Ասատուրի հետ:*  
 Անձանոթը զարմացած դիմեց ինձ, թե մի՞թե ես իրեն չեմ հիշում, հետո ավելացրեց, որ ինքը մեր տանը երկու անգամ եղել է իմ եղբոր՝ Ասատուրի հետ:
4. *–Տարար երեխայիս կորցրիր, –ասաց Շուշանը, երբ լսեց Ավետի խոսքերը:*  
 Երբ լսեց Ավետի խոսքերը, Շուշանն ասաց, թե նա տարավ իր երեխային կորցրեց:

**144. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *–Դու ինձ, խնդրեմ, անպատկառ պատասխաններ մի՛ տուր, – ասաց ոստիկանը. – ես թույլ չեմ տա, որ ինչ–որ տասը տարեկան երեխա ինձ հետ այդ լեզվով խոսի:*  
 Ոստիկանն ասաց, որ նա իրեն անպատկառ պատասխաններ թող չտա. ինքը թույլ չի տա, որ ինչ–որ տասը տարեկան երեխա իր հետ այդ լեզվով խոսի:
2. *–Ես չեմ կարող հետաձգել այդ հանդիպումը, – ասաց Ռոստոմը. – ես ուզում եմ նրան ասել այն, ինչ ուրիշները չեն հանդգնի ասել:*  
 Ռոստոմն ասաց, որ ինքը չի կարող հետաձգել այդ հանդիպումը. ինքը ուզում է նրան ասել այն, ինչ ուրիշները չեն հանդգնի ասել:
3. *Մահակն ասաց տիկնոջը.  
 – Դրանք ինձ պետք չեն, քեզ են պետք, քո երեխաներին են պետք, վաղը նրանք են իշխանություն դառնալու, այդ դեպքում ի՞նչ ես անելու:*  
 Մահակն ասաց տիկնոջը, որ դրանք իրեն պետք չեն, նրան են պետք, նրա երեխաներին են պետք, վաղը նրանք են իշխանություն դառնալու, այդ դեպքում նա ինչ է անելու:
4. *–Իհարկե, մեր կրթությունը վատն է, – ասաց բանաստեղծը, – բայց խոսքն այն մասին չէ, թե ինչ գիտելիքներ են մեզ հաղորդում և ինչ նպատակներով:*  
 Բանաստեղծն ասաց, որ, իհարկե, իրենց կրթությունը վատն է, բայց խոսքն այն մասին չէ, թե ինչ գիտելիքներ են իրենց հաղորդում և ինչ նպատակներով:

**145. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *–Ո՛վ վսեմափայլ,– ասաց Մուշեղը՝ կանգնելով թագուհու առաջ,– հայտնում եմ, որ մենք՝ հայերս, գիտենք վատությանը լավությամբ պատասխանել, և հակառակ քո ամուսնու՝ Շապուհի չարագործության՝ վաղը բոլորիդ պատվով կուղարկեմ Տիգրան:*  
 Մուշեղը, կանգնելով թագուհու առաջ, ասաց, որ հայտնում է, որ հայերը գիտեն վատությանը լավությամբ պատասխանել, և հակառակ նրա ամուսնու՝ Շապուհի չարագործության՝ վաղը նրանց բոլորին պատվով կուղարկեն Տիգրան:
2. *–Այրվում եմ մեկի սիրուց, բայց նա արհամարհում է ինձ,– հուզված ասաց երիտասարդը Աստղիկ դիցուհուն, ապա կերկերուն ձայնով ավելացրեց.– ես հասարակ խաշնարած եմ, իսկ նա՝ մեծատունի դուստր:*  
 Հուզված երիտասարդը ասաց Աստղիկ դիցուհուն, որ նա այրվում է մեկի սիրուց, բայց նա արհամարհում է իրեն, ապա ավելացրեց կերկերուն ձայնով, որ ինքը հասարակ խաշնարած է, իսկ նա՝ մեծատունի դուստր:
3. *–Այս ծաղիկը թող դնեն քո սիրած աղջկա բարձի տակ,– խորհուրդ տվեց դիցուհին և ժպիտով կիսածայն ասաց,– դրանից հետո նա ինքը կայրվի քո սիրուց:*  
 Դիցուհին խորհուրդ տվեց, որ այդ ծաղիկը թող դնեն իր սիրած աղջկա բարձի տակ, և ժպիտով կիսածայն ասաց, որ դրանից հետո նա ինքը կայրվի քո սիրուց:
4. *–Ուզում եմ գնել քո բոլոր նկարները. ասա՛ քո ուզած գինը, և ոչ մի առարկություն չեմ անի. պատրաստ եմ քո ամեն նկարի դիմաց տալ մի նժույգ,– ասում է Սարգիս Պիծակին այցելած մի իշխանավոր:*  
 Սարգիս Պիծակին այցելած մի իշխանավոր ասում է, որ ինքն ուզում է գնել նրա բոլոր նկարները. թող ասի իր ուզած գինը, և ինքը ոչ մի առարկություն չի անի. պատրաստ է նրա ամեն նկարի դիմաց տալ մի նժույգ:

**146. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. *– Եթե որևէ բանի հավատում ու այն սիրում ես, ապա արժե, որ դրան նվիրես ողջ կյանքդ, – ոգեշնչված ասաց արեղան և ավելացրեց.– դուք բոլորդ էլ պարտք ունեք կատարելու, ինչպես ես, որ ծառայում եմ Աստծուն:*  
 Արեղան ոգեշնչված ասաց և ավելացրեց, որ եթե որևէ բանի հավատում ու այն սիրում ես, ապա արժե, որ դրան նվիրես ողջ կյանքդ. նրանք բոլորն էլ պարտք ունեն կատարելու, ինչպես ինքը, որ ծառայում է Աստծուն:
2. *Աստղագնացը մի պահ նայեց շուրջը, հետո ասաց. – Կնոջս հաղորդե՛ք, որ երբ վերադառնամ, մի–մի բաժակ սառը շամպայն կխմենք իրար հետ, իսկ եթե չվերադառնամ, թող նա համոզի երեխաներիս, որ իրենց հայրը շարունակում է թռչել:*  
 Աստղագնացը մի պահ նայեց շուրջը, հետո ասաց, որ իր կնոջը հաղորդեն, որ երբ ինքը վերադառնա, իրենք մի–մի բաժակ սառը շամպայն կխմեն իրար հետ, իսկ եթե չվերադառնա, թող նա համոզի նրա երեխաներին, որ իրենց հայրը շարունակում է թռչել:
3. *Ռուբենը հանդիմանական շեշտով ասաց. – Ըո պնդումը, թե մենք միշտ ավելի շատ առաջնորդներ ենք ունեցել, քան կռվող զինվորներ, ես չեմ ընդունում:*  
 Ռուբենը հանդիմանական շեշտով ասաց, որ նրա պնդումը, թե իրենք միշտ ավելի շատ առաջնորդներ են ունեցել, քան կռվող զինվորներ, նա չի ընդունում:
4. *Իր վերջին նամակում Սավա Ստեֆանովիչը գրել էր. «Չավակներս, ես գնացի դեպի մահ՝ մաքուր և անմեղ. ներեցե՛ք ինձ, եթե երբևէ ձեզնից մեկին նեղացրել եմ»:*  
 Իր վերջին նամակում Սավա Ստեֆանովիչը գրել էր իր զավակներին, որ ինքը գնաց դեպի մահ՝ մաքուր և անմեղ. թող նրանք ներեն իրեն, եթե երբևէ նրանցից մեկին նեղացրել է:

**147. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *–Դու քո բաժին կռիվն արել ես թուրքի ճակատում,– ցածրաձայն ասաց հայրը ու ձեռքը դնելով որդու ուսին՝ քաջալերող ձայնով շարունակեց,– հերթը թռռանս է հասել, որ նա իր հոր պատիվը բարձր պահի:*  
Հայրը ցածրաձայն ասաց, որ նա իր բաժին կռիվն արել է թուրքի ճակատում, ու ձեռքը դնելով որդու ուսին՝ քաջալերող ձայնով շարունակեց՝ հերթը նրա թռռանն է հասել, որ ինքն իր հոր պատիվը բարձր պահի:
2. *–Հասկանո՞ւմ ես՝ ինչ գործի համար եմ եկել,– շնչաց Բենը,– հետս էլ խուրջին եմ բերել, որ այս գայլաձագերին ինձ տաս:*  
Բենը շնչաց, թե նա հասկանում է արդյոք՝ ինչ գործի համար է ինքը եկել, իր հետ էլ խուրջին է բերել, որ նա այդ գայլաձագերին իրեն տա:
3. *–Ինձ ո՞ր ժամին ես զանգել, որ տանը չեմ եղել,– ծիծաղելով հարցրեց ընկերոջը և վրա բերեց.– իրականում զանգե՞լ ես, թե՞ գլուխդ ես ազատում ինձնից:*  
Ընկերոջը ծիծաղելով հարցրեց, թե որ ժամին է արդյոք իրեն զանգել, որ նա տանը չի եղել, և վրա բերեց, թե իրականում զանգել է արդյոք, թե գլուխն է ազատում նրանից:
4. *–Տե՛ր աստված,– ճչաց մայրը, ո՞վ է տեսել՝ շունը գայլաձագերին կաթ տա, որ դու էդ խեղճ շանն ես ստիպում:*  
Մայրը ճչաց, թե արդյոք տեսել է, որ շունը գայլաձագերին կաթ տա, որ ինքն էդ խեղճ շանն է ստիպում:

**148. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը ճիշտ է փոխակերպված:**

1. *Անդրանիկը երկար նայեց հին ընկերոջը՝ Արշավիրին, հետո ասաց, որ ինքը գիտի, որ նա ոչ միայն իր զենքի ու կռվի, այլև իր գաղափարի եղբայրն է, և թող նա իմանա՝ ով օգնության ձեռք է մեկնում հային, նա իր աստվածն է:*  
Անդրանիկը երկար նայեց հին ընկերոջը՝ Արշավիրին, հետո ասաց.  
– Գիտեմ, որ ոչ միայն զենքիս ու կռվիս, այլև գաղափարիս եղբայրն ես, և իմացի՛ր՝ ով օգնության ձեռք է մեկնում հային, նա իմ աստվածն է:
2. *Քահանան, դիմելով իմաստասերին, ասաց, որ չնայած նրա դատողություններին ինքը համաձայն չէ, չի ուզում շարունակել վեճը, քանի որ ինքը չի կարող ապացուցել Աստծու գոյությունը աշխարհի միջոցներով:*  
Դիմելով իմաստասերին՝ քահանան ասաց.  
– Չնայած Ձեր դատողություններին համաձայն չեմ, չեմ ուզում շարունակել վեճը, քանի որ չեմ կարող ապացուցել Աստծու գոյությունը աշխարհի միջոցներով:
3. *Գերմանացին հայ պատվիրակներին հանգստացրեց՝ ասելով, որ նրանք թող վստահեն Գերմանիայի օգնությանը. ինքը խորհուրդ կտար նրանց՝ անհապաղ օգտվել նպաստավոր առիթից:*  
Գերմանացին հայ պատվիրակներին հանգստացրեց՝ ասելով.  
– Վստահե՛ք Գերմանիայի օգնությանը. խորհուրդ կտայի ձեզ՝ անհապաղ օգտվել նպաստավոր առիթից:
4. *Եվան Շահյանին ասաց, որ իրեն թվում է, թե նա ինչ–որ սարսափելի բան գիտի, որ չի ուզում ուղղակի ասել երևի նրա համար, որ վախենում է, թե ինքը կհիասթափվի:*  
– Ինձ թվում է, – ասաց Եվան Շահյանին, – թե Դուք ինչ–որ սարսափելի բան գիտեք, որ չեք ուզում ուղղակի ասել երևի նրա համար, որ վախենում եք, թե կհիասթափվեմ:

**149. Նշել այն տարբերակների համարները, որոնցում անուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. *Մի ծերունի, մատնացույց անելով իտալացուն, ասաց, թե արդյոք լավ չէր լինի, որ իրենք էլ այդ պարոնի նման բախտ ունենային:*  
Մի ծերունի, մատնացույց անելով իտալացուն, ասաց.  
– Լավ չէ՞ր լինի, որ իրենք էլ այս պարոնի նման բախտ ունենային:
2. *Նա հորդորեց, որ մահվան ձգտելու իր բացատրությունը չորոնեն սովորական պատճառների մեջ, որոնցով բացատրվում է ինքնասպանությունների մեծ մասը:*  
– Մահվան ձգտելու իմ բացատրությունը մի՛ որոնիր սովորական պատճառների մեջ, որոնցով բացատրվում է ինքնասպանությունների մեծ մասը,– հորդորեց նա:
3. *Վաճառատան տերը, հանկարծ լսպտերը վերցնելով և նրա լույսը ուղղելով նկարի հանդիպակաց պատին, ասաց, որ նա շուտ գա, նայի շագրենի կաշուն. այն իր դիմացն է:*  
Վաճառատան տերը, հանկարծ լսպտերը վերցնելով և նրա լույսը ուղղելով նկարի հանդիպակաց պատին, ասաց.  
– Շո՛ւտ արի, նայի՛ր շագրենի կաշուն, որը քո դիմացն է:
4. *Ծերունին շարունակեց, որ քանի որ նա արևելագետ է, ապա գուցե նա կարող է կարդալ այդ տարօրինակ գրվածքը:*  
– Քանի որ Դուք արևելագետ եք, ապա գուցե Դուք կարող եք կարդալ այս տարօրինակ գրվածքը,– շարունակեց ծերունին:

**150. Նշել այն տարբերակների համարները, որոնցում ուղղակի խոսքը սխալ է փոխակերպված:**

1. *–Ներս կանչիր հյուրերիդ,– ասաց բարեհամբույր կինը, ապա, դառնալով պառավին, ավելացրեց,– դու մի երկու հաց հանիր, ես հիմա գալիս եմ:*  
Բարեհամբույր կինն ասաց, որ նա ներս կանչի իր հյուրերին, ապա, դառնալով պառավին, ավելացրեց, որ նա մի երկու հաց հանի, ինքը հիմա կգա:
2. *Կինը դառնությամբ մտածում էր. «Հանուն ինչի՞ էր իմ այս մեծահոգությունը. միևնույնն է, ինձ գնահատող չկա»:*  
Կինը դառնությամբ մտածում էր, թե հանուն ինչի է իր այդ մեծահոգությունը. միևնույնն է, իրեն գնահատող չկա:
3. *–Գործը մարդու համար է,– հանգստացնում էր նրանց Մարգարիտ տատը,– ես ինչպե՞ս ձեռքերս ծալած նստեմ:*  
Մարգարիտ տատը նրանց հանգստացնում էր, որ գործը մարդու համար է, որ ինքը ինչպես ձեռքերը ծալած պիտի նստի:
4. *Դպրոցի տեսուչը, ցույց տալով ինձ նամակը, հարցրեց.  
– Կարո՞ղ ես ասել՝ ում նամակն է, և ով կարող էր դիմել նման խարդախության:*  
Դպրոցի տեսուչը, ցույց տալով ինձ նամակը, հարցրեց, թե արդյոք կարող եմ ասել՝ ում նամակն է, և ով կարող էր դիմել նման խարդախության:

**151. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Բյուզանդիայի հին աշխարհի ամենահզոր պետության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը հերթական եռուգետի մեջ էր երկրագնդի ամենատարբեր ծագերից մրցելու էր հավաքվել իմաստասերների ու գիտունների մի հոծ խումբ: 2. Հայաստան աշխարհից այստեղ էր եկել նշանավոր պատմիչի Մովսես Խորենացու քրոջորդին Դավիթը: 3. Կամարազարդ դահլիճում շքեղ թիկնօթոցների մեջ շուրջանակի բազմել էին սպիտակամորուս գիտունները մրցելով տարաբնույթ ու առեղծվածային հարցերով մեկը մյուսի հետևից պարտության մատնելով իմաստասերներին: 4. Հերթը հասավ հայոց իմաստասերին Դավթին: 5. Անպատասխան չթողնելով և ոչ մի հարց չորս ժամ անընդմեջ նա մեկնաբանեց բյուզանդացի գիտունների խորախորհուրդ հարցերը հիացնելով իր խելամտությամբ: 6. Այդ մրցավեճից հետո հայ իմաստասերը կնքվեց Դավիթ Անհաղթ անունով:

**152. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետի գործածության սխալ կա:**

1. Իմ փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով, գտնվում էր տան երկրորդ և երրորդ հարկերի մեջտեղում, իսկ նեղիկ պատուհանը բացվում էր հանդիպակաց տան կտուրի ուղղությամբ:
2. Այսօր էլ հիշողությանս դաշտում տեսնում եմ մեզ՝ հինգ անապաստաններիս՝ կանգնած վրան հնամաշ գորգ գցած, վիթխարի մի ծանրոցի վրա:
3. Մայրս, որ նավի օրորումից գունատվել էր, հենց ոտք դրեց գետնին, անմիջապես վերագտավ այտերի վարդագույնը, իսկ մորաքույրերս՝ Աննան ու Գայանեն, երջանկությունից թռչկոտում էին:
4. Ստեղծվեց ինքնատիպ մի այբուբեն՝ երեսուկվեց տառերով և հազարերեքհարյուրամյա լեզուն ձեռք բերեց սեփական գրանշանները:
5. Ահա այդպիսի մի եկեղեցում՝ մեր փոքրիկ աղոթատանը, քահանան, ինձ պահելով մկրտության ավազանի վրա, երեք անգամ տվել էր ավանդական հարցը:

**153. Նշել այն համարները, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Մուշեղ բերդակալը սակայն (1) ավելորդ համարեց կանանց գրույցներին մասնակցել: Նա մինչև անգամ կաթողիկոսի մոտ չմնաց (2) թեպետ կցանկանար նրա իմաստուն խոսքերը լսել: Այդ ճիշտ է (3) մեծ բախտավորություն կլիներ նրա համար բայց նա պարտաճանաչ մարդ էր և գիտեր (4) իրավունք չունի իր հոգու վայելքով տարվելու: Այդ պատճառով էլ հենց որ Վեհափառի բերած լուրն իմացավ (5) անմիջապես դեպի գորանոցները աճապարեց և առանց վայրկյան իսկ հապաղելու սկսեց ամրոցի պաշտպանության համար հարկ եղած կարգադրություններն անել: Լինելով փորձառու ռազմագետ (6) նա գիտեր (7) թշնամին շատ անգամ հարձակվում է այնպիսի ժամանակ (8) երբ ոչ ոք չի սպասում նրան:

**154. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի:**

1. Ջրույցը չէր ստացվում և նա սեղանի մոտ մի քանի հիմար քայլեր արեց անիմաստ հարցում անելով եղանակից ապա դաշտում վիստացող սոված գայլերից: 2. Եվս մի բան սրահը տաք չէր ու ոմանք դողում էին արագ-արագ ուտելիս: 3. Ծեր տիկինը հիվանդի մասին կցկտուր ինչ-որ բան մոթմոթաց ու կենտրոնացավ ափսեի ուղիղ կենտրոնում դրված ու լավ ձևավորված թառափի կտորի վրա: 4. Ինչ էին հարցնում և ինչ պատասխան էին տալիս ոչ ոք չէր էլ վերլուծում իր մեջ: 5. Երիտասարդը որոշեց կատարել վճռական քայլ չսպասելով ապագա աներոջ հրավերին: 6. Մտածեց անձամբ կներկայանա նրան կճշտի դրամօժիտի չափը իսկ թե ինչով կավարտվեր գրույցը նա դեռ չգիտեր: 7. Այնուհանդերձ հստակեցում պետք է մտցներ իրենց փոխհարաբերություններում հասկացնելով գլխավորը: 8. Ամուսնանալով արդեն պառաված և կասկածելի արտաքինով կնոջ հետ ինքը թեև աղքատ էր բայց նժարին դնում էր իր գեղեցկությունն ու երիտասարդությունը ակնկալելով փող և դիրք: 9. Իսկ թե ինչ ամաչելու բան կար դրանում ինքն իրոք չգիտեր:

**155. Նշել այն համարները, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Գարնանային գիշերն արդեն կիսվել էր (1) նա դեռ երկար նայում էր անորոշ մի կետի: Հետո տրորեց քունքերն ու վեր կենալով (2) քաշեց գրապահոցի վարագույրը: Սկզբում նա ձեռքը վերցրեց ուղտի դեղնավուն կաշվով պատված (3) նեղ ու երկարուկ տետրը (4) դարչնագույն մանր նոտրագրով լցված: Դրանք ամենօրյա գրառումներն էին (5) երբեմն երեք-չորս տողից ոչ ավելի: Մերթնդներթ թևավոր խոսքերի փոքրիկ գրչանկարների հետ միասին հանդիպում էին այլաբանական երկտողեր թե հայ և թե օտարագգի բանաստեղծներից: Հետո նա թերթեց այն էջերը որոնք վերաբերում էին իր վաղ պատանեկությանը (6) երբեմն չափից ավելի կանգ առնելով միայն իրեն հայտնի դեպքերի վրա: Այդ պահերին ցավագնորեն կծկվում էր նրա (7) մոմի լույսից կաթնավուն դարձած դեմքը: Չգիտես ինչու (8) նրա հայացքը կանգ առավ գրառումների քսանյոթերորդ էջի պարբերության վրա այն պարզ է (9) Եզվիտ Պաղոսացի դարանակալ թշնամու մասին էր:

**156. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պիտի դրվի:**

1. Սենյակում իր խաղալիքներով աղմկող երեխան սեղանին մի բաժակ մուգ թեյ ու Տերյանի միհատորյակը:
2. Նա պարզվում է վերջերս է վերադարձել շրջագայությունից:
3. Նա չէր մոռացել հոր տարիներ առաջ տված խոստումը Հայաստան գնալու և սեփական աչքերով հայրենիքը տեսնելու մասին:
4. Աշխարհի չարն ու բարին ճանաչած խանին թվում է մոլորեցրել էին ու մղել սխալ արարքների:
5. Ինչ էր մտածել աշխարհահռչակ ջութակահարը իր վերջին հանգրվանի մասին նրա որդուն շրջապատողներից ոչ մեկը չէր կարող ասել բայց փաստն այն էր որ նրա աճյունը տասնյակ տարիներ դեգերում էր Եվրոպայի ճանապարհներին:
6. Քանի չէր եղել տաճարում չէր կողմնորոշվում վերանորոգման ծավալների հարցում ու սպասվելիք ծախսերի չափի մեջ:

**157. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի բութ պիտի դրվի:**

1. Ողջ կյանքում ճիշտ է միայնակ էր եղել բայց աչքերի լույսից զրկվելուց հետո անսպասելիորեն սրդողում էր առանձնության արքանից բիրտ ու դժխեմ:
2. Թող տեսնեն ու իմանան Գայլ Արշավիրն օրհասական ժամին իրենց հետ է մտածեց նա ձեռնափայտին կռթնած դուրս ելավ դաստակերտից քայլերն ուղղեց բլուրն ի վեր:
3. Ամեն անգամ օտար երկրներում շրջագայելիս նոր աշխարհներ տեսնելու հաճույքի հետ ճիշտն ասած մեջս միշտ ապրել է տուն վերադառնալու սպասման երանությունը:
4. Եվ չգիտեմ ինչու որոշում եմ տուն հասնելու հենց հաջորդ օրը ավտոմեքենա պիտի նստեմ ու գնամ Թալինի շրջանի Վերին Սասնաշեն գյուղը ուր ազգականներ չունեմ իսկ ընկերներ շատ:
5. Հարցուփորձ անելով գտա տունը և պարզվեց տանտեր Գևորգ Հակոբյանը գնացել է Ջերմուկ բուժվելու:

**158. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի բութ պիտի դրվի:**

1. Նա ասում էր ամենից ավելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ ինքն է ուզում ծափահարել Լուիզային բեմի վրա բայց ոչ այստեղ Օդեսայում այլ այնտեղ Իտալիայում:
2. Նա է նա ինքը որովհետև նույն հնչյուններն են այս անգամ արդեն առնականորեն հարուստ նաև վեհապալաց:
3. Մեկ ամիս անց Տիգրանից եկավ մի նոր բարձրաստիճան սուրհանդակ հայտնելու արքայից արքան իր քաղաքն է հրավիրում նաև տիկին Փառանձեմ թագուհուն:
4. Միակ մարդը որ կողմնակից էր պարսից արքայի հրավերն ընդունելուն Հայր Մարդպետն էր պալատի և թագավորական տան կալվածքների կառավարիչը:
5. Թագուհին դիմեց դեպի նեղ կամարակապ պատուհանը որ նայում էր Գեղա լեռան բարձունքներին և որտեղից մեղմ սյուքն էր մտնում սենյակ կարծես հովացնելու թագուհու հուզմունքից այրվող հոգին:
6. Կարծես ծանր աշխատանքից հոգնաբեկ նա աչքերը դարձրեց դեպի Սեդան որը ձեռքերը կրծքին խաչած լուռ անէացած շրջապատից նայում էր հեռուն:



**159. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում երկու բուֆ պիտի դրվի:**

1. Նա միշտ տեսնում էր նույն զարհուրելի երազը ձյան սանդուղքով իջնում է լապտերով լուսավորում խոր փոսը հատակին լեռնագնացներից մեկն է ծնկաչոք արնաշաղախ:
2. Ամբողջ օրն իրեն վատ էր զգում մղձավանջային երազը հիշելով տանջող մտքերը ցրելու անօգուտ ճիգ գործադրելով:
3. Լեռնանցքից տուն եկավ բոլորը արդեն գիտեին կատարվածի մասին և վշտից սպանված իրենց անելիքը չիմանալով բոլորել էին հարազատների շուրջը:
4. Չգիտեր ինչ ասի որ գլուխն ազատի նրանցից էլ նամակից էլ ու ծանր հոգոց արձակեց դա աննկատ չանցավ ինչպես կարող էր վարպետորեն արձակված հոգոցն ազդեցություն չգործել:
5. Կառավարչի հարցական հայացքը խոսքի չվերածված շատ մոտիկից գայլերի ոռնոց լսվեց խուճապ տարակուսանք վախ ահա ինչ կարելի էր կարդալ նրա դեմքին:
6. Օրեր շարունակ նա չէր քնել և շատ էր ուզում գոնե մի պահ գլուխը բարձին դնի ու ամեն ինչ ջնջի, բայց որտեղից որտեղ ներս է մտնում կառավարիչը մի նամակ ձեռքին կենտրոնից էին ուղարկել:

**160. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուֆի գործածության սխալ կա:**

1. Հետո տրորեց բունքերն ու վեր կենալով՝ քաշեց գրապահարանի վարագույրը և վերցրեց ուղտի դեղնավուն կաշվով պատած տետրը՝ դարչնագույն մանր նոտրագրով լցված:
2. Միալար անձրևն ու լուսակնատներից փչող միջանցիկ քամին իրենց՝ տհաճություն բերող սարսուռներով ավելի էին խորացրել այն թախիծը, որ նրան տիրել էր՝ աշխատանքն սկսելիս:
3. Այդ պահերին նա կանգ էր առնում, նայում վեր և փակ կոպերի առջև լողացող մանուշակագույն անսահմանության ջերմությամբ երջանիկ՝ հիշում Մրքուզի խիստ պատվերը՝ կազդուրվել, ամրապնդվել:
4. Հակառակ դրան՝ Ոսկան արեղան բարձրահասակ էր. փաթաթված՝ այծենու սև սքեմի մեջ նա արձանացել էր վարպետից մի քանի քայլ հեռու և հետևում էր վրձնի կախարդական խաղերին:
5. Ինչ էր մտածում այդ պահին՝ դժվար էր ասել. նրա երազում աչքերը գամվել էին ասես կախարդական ծաղկազարդերից ծնունդ առնող աղավնաթև հրեշտակի վրա:

**161. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բուֆի գործածության սխալ կա:**

1. Արեղան երբեք՝ ոչ մի տեղ՝ ո՛չ երագներում, ո՛չ եկեղեցիների յուղաներկ սրբապատկերներում, չէր տեսել այդպիսի կենդանի հրեշտակի՝ այնքան հարազատ, այնքան ծանոթ:
2. Այդ շինվածքը, որ ծաղկանոցի շարունակությունն էր, կառուցվել էր հեռավոր գավառներում բնակվող ուխտավորների համար, որոնք եկեղեցիներ չունենալու պատճառով՝ ամեն տարի գալիս էին տոնակատարությունների:
3. Երբեմն գլուխը հետ գցելով՝ կկոցած աչքերով՝ նայում էր փորագրվածին, հետո՝ դեպի կայարանի խորքը և ինչ-որ բառեր շնջում:
4. Առանց սքեմի, միայն շապիկով, որի թևերը վեր էր քշտել՝ երևան հանելով հաղթ բազուկները, ավելի նմանվում էր երիտասարդ փայտահատի, քան վանականի:
5. Մոտենալով վարպետին՝ Ոսկանը ծնկի էր իջնում նրա կողքին և մեկ-մեկ նայում արդեն փորագրված պատրաստի ծաղկատառերին. ի՞նչ իմանաս՝ մեկ էլ երբ կտեսնի:

**162. Նշել այն համարները, որոնց տեղում միջակետ պիտի դրվի:**

Լռություն էր իջել Սեպասարի գլխին (1) գիշեր էր: Վեցով նստած էին հրացանները ծնկներից քարերին թիկնած (2) ոչ մեկը մյուսին շիփ-շիտակ նայել չէր կարողանում: Թմբուկի ձայնը չէր դադարում (3) ականջները դժժում էին: Երկու ցերեկ ու գիշեր պաշտպանվեց Սեպասարը: Գիշերը քարեր գլորվեցին (4) նշանառու կրակոցներ եղան: Ուրիշ ճար չկար (5) փամփուշտները քիչ էին: Հետո ասկյարները հրանոթ բերեցին: Հրանոթի որոտներին Սեպասարը պատասխան տվեց: Արթնացավ քնած առյուծը կռիվ տվեց սարը մինչև վերջ ու կռվում ընկան մեկ-մեկ: Մի պահ զգաց (6) կողքի քարերից գնդակի որոտը լռեց: Քաջերն ընկել էին (7) կռվելու էր մենակ: Հավաքեց ու լիցքավորեց հրացանները (8) տարբեր դիրքերից էր կրակելու ցույց տալով որ դեռ դիմադիր ուժեր կան:

**163. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միջակետ պետք է դրվի:**

1. Ինչքան ժամանակ է անցել այդ օրից և միթե հնարավոր է այդքան մնան երկու դեմք նույնիսկ նուրբ շրթունքներն ու նրանց շարժումներն են նույնը:
2. Ամեն անգամ երբ կինը կռանում էր ոտղվում կամ քայլում խսիրի վրայով զնգում էին նրա թևի արծաթագօծ սուրմաները նրանց զնգոցը հիշեցնում էր քաղցրահնչյուն զանգակների մեղմ ծլնգոց:
3. Առաքելոց եկեղեցին թռչունի նմանություն ունի միայն դիմացից նա թողնում է նստած վարդապետի տպավորություն:
4. Քարհատները հոգնել էին ու նրանց ձայները հազվադեպ էին լսվում չկար կեսօրվա աշխուժությունն ու եռանդը:

**164. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում միջակետ պիտի դրվի:**

1. Ամստերդամ հասնելու համար նա երկու ճանապարհ ուներ մեկը ցամաքով որ ընդամենը մի ամիս կտևեր մյուսը ծովով որ կրկնակի ճանապարհ պիտի խլեր նրանից:
2. Դեռ ուսանելու տարիներին Ներսես Մեծը Կեսարիայում ապրում էր կնոջ Սանդուխտի հետ Սանդուխտը վախճանվեց այդ նույն քաղաքում որտեղ ծնվեց Սահակը:
3. Ես քափ-քրտինք կտրեցի դողացի ամբողջ մարմնով հանդիսատեսը լուռ էր ու անտարբեր:
4. Ահա և վարագույրն է բարձրանում տեսա բոլորը ոտքի են ելել և ակնթաթ իսկ չանցած դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից:
5. Վարագույրը բացվեց և ես պետք է բեմ մտնեմ բայց ինձ այնպես եմ զգում կարծես ուզում եմ ջուրը նետվել սակայն լողալ չգիտեմ:

**165. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում փակագծեր պիտի դրվեն:**

1. Ջոհրապը մտավ Լատինական թաղամաս կամ ինչպես անվանում են Ուսանողների հանրապետություն Սորբոնի վաթսուն հազար ուսանող ունեցող աշխարհահռչակ համալսարանն այնտեղ է գտնվում հանդիպելու Արշակ Չոպանյանին:
2. Երկար ժամանակ այդ գրադարան-ակադեմիայի տնօրենն էր Էրատոսթենեսը որն առաջինը չափեց այն էլ ապշեցուցիչ ճշգրտությամբ սա անհավատալի կարող է թվալ Երկրի տրամագիծը:
3. Ժայռերի շիկացած լանջերից իջնող ուրցաբույր գեփյուռը շոյում էր նրա գրգռված նյարդերը և պարզևում հոգեկան անդորր Աստվածատուրն իրեն գրեթե կազդուրված էր զգում:
4. Երկար ժամանակ պառկած լինելուց նա քայլում էր հաճելի գլխապտույտով սիրում էր մենակ զբոսնել և մերթընդմերթ թիկունքի տակ զգում սպիացած վերքի թույլ տնքոցը:
5. Երբ սպարապետը մոտեցավ նրան մարդը արդեն երևաց տարեց մի գեղջուկ էր անվրդով նայեց եկվորին վեր կացավ արժանապատվորեն բարևելով:

**166. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում շեշտ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Բարեկամի հետ կերուխում արա առևտուր մի արա:
2. Մի խոսիր այդպես խրատական ոգով:
3. Ներկայացման ժամանակ ոչ մի ձայն ոչ մի շշուկ չէր լսվում հանդիսատեսը ակնածանքով էր նայում դերասաններին:
4. Մի դարձրու այդպես անիրական անհաս Իմ հասարակ համեստ երազը լուրթ:
5. Ոչ դա մարդկային ձայն չէր այլ ինչ-որ գազանային մռնչյուն:
6. Տուր ինձ տեր հոգեկան հանգստություն:

**167. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Մեծաբանքար քանդակագործ–մանրանկարիչը՝ Մոմիկը, ապրել ու ստեղծագործել է տասներեքից տասնչորսերորդ դարերում:
2. Նրա մանրանկարներն ու խաչքարերը թեև դարերի հնություն ունեն, բայց հոգեպարար տրամադրությամբ են տոգորում դիտողին:
3. Որտեղ էլ տեղադրված լինեն դրանք՝ անմիջապես տարբերվում են իրենց յուրօրինակ արվեստով:
4. Ով մեկ անգամ տեսել է Նորավանքը, որ նախագծել ու կառուցել է Մոմիկը՝ այլևս երբեք չի կարող մոռանալ ճարտարապետական այդ հրաշքը:
5. Թեպետ այդ եզակի կառույցը վեց հարյուրից յոթ հարյուր տարեկան է, սակայն, այսօր էլ հիացնում է ինքնատիպ կառուցողական արվեստով:
6. Թվում է՝ տեսիլք է, որին մարդկային ձեռք չի դիպել:

**168. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Մինչ անցյալ ձմեռ ես անցկացրի խաղաղ և աշխատանքային մի կյանք՝ նրանք, հակառակ իմ կամքի, օրը վատնում էին խնջույքներում և պարահանդեսներում:
2. Նա սկսեց ծիծաղել, և պատմեցին, որ Ռ-ուբենը մեկնել է արտասահման՝ մի փոքր հանգստանալու և կիսատ մնացած գործերը կարգի բերելու:
3. Մի համակրելի եռանդով, որը նրան այնքան գրավիչ էր դարձնում, նա ինձ բացատրեց, որ բոլոր հանճարեղ մարդիկ տարօրինակ են և պետք չէ նրանց շատ վստահել:
4. –Դու անտանելի ես, – ասաց երիտասարդը՝ ծիծաղելով և վեր կենալով:– Ինչպե՞ս չես ճանաչում այդ աղջկան. նա ամուսնացած չէ և մեծ եկամուտ ունի:
5. Այդ ժամանակ հանդիսականները, զանգը լսելով, թողեցին ճեմասրահը և ուղղվեցին դեպի տները, իսկ ծերունին և Ռ-աֆայելը՝ բաժանվեցին:
6. «Ես ամենագեղեցիկն եմ»,– հնչում էին նրա ուղեղում այս արբեցուցիչ բառերը՝ ամոքելով նրա սնափառությունը:

**169. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Տարիներ առաջ, ճահճային թռչունների որսի ժամանակ մի կրիա գտա և բերեցի տուն:
2. Սա, ըստ էության, բնության այն դժվարըմբռնելի գաղտնիքներից է, որը ինչքան էլ ճզնում ես, չես կարողանում հասկանալ, թեև առաջին հայացքից թվում է պարզ ու հասկանալի:
3. Գուցե տարօրինակ է, բայց կարող են լինել և ավելի վեհ պատճառներ, օրինակ՝ որոշակի ձգողական զգացմունք տվյալ վայրի կամ այդ վայրում մեռած ցեղակցի նկատմամբ:
4. Այս ասելով՝ նա մյուս տղամարդու օգնությամբ բարձրացրեց երիտասարդ կնոջը ու հատակի վրայով քաշքշելով՝ նրան տարան իմ սենյակին կից սենյակը:
5. Հիշելով նախորդ գինետանը պատահած դեպքը՝ նա երկմտում էր՝ մտնի՞, թե՞ ոչ:
6. Եվ որովհետև Կամսարյանը ևս պատշգամբից վերադառնալով՝ մոտեցել էր սանդուղքին, ուստի հետաքրքրվեց, թե ով է եկողը:

**170. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Մեղավորը հայրս է եղել. անձնագրային սեղանի մոտ կանգնած՝ նա մի պահ չգիտես ինչու մոռանում է մորս ազգանունը և ստիպված ասում առաջին մտացածին ազգանունը:
2. Մի օր էլ Լևոնը (տանը Լուր էինք անվանում) իր դասընկերներին՝ յոթ–ութ տղաների, հավաքել, բերել էր մեր հյուրասրահը՝ զվարճանալու:
3. Տղան պատրաստվեց կոտրել նրա համառությունը, մանավանդ տեսնելով՝ վերջինս խորտակում է իր՝ քառասուն տարիների հեղինակությունը:
4. Լևոնը, բոցկլտացող աչքերը չռելով, որոտի նման պայթեց.  
– Այս տան տերերից մեկը ես եմ. ծառան իրավունք չունի խառնվելու. դո՛ւրս այս տնից:
5. Գոգոն ձայն–ծափուն չհանեց ոչ թե նրա համար, որ չէր կարող պատասխանել, այլ լցվեց դառը վշտով. քառասուն տարի ծառայել է այս տանը, հենց իրեն՝ Լևոնին մեծացրել էր իր թևերի վրա:

**171. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Հանճարեղ հայ երգահան՝ Կոմիտասը, որ բազմաթիվ քաղաքներում գրավել էր հանդիսականի սիրտը, ժամանում է նաև Փարիզ:
2. Ճարտարապետը դիտում է կառույցը սյուն առ սյուն, խոյակ առ խոյակ՝ ի վերջո հայացքը ցավով ուղղելով դեպի վեր, որտեղ մի ժամանակ գմբեթն է եղել:
3. Քսան տարի էր անցել, և ոչ մի մասնագետ չէր համարձակվում ձեռնամուխ լինել այդ դժվարին գործին, դա նրանց ուժերից վեր էր:
4. Անահիտը ժպտալով նայեց մեզ և գլխով թեթևակի նշան անելով՝ հրավիրեց պարի. Երվանդը թռավ դեպի նա և սուզվեցին հորձանքի մեջ:
5. Զգալով գարնան համբույրը, լսելով ձիերի աշխույժ խրխնջյունը, գոմեշների լիաթոք բառաչը՝ Պետին՝ բնությանը սիրահարված այդ երիտասարդը, բնության մեջ լինելով, կենդանական հաճույք էր զգում:

**172. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Օրը հարյուր անգամ նա մոտենում էր այդ փնջին և իր քնքուշ մատներով շոշափում թորշոմած վարդերը, որոնց թերթիկները, մեկիկ-մեկիկ պոկվելով, ընկնում էին վար ու անհետանում:
2. Լուսնկա գիշերներին ծովափին՝ խարույկի մոտ, երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց քաղցրահունչ սագի հոգեհմա ելեւջները, ծովի անուշ ձայնը:
3. Մի աղջիկ էր՝ անպաճույճ զգեստով, մետաքսյա նուրբ շալով. անակնկալի եկած կանգ առավ:
4. Այդ քաղաքում ես քնելու տեղ չունեի և ամեն անգամ փողոցներում էի թափառում, և կամ մեկ-երկու օրով մնում էի ընկերոջս՝ Տիգրանի վարձած սենյակում:
5. Տեսնելով ամբարիշտ հարևանին՝ Մինասին, զգալով նրա ստոր մտադրությունները՝ Թևոսը ծառերից կտրելով չոր ճյուղափայտեր՝ խրեց ցանկապատի մեջ:

**173. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Նախքան Թիֆլիս ուղևորվելը, Բերթյանն անհրաժեշտ է համարել ներկայանալ փոխարքա կոմս Վորոնցովին:
2. Նիագարան՝ իր հզորության մեջ, ունի այնպիսի նուրբ ձևեր, որ հազիվ թե տեսնեք բնության որևէ ուրիշ հրաշալիքի մեջ:
3. Տեղացի արդյունաբերողները ծիծաղում էին շվեդացի եռանդուն ձեռնարկատիրոջ այդ, իրենց կարծիքով, հանդուգն և խելառ ձեռնարկի վրա:
4. Չկա ո՛չ վրացական, ո՛չ հայկական շարժում. կա միայն միջազգային հեղափոխություն, որ նպատակ է դրել՝ քարոզչություն անել դժգոհ տարրերի մեջ:
5. Հանքատերերն իրենց հորերի մոտ ունեն քարաշեն ամբարներ կամ էլ նավթի երկաթե պահեստանոցներ են կառուցում:
6. Այդ գործունյա երիտասարդը, ինքնուրույն ուսումնասիրելով քիմիան տեսականորեն և երկար տարիներ գործնականում փորձվելով, կատարելության է հասցրել մեքենայուղի արտադրությունը:

**174. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Իմ ականջին գրեթե չէին հասնում պառավների վայնասունը, որ գալիս էր հեռվից, և ոչ էլ բակի աղմուկը:
2. Ամբողջ օրը՝ մինչև մութն ընկնելը, մի ավտոբուսից մյուսն էի անցնում՝ մտածելով նրա մասին, և ուղևորների մեջ փնտրելով ինչ-որ մեկին:
3. Ուզում էի գտնել նրան, որ հետո հանգիստ թողնեի՝ ոչինչ չասելով, և ամեն կերպ հոգ տանելով, որ նա շարունակի իր խղճուկ հիմար կյանքը:
4. Այգու կանաչների ու մրգատու ծառերի մեջ իր սևության պատճառով մեքենան ավելի մեծ էր երևում, և այն ավելի ու ավելի էր շիկանում:
5. Հրաշալի տեսարան էր՝ խողովակի ծայրակալից սպիտակ ծուխ էր դուրս գալիս, և ես պետք է ավելի շատ շաղախ լցնեի և ձեռքերով այն տափակեցնեի:
6. Առաջին օրերին՝ քանի դեռ հորեղբայր Կառլոսը աշխատում էր գրասենյակում, մեքենան գործի չզցեցինք, թեև ես մայրիկին ասել էի, որ կարող եմ դա անել:

**175. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. – Բոլորս էլ անմահ ենք, ուշք դարձրե՛ք այն բանին, որ մինչև այժմ ոչ ոք չի կարողացել դա ապացուցել,– ասաց նա:
2. Քանի որ ինչ–որ մեկը այս կյանքում պարտադիր կերպով պետք է հակաճառի՝ ես անմիջապես ընդմիջեցի խոսողին:
3. Ես անմիջապես հիշեցի այն գիրքը, որ մայրս էր նվիրել իմ տասնչորսամյակի կապակցությամբ, և Աննայի ասած խորհրդավոր խոսքերը:
4. Հետճաշյա երկարատև հանգստից հետո, որի ընթացքում քույրս իր մանկական ամսագիրն էր կարդում՝ այգում մենք ճոճվում էինք փափուկ ճոճաբոռների մեջ:
5. Հյուրանոցի ընդունարանի սրահում լռությունն այնքան ճնշող էր, որ, նույնիսկ ինքն էլ դա չնկատելով, քայլում էր ոտքերի ծայրերի վրա:
6. Հորեղբայր Կառլոսը հրավառ ածուխ լցրեց մեքենայի մեջ, և մինչ այն ավելի ու ավելի էր շիկանում, մի մրջնաբույն ընտրեց, և խողովակի ծայրակալն այնտեղ մտցրեց:

**176. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական սխալ չկա:**

1. Կամսարյանը, հանկարծակիի եկած, մի վայրկյան մնաց անխոս, ապա նորից սկսեց նայել շուրջը՝ տեսնելու այն, ինչ որ գյուղացին «գյուղ» էր անվանում:
2. Վերջինս տան աղյուսե պատին հենելով ձեռքի փոցխը՝ անշտապ մոտեցավ հյուրին՝ քաղցրաժպիտ ողջունելով և տուն հրավիրելով նրան:
3. Թագուհու՝ երփնավառ քարերից կերտված բարեգալղ առանձնարանը լուսավորվելով երևան հանեց հինավուրց արվեստի նրբաճաշակ պերճանքը:
4. –Մայր Սեդա,– լռությունը խախտեց թագուհին,– հիշու՞մ ես մեկ–երկու ժամ առաջ հովանոցում ասացիր, թե վաղուց հայտնի է քեզ՝ ինչ վիշտ է կրծում իմ սիրտը, բայց չես համարձակվել խոսել՝ հավատացած լինելով՝ դրանով իմ վերքերը պիտի նորոգես:

**177. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Հազար ինը հարյուր հիսունվեց թվականի ձմեռն այնքան խստաշունչ էր (1) որ Հայաստանի տաք վայրերի կաքավները (2) սարսռեցնող մրկահողմերից ու սառնամանիքից (3) գրեթե բնաջնջվեցին: Սովալլուկ ու ցրտահար թռչունները (4) այդ խեղճ ու անօգնական թռչունները (5) ճարահատյալ իջնում էին բակերում ու տնամերձ այգիներում կեր հայթայթելու (6) և նրանցից շատերը զոհ էին գնում մարդկանց: Այդ անօրինակ ծանր պայմաններից թռչուններն այնքան էին հյուծվել ու թուլացել որ մարդիկ (7) որևէ դժվարություն չգալով (8) բռնում էին նրանց պահում իրենց տներում որպեսզի գիրացնելուց հետո մորթեն: Անհրաժեշտ էր որկրամոլ մարդկանցից փրկել անօգնական թռչուններին (9) այդ վայրերի երկնակարկառ ապառաժների յուրօրինակ զարդերին:

**178. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Քանի դեռ այս ուխտադրուժ պատերազմը չէր սկսվել (1) ամբողջ երկրում ոչ ոք իմ զոյության մասին չգիտեր (2) ու չէր էլ հետաքրքրվում: Ես միշտ էլ նույն մարդն եմ եղել (3) ու միշտ էլ փողի քչությունն ինձ փոքր–ինչ նեղել է բայց ինձ միայն հիմա հիշեցին: Հենց այդ պատճառով էլ (4) երբ ամբողջ երկիրը պատերազմի առաջին իսկ օրից մի մեծ ու համերաշխ ընտանիքի ոգով համակվեց (5) այդ ոգևորության կրակին յուր լցնողներն ինձ կասկածելի թվացին: Դրանց նմանները (6) անվերջ ժպտում են (7) ու ձգտում հերոս դառնալ: Մինչդեռ զինվորական համազգեստով մարդիկ մեծ մասամբ շփոթված են ու խեղճացած (8) և անելու ուրիշ բան չունեն: Նրանք իսկական նվիրյալները (9) բնավ էլ մեծ հույսեր չունեն քանի որ կարգին չգիտեն շուրջբոլորն ինչ է կատարվում:

**179. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Օգոստոսի գեղեցիկ առավոտներից մեկն էր երբ ես ու ընկերս (1) ըստ մեր նախնական պայմանավորվածության (2) ձիով դուրս եկանք քաղաքից որպեսզի պտտվենք հայրենի գավառի գյուղերում (3) և հենց ճանապարհի սկզբում հանդիպեցինք մի շարք նորեկների:

Մենք բոլորս պատկանում էինք այն մարդկանց թվին ովքեր (4) ընտանիքի հացը հայթայթելու համար (5) ստիպված են լինում տարիներով ապրել մեծ քաղաքում (6) շնչել նրա անառողջ օդը (7) սնվել ավելի փոշով (8) քան կերակրով և հետևապես կարոտել այնպիսի բարիքների որոնք (9) բնության մեջ ապրող մարդը վայելում է առատորեն:

**180. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Առաջին տղամարդը պարթևահասակ էր (1) հաղթանդամ սև բեղ-մորուքով: Մյուսը (2) կարճահասակ էր (3) մորթը բրոնզագույն: Գահլիճում նստած (4) նրանք հետևում էին անցողաբձին: Որոտում է նվազը (5) թնդում գինին (6) որ հուրիբում է սափորների մեջ: Ծփում է նվազը (7) և պարում է մի աղջիկ նոճիահասակ գիսարձակ (8) պարում է ինչպես արծիվ: Մրրկահույզ կանգ է առնում (9) ամբողջովին բոց ու կրակ դարձած:

**181. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Ձեռքը տարավ գրպանը (1) հանեց մի փոքրիկ ոսկի դրամ (2) դա վերջին դրամն էր որ մնացել էր մոտը: Ափի մեջ բռնած (3) քայլեց դեպի շուկան հաց գնելու: Բարձր հնչում էր մոլլայի աղոթքը (4) և այն փոփում էր քաղաքի վրա: Բանաստեղծը գցեց ափի ոսկին ներքև (5) իր ոտների տակ (6) տրորեց մաշված մուճակով (7) և կանգնելով նրա վրա հրապարակով մեկ գոչեց

Ով մարդիկ (8) ինչ որ դուք խնդրում եք Աստծուց (9) ահա այստեղ է իմ ոտքերի տակ...

**182. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Բայց Բուդդան (1) որի վարդապետության սկիզբը փառավոր է (2) միջուկը իմաստուն (3) և ավարտը փրկարար (4) կարեկցանքով լցված դեպի ամբոխի անհավատությունը (5) նորից դիմեց նրան (6) թշվառության և տանջանքի այդ տգետ ժառանգին: Նա բացեց ժողովրդի առաջ ճանապարհները դեպի Նիրվանան դեպի նրա երանավետ անդորրը: Սակայն (7) ամբոխը ծաղրում էր նրան: Եվ նա կանգնելով Հիմալայն ի վեր (8) ասաց Ով Ազնի լսիր իմ աղոթքը (9) և թույլ մի տուր որ թագավորի անհավատությունը:

**183. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Նա այսպես սկսեց իր պատմությունը Մրանից մոտ քառասուն տարի առաջ մեր հայրենիքի մայր Իտալիայի (1) հողը տրորվում էր թշնամու ոտքի տակ (2) ու Գարիբալդիի վրեժով լցված սիրտը (3) հանգիստ (4) անդորր չունեք: Նա շատ անգամ էր կռվի ելել (5) թե մեր հայրենիքի (6) թե ուրիշ հայրենիքների համար (7) և այս անգամ էլ ձայն տվեց բոլոր քաջերին կռվելու (8) մեռնելու հանուն հայրենիքի: Ես էլ ինձ հասակակից շատերի պես (9) զինվորագրվեցի այդ սրբազան գործին:

**184. Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Զարմանալի արվեստագետ էր Մինաս Ավետիսյանը (1) նրա ոչ կյանքը ոչ արվեստը նման չէին որևէ մեկի կյանքին ու արվեստին:

Նկարչի տանը ցուցադրված էր «Խաչելություն» կտավը (2) և շատերը գալիս էին երկար դիտում այն (3) հեռանում: Օրեր անց նկարիչը (4) արվեստաբան Ռուբեն Զարյանին հանդիպելիս (5) պատմել էր որ այցելուների մեջ հիսունն անց մի կին նկարին բավական երկար նայելուց հետո (6) մոտեցել էր իրեն ու ասել

Անշուշտ (7) նկարիչը Գուգ էք ես միանգամից ճանաչեցի որ Գուգ էք խաչվածը բայց իզուր էք նկարել երկար չեք ապրի (8) և կմեռնեք ոչ Ձեր մահով:

Հազար ինը հարյուր յոթանասունհինգի փետրվարն էր մայթի վրա ելած մարդատարը վրատրթի էր ենթարկել նկարչին և նրա վիճակն անհույս էր: Գուգե ճակատագրի հեզմանքն էր թե զուգադիպությունը բայց այդ օրերին վաճառքի հանվեց նկարչի ստեղծագործությունների շքեղ ալբոմը (9) ու մարդիկ զարմացան տեսնելով վերջին նկարը որ կոչվում էր «Հրաժեշտ»:

**185. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Վերջինս հակառակ Երեմիայի (1) բարձրահասակ էր (2) թիկնեղ: Սև սքեմի մեջ փաթաթված (3) նա արձանացել էր նկարչից հեռու(4) անձկությամբ հետևելով վրձնի (5) ապշանք հարուցող խաղերին: Ինչ էր խորհում (6) դժվար էր կռահել: Աբեղան նայելով հրեշտակին (7) հանկարծ հիշեց նրան: Երբեք և ոչ մի տեղ (8) ոչ իր մտապատկերներում ոչ եկեղեցիների սրբապատկերներում (9) նա չէր տեսել հրեշտակի այդպես կենդանի և սրտահույզ:

**186. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Բավական ժամեր էին անցել (1) ինչ ելել էինք քաղաքից և թեպետ առավոտը զով էր ու հեշտալի բայց քանի արևը բարձրանում էր (2) այնքան օդը ավելի ջերմանում էր (3) մեզ նեղում: Արևի ճառագայթներն արդեն այրում էին (4) չկար ոչ հովի շունչ ոչ ծառերի ստվեր: Այդ պատճառով (5) աշխատում էինք ժամ առաջ հասնել գյուղ (6) լեռան գեղադիր լանջի վրա գտնվող: Ընկերս պատմում էր (7) ինչ կարոտով է սպասել այն օրվան երբ կվերադառնար իր (8) լեռներով շրջապատված հայրենիքը (9) հեռանալով փոշոտ մայրաքաղաքից:

**187. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Այնտեղ (1) կապույտ լռության մեջ արծաթացու ձյունագագաթներով (2) երկնածիզ լեռներն են սուզվել: Վերամբարձ ապառաժներից ուր արծիվն է իր բույնը կերտել (3) գլխիվայր նետվում են ջրերը (4) դողդոցով լցնելով այր ու ծերպ (5) խախտելով շրջակայքի կուսական անդորրը: Բնության գեղատեսիլ այդ անկյունում (6) խոր կիրճերի մեջ դյութական քչքչոցով (7) հոսում են գետեր (8) հմայելով մարդկանց (9) ականջ շոյող լսելիքը:

**188. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Արտաշես Առաջինի ժամանակ Հայաստանի կյանքը բարեկեցիկ էր երկիրը (1) ծաղկուն էր: Միրելով իր թագավորին (2) ժողովուրդը նրա կյանքի (3) հետաքրքիր դեպքերը գեղեցիկ գրույցներ դարձրեց: Մովսես Խորենացու գրքում նկարագրված է մի պատմություն (4) Արտաշեսի (5) ալանների դեմ մղած պատերազմը որի նյութը պատմիչը քաղել է Գողթն գավառում այն ժամանակ դեռևս պահպանված երգախառն գրույցներից: Երբ ալանների թագաժառանգը գերի է ընկնում (6) նրա քույրը բարձրանալով Քռի ափին գտնվող մի ժայռի վրա (7) խնդրում է (8) վերադարձնել եղբորը: Արտաշեսը սիրահարվում է ալանների արքայադստերը (9) չկարողանալով վճարել հազարավոր ոսկիներ փախցնում է նրան:

**189. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Սանատրուկը նվաճեց Օսրոյենե երկիրը (1) Եդեսիա գեղեցիկ քաղաքով (2) այն միացնելով Մեծ Հայքին: Նա Արածանի գետի հովտում ուր Բյուրակը միանում է Արածանիին (3) կառուցեց նոր մայրաքաղաք (4) Մծուրք անունով: Ըստ Մեբեոս պատմիչի (5) այդտեղ է ապրել Մարաբա փիլիսոփան (6) հայտնի իր փիլիսոփայական և պատմագիտական գործերով: Մծուրքում (7) թագավորի պալատի դիմաց (8) գտել են հունարեն արձանագրություն որտեղ ըստ նույն Մեբեոսի (9) գրի էր առնված հայ առաջին թագավորների պատմությունը:

**190. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Այդ դաշտավայրում թողնելով իր թռռանը (1) Կադմոսին (2) Հայկը մյուսների հետ գալիս հաստատվում է Վանա լճից հյուսիս–արևմուտք ընկած մի լեռնադաշտում (3) այն անվանում Հայք (4) ի պատիվ իր նախահայրերի: Բելի ղեկավարությամբ (5) հսկա զորք է գալիս Հայաստան (6) հնազանդեցնելու Հայկին: Վերջինս իր զորքին կոչ է անում կամ մեռնել կամ հաղթել այսինքն (7) նահանջելու տեղ չի թողնում: Ջորքը լեռներում ամրանալով (8) սկսում է պայքարել: Բարեկացիների ղեկավարը (9) գոռոզ Բելը սպանվում է Հայկի նետից հակառակորդի զորքը նահանջում:

**191. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Ահա (1) սեղանին է դրված նրա երկրորդ գրքույկը (2) «Բուդար ավագակապետը» (3) գրված բոլորովին վերջերս: Դա մի գեղեցիկ վեպ է (4) գեղարվեստական տեսակետից օրինակելի (5) բոլոր անճաշակ վիպագիրների համար: Չարմանում ենք միայն (6) ինչպես կարող են մարդիկ այս գրքից հետո ընտրել նախորդը: «Բուդար ավագակապետը» (7) իբրև գեղարվեստական կառույց անթերի է բայց այնուամենայնիվ (8) մենք համակիր չենք մեր ուսանողների գործունեության այս ընթացքին: Նույն կերպ էլ «Դոն Կիխոտի» հերոսը չէր կարող անցած–գնացած ասպետությունը վերականգնել նրա փորձը տկար ուղեղի տեր մարդիկ են անում (9) անմտաբար ընկնելով սարդերի ոստայնած որոգայթի մեջ:

**192. Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

«Կայծեր»–ի երկրորդ հատորը կարդացվում է (1) մեծ սիրով ու հետաքրքրությամբ: Երբ մի գիրք շարժում է կարդացողի հետաքրքրությունը (2) դա գրքի մեծագույն արժանիքներից մեկն է և պատիվ է բերում գրողի թեթև սահուն ու աշխույժ գրչին: Այս տեսակ գրքերից ժողովուրդն ընթերցասիրություն է ստանում իսկ նորահայտ գրողները (3) գրելած և ոճ: «Կայծեր»–ն ունի և երկրորդ արժանիք(4) նրա բովանդակությունը ներկված է հայրենի երկրի գույներով: Իսկապես (5) շատ ցանկալի է որ ամեն ոք ծանոթ լինի իր հայրենիքին գիտենա (6) նրա որ անկյունում ինչ կա: Ամբողջ գիրքը մի ուղևորություն է (7) մեծ ուղևորություն դեպի հայրենի երկրի (8) շատերի կողմից մոռացված գավառները ուր մարդիկ ապրում են (9) անտեղյակ մեծ աշխարհի անցուղարձին:

**193. Նշել այն թվերը, որոնց տեղում միջակետ պիտի դրվի:**

Հետևյալ օրը կեսօրից առաջ Մանեն սկսեց նամակ գրել ամուսնուն բայց մի քանի թույլից նրա ականջին հասավ մի բամբ ձայն (1) եղբայրն էր: Ուրախությունից իրեն կորցրեց և գրիչը վայր դնելով շտապեց նախասրահ (2) քանի տարի միմյանց չէին տեսել ուր Վահանն արդեն սկսել էր իր ինչպես քույրն էր ասում բոլորին հունից հանող անվերջանալի կատակները: Բացեց դուռը (3) դեմ դիմաց եղբայրն էր հաղթանդամ թիկնավետ մի երիտասարդ կիսաայրված մի սիգար բերանին: Քույրը գորովանքով փարվեց եղբորը (4) սակայն դիմացինն այդքան զգայուն չեղավ (5) մեղմորեն բռնելով Մանեի ձեռքից հեռացրեց նրան իրենից (6) երկի հոգնած էր: Փոխադարձ հարցուփորձը երկարեց (7) հարցնելու շատ բան կար: Վահանն ուզում էր ճշտել երկու բան (8) մեկն այն էր թե քույրն իրոք անտարբեր չէ Բաղամյանի նկատմամբ մյուսը գուցե ավելի կարևոր էր (9) և Վահանը ձգձգում էր ասելիքը:



**194. Նշել այն թվերը, որոնց տեղում միջակետ պիտի դրվի:**

Եղնիկը կամաց–կամաց ընտելացավ մեզ (1) նա էլ չէր փախչում մեզանից: Շատ մտերմացավ երեխաներիս հետ (2) նրանց հետ միասին վազվզում էր պարտեզում նրանց հետ ճաշում էր (3) նրանց հետ քնում: Սի բան ինձ շատ էր զարմացնում (4) թեև եղնիկը ընտելացել էր մեզ բայց մեկ–մեկ բարձրանում էր պատշգամբ (5) լռիկ նայում էր հեռու սարերին: Ես մտածում էի (6) Խեղճ եղնիկ (7) կարոտել է իր սիրած անտառներին (8) շնկշնկան հովերի հետ վազող ընկերներին և հիմա տանջվում է մեզ մոտ: Եվ այնպես սրտանց ցավակցում էի նրան (9) չէ որ նա էլ մեզ նման զգայուն հոգի ունի մեզ նման կապված է իր անցյալի հետ:

**195. Նշել այն համարները, որոնց դիմաց գրվածները տվյալ հատվածում կան (նախադասությունները կետադրված չեն):**

Երբ երգչուհին դուրս եկավ թատրոնից երկրպագուներով շրջապատված Իցկոն բարձր աղաղակեց: Չառուշենկոն ձեռնափայտով հետ մղելով նրան մոտեցավ երգչուհուն և տվեց նրան իր ձեռքի հուզմունքից ճմռթած թուղթը: Անշուշտ այդ նրա ոտանավորն էր հատկապես օրվա առիթով գրված:

1. բացահայտիչ
2. միջանկյալ բառ
3. տրոհվող հատկացուցիչ
4. տրոհվող դերբայական դարձված
5. տրոհվող որոշիչ

**196. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Երբեմն այդ մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես խորությամբ. ասես երեկ ես տեսել:

1. երբեմն – ժամանակի պարագա, մարդու – որոշիչ
2. հիշողության մեջ – տեղի պարագա, դեմք – ենթակա
3. այնպես – ձևի պարագա, մեխվում է – բաղադրյալ ստորոգյալ
4. տասնյակ – որոշիչ, հետո – ժամանակի պարագա
5. խորությամբ – ձևի պարագա, երեկ – ժամանակի պարագա

**197. Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Նա գիտեր՝ Աստված պատժում է հանցավորին և օգնում է արդար մարդուն, նաև գիտեր, որ իր թագավոր ամուսինը հանցավոր էր Ամրամի առաջ, և պիտի հաղթեր վերջինը, բայց այդ մասին ոչինչ չխոսեց:

1. գիտեր – պարզ ստորոգյալ, Աստված – ենթակա
2. հանցավորին – ուղիղ խնդիր, օգնում է – պարզ ստորոգյալ
3. իր – հատկացուցիչ, թագավոր – ենթակա
4. հանցավոր էր – բաղադրյալ ստորոգյալ, վերջինը – ենթակա
5. այդ մասին – վերաբերության անուղղակի խնդիր, ոչինչ – ենթակա

**198. Նշել այն տարրերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Ընդամենը այս եմ երգել, ու եթե ինձ հաջողվել է իմ այրվող այգեստանների ծուխը հասցնել մեր մեծ նախնիների ստեղծած փառապանծ կոթողների բարձրությանը, այն ժամանակ ես հանգիստ սրտով կարող եմ ապրել:

1. **այս** – ուղիղ խնդիր, **երգել եմ** – բաղադրյալ ստորոգյալ
2. **ինձ** – հանգման անուղղակի խնդիր, **այրվող** – որոշիչ
3. **ին** – հատկացուցիչ, **փառապանծ** – որոշիչ
4. **բարձրությանը** – հանգման անուղղակի խնդիր, **ես** – ենթակա
5. **այն ժամանակ** – ժամանակի պարագա, **ծուխը** – ուղիղ խնդիր

# ԲԱԺԻՆ 5

# ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

## I ՏԵՍԱԿ

### 1. Մտքերից քանի՞սն են հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում ունենում է 52 ատամ, որոնցից քսանը աճում և ընկնում են մանկական տարիքում: Ատամների բարձրությունը տատանվում է 1.75 սմ-ից (մեծ սեղանատամ) մինչև 2.7 սմ (ժանիքներ): Տարեց մարդու բոլոր 32 ատամները մի գծով շարելու դեպքում կստացվի 70 սմ-անոց շարան: Մարդու ծնոտի սեղմման ուժը կարող է հասնել մինչև 80 կգ-ի (1 քառ. սմ-ի վրա): Կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը գիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսևորել 442 կգ սեղմման ուժ: Վերջին ժամանակներում ավելի հաճախ է պատահում, երբ իմաստության ատամները ուղղակի չեն աճում կամ լինող ճեղքել չեն կարողանում, այսինքն՝ մարդու ատամների քանակը նվազման է գնում՝ հասնելով 28-ի: Դա կապված է կերակրի հետ, որը գնալով դառնում է ավելի փափուկ և դյուրաժամ, իսկ նախամարդու ծնոտի չափը վաղուց հեռավոր հիշողություն է դարձել:

- Հասուն մարդու ատամնաշարն ունի հիսուներկու ատամ, որոնց բարձրությունը տատանվում է 1.75 սմ-ից մինչև 2.7 սմ:
- Բավարար վիճակում գտնվող մարտդական համակարգ ունեցող մարդկանց իմաստության ատամները հաճախ դուրս չեն գալիս:
- Եթե մարդու երեսուներկու ատամները կշռեն, կստացվի չորս հարյուր քառասուներկու գրամանոց և յոթանասուն սանտիմետրանոց շարան:
- Տարբեր մարդկանց ատամնաշարի սեղմման ուժը տարբեր է, և կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը գիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսևորել 442 կգ սեղմման ուժ:

### 2. Մտքերից քանի՞սը չեն հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Չուրը ամենազարմանալի, ամենատարածված և ամենաանհրաժեշտ հեղուկն է Երկիր մոլորակի վրա: Մարդու համար նրանից կարևոր նյութ չկա: Մարդու մարմնի մոտ երկու երրորդը և մեծ թվով կենդանիների մարմնի պարունակության չորս հինգերորդը ջուր է: Ջրի մոլեկուլները միմյանց կապվում են յուրօրինակ ձևով: Դրա շնորհիվ այն վերածվում է արտասովոր հեղուկի: Այդ կապի հետևանքներից մեկը ջրի անսովոր խտությունն է: Նյութերի մեծ մասը սառչելիս ավելի քիչ ծավալ է զբաղեցնում, այսինքն՝ խտանում է, իսկ ջուրը չորս աստիճան ցելսիուսի դեպքում ամենամեծ խտությունն ունի: Դրանից ավելի ցածր ջերմաստիճանում ջրի խտությունը նվազում է: Արդյունքում զրո աստիճանում սառույցն ավելի փոքր խտություն ունի, քան նույն ջերմաստիճանում գտնվող ջուրը:

Բացատրությունը մեկն է. սառույցի՝ ջրում չուզվելու պատճառը թաքնված է հենց այդտեղ: Բացի այդ, հսկայական ջերմություն է անհրաժեշտ, որպեսզի ջուրը հեղուկ վիճակից վերածվի գազայինի կամ պինդ վիճակից՝ հեղուկի:

- Ջրի մոլեկուլները միմյանց կապվում են այնպես, որ սառույցը ջրում չի սուզվում:
- Քանի որ հսկայական ջերմություն է անհրաժեշտ, որպեսզի ջուրը հեղուկ վիճակից վերածվի գազայինի կամ պինդ վիճակից՝ հեղուկի, ջուրը չորս աստիճանում արդեն ամենամեծ խտությունն է ձեռք բերում:
- Չրո աստիճանի հասցված ջուրը, որ սառույցի տեսք ունի, ավելի փոքր խտություն ունի, քայց ոչ ամենափոքր ծավալը:
- Երկրագնդի վրա մարդուն անհրաժեշտ ամենակարևոր նյութը ջուրն է. մարմնի 2/3-ը ջուր է:

**II ՏԵՄԱԿ**

**3. Նշել այն մտքերի համարները, որոնք հակասում են շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Կարմրաթևիկները՝ այդ չքնաղ թռչունները, թեև առանձին կարգ են կազմում թռչունների տարատեսակ դասակարգության մեջ, բայց այդ կարգը բաղկացած է ընդամենը մեկ տեսակից՝ հենց իրենից՝ կարմրաթևիկից, որն ունի իրար խիստ նման երեք ենթատեսակ: Հենց անունից էլ ինքնըստինքյան պարզ է, որ այս թռչունի հովհարածն թևերը կարմիր են, բայց իրականում կարմրագույն են նրանց թևերի եզրերը, ինչպես նաև երկար-երկար ոտքերը և կտուցի կեսը: Հանրաձայնորեն ֆլամինգոն է սա, որի անունը տալիս անմիջապես պատկերացնում ենք հուռթի բուսականությամբ, յուրօրինակ ծառերով և փրփրահոս գետով արևադարձային ճոխ մի բնապատկեր, որում ֆլամինգոներն են կանգնած պաղպաջուն ջրի ափին՝ հաճախ մի ոտքը ծալած: Հայաստանում կարմրաթևիկը ո՛չ ձմեռում է, ո՛չ էլ ձագ է հանում, բայց չվելիս անցնում է մեր կողմերով:

1. Կարմրաթևիկը թռչունների դասակարգության մեջ առանձին կարգ է կազմում՝ ունենալով իրար խիստ նման երեք տարատեսակներ:
2. Ֆլամինգոյի անունը տալիս միշտ պատկերացնում ենք արևադարձային ճոխ մի բնապատկեր, որում ֆլամինգոները, միշտ մի ոտքը ծալած, կանգնած են պաղպաջուն ջրի ափին:
3. Կարմրաթևիկները նույն ֆլամինգոներն են, որոնց հովհարածն թևերը, երկար ոտքերը և կտուցի կեսը կարմրագույն են:
4. Չնայած Հայաստանը կարմրաթևիկների համար ձմեռելու և ձագ հանելու նախընտրելի վայր չէ, սակայն տեղից տեղ տեղափոխվելիս նրանք անցնում են մեր կողմերով:

**4. Նշել այն մտքերի համարները, որոնք չեն հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Էյֆելյան աշտարակը ժամանակին եղել է անբողիմամիկայի, այսինքն՝ մարմինների անկման ժամանակ օդի դիմադրությունն ուսումնասիրող գիտության, ինչպես նաև ֆրանսիական ռադիոյի կենտրոնը: Այդտեղ կատարված տարատեսակ փորձերով են խորագնին ուսումնասիրվել օդերևութաբանական շատ հարցեր: 19-րդ դարի վերջերին աշտարակը ռադիոհաղորդումների հեռարձակման փորձերի կենտրոն էր, իսկ հազար ինը հարյուր քսաներկու թվականին այստեղից հաղորդվեց առաջին ռադիոհամերգը: Երեք տարի անց աշտարակից կատարվեց հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը:

Աշտարակի բարձրությունը երեք հարյուր մետր է: Իհարկե, ժամանակին նման բարձրությունը ռեկորդային էր, իսկ այսօր այն դրանով չի ապշեցնում, բայց Էյֆելյան աշտարակն իր յուրօրինակ գրավչության շնորհիվ մնում է զբոսաշրջիկների նախընտրած վայրը, և տարեկան այդտեղ մի քանի միլիոն մարդ է այցելում:

1. Ամենակարգում աշտարակը եղել է հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման կենտրոնը, որտեղ էլ կատարվել են առաջին փորձերը:
2. Աշտարակը եղել է անբողիմամիկայի և ֆրանսիական ռադիոյի կենտրոնը, որտեղ կատարված տարատեսակ փորձերով են ուսումնասիրվել օդերևութաբանական բոլոր հարցերը:
3. 20-րդ դարի քսանական թվականներին Էյֆելյան աշտարակից է կատարվել հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը:
4. Էյֆելյան աշտարակի երեք հարյուր մետր ռեկորդային բարձրությունը այսօր էլ ապշեցնում է տարեկան այդտեղ այցելող մի քանի միլիոն զբոսաշրջիկների:

**5. Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է նախադասությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Իսկապես, եզրհատական ոչ մի հրաշալիք մարդկային անհագուրդ երևակայությանը այնքան սնունդ չի տալիս, որքան առեղծվածային բուրգերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից մարդկանց քաշում են դեպի Եգիպտոս:
2. Այդ հուշարձանները աներկբայորեն հաստատում են, որ, հիրավի, փրփրահոս Նեղոսի կանաչազարդ հովիտը իր ժամանակին եղել է մարդկության քաղաքակրթության օրրաններից մեկը:
3. Եգիպտացիները պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, պատմության թատերաբեմից դարեր առաջ են հեռացել, բայց սերունդներին հավերժական հուշարձաններ են թողել:
4. Եգիպտական բոլոր հուշարձաններն էլ աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ ու ապշեցուցիչ վեհությամբ, սակայն դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում բուրգերը, իսկ բուրգերի շարքում՝ Զեոփսի հիանալի բուրգը:

**6. Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Հազար ինը հարյուր վաթսուչորս թվականի երկրաշարժից հետո թեքությունն ավելի մեծացավ, և Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
2. Պիզա քաղաքը իր միջնադարյան ճարտարապետական նախազարդ կոթողներով, սալահատակ հարթ փողոցներով ու անբասիր մաքրությամբ, ինչպես նաև անդորրությամբ մի առանձին գրավչություն ունի զբոսաշրջիկների համար:
3. Վեհապանծ կոթողի բարձրությունը հասնում է հիսունչորսուկես մետրի, իսկ սանդուղքների թիվը երկու հարյուր ինսունչորս է: Աշտարակի առեղծվածային ծանրությունը տասնչորս հազար հինգ հարյուր տոննա է, և մարմարիոնե այդ հսկա զանգվածը թեքված է չորս մետր երեսունվեց սանտիմետր:
4. Պիզայում հիացմունք պարգևող, առիքնող ու իրենց չնաշխարհիկ գեղեցկությամբ հոգիդ թրթռացնող տեսարժան վայրեր շատ կան, որոնցից ամեն մեկը գրավիչ է յուրովի, բայց նրանց մեջ ակնբախ լուսապսակ է թեք աշտարակը:

**7. Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Թռչելով գիշերային խավարում՝ նրանք ուլտրաձայն են արձակում և ընդունում դրա արձագանքը: Դա նման է գնդակին, որը մարդ շարժում է պատի ուղղությամբ, և գնդակը, հակադարձվելով պատից, վերադառնում է նետողի մոտ: Ուլտրաձայնի անդրադարձման այս երևույթը մարդիկ կիրառում են տեխնիկայի ու ռազմական բնագավառներում: Այդպես է որոշվում ծովի հատակի խորությունը, ինչպես նաև թռչող օբյեկտներն են հայտնաբերվում օդում:
2. Սակայն մոլորություն կլինի կարծել, թե չղջիկների արձակած ձայնը ցածր է կամ ծվծվան, այդ պատճառով չենք լսում: Իրականում այնպիսի ձայն է արձակվում, որ եթե հնարավոր լիներ լսել, մոտավորապես նման կլիներ մետրոյի թունելում գնացքի առաջացրած դրոճոցին:
3. Դիշտ նույն կերպ չղջիկները արձակում են ձայներ, որոնք ընդհատ-ընդհատ են հնչում՝ նման ավտոմատ հրագենի կրակահերթին: Անդրադարձվելով արգելքից՝ ձայնը արգելքի տեսքով վերադառնում է տիրոջը, որն արձագանքից պետք է հասկանա, թե ինչ է իր առջևում՝ խոչընդոտ, թե՞ որս:
4. Մարդու ականջն ամենից ավելի զգայուն է 1000–5000 հերց հաճախականությամբ ձայների նկատմամբ, թեև ընկալում է 16 հերցից մինչև 20.000 հերց, որը նրա համար լսելի տիրույթ է համարվում: Չնայած լսելու այդ լայն տիրույթին՝ մենք ոչ միայն չենք լսում չղջիկներին, այլև չունենք կողմնորոշման նրանց հմտությունները մթության մեջ:

**8. Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Խաղերի արդյունքները գրոյացվել են ապաշնորհ բռնակալի մահից հետո, ապա արգելվել ընդհանրապես, բայց ուշագրավ է մի բան. մարմարյա սալիկի վրա արձանագրված վերջին հաղթողի անունը Վարազդատ Արշակունի արքայի անունն է (գահակալել է 374–378 թթ.), որը 394–ի խաղերում հաղթել է կոփամարտում: Սեր օրերում դրանք մարզական ամենազանգվածային միջոցառումներից են:
2. Եթե հավատանք հին հունական հաշվարկներին, 394 թ. հռոմեական կայսր Թետոդոսիոս Առաջին Մեծի կողմից արգելված համահունական օլիմպիական խաղերը եղել են թվով 293–րդը: Օլիմպիական խաղերը հիմնադրվել են Ջևս աստծու պատվին և դարձել ամենանշանավորը համահունական բոլոր խաղերի մեջ:
3. Հետագայում խաղերը տեղափոխվել են Հռոմ, ապա կրկին Հունաստան, որոշ տիրակալների օրոք ձեռք բերել նախկին հնչեղությունը կամ անտեսվել: Խախտվել է անցկացման ժամանակացույցը, ինչպես Ներոնի օրոք, որը նաև հրամայել է ջարդել նախորդ բոլոր հաղթողների արձանները, ավելացրել նոր՝ երգիչների մրցույթ, որի հաղթողն ինքն է եղել, գավթել է մարտակառքի մրցության հաղթողի պսակը, քանի որ եղել է միակ մասնակիցը: Ասում են՝ երկու անգամ ընկել է մարտակառքից մինչև եզրագծին հասնելը:
4. Անցկացվել են չորս տարին մեկ անգամ սրբազան Օլիմպոսում՝ Քրոնիոն լեռան ստորոտում, և քիչ–քիչ ընդարձակվել են դրանց ընդգրկման աշխարհագրական սահմանները՝ ներառելով նորանոր կղզիների մարզիկների: Քառասուներորդ խաղերից սկսած՝ մասնակցության թույլտվություն են ստացել փոքրասիական և հարավիտալական գաղութների հույները. բարբարոսների ներկայացուցիչները կարող էին լինել սոսկ հանդիսատես:

**9. Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կազմակերպել էր փայլուն ընդունելություն: Կայարանում պատրաստված էր թեյասեղան: Համալսարանի դահլիճը զարդարված էր կանաչով ու դրոշակներով, նվագում էր զինվորական խումբը:
2. Հանդեսը բացեց համալսարանի տեսուչ, վաստակավոր գիտնական պրոֆ. Ի. Ղամբարյանը, որից հետո նախարար Ն. Աղբալյանը մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականության ու մշակույթի զարգացման գործում: «Այն ջահը, – ասաց նա, – որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորի Առաջավոր Ասիան»:
3. Հունվարի 31–ին Ալեքսանդրապոլում՝ Հայաստանի «երկրորդ մայրաքաղաքում», տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը: Երևանից և Թիֆլիսից հատուկ գնացքներով եկել էին բազմաթիվ հյուրեր՝ Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուորդրոպը, կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարյանի գլխավորությամբ, բանաստեղծ Հովի. Հովհաննիսյանը և պետական ու հասարակական, գրական ու գիտական շատ ուրիշ դեմքեր:
4. Հանդեսի ամբողջ տևողության ընթացքում դուրսը խռնված էր մեծ բազմություն. շատերը եկել էին շրջակա գյուղերից: Հասարակությունը խանդավառ ցույցերով ընդունեց հանդեսից հետո դուրս եկող հյուրերին: Երեկոյան առևտրական դպրոցի սրահում կայացավ գրական–երաժշտական երեկույթ և պարահանդես, որ տևեց մինչև ուշ գիշեր: Պարահանդեսից հետո հյուրերն արտակարգ գնացքով վերադարձան Երևան:

## ԲԱԺԻՆ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

### I ՏԵՄԱԿ

#### 1. Տրված լեզուներից քանի՞սն են իրար ցեղակից.

հունարեն, անգլերեն, իսպաներեն, հայերեն, պարսկերեն, հնդկերեն, գերմաներեն, չեխերեն, ռուսերեն, ալբաներեն:

#### 2. Տրված լեզուներից քանի՞սն են ցեղակից հայերենին.

աբխազերեն, ռումիներեն, սերբերեն, ուկրաիներեն, աֆղաներեն, պորտուգալերեն, շոտլանդերեն, գերմաներեն, լատիշերեն:

#### 3. Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ բառաձև կա տրված հատվածում:

Չմրուխտներով կը ծփա դաշտը անհուն:  
Ծիտը կ'երգե թառած հասկի մ' օրորուն,  
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին  
Ծովեր կանցնին...

### II ՏԵՄԱԿ

#### 4. Նշել ճիշտ պնդումների համարները:

1. Բառարանները լինում են հանրագիտական և բանասիրական: Հանրագիտական բառարաններն իրենց հերթին լինում են ընդհանուր և մասնավոր:
2. Բանասիրական բառարանները լինում են բացատրական, թարգմանական, հոմանիշների, հակահիշների, համանունների, դարձվածաբանական, ուղղագրական, ստուգաբանական և այլն:
3. Ստուգաբանական բառարաններում տրվում են բառերի ծագումը և նրանց առնչակցությունը ցեղակից ու ոչ ցեղակից այլ լեզուների հետ: Այսպիսի ստուգաբանական բառարան է Մ. Աբեղյանի «Հայերեն արմատական բառարանը»:
4. Հայերենի բացատրական բառարաններից են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանը», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» և այլն:

#### 5. Նշել այն գիտնականներին, ովքեր հեղինակել են «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (Երևան, 1975).

1. Ստեփանոս Մալխասյանց, 2. Հովհաննես Բարսեղյան, 3. Արարատ Գևորգյան, 4. Աշոտ Սուքիասյան, 5. Էդուարդ Աղայան, 6. Սերգեյ Գալստյան:

#### 6. Նշել այն բառերի համարները, որոնք արևելահայերենում և արևմտահայերենում տարբեր իմաստ են արտահայտում.

1. մանրահատակ, 2. հոն, 3. պահարան, 4. ախտյան, 5. ալեհավաք, 6. գրագետ, 7. մականուն, 8. ռազմավարություն, 9. նվագավար:

#### 7. Նշել այն շարքերի համարները, որոնցում ճիշտ համապատասխանեցված տրված բառերի արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակները:

1. սկյերոզ – կարծրախտ
2. դեմագոգ – համայնավար
3. կոմունիստ – ամբոխավար
4. սուբյեկտիվ – առարկայական
5. ռեալիզմ – իրապաշտություն
6. օբյեկտիվ – ենթակայական

## ԲԱԺԻՆ 7 ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### I ՏԵՍԱԿ

1. **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

Խռնվում են մտքիս հանդեպ քանակները անհամար,  
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,  
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,  
Ավարներով, ավերներով, խնջույքներով արյունի,  
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուգի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,  
Ողբի՜ հայրենիք,  
Ողբի՜ հայրենիք:

2. **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
բաղաձայնույթ, հանգավորում, շրջադասություն, փոխաբերություն:

Ծփում է ծովն ալեծածան,  
Ծըփում է սիրտը տըղի.  
Գռռում է ծովն ահեղաձայն,  
Նա կըռվում է կատաղի...

3. **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
հանգավորում, բաղաձայնույթ, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն:

Մոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին,  
Մոսին՝ իմ սեգ հարսի պես՝  
Լուսնի ոսկե կուժն ուսին...

4. **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
փոխաբերություն, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում:

Սարերի ծոցից սարեր են ծլում,  
Շարժվում են կարծես սարերը տեղից,  
Ծառն իրենից մեծ ստվեր է ծնում,  
Եվ օրը արդեն գնում է ձեռից:

5. **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում, անձնավորում:

Մասուրը շիկնեց թփին...  
Հավքերը երամ են կապում,  
Արտերի վրա հնձած՝  
Կռունկի կանչեր են կաթում:  
Եղեգը խուլ սուլոցով  
Չէության վախն է փարատում,  
Իսկ առուն՝ հրաժեշտի  
Իր տխուր գագելն է կարդում:



**6. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
մակդիր, հանգավորում, անձնավորում, շրջադասություն, համեմատություն:

Քո քաղցր վիշտը, սիրտ իմ մենավոր,  
Քո վիշտն է փռված անհուն աշխարհում,  
Քո սերն է վառված և՛ պայծառ, և՛ խոր,  
Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում:

**7. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
շրջադասություն, հանգավորում, չափազանցություն, փոխաբերություն, համեմատություն:

Գիշերն է փռել իր թևերը մութ,  
Գիշերն է գերել իմ սիրտը ցաված.–  
Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ  
Ու ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:

**8. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
հանգավորում, մակդիր, շրջադասություն, փոխաբերություն:

Անցած օրերի հուշերն են թերթում  
Եվ խաղաղ սրտով անխռով–մենակ  
Քնքուշ երգերից հյուսում եմ մանյակ,  
Որ պճնեմ սիրով պատկերող տրտում:

**9. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
շրջադասություն, անձնավորում, մակդիր, հանգավորում, հակադրություն:

Մեղմիկ քայլում է երեկոն քնքուշ,  
Ծովը մետաքսե քղանցքն է փռել,  
Նոճիներն ափից շրշում են անուշ,  
Ճայերն այրերում նիրհել են, լռել:

**10. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, հանգավորում, չափազանցություն:

Խոսքերըդ կարկաչող, որպես նուրբ մի զգեստ,  
Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն,–  
Քո հոգին չի սիրում մերկություն անհամեստ,–  
Դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում:

**11. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
հանգավորում, շրջադասություն, համեմատություն, մակդիր:

Անգիր, և՛ անհայտ, և՛ անհիշատակ՝  
Ամայի դաշտում մի գերեզման կա.–  
Ո՞վ է հող դառնում այդ լուռ քարի տակ,  
Ո՞վ է լաց եղել այդ քարի վրա:

**12. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
մակդիր, հանգավորում, շրջադասություն, անձնավորում:

Համր քայլերով դարերն են անցնում,  
Արտույտն է երգում իր գովքը գարնան,  
Շուրջը ոսկեղեն արտերն են ծփում,–  
Ո՞վ է երազել և սիրել նրան...

**13. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 համեմատություն, փոխաբերություն, հանգավորում:

Կենսական ծովի հույզերի միջին  
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.  
 Կայծակն է զարկում իմ վես ճակատին,  
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

**14. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 մակդիր, չափազանցություն, հանգավորում, բաղաձայնույթ, փոխաբերություն:

Հեռու երկնքի կապույտ խայտանքում  
 Աստղերի արծաթ ցորենն է մաղվում,  
 Ու ծաղիկների թերթերին հուշիկ  
 Իջնում է նրանց բյուրեղյա փոշին:

**15. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 մակդիր, հանգավորում, բաղաձայնույթ, փոխաբերություն, անձնավորում:

–Ինչ ունեմ–չունեմ, հողին կտամ.  
 Հողից է ծնվում հորովելը,  
 Եվ աշխարհով մեկ կորոտամ,  
 Որ հողը մարդուց խռովել է...

**16. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 հակադրություն, մակդիր, հանգավորում, շրջադասություն, համեմատություն:

Եվ փերիներ քնքուշ ու սև,  
 Աչքերը բոց, իրենք խավար,  
 Եվ փերիներ տեսա թեթև  
 Փրփուրի պես ճերմակ ու վառ...

**17. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 մակդիր, հանգավորում, շրջադասություն, փոխաբերություն, համեմատություն:

Շղթայված է իմ հոգին՝ գերի խանդոտ հուշերիս.  
 Եվ չկա ինձ ազատում անվախճան այս գիշերից...

**18. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 շրջադասություն, համեմատություն, անձնավորում, մակդիր, հանգավորում:

Մի հին տրտմություն՝ անսփոփ ու խոր,  
 Որպես վիշտն անել հայրենի հողիս,  
 Երգում է սրտիս դառնագին օրոր  
 Եվ անդուլ ցավով մաշում է հոգիս:

**19. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
 մակդիր, հանգավորում, շրջադասություն, փոխաբերություն:

Դուք մի հին վեպ եք դանդաղ թերթում  
 Այնպես հոգնած ու այնպես տրտում.  
 Արդյոք ո՞ւմ վիշտն է, ո՞ւմ ցավագին  
 Կարոտն է կիզում Ձեր պարզ հոգին:

**20. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
հանգավորում, փոխաբերություն, համեմատություն, շրջադասություն, մակերկիր:

Փշով են պատված ուղիներըս մութ,  
Մեր տեսիլները սառն ու ահավոր,  
Մեզ զգվում են միշտ զգվանքով մի սուտ,  
Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր...

**21. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
հանգավորում, անձնավորում, շրջադասություն, համեմատություն:

Երկիր՝ Նաիրի, երա՛գ հեռավոր,  
Զնած ես քնքուշ թագուհու նըման.  
Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման...

**22. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**  
փոխաբերություն, հանգավորում, շրջադասություն, համեմատություն, մակերկիր:

Լուռ հունցվում է քո մեջ, իբրև մատյան և կյանք,  
մի խտացած թախիժ՝ մի կորուսյալ երկիր,  
որպես աստծուն պարզված տխուր շարադրանք,  
որի վրա արյան հետքն է քո սեպագիր:

**23. Պատկերավորման–արտահայտչական նշված միջոցներից քանի՞սը չեն գործածվել.**  
հանգավորում, անձնավորում, համեմատություն:

Աստղը ջրին, ցողը ծաղկին,  
Մեզը ծովին է փարվում,  
Շողը մութին, հավքը հավքին  
Կարոտագին համբուրում:

**24. Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սը չեն գործածվել.**  
փոխաբերություն, անձնավորում, շրջադասություն, հանգավորում, համեմատություն:

Չարթնել է հոգիս նոր կյանքի համար,  
Նա ինձ ժպտում է քարացած իմ դեմ,  
Թևերն է հոգիս պարզում տիրաբար  
Ու գվարթ ճշում–ես քեզ կրհաղթեմ...

**25. Տրված հատվածում քանի՞ համեմատություն կա:**

«Գիշերների պես սևաթույր են և արևի պես ոսկի են նրանց մազերը, որ խուժել են նրանց լուսեղեն մեջքերի վրա, և փաթաթվում են կարոտի պես նրանց մազելի պարանոցներով և արբեցուցիչ բուրմունքով ողկույզ–ողկույզ կախ են ընկնում ձյունապատ կրծքերի վրա, ինչպես սև ու ոսկի ամպերը Կուեն–Լուիի ձյունների վրա»:

## II ՏԵՄԱԿ

26. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. փոխաբերություն, 2. անձնավորում, 3. հանգավորում, 4. մակդիր:

Ու նայում եմ ես դեպի ցած,  
Ուր դաշտերն են մրափում,  
Մինչդեռ հոգիս լուսնով հարբած՝  
Տխուր քունն է թոթափում...

27. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. համեմատություն, 2. հակադրություն, 3. փոխաբերություն, 4. հանգավորում:

Եվ շուրջրս, որպես օրոր  
Մի երգ է անլուռ հնչում.  
Իմ սի՞րտն է, թե՞ հեռավոր  
Աստղերն են մեղմ կարկաչում...

28. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. համեմատություն, 2. շրջադասություն, 3. անձնավորում, 4. հակադրություն, 5. հանգավորում:

Արեգակը ծովն է իջնում,  
Յողը շողաց դալարին,  
Մարի լանջից հովն է փչում,  
Աստղը ժպտաց կամարին:

29. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. համեմատություն, 2. չափազանցություն, 3. փոխաբերություն, 4. անձնավորում,  
5. հանգավորում:

Իմ թախիծն էլ այն ամպի պես  
Յնորում է քնքշաբար,  
Բոցավառվում՝ հիշելով քեզ  
Եվ արտասվում քեզ համար:

30. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. համեմատություն, 2. չափազանցություն, 3. փոխաբերություն, 4. հակադրություն, 5. մակդիր:

Ամռան երեկոն, մեղմ հավելով, փոխվում է գիշերի: Տաք օդը հափրուկի ու լորենու բույր ունի, իսկ լուսամուտում, պարզած ձեռքին հենված և գլուխն ուսին խոնարհած, նստած է մի աղջիկ և լուռ, սևեռուն նայում է երկնքին... Ի՞նչ անկեղծ, ոգևորված են մտախոհ աչքերը, ինչպե՞ս սրտաշարժ, անմեղ են բացված աղերսող շրթունքները...

31. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. մակդիր, 2. շրջադասություն, 3. անձնավորում, 4. հանգավորում:

Հոգիս արթնացավ հարավի բույրից,  
Ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա.  
Չյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:

32. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. փոխաբերություն, 2. մակդիր, 3. հանգավորում, 4. համեմատություն, 5. հակադրություն,  
6. շրջադասություն:

Ավարայրի դաշտն է հրկեզ՝  
Գրասեղանն իմ լռին,  
Դաշտ եմ խուժել Վարդանի պես՝  
Թուր–Կեծակին իմ ձեռին...

33. Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.

1. հանգավորում, 2. հակադրություն, 3. մակդիր, 4. անձնավորում, 5. փոխաբերություն:

Մեր տան աղբյուրն է մայրս,  
Մեր ծարավ քույրն է մայրս,  
Մեր տան անքունն է մայրս,  
Մեր անուշ քունն է մայրս,  
Մեր տան ճրագն է մայրս,  
Մեր արեգակն է մայրս...

## ԲԱԺԻՆ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### I ՏԵՄԱԿ

**1. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի վերաբերյալ պնդումներից քանիստ՞ում սխալ չկա:**

- Պոեմի բովանդակության գլխավոր գիծը մարդու կատարելության խնդիրն է, որն առնչվում է մեղքի և մեղավորության քրիստոնեական ըմբռնմանը:
- Գրիգոր Նարեկացին ողբում և աղոթում է ոչ թե իբրև առանձին անհատ, այլ իր մեջ խտացնում է ամբողջ մեղսագործ մարդկությունը:
- Պոեմում ներկայացվում է նաև բանաստեղծի հոգու ցավը անպատասխան մնացած սիրո համար:
- Բանաստեղծը մարդ արարածի անկատարությունն էլ ավելի ընդգծելու համար նրան համեմատում է Աստծու հետ:

**2. Նշված գրողներից քանի՞սն են ստեղծագործել արևմտահայերենով.**

Հակոբ Պարոնյան, Պետրոս Դուրյան, Բաֆֆի, Գրիգոր Զոհրապ, Մուրացան, Լևոն Շանթ, Սիամանթո, Սիսաք Սեծարենց, Հովհաննես Շիրազ, Շահան Շահնուր:

**3. Նշված հեղինակներից քանի՞սն են ռեալիստական ուղղության ներկայացուցիչներ.**

Ա. Շիրվանզադե, Մուրացան, Հ. Պարոնյան, Գ. Զոհրապ, Բաֆֆի, Նար-Դոս, Մ. Նալբանդյան:

**4. Նար-Դոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքի վերաբերյալ պնդումներից քանիստ՞ում սխալ կա:**

- Պատրիկյանը Դավիթ Ֆոմիչին խնդրում է մի քանի օր էլ սպասել իր վարձակալած սենյակի գումարը վճարելու համար, սակայն տանտերը չի համաձայնում՝ կարգադրելով ազատել սենյակը, քանի որ կենվորն արդեն յոթ օր ուշացրել էր վարձը:
- Գրախանություն Պատրիկյանին ասում են, որ վերջին երեք ամսվա ընթացքում նրա հեղինակած երկու գրքույկներից մեկն ամենևին չի վաճառվել, իսկ մյուսից սպառվել է միայն հինգ օրինակ:
- Խմբագրատուն այցելած կայսերական թատրոնների երգիչ Ջափինյանը, տեսնելով Պատրիկյանի նյութական ծանր վիճակը, նրան գումար է նվիրում:
- Պատրիկյանը և խմբագրության քարտուղարը որոշում են մեկնել արտասահման՝ այնտեղ շարունակելու իրենց կիսատ մնացած կրթությունը:

**5. Նշված պատմիչներից քանիսի՞ն աշխատություններն են սկզբնաղբյուր ծառայել Մուրացանի «Գևորգ Մարգարետունի» պատմավեպի համար.**

Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Հովհաննես Դրասխանակերտցի, Դազար Փարպեցի, Թովմա Արծրունի:

**6. Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքի վերաբերյալ պնդումներից քանիստ՞ում սխալ չկա:**

- «Գիքորը» պատմվածքի որոշ դրվագներ վերցված են հենց իր՝ Թումանյանի կյանքից:
- Սիամիտ գեղջուկ երեխան, ընկնելով իր համար բոլորովին մի նոր աշխարհ, այդպես էլ չի կարողանում յուրացնել այդ «անիրավ աշխարհում» գոյատևելու ձևերը:
- Պատմվածքում ներկայացվում է հայկական գյուղի սոցիալական ծանր դրությունը:
- Որդուն քաղաք տանելով՝ Համբոն մեծ հույսեր էր կապում նրա հետ, մինչդեռ քաղաքում ձրի ծառայող Գիքորն ինքն էր կարոտ հարազատ մեկի օգնության:

**7. Հովհաննես Թումանյանի «Գեղը» պատմվածքի վերաբերյալ պնդումներից քանիստ՞ում սխալ չկա:**

- Պատմվածքը պարունակում է գայլի մասին մի քանի ինքնուրույն պատմություններ, որոնք հավաքված են ընդհանուր սյուժեի շուրջը:
- Յուրաքանչյուր պատմող կերպավորվում է իր խոսքի միջոցով՝ առանց գրողի միջամտության:
- Հեղինակը գիտնականի բարեխղճությամբ է նկարագրում գայլի վարքն ու բնավորությունը:
- Ըստ հեղինակի՝ գայլը խելացի ու խորամանկ կենդանի է և չի վախենում ո՛չ կրակից, ո՛չ բարձր ձայներից:

**8. Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար»-ում գործող հերոսներից քանի՞սն են հանդես գալիս անձնանուններով:**

- 9. Նշված ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Ավետիք Իսահակյանը.**  
 «Մեղուները», «Ասպետի սերը», «Սաադիի վերջին զարունը», «Հայրենիքիս», «Հառաչանք», «Հավերժական սերը», «Վազող ջրին», «Հայրենի հողը»:

- 10. Եղիշե Չարենցի նշված ստեղծագործություններից քանի՞սն են պոեմներ.**  
 «Դանթեական առասպել», «Հեռացումի խոսքեր», «Սոմա», «Գանգրահեր տղան», «Դեպի լյառը Մասիս», «Հարդագողի ճամփորդները», «Ամբոխները խելագարված», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»:

**11. Եղիշե Չարենցի ստեղծագործություններից քանիսի՞ ժանրն է սխալ նշված.**

- «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» (պոեմ)
- «Սոմա» (բանաստեղծություն)
- «Գանգրահեր տղան» (չափածո նովել)
- «Տաղ անձնական» (բանաստեղծություն)
- «Դեպի լյառը Մասիս» (պոեմ)
- «Հարդագողի ճամփորդները» (բալլադ)

**12. Նաիրի Զարյանի ստեղծագործության վերաբերյալ պնդումներից քանիստ՞ում սխալ չկա:**

- Նաիրի Զարյանը գրել է միայն բանաստեղծություններ, պոեմներ և դրամատիկական երկեր:
- Նաիրի Զարյանն իր գրիչը հաճախ է ծառայեցրել տիրող վարչակարգին և խորհրդային կադապարված գաղափարախոսությանը:
- Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը գրված է չափածո:
- Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը գրված է Մովսես Խորենացու նմանողությամբ. բոլոր կերպարները վերցված են Խորենացու պատմությունից:

**13. Հետևյալ գրողներից քանի՞սն են Մեծ եղեռնի զոհ դարձել.**

Հակոբ Պարոնյան, Պետրոս Դուրյան, Գրիգոր Չոհրապ, Միսաք Մեծարենց, Միամանթո, Դանիել Վարուժան, Շահան Շահնուր, Լևոն Շանթ:

**14. Հետևյալ գրողներից քանի՞սն են ստալինյան բռնությունների տարիներին զոհվել կամ արքայրվել.**  
 Շահան Շահնուր, Եղիշե Չարենց, Դերենիկ Դեմիրճյան, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, Նաիրի Զարյան, Հովհաննես Շիրազ, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան:

**15. Քանի՞սն են սփյուռքահայ գրողներ.**

Հակոբ Պարոնյան, Հակոբ Օշական, Հակոբ Մնձուրի, Վահան Թեքեյան, Համաստեղ, Վազգեն Շուշանյան, Մուշեղ Իշխան, Գրիգոր Չոհրապ, Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց:

**16. Հետևյալ մտավորականներից քանի՞սն են եղել 1899–ին Հովհաննես Թումանյանի կազմակերպած «Վերնատուն» գրական խմբակի մշտական անդամները.**

Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան, Վազարոս Աղայան, Պերճ Պոռչյան, Գաբրիել Մունդուկյան, Ավետիք Իսահակյան, Լևոն Շանթ, Մուրացյան, Դերենիկ Դեմիրճյան, Շիրվանզադե, Նիկոլ Աղբալյան:

**17. Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ պնդումներից քանիստ՞ն սխալ չկա:**

- «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մեջ հեղինակը Հայաստանը բնութագրում է «ողբի», «որբի», «գարկված» ու «գրկված» հայրենիք՝ մեր ողբերգության պատճառը համարելով անմիաբանությունը:
- «Անուշ» պոեմում կա «անցվոր ախպոր» կերպարը, որը «աշխարհի կարգն» է հիշեցնում դժբախտ Անուշին, ինչը, սակայն, Անուշը չի ընդունում:
- «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ հեղինակը փառաբանում է հայոց լեռները, որոնք դարեր շարունակ իրենց լանջերին տեղ չեն տվել «անապատի սև օրդուներին»՝ իրենց խորքերում պատսպարելով հայ գաղթականներին:
- «Թմկաբերդի առումը» պոեմում մահամերձ Թաթուրը կնոջ մատնության մասին իմանում է վերջին պահին, երբ իր զինվորների մեծ մասն արդեն սպանված էր:

**18. Տրված հատվածներից քանի՞սն են Եղիշե Չարենցի «Անվերնագիր» («Իմ մահվան օրը») բանաստեղծությունից:**

- Հավիտյան զոց ու անխոս՝ թափառել եմ ու լռել.  
Ոչ ոք, ոչ ոք չգիտե՛ն արդյոք ի՞նչ է կյանքս, ես.  
Միայն գիտեն, որ կյանքում ինչ–որ երգեր եմ գրել,  
Ինչպես գիտեն, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ:
- Փակում եմ հոգնած աչքերըս մի պահ  
Եվ տեսնում եմ ես–այնքա՛ն, այնքա՛ն պարզ.–  
Գալիք մի գարուն, վառ մի օր ահա,  
Երկինքը կապույտ, օրը հրավարս:
- Եվ համր՝ մի պահ՝ զիշերվա կեսին,  
Բոլորի սրտում կկանգնի հանկարծ  
Անհաղորդ, ինչպես հեռավոր լուսին,  
Իմ դեմքը՝ արդեն հավիտյան հանգած:
- Աչքերիս մեջ մենք պահել ենք երկնային  
Ճամփաների հեռուները դյութական  
Ու անցնում ենք ուղիներով երկրային,  
Ուր բյո՛ւր մարդիկ երազեցին ու չկան:

**19. Եղիշե Չարենցի «Անվերնագիր» («Իմ մահվան օրը») ստեղծագործության վերաբերյալ պնդումներից քանիստ՞ն սխալ չկա:**

- Զնարական հերոսը վստահ է, որ իր մահվան լուրը կմտնի քաղաքի բոլոր տներն ու բակերը՝ իբրև դաժան լուրություն տարածվելով ողջ քաղաքի վրա:
- Բանաստեղծի ողջության օրոք նրա դեմքն անգամ չտեսած մարդիկ մահվանից հետո հարազատի մամն սզալու են նրա մահը:
- Երկրի բոլոր քաղաքներում և գյուղերում մարդիկ տխուր դեմքերով հաղորդելու են սզալի լուրը՝ մոռանալով բանաստեղծի բոլոր հանցանքները:
- Կլինեն մաս մարդիկ, ովքեր բանաստեղծի մահից հետո կբացեն նրա գիրքը, կթերթեն, կկարդան՝ այդպես էլ ափսոսանքի ու թախծի նշույլ չզգալով:

**20. Նաիրի Չարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության վերաբերյալ պնդումներից քանիստ՞ն սխալ չկա:**

- Գինեվարպետ Արբակը Արայի՝ Շամիրամի սերը մերժելը գնահատում է ճիշտ:
- Շատերը արդարացնում էին վաճառական Կաթմոսի այն կարծիքը, թե Արան չափի մերժի Շամիրամի սերը:
- Արան Նուարդից չի թաքցնում այն, որ Շամիրամը կախարդել է իրեն:
- Կաթմոսը խուսափում է մասնակցել Արայի՝ Շամիրամի դեմ կռվին և գաղտնի հեռանում է:
- Արայի դեմ պատերազմում Շամիրամը իր զինվորներին հրամայել էր կա՛ն գերել, կա՛ն սպանել հայոց արքային:



**21. Քանի՞սն են Հովհաննես Շիրազի բանաստեղծություններից.**

«Իջավ սարյակը դաշտում», «Էքսայրում», «Տխրություն», «Կուզեի նստել մի քարի վրա», «Դա՛րդս լացեք», «Չես ասի ոչ մի բառով», «Օրը մթնեց...»:

**II ՏԵՄԱԿ****22. Դասավորել համարները՝ ըստ նշված երկերի ստեղծման հաջորդականության:**

1. Ե. Չարենց, «Տաղարան»
2. Հ. Թումանյան, «Թմկաբերդի առումը»
3. Ե. Չարենց, «Դանթեական առասպել»
4. Դ. Վարուժան, «Հեթանոս երգեր»

**23. Դասավորել համարները՝ ըստ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի տրված հատվածի տողերի հաջորդականության:**

1. ցնորքներ վառ ու առկայծ
2. փառքի, կամքի գոյության
3. աստղեր թովիչ, բոց ու կայծ
4. հավատ ուժի, մեծության
5. իմաստություն, բյուր պատրանք
6. շռինդ, թնդյուն, հպարտանք

